de l'écrit, Paris, 2007), n'a jamais cessé d'accompagner les Arméniens. Pour moi, la « Magie de l'écrit » représente aussi de longues heures passées avec Claude dans son bureau à déchiffrer et traduire toutes sortes de textes écrits en arménien classique. Jusque-là, j'étudiais la langue classique dans des livres édités au XX^e siècle et ne m'intéressais qu'à des questions de syntaxe, et à la faveur de la préparation de cette exposition, je me retrouvais face à des reproductions photographiques de papyrus, mosaïques, manuscrits, amulettes, bulles, monnaies, inscriptions, reliures, tapis, incunables, etc. Ainsi, les textes s'incarnaient, prenaient véritablement chair et je découvrais qu'un texte, ce n'était pas seulement une suite de caractères alphabétiques, une série de mots, un ensemble de phrases inscrites sur du papier, mais que les lignes écrites constituaient en soi un document qui avait été produit dans un lieu donné à un moment donné, qui avait pris place dans un contexte historique et qui avait traversé les siècles. Je comprenais enfin une chose qui me paraît si évidente aujourd'hui : un texte est inséparable du support sur lequel on peut le lire et ce support est un objet qui s'inscrit dans une histoire et derrière lequel se trouve un artisan dont le savoir-faire permet au lecteur d'aujourd'hui de réactualiser des événements du passé. Et c'est bien l'exposition de Marseille et le temps passé avec Claude Mutafian à cette occasion qui m'a fait prendre conscience que l'écrit n'était pas un objet à deux dimensions mais à trois, voire quatre dimensions.

Cette nouvelle perspective que le travail de lecture aux côtés de Claude m'avait ouverte s'est concrétisée quelques années plus tard au cours d'une visite de Maxime Goepf. Ce dernier, explorateur infatigable de la Cilicie, venait présenter au spécialiste de la Cilicie plusieurs de ses découvertes et faisait défiler quelques-unes des centaines de photographies qu'il avait prises lors des voyages qu'il avait entrepris à la recherche des traces du patrimoine architectural du royaume d'Arménie en Cilicie. C'était le 16 février 2012. Soudain, à la vue d'une reproduction d'une inscription monumentale, Claude Mutafian réagit par un sursaut : il n'en croit pas ses yeux. Mais sa connaissance des sources et de la documentation concernant la Cilicie ne le trompe pas : il s'agit bien de l'inscription du bailli Constantin de Paperôn, réputée disparue à l'instar de l'inscription du connétable Smbat. Cette inscription, redécouverte, relue et remise en contexte historique, fera finalement l'objet d'un article écrit à six mains (*Revue des études*

arméniennes 34 [2012], p. 243-287) mais surtout elle m'a fourni un excellent prétexte pour accompagner Maxime Goepp en Cilicie et de voir de mes yeux ce texte *in situ*, gravé en 1241 sur le mur sud de l'église Saint-Sauveur érigée à quelques kilomètres de Papefôn : un travail de terrain que mes recherches sur la langue arménienne n'auraient jamais autorisé mais que ma rencontre avec Claude a rendu possible.

Le souvenir de cette visite de Maxime Goepp me donne l'occasion de dire que Claude Mutafian garde toujours grande ouverte la porte de son bureau et met à la disposition de qui le désire tous les livres de sa riche bibliothèque. Ce cabinet de travail, de lecture et d'étude, situé au cœur du quartier latin à Paris, à quelques encablures de la bibliothèque de la Sorbonne, de la bibliothèque Sainte-Geneviève, de la bibliothèque de l'École normale supérieure – sans parler de la Librairie orientale Samuelian –, est aussi un lieu de rencontres : les chercheurs du monde entier s'intéressant de près ou de loin aux études arméniennes – historiens, historiens de l'art, spécialistes de la littérature, conservateurs de bibliothèque, directeurs de musée, archéologues, architectes, photographes, cartographes, etc. – peuvent s'y croiser. J'ai ainsi eu l'occasion de faire la connaissance, dans ce bureau, d'érudits qui n'étaient pour moi qu'un nom sur la couverture d'un livre ou une signature au bas d'un article et qui sont devenus, par l'entremise de Claude, des êtres de chair et de sang.

Au passage, il faut ajouter que non seulement tous les savants ou amis venus d'Arménie ou d'ailleurs ont accès au bureau de Claude Mutafian mais qu'ils peuvent aussi être hébergés par le maître du logis, qui ne ménage pas sa peine pour les recevoir.

Si le bureau de Claude est un lieu de rencontres où les conversations autour de l'Arménie et des Arméniens se nourrissent des livres qui couvrent les murs, son appartement était – et reste – un lieu de rencontres où les convives avaient le plaisir de partager, dans une ambiance cordiale et chaleureuse, une bonne table avec Marie, l'« ange gardienne » – pour reprendre une expression de Claude Mutafian à propos de l'auteur de ces lignes – qui savait tempérer les élans parfois excessifs de son époux à propos de tel ou tel sujet et dont la clairvoyance et la sagacité n'avaient d'égal que la bienveillance et la générosité.

La générosité est une qualité partagée par Claude, qui est toujours prêt à conseiller, rendre service, lire, relire, corriger les textes des uns ou des autres, toujours disponible pour aider un collègue, prêter son concours à toute personne qui le sollicite, ne refusant jamais de faire profiter de son expérience et du savoir qu'il a acquis au fil des décennies concernant aussi bien le royaume d'Arménie cilicienne que la Grande-Arménie ou la diaspora. Il répond toujours présent aux nombreuses demandes de conférence devant un public plus ou moins averti, de participation à des émissions de radio ou de télévision – en particulier à l'émission dominicale « Chrétiens Orientaux, Foi, Espérance et Traditions ». La transmission des connaissances fait partie intégrante des activités de Claude Mutafian, qui est l'auteur de plusieurs manuels de mathématiques – dédiés à des cantatrices – et a enseigné les mathématiques pendant quelques dizaines d'années en divers endroits du monde : à l'université d'Orsay, à l'université de Princeton (États-Unis), à l'université de La Havane (Cuba), à l'université Paris-Nord (Villetaneuse), ou encore à Mexico et à Erevan. La recherche ne se conçoit pas à ses yeux sans la communication, l'instruction, la formation, la vulgarisation.

Le temps passé en compagnie de Claude, à l'occasion de la préparation de ses derniers livres *L'Arménie du Levant* parue en 2012, *La Saga des Arméniens de l'Ararat aux Carpates* parue en 2018 ou encore *Jérusalem et les Arméniens jusqu'à la conquête ottomane (1516)*, sous presse aux Belles Lettres, m'ont permis d'observer le chercheur en action, de le voir à l'œuvre. Doté d'un esprit curieux, exigeant dans sa démarche, rigoureux, soucieux de la précision, attentif au moindre détail, sans cesse en quête d'un nouveau document, n'hésitant pas à reconsidérer une source méconnue – quelle que soit la langue de celle-ci –, Claude lit tout ce qu'un historien digne de ce nom doit lire : chroniques historiques, colophons de manuscrits, légendes de miniatures, inscriptions lapidaires, sceaux, monnaies, firmans, archives, cartes postales, journaux, revues, etc. Rien ne lui échappe et tout trouve sens auprès de lui. J'en veux pour preuve la miniature représentant l'Adoration des Mages au folio 15v du manuscrit 251 du Patriarcat arménien de Jérusalem, enluminé en 1260 par T'oros Rōslin, où figurent cinq personnages de coiffe et de type mongols, absents de deux autres miniatures que T'oros Rōslin a peintes de la même scène. Comme ses prédécesseurs, Claude y a vu des

Mongols mais replaçant cette miniature dans son contexte historique et s'appuyant sur la légende placée au-dessus des personnages qui se lit Թաթարն էրեկ այսաւր *T'at'arn erek aysaur*, « le Tatare est arrivé aujourd'hui », il en a donné une interprétation tout à fait pertinente. En outre, imaginant que T'oros Rōslin avait accompagné le catholicos Constantin I^{er} descendu de la forteresse de Hromkla pour bénir Houlagou et son armée qui s'apprêtait à traverser l'Euphrate, Claude a qualifié l'illustration du miniaturiste de « journalisme photographique » (« T'oros Rōslin et les Mongols », *Mélanges Félix Ter-Martirosov*, Erevan 2015, p. 347). Cette idée de « journalisme » se perçoit également à la lecture que fait Claude Mutafian des colophons qui « constituent, avec les inscriptions, les sources principales de première main, donc les plus fiables » (*L'Arménie du Levant*, t. I, p. 17). Dans la somme qu'est son *Arménie du Levant*, on compte environ 1500 renvois aux seuls recueils des colophons des manuscrits arméniens, publiés à Erevan entre 1950 et 1988, qui sont autant de citations tirées des mémoriaux des copistes dont certains forment de « véritables chroniques » (*ibidem*).

Ainsi, les catalogues de manuscrits, les recueils de colophons, les collections d'inscriptions lapidaires, les ouvrages de numismatique, etc., sont des instruments indispensables à l'historien et Claude Mutafian en use sans limites. De la même façon, s'il est à l'affût des dernières publications sur les sujets qui l'occupent, Claude s'évertue invariablement à vérifier tout ce qu'il y lit, il s'efforce de remonter à la source, de rechercher les textes de première main, de revenir à la rédaction originale ou à recourir, s'il le peut, au document-source, qui vaut toujours mieux que ce qui en est dit dans les livres. C'est pourquoi il n'hésite pas à quitter son bureau et à se déplacer pour vérifier une donnée livresque ou retrouver un manuscrit dans une bibliothèque, à se rendre dans les réserves d'un musée, que ce soit en France ou à l'étranger. En particulier, il fréquente assidûment les lieux où se trouvent les collections les plus importantes de manuscrits arméniens, et j'ai eu le plaisir de suivre Claude Mutafian dans ses visites au Maténadaran d'Erevan, au patriarcat arménien de Jérusalem et aux sièges de la congrégation des Mékhitaristes, à Venise et à Vienne.

Quand, pour une raison ou une autre quelque chose lui échappe, Claude fait alors appel aux compétences du spécialiste qui saura lui apporter une réponse au problème qui se présente. De la même façon,

il s'est entouré d'un cercle d'amis – qui ont reçu le doux nom d'« exploités heureux » (*L'Arménie du Levant*, p. 6) – dont les qualités viennent compléter celles de l'historien : je citerai, notamment, Hraïr Khatcherian, « photographe exceptionnel », et Éric Van Lauwe, « magicien de la cartographie » (*La Saga des Arméniens de l'Ararat aux Carpates*, p. 439). L'histoire est effectivement inséparable de la géographie et la cartographie occupe une place importante dans les ouvrages de Claude Mutafian, qui a publié en collaboration avec Éric Van Lauwe un *Atlas historique de l'Arménie*, à Paris en 2001. Ce livre est épuisé et je crois savoir qu'une nouvelle édition de ce recueil de cartes est en préparation, qui sera enrichie d'explications historiques où l'art aura une large place. Mais que seraient ces différents ouvrages sans les généalogies, les tableaux et les index, instruments indispensables au lecteur, élaborés par l'auteur et réalisés sous sa férule bienveillante par de fidèles amis ?

Si, dans *La Magie de l'écrit*, Claude Mutafian a employé l'expression « la fureur d'écrire » pour caractériser l'Arménie et les Arméniens, on pourrait tout aussi bien attribuer cette passion de l'écriture au mathématicien devenu historien. Ajoutons que, dès 1988 et son premier livre paru aux Belles Lettres, *La Cilicie au carrefour des empires*, cette passion de l'écriture s'est accompagnée d'une passion tout aussi ardente : la passion de l'image. Claude porte une attention toute particulière à l'image et, veillant tout spécialement aux rendus des couleurs des reproductions qui enrichissent ses publications, il n'hésite pas, s'il le faut, à aller chez l'imprimeur pour y contrôler la palette de couleurs. Au fil des années, au fil des décennies, l'iconographie occupe une place de plus en plus importante dans les textes de l'historien de la Cilicie. Ainsi, dans les derniers ouvrages qu'il a publiés, le document photographique n'illustre plus un texte, mais c'est l'image qui est mise au premier plan et que commente un texte. L'iconographie devient ainsi le centre, le moteur de la recherche et acquiert le statut de source historique à part entière. Claude Mutafian, historien de l'Arménie cilicienne, est devenu un peintre de l'Arménie.

CONCLUSION

(par **Gérard Dédéyan** et **Agnès Ouzounian**)

Claude Mutafian, c'est une passion – dans les deux sens du terme – de l'Arménie : interpellé, au plus profond de lui-même, par les tentatives,

plus menaçantes que jamais aujourd'hui, d'effacement de l'Arménie, il leur oppose une « parade » monumentale, par l'abondance de ses publications, lisibles et visibles par tous, par l'agrément esthétique de celles-ci, et « imparable », par l'extrême exigence scientifique dont elles témoignent.

Ce vaillant combattant, par son charisme relationnel, mobilise une armée : collaborateurs, usagers de sa bibliothèque et quasi disciples, auditeurs de ses conférences, visiteurs des expositions qu'il organise, lecteurs de ses écrits.

On oserait presque dire que sa vigueur de savant toujours généreusement engagé – malgré la disparition, il y a deux ans, de Marie Duflo, mathématicienne de renommée internationale, qui avait partagé sa vie et s'était consacrée, une fois à la retraite, à l'aide aux populations en détresse – fait en quelque sorte écho au statut historique des Arméniens, fils aînés de la Nouvelle Alliance par leur conversion précoce à la religion du Christ, comme le rappellent avec insistance les chroniqueurs de l'Âge d'Or.

Gérard Dédéyan

Université Montpellier-3

Agnès Ouzounian

Institut national des langues et civilisations orientales, Paris

**ՄԵԾ ՀԱՅՔԻ ԳՈՒԳԱՐՔ ՆԱՀԱՆԳՐ ԸՍՏ Է ԳԱՐԻ
«ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի**

Ալեքսան Յակոբեան
ՀՀ ԳԱԱ ԱԻ

Քանալի բառեր. «Աշխարհացոյց», Մեծ Հայք, Վիրք, Գուգարք, Գուգարենե, բոլեշխ, Կանգարք, Թռեղք, Ծորուհոր, Բողնուհոր, Զուխշակոր:

«Հանդէս ամսօրեայ»-ի 2013 թուականի տարեգրքում լոյս տեսած Է դարի «Աշխարհացոյց»-ի՝ մեր պատրաստած գիտա-քննական բնագրի¹ ի յայտ գալուց յետոյ առաջացաւ աշխարհացոյցեան Հայաստանի նոր քարտէզը պատրաստելու անհրաժեշտութիւնը, որն առաջիկայում կ'աւարտուի, քանի որ արդէն քարտագրուած է ողջ հայկական աղբիւրագիտական նիւթը եւ թարգմանածոյ այլալեզու գրականութիւնը:

Մեր խնդրի համար չափազանց կարեւոր է Մեծ Հայքի նահանգների ու գաւառների սահմանների ճշգրտումը հնարաւոր առաւելագոյն մանրամասնութեամբ: «Աշխարհացոյց»-ի անանուն հեղինակի կողմից գաւառների թուարկման տրամաբանական հերթականութիւնը բաւականաչափ ընկալելու շնորհիւ լուծումները դառնում են աւելի հասանելի՝ գոնէ նահանգների (աշխարհների) մեծ մասի համար, այդ թւում՝ այժմ նաեւ մեր աշխարհացոյցեան հայրենիքի ամենահիւսիսային նահանգ Գուգարքի դէպքում: Ներկայ քննութեամբ մի քանի կարեւոր սրբագրումներ են կատարուում նրա գաւառների տեղորոշման հին պատկերացումներում, որոնք ձեւաւորուել էին պատմական աշխարհագրութեան մեր նախորդ մասնագէտների մօտ (Հ. Ղ. Ինճիճեան, Հ. Ղ. Ալիշան, Սուրեն Երեմեան, Բարկէն Յարութիւնեան², Թաթիկ Յակոբեան, Լեւոն Յակոբեան, Ռոբերտ Հիւսըն եւն):

Նախ՝ մի քանի խօսք մեր «Աշխարհացոյց»-ի մասին: Վաղ միջնադարի այդ եզակի աշխարհագրական երկը չիմբագրուած չհամառօտուած տարբերակով մեզ հասել է միայն մէկ գրչագրում (հէնց նշուած պատճառով՝ նրա շրջանառու՝ «ընդարձակ խմբա-

¹ Անանուն Է դարի 2013, սն. 35-194:

² Հարությունյան 1977, հ^մ 2, էջ 177-178:

գրություն» անուանումը չի կարող ճշգրիտ համարուել): Դա Վենետիկի Մխիթարեան միաբանության Մատենադարանի հ^մ 1245 ձեռագիրն է՝ ընդօրինակուած Հայոց ՌԾԳ թուականին (1604 թ.), ցաւալիօրէն, իսկտ անուշադիր գրիչ Ստեփանոսի կողմից (1_ա-38_բ էջերում ընդօրինակուած երկի վերտառութիւնն է. «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ ասացեալ»³: Փոխարէնը՝ համառօտուած-խմբագրուած տարբերակն առկայ է մի քանի տասնեակ ձեռագրերում (դրանց համառօտ քննութիւնը կատարել է Բ. Յարութիւնեանը)⁴:

Ինչպէս բաւականին մանրամասն փաստարկել ենք երկի 2013 թ. գիտա-քննական հրատարակութեան ներածութեան մէջ, «Աշխարհացոյց»-ը սկզբնապէս շարադրուել է իբրեւ մի ծրագրային փաստաթուղթ-տեղեկատու՝ Սասանեանների մայրաքաղաք Տիգրնում 615/616 թ. կայացած⁵ (մէկ այլ հաշուարկով՝ 617/618-ին⁶), այսպէս կոչուած՝ «Պարսից ժողովին» մասնակցող հայկական «պատուիրակութեան» կողմից օգտագործուելու նպատակով: Մօտաւորապէս 642 թ. իր աշխատանքը սկսած եւ 659 թ. առաջին կէսին գրիչը վայր դրած Սեբիոս պատմիչի⁷ ուղիղ վկայութեամբ՝ Տիգրնի ժողովին մեկնողներն իրենց հետ էին վերցրել նման մի ուրիշ «օժանդակ» նիւթ՝ Ազաթանգեղոսի երկը («Ունէին պատրաստական անդ ընդ ինքեանս զգիր սրբոյն Գրիգորի»)⁸: Միւս զուգահեռը «Կնիք հաւատոյ» ժողովածոն է, որի ստեղծումը եւս կապուում է Կոմիտաս կաթողիկոսի եւ «Պարսից ժողովի» համատեքստի հետ⁹: Սեբիոսի ունեցած տեղեկանու (ինֆորմացիայի) համաձայն՝ անձամբ Խոսրով Ապրուէզ արքայի եւ Վրկանի նշանաւոր հայ մարզպան Սմբատ Բագրատունու զխաւորութեամբ անցկացուած այդ «ժողովում» քննարկուել էր լոկ դաւանական այն խնդիրը, որի լուծմամբ Հայոց եկեղեցու դաւանանքը հաստատուել էր իբրեւ Սասանեան Իրանի քրիստոնէայ

³ Նկարագրութիւնը տե՛ս Մայր ցուցակ 1924, էջ 811-818:

⁴ Հարությունյան 2007, էջ 21-24:

⁵ Հմմ. Գանիէլեան 1981, հ^մ 4, էջ 197:

⁶ Տե՛ս Van Esbroeck 2001, p. 162-175.

⁷ Տե՛ս Յակոբեան 2005, էջ 213-270:

⁸ Տե՛ս Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն 1939, գլ. ԽԴ, էջ 124; Պատմութիւն Սեբէոսի 1979, էջ 150:

⁹ Կնիք հաւատոյ 1914; Կոմիտաս կաթողիկոս 2005; Van Esbroeck 2001, p. 162-175.

համայնքների համար միակ ընդունելին (բնագրում՝ «Յորոյ վերայ հրաման ետ արքայ Խոսրով, եթէ ամենայն քրիստոնէայք, որ ընդ իմով իշխանութեամբս են՝ հաւատ զՀայոցն կալցին»¹⁰): Սակայն լրացուցիչ աղբիւրագիտական նիւթի համադրումը թոյլ է տալիս մտածել, որ նոյն ժողովում կամ աւելի ճիշտ՝ նրա համատեքստում, ըստ ամենայնի, քննարկուել ու լուծուել են ստացել նաեւ տարածքային ահռելի ձեռքբերումներ ունեցած Իրանական տէրութեան համար կարելորագոյն այլ պետական, վարչա-քաղաքական խնդիրներ: Մասնաւորապէս՝ Ժ դարավերջի արցախցի պատմիչ Մովսէս Դասխուրանցուն¹¹ հասած տեղեկութիւնների համադրումից երեւում է, որ այսրկովկասեան երկրների որոշակի ինքնավարութիւնն ապահովող Հայոց, Վրաց եւ Աղուանից «իշխան»-ների հաստատութիւնները (ինստիտուտները) հիմնադրուել են (անկախ նախորդող դարաշրջանի նմանատիպ, բայց աւելի թոյլ հաստատութիւններից) հէնց «Պարսից ժողովի» համատեքստում¹²: Իսկ այդ դէպքում պետք է ընդունել, որ նշուած ինքնավարական հաստատութիւնները ենթադրում էին ոչ միայն Սասանեան կենտրոնական մարմինների կողմից Հայոց, Վրաց եւ Աղուանից «իշխան»-ների իրաւասութիւնների յստակ սահմանում, այլեւ այն վարչատարածքների ճշգրիտ առանձնացում, որտեղ այդ իրաւասութիւնները պիտի գործառուէին: Եւ ահա մեր «Աշխարհացոյց»-ն էլ հէնց փորձում է սահմանել տուեալ տարածքները հնարաւորին չափ յստակ եւ բազմաթիւ աղբիւրների հիման վրայ՝ ողջ մոլորակի աշխարհագրութեան համատեքստում:

Ընդ սմին՝ Հայք աշխարհ-շահրի դէպքում Է դարի հայ աշխարհագէտը դա անում է 385/387 եւ 591 թթ. բաժանագծերի բացարձակ անտեսումով (թէպէտ եւ երկի բնագիրը բազմազան ու կարելոր տուեալներ է հաղորդում այդ բաժանագծերի մասին): Ուշադրութեան առնենք, որ «Աշխարհացոյց»-ում յատուկ նշում են նաեւ, նորօրեայ եզրոյթով ասած՝ «վիճելի» տարածքները («որ ի Հայոց հանեալ են» կամ «ի Հայոց առեալ են» բառերով)՝ Գուգարք նահանգի գաւառները՝ Վիրք-Վարջան աշխարհ-շահրի

¹⁰ Տե՛ս **Սերէոսի եպիսկոպոսի** Պատմութիւն 1939, գլ. ԽԴ, էջ 125; Պատմութիւն **Սերէոսի** 1979, էջ 151:

¹¹ Դասխուրանցու եւ նրա «Պատմութիւն Աղուանից» երկի մասին առաւել մանրամասն տե՛ս **Акопян** 1987, с. 151-270.

¹² Մանրամասն տե՛ս **Անանուն Է դարի** 2013, սն. 37-45; **Յակոբեան** 2020, էջ 128-135:

դէպքում, Արցախի եւ Ուտիքի գաւառները՝ Ադուանքի դէպքում, եւ Փայտակարան նահանգը՝ Ատրպատական աշխարհի դէպքում¹³:

Արդ՝ Գուգարք նահանգի պատմաաշխարհագրական քրննութիւնը սկսենք նրանից, որ Ստրաբոնի «Աշխարհագրութիւն» երկում, Հայաստան-Արմենիա երկրի նկարագրութեան հատուածում՝ XI գրքի XIV գլխում (պարագրաֆ 4)՝ Հայաստանի Փաււնէ կամ Փաււնէ (Փօսոյն, ձեռագրերում՝ նաեւ Փօսոյն – Փաւնէնէ, Փօսոյն – Փաւնէնէ), Կօմիսէնէ (Կօմիսոյն) եւ Օրխիստէնէ (կամ Օրքիստէնէ) երկրամասերը (յուն.՝ «եպարխիս» – բառացի՝ «գաւառ») յիշուած են Արաքսի եւ Կուրի գետկիցից Կուրի ափով դէպի հիւսիս-արեւմուտք տարածուող Արաքսէնէ (Արաչոյն, բնականաբար, իր ծայր արեւելեան հատուածով), Սակասէնէ (Տակասոյն, աշխարհացոյցեան Շակաշէն գաւառ եւ շրջակայք) եւ Գօգարէնէ (Գօգարոյն, Աշխարհացոյցեան Գուգարք նահանգի արեւելեան կէս¹⁴) գաւառներին յաջորդող շարքում¹⁵: Բնագիրը Հր. Անառեանի թարգմանութեամբ հետեւեալն է (մեր որոշ սրբագրումներով)¹⁶. «Հայաստանի գաւառներից են նաեւ Փաւնէնէն, Կօմիսէնէն եւ Օրխիստէնէն, որ հայթայթում է մեծաքանակ [պատերազմական] ձի: Խորձէնէն [Մօրչոյն] եւ Կամբիսէնէն [Կամբսոյն] [Հայաստանի] ամենահիւսիսային [գաւառներն] են եւ շատ ձիւնառատ, որովհետեւ մօտ են Կովկասեան լեռներին եւ Վիրքին ու Կողքիսին»: Այստեղ տեսնում ենք, որ Օրխիստէնէի այս յիշատակմանը յաջորդող տեղեկութիւնը վերաբերում է արդէն Գօգարէնէից արեւմուտք ընկած Խորձէնէ – Կղարշքին (այլ անտիկ երկերում՝ նաեւ Մօլարշոյն – Խորարձէնէ, Կարաշոյն – Կատարձէնէ, «Աշխարհացոյց»-ում՝ Գուգարքի կազմում): Այստեղ Խորձէնէի հետ յիշատակուող Կամբսոյն գաւառանունը շտկելու անհրաժեշտութեան մասին գրել ենք մեր 1987 թ. Աշխատանքում¹⁷: Տուեալ դէպքում յտորանալով քերականական, բնագրագիտական եւ այլ մանրամասների մէջ՝ նշենք, որ Ստրաբոնի բուն աղբիւրում «Կամբիսէնէ»-ի փոխարէն որոշ հաւանականութե-

¹³ Հմմ. անդ, էջ 133-134:

¹⁴ Հմմ. Հարությունյան 2003, հ^տ 1, էջ 139:

¹⁵ **Strab.** Geogr. XI, XIV, 4. Այս բնագրի քննութեան համար տե՛ս **Յակոբեան** 2009, էջ 402-403:

¹⁶ **Ստրաբոն** 1940, էջ 55-57:

¹⁷ **Акопян** 1987, с. 28-30.

ամբ կարող էր նաև լինել «Կարաձենե», գուցե եւ՝ արձանագրուած ոչ թէ իբրև առանձին գաւառ, այլ որպէս Խո[ւար]ձէնե-Կղարջ-քի անուան մի երկրորդ տարբերակ:

Պտղոմէոսի Աշխարհագրութիւն-ում յիշատակուում է նաև մեզ հետաքրքրող աշխարհը՝ *Օբարէնե* տարբերակով, որը կարելի է, գրչական աղաւաղման հետեւանք համարել: Աշխարհագետի տուեալ հատուածի կարելորութիւնից ելնելով՝ տալիս ենք այն ամբողջութեամբ եւ մեր՝ բառացի թարգմանութեամբ. «Χῶραι δὲ εἰσιν ἐν τῇ Ἀρμενίᾳ ἐν τῷ ἀπολαμβανομένῳ μεταξὺ Ἑυφράτου καὶ Κύρου καὶ Ἀράξου ποταμῶ, τμήματι παρὰ μὲν τὰ Μοσχικὰ ὄρη ἢ Καταρζηνή ὑπὲρ τοὺς καλουμένους Βόχας, παρὰ δὲ τὸν Κύρον ποταμὸν ἢ τὴν Ὠβαρηνήν καὶ ἢ Ὠτηνὴν, παρὰ δὲ τὸν Ἀράξην ποταμὸν ἢ δὲ Κολθηνήν καὶ ἢ ὕπ' αὐτὴν Σοδοικηνήν, παρὰ δὲ τὸν Παρυάδρον τὸ ὄρος ἢ τὴν Σιβακηνήν καὶ ἢ Σακασηνήν» («Իսկ մարգերը Հայաստանում [սրանք] են. [առաջինը՝] Եփրատ, Կուր եւ Արաքս գետերի միջեւ շրջափակուած հատուածում. Մոսխիկա լեռների մօտ [=գրաբարի՝ *րատ*, այս դէպքում՝ *երկայնքով*]՝ Կատարձենե, [որը գտնուում է] Բոխա կոչուածից [բառացի՝ Բոխաներ կոչուողներից] վերեւ; Կուր գետի մօտ [=երկայնքով]՝ Օբարէնե [=Գօսարէնե] եւ Օտէնե; Արաքս գետի մօտ [=երկայնքով]՝ Կոլթէնե եւ նրանից վեր [գտնուող] Սոդուկէնե; իսկ Պարիւադրէս լեռների մօտ [=երկայնքով]՝ Սիբակէնե [=Սիսակէնե] եւ Սակասէնե»)»¹⁸:

Անտիկ աղբիւրներից յետոյ Մովսէս Խորենացու տեղեկութիւններն են ամենից մանրամասնը Գուգարք նահանգի մասին¹⁹: Ընդ որում Պատմաօր բնագրում «բայց Աշոցքի տէրութեանն» նշանակուում է ոչ թէ *բայց*, այլ *բացի*:

Տեղին նշենք, որ Կորիւնի տեղեկութիւնները եւս Մաշտոցի երկրորդ հիւսիսային ուղեւորութեան մասին ցոյց են տալիս, որ Հայոց Արշակունեաց թագաւորութեան վերացմանը եւ մարգպանութիւնների հիմնադրմանը վերաբերուող 428 թ. Սասանեան վարչական ռեֆորմի արդիւնքում առաջ եկած նոր վարչական միաւորների՝ Վարջան եւ Առան մարգպանութիւնների կազմում Գուգարք եւ Ուտիք նահանգները ինքնուրոյնութեան շատ բարձր կարգավիճակ են ունեցել: Բանն այն է, որ պատմիչի շարադրանքում, ըստ էութեան, չի զգացուում որեւէ ռճական տարբերութիւն Մաշտոցի ընդունելութիւնն իրականացնելու նկարագրութիւննե-

¹⁸ Ptol. Geogr., V, XII, 4.

¹⁹ Տե՛ս Խոթք. 1913, Բ.ը, էջ 114; Մովսէս Խորենացի 2003, էջ 1859-1860:

րի միջեւ՝ մի կողմից՝ թագաւորական իշխանութեան կարգավիճակ ունեցող Բուն Աղուանից եւ Վրաց արքունիքներում, իսկ միւս կողմից՝ Գարդման եւ Տաշիր գաւառների իշխանների՝ Խուրսի եւ Աշուշայի կողմից:

Ի դէպ, Կորինի տեղեկութիւններից երեւում է, որ Մաշտոցի՝ իւրօրինակ զոյգերով կատարուած՝ դէպի Աղուանք – Գարդման, եւ ապա՝ Վիրք – Գուգարք (նորօրեայ եզրոյթով ասած՝ «մաքոքային») այցելութիւնների գլխաւոր նպատակը, ըստ երեւոյթին, պարզապէս լուսաւորական չի եղել (ինչպիսին որ, թերեւս, անելի շատ էր հիւսիսային առաջին ուղեւորութեան պարագայում դէպի Վիրք): Ենթադրելի է, որ Մաշտոցի վերը նշուած «մաքոքային հանդիպումների» արդիւնքում է լուծուել պետականութիւնը հէնց նոր կորցրած հայ ժողովրդի եւ Հայոց եկեղեցու համար չափազանց կարեւոր ազգային-ռազմավարական մի խնդիր, այն է՝ Վիրքի եւ Աղուանքի թագաւորութիւնների եւ այս կամ այն չափով նրանց ենթակայացուած էթնիկապէս հայկական շրջանների միջեւ ձեւաւորուելիք յարաբերութիւնների կոնկրետ պայմանների ճշտումը: Ըստ ամենայնի՝ դրանից յետոյ է, որ պետական աջակցութիւնից արդէն զրկուած հայերէնը պահպանում է իր՝ նորօրեայ եզրոյթով՝ «պետական» լեզուի կարգավիճակը Ուտիքում եւ Գուգարքում, եւ բացի այդ, ամենայն հաւանականութեամբ, շարունակում մնալ որպէս ժամասացութեան երկրորդ լեզու Բուն Աղուանքում ու Վիրքում (աղուաներէնի ու վրացերէնի կողքին)²⁰:

Է դարի անանուն հեղինակի «Աշխարհացոյց»-ում Գուգարք նահանգի (աշխարհի) նկարագրութիւնը հետեւեալն է.

«Գուգարք՝ ի մտից Ուտիաց[ւ]ոց²¹: Ունի գաւառս ինն. գՁորովոր, գԿողբափոր, գԾորափոր²², գՏաշիր, գԹռեղս, գԿանգարս²³, գՋաւլախս²⁴ Վերի, գԱրտահան²⁵, գԿլարնս²⁶: Լի²⁷ անա-

²⁰ Մանրամասն տե՛ս **Յակոբեան** 2020, էջ 138-139:

²¹ Համառոտում կայ Ուտիոյ *փխն*. Ուտիաց[ւ]ոց:

²² Համառոտում՝ «Ծորովոր, Կողբովոր» հերթականութիւնն է:

²³ VS գԿանկարս *փխ* գԿանգարս (վեր.՝ ըստ համառօտի, որտեղ Կանգարք է (հմմ. բարբառային Գ → Կ → Գ):

²⁴ V գՋովախս, S գՋովախս *փխ* գՋաւլախս (վեր.՝ ըստ համառօտի):

²⁵ V գԱրտաջան *փխ* գԱրտահան (վեր. Մուքրեանի՝ ըստ միւսների եւ համառօտի, որտեղ «Արտահանք, Ջաւախք, Կղարջք (AE Ջավախք, Կաղարջք)» է):

²⁶ V գԿալարնս, S գԿալարջս *փխ* գԿալարնս (վեր.՝ ըստ նախորդի եւ յաջորդի):

լուծ եւ հաւճար²⁸ ծառ, եւ սորովիլ եւ տաւսախ: Ունին արդ Վիրք՝ հանեալ ի Հա[յ]ոց»:

Իսկ «Աշխարհացոյց»-ում Վիրք աշխարհի նկարագրութեան աւարտն է.

«ԻԵ. Աշխարհ [Վեռիա է, այսինքն՝] Վիրք, յելից կալով Ե-գեր[այ], յերի Սարմատիո[յ] առ Կաւկասով, մինչեւ ցԱղ[ո]ւանից սահման, եւ մինչեւ ցՀայոց սահմանն՝ առ Կուր գետովն:

Եւ գաւառք են այս. սկսեալ ի Վոհ գետոյ եւ ի հիւսիսո[յ] Տա[յ]ոց՝ Կարճք, գոր ի Հա[յ]ոց հանէ, եւ Շաւշէթ, [եւ Սամցիխէ, եւ Աճարա, եւ Թորգով. եւ] Արտահան գաւառ, գոր առեալ է ի Հա[յ]ոց, ընդ որ անցանէ գետն հզաւր Կուր, որ ի Տա[յ]ոց գալով, ի Կող գաւառէ՝ ընդ ստորոտս Ջաւախաց իջանէ [ի] Սամցիխէ եւ դառնալ[յ] յարեւելս, անցանելով ընդ Վերի աշխարհն Վրաց, բաժանելով զգաւառսն՝ զԳոռոթիսիսեւ, զՏոռնիսիսեւ, որո[յ] ի զլուխն՝ Դեկիցիխէ բերդ, եւ զՄանգլեացփոր [եւ զԲուխշափոր] եւ զԲողնովոր, մինչեւ ցՊարուար գաւառ, որ պատէ զՏիփիսիս քաղաքաւ. բայց երեք փորակդ ի Հայոց հանէ:

Իսկ ըստ հիւսիսո[յ] գետի մեծին Կուրա[յ], հանդէպ Թար [հաւանաբար՝ վերականգնելի է Թար[գաւ] գաւառի փխն. V-ի Թար գաւառի. տէն ...**գաւ գաւ...**՝ նոյնացնելով դս Թորգով գաւառի հետ, որի վերականգնումը տրտում է ըստ համառօտի] գաւառի՝ Արգ[ո]ւ-էթ[ո]ւ լերունք, եւ ի նոյն կողմանէ դաշտին՝ Դ[ո]ւան եւ Աչէւէտիսիսեւ եւ Քորդիթ, Իրիկոսիսեւ, մինչեւ ցՍացխումէթ, որ՝ ի ստորոտս Կովկասու: Յորմէ հոսի Լէխ գետ, եւ անցեալ ի հարաւ կոյս՝ իջանէ ի Կուր. եւ առ նովաւ՝ Խառնիսիսեւ ի Յիրասձմայա[յ], մինչեւ ցԱրագւ գետ, որ հոսի ի Կաւկասա[յ], եւ գնալով ընդ հարաւ, ընդ Ախալցիխէ բերդ՝ եւ անցան[է] ընդ մէջ [Մ]ցիսիթա[յ] քաղաքի եւ բլրո[յ] Սուրբ Խաչին, իջանէ ի Կուր եւ բովանդակի ի Վերի աշխարհ Վրաց:

Յորմէ յառաջ խաղացեալ Կուր՝ գա[յ] ի Տիփիսի մայրաքաղաք Վրաց՝ զնա թողով Պարուարաւ, եւ զԾովփփոր եւ զԿողբփփոր եւ զՁորփփոր՝ հոմանուն գետաւք, մինչեւ ց[Հ]նարակերտ քաղաք, գորս ի Հայոց հանեալ է: Որոց ըստ հարաւո[յ]՝ լեռնադաշտքն Ջաւախաց՝ բազում լճաւք, լի զանազան ձկամբք, եւ Թռեղք եւ Տաշիր, որոց ի հարաւ՝ Կանգարքա[յ]. զամենդ ի Հայոց հանեալ է:

²⁷ Տ Լինի փխ Լի (V):

²⁸ V հոճար փխ հաճար (վեր. Սուրբեանի՝ ըստ համառօտի. DPv-ում հաւճարաճառ է):

Իսկ հանդէպ դոցա, ըստ հիւսիստ[յ] կողմանէ Կուրա[յ] գաւառք՝ [Կ]իւ[ն]ւէթ, Խերկ, Երծ[ն]ւոյ, Թիանէթ, Ծորէնոր, [[Ծու]քէթ, Չել[է]թ, Վեդիսցիիւն[է], Քուէրա[փոր], Ծուչք: Ունի եւ բերդս եւ գետս՝ յի ձկամբք]»²⁹:

Յատուկ յօդուածով անդրադառնալով Գուգարք նահանգի տեղորոշմանը՝ վերոնշեալ եւ բազմաթիւ այլ բնագրերի քննութեամբ Բարկեն Յարութիւնեանը մի շարք ճշտումներ է կատարել նախորդ, մասնաւորապէս՝ Ս. Երեմեանի պատկերացումներում, օր.՝ շատ կարեւոր Պարուար գաւառի՝ Վիրքին պատկանելութեան հարցում (էջ 193-194), անտիկ շրջանում նահանգի տարածքում երկու ստրատեգիաների՝ Կալարձէնէ-Կղարջքի եւ Գօգարէնէի ինելու խնդրում³⁰ եւն:

Մանրամասները նաեւ ուսումնասիրողի միւս տեսակէտների քննութիւնը. Նախ, ինչ վերաբերում է Կապադոկիական Պոնտոսի մասին Բարկեն Յարութիւնեանի վարկածին, որը յենուում է Տրապիզոնի յիշատակութեան վրայ Եգերաց աշխարհում, ապա կարելի է համաձայնել, որ Տրապիզոնը յիշուել է լոկ իբրեւ «եմպ[ն]ոիոն» (բնագիրն է. «Ունի հինգ քաղաք[ս]՝ Իանի, Կոտալ[յ], Ռոդ[ի]ւպալիս, Աթինալ[յ], Ռիզոն, եւ այլ բազում եմպ[ն]ոիոնս, այսինքն՝ գեղաքաղաքս ծովեզեր[ե]լայս, յորոց է Տրապիզոն», սն. 117), այլ ոչ թե՛ Եգերքի մէջ մտնող քաղաք (դրանք թուարկուած հինգն էին), այսինքն՝ «յորոց է»-ն ընկալելով իբրեւ «որպիսին է [նաեւ]»: Բայց դա միեւնոյն ժամանակ չի նշանակում, թէ երկու աշխարհների «նկարագրութիւնները միահիւսուած են», կամ առաջին աշխարհն անհարկի նախադասութիւն վերականգնելու կարիք ունի, կամ պնդել, որ «Փոքր Եգր աշխարհ կամ երկրամաս տեսնելու հարկ չկայ» (էջ 181): Համառօտի միջոցով վերականգնուած բնագիրն է. «ԻԲ. [Աշխարհ] Պոնտոս Կապադոկիոյ՝ յելից կալով Պոդէմոնական Պոնտոսի, առ երի ծովուն, ցՄոսքական լերինսն, որ բաժանեն ընդ նա եւ ընդ Մեծ Հայք: Ունի լերինս երիս եւ գետս չորս» (սն. 108):

Բարկեն Յարութիւնեանի միւս պնդումը, թէ մարզպանութեան հաստատութիւնը Հայաստանում ստեղծուել է արդէն 387 թուականի բաժանումից քիչ անց (էջ 185-186), հետագայում հերքել է հենց ինքը՝ ուսումնասիրողը: Փոխարէնը, նա հաւանաբար իրաւացի է, որ աղբիւրի «ստեղծման շրջանում Անարա գաւառը չի

²⁹ Անանուն Է դարի 2013, սն. 118-121:

³⁰ Անդ, էջ 177-178:

մտել Վիրքի մէջ», եւ վրացական աղբիւրներում յիշուած Էգրիս-ծղալին ներկայումս Անարիս-ծղալի կամ Նոստէ կոչուած գետն է՝ Ճորոխի ստորին աջ վտակը (սն. 180-181): Նաեւ՝ Կդարջք-Կատարգէնէի՝ Հայոց արքունական տիրոյթ լինելու կռահումը (էջ 182): Նաեւ՝ «Մինչեւ Մեծ Հայքի 387 թ. բաժանումը Գուգարք աշխարհի աշխարհացոյցեան գաղափարը գոյութիւն չուներ» (էջ 183): Սակայն սիսալ է Նիգալ, Մրուղ, Մրիտ գաւառները Կդարջքի մէջ մտցնելը, փխն՝ Եգերքի (էջ 179, 184): Ի դէպ, հեղինակը Գուգարքի մէջ է մտցնում ոչ միայն Կդարջքին հարեւան Նիգալ, Մրիտ, Մրուղ գաւառները, այլ նաեւ Վիրքի գաւառ Ծաւշէթը³¹, սակայն աղբիւրի ուշադիր ընթերցումը ցոյց է տալիս, որ ոչ:

Բ. Յարութիւնեանը ճշտում է նաեւ աշխարհացոյցեան Գուգարք նահանգի կազմաւորման մեխանիզմը՝ կապելով դա այն իրողութեան հետ, երբ Պարսից արքունիքից մարգպանական լիագորութիւններ ստացած Վազգէն բղեշխը³², ով սկզբնապէս լոկ Գուգարք-Գօգարէնէ նահանգի տիրակալն էր (կենտրոնը՝ Տաշիր գաւառում), հէնց այդ պատճառով իր տնօրինութեան տակ ստացաւ նաեւ Կուրից արեւմուտք ընկած Կդարջք-Կատարգէնէ պտղովեռեան նահանգը (էջ 189): Ճիշտ է նաեւ, որ Գուգարքում Հունարակերտ կամ Խանցիխէ անունով գաւառ չի եղել (էջ 190): Նաեւ՝ Կուր գետի ձախ ափին Ջաւախք Ներքին գաւառ չի եղել (էջ 190-191): Ճիշտ է Քուիշափորի վերականգնումը «րնդարձակ» խմբագրութեան մէջ միւս երկու փորակների միջեւ (էջ 193. տե՛ս նաեւ մեր «Աշխարհացոյց», սն 118-119):

Սակայն մենք նկատում ենք, նաեւ Բարկեն Յարութիւնեանից յետոյ, շատ այլ ճշտումներ անելու անհրաժեշտութիւնը:

Սկսենք Ծորոփոր, Կողբոփոր եւ Չորոփոր գաւառներից, որոնք երեքն էլ պէտք է սահմանակցեն Կուր գետի՝ այդպիսով տեղ

³¹ Անդ, էջ 179:

³² «Գուգարաց բղեշխների մարգպան նշանակուելու մասին... տեղեկութիւններ են պահպանուել Չ դարի քարոզիչ Աբիբոս Նեկրեսացու վկայաբանութեան մէջ (**Մարգիս Կակարաձէ**, Ատրի հայրերի վարուց նախատիպերը (վրաց.), Տփղիս, 1928, էջ 44-45): Ըստ վկայաբանութեան մարգպանների ամառանոցն էր «Ռեխան», որը գտնուում էր Վերին Ծալկայի յունական Աւրանլո կամ Արւանլո գիւղի տեղում: Լ. Մելիքսեթ-Բեկի կարծիքով սիսալ է թոյլ տրուած. Պէտք է մարգպանի փոխարէն լինէր բղեշխի (Վրաց աղբիւրները, հտ. Ա, էջ 15): Մեր կարծիքով, այստեղ բղեշխը եւ մարգպանը նոյն անձն են» (**Հարութիւնյան** 1977, էջ 197, ծնթ. 48):

չթողնելով Կանգարքի համար: Տեղին նշենք մեր վերջին դիտարկման մասին, ըստ որի մեր Ձորոփոր գաւառի Հնարակերտ քաղաքը, գուցէ, կարող է լինել Ղազախ քաղաքից արեւմուտք պեղուած Սարիթեփէ ընդարձակ վաղմիջնադարեան հնավայրը³³:

Իսկ Գուգարքի Կանգարք գաւառը հարկ է տեղորոշել ոչ թէ Գուգարքի արեւելքում կամ, ինչպէս անում է Դ. Մուսխելիշվիլին՝ հարաւում՝ Գոգարան գիւղի շուրջը (իրականում՝ ոչ թէ Գուգարք գիւղի տեղում, այլ Սպիտակ քաղաքից արեւմուտք), այլ Ջաւախք գաւառից հարաւ-արեւմուտք եւ Արտահան գաւառից հարաւ-արեւելք՝ նրանց ու Տայք աշխարհի միջեւ, այսինքն՝ Չըլդըր լճից հիւսիս, Խոզափին լճի ու Կարծախի դաշտի շուրջը (գուցէ՝ ընդգրկելով նաեւ լճի ողջ աւազանը): Չարմանալ կարելի է, թէ ինչպէս նախկին հետազօտողները չեն նկատել, որ ըստ Ղազար Փարպեցու՝ Ճարմանայնի դաշտում, Կուրի ափին պարտութիւն կրելուց յետոյ (որտեղ զոհուեց Պատմահայր Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի մեկեանս, Վահան Մամիկոնեանի հետ միասին 482-485 թթ. հակասասանեան ապստամբութիւնը գլխաւորող Սահակ Բագրատունի մարզպանը), Հայոց զօրաջոկատի մնացորդները նահանջեցին Տայք³⁴: Բնագրերն են. «...յարուցեալ վաղվաղակի եւ անյապաղ ամենայն զարքն Հայոց առ արքայն Վրաց հասանէին, եւ բանակեալք առ վայր մի ի գաւառին Կանգարաց դադարէին: ... Չի թէպէտ եւ տաւթ էր ժամանակն, հարկաւորեցան իջանել ի դաշտն Ճարմանայնու: ... գայր հասանէր Միհրան եւ բանակէր դէմ հանդիման բանակին Հայոց, մաւտ ի բանակն յայնկոյս գետոյն, զոր Կուր գետն անուանեն. ... ՀԴ. ... Իսկ զարքն ամենայն Հայոց, ընդ որս եւ անպիտան զարքն Վրաց, հանդերձ թագաւորան իւրեանց Վախթանգաւ, վատնեալք ցրուէին. զորոց զկնի հետամուտ եղեալ գունդքն Պարսից՝ զբազումս կոտորէին, եւ բազումք յայլ եւ այլ տեղիս գերծեալ ապրէին: ՀԵ. Իսկ զարավարն Հայոց Վահան Մամիկոնեան երթայր առ վայր մի յամրագոյն տեղիսն Տայոց, ուր եւ սինլորք փախստէիցն Հայոց առ նա ժողովէին...»:

Կարելոր ենք համարում նաեւ երեք փորակների՝ Մանգլեացփոր, Բողոնփոր եւ Քուիշափոր գաւառների առեղծուածի լու-

³³ Տե՛ս **Халилов** 1960, № 4, с. 68-75; **Османов** 2006, с. 89-90:

³⁴ **Փարպ.** 1904, գլ. Գ.հգ-հե, էջ 132-136; **Ղազար Փարպեցի** 2003, էջ 2327-2330:

ծումը: Իրականում այն կապուած է Գուգարաց տիրակալների բղէշխական գործառոյթների ասանճնայատկութեան հետ:

Նախ նշենք, որ ըստ Պատմահայր Խորենացու հայթայթած տուեալների՝ Գուգարաց բղէշխները սերում էին Աքեմենեան Դարեհ արքայի նախարար ոմն Միհրդատից («Բսկ ընդդէմ լերինն Կաւկասայ կողմնակալ հիւսիսոյ կարգէ գնծ եւ զհաւր ազգն, եւ նահապետութեանն անուն կարդայ բղէաշխ Գուգարացւոց, որ էր լեալ ի գաւակէ Միհրդատայ, Դարեհի նախարարի...»), յաւելելով՝ «գոր ածեալ Աղեքսանդրի՝ թողու իշխան ի վերայ գերութեանն ի Վերիացւոց [*ձեռ. Իվերիացոց*] ազգացն, գոր էած Նարուգողոնոսոր, որպէս Աբիւղենոս պատմէ...»: Նրանք Հայոց առաջին Արշակունի արքայ Վաղարշակի կողմից նշանակուել էին «ընդդէմ լերինն Կաւկասայ կողմնակալ հիւսիսոյ»՝ վարելու «գկողմնակալութիւն հիւսիսային լերանցն եւ Պոնոսոս ծովու»³⁵: Յաւելենք, որ ըստ «Զօրանամակ»-ի՝ Գուգարաց բղէշխին էր վստահուած երկրի «Հիւսիսային Դռան» գօրքերի հրամանատարութիւնը՝ «ՏՇ [(4500) մարտիկ արք]»-ով³⁶:

Վերջին մեր աշխատանքներում փորձել ենք ցոյց տալ, որ անկախ գրականութեան մէջ բղէշխական հաստատութեան մասին հնչած տարասեռ կարծիքներից (որ արտացոլում են տարբեր երկրների ու ժամանակների համար տարբեր աղբիւրներում արձանագրուած դրանց գործառոյթները³⁷)՝ իրականում Հայոց բղէշխութիւնները (հաստատուած դեռ Տիգրան Մեծի օրօք³⁸ եւ տարբեր

³⁵ Խոր., Բ.ը, էջ 114; Բ.ժա, էջ 121; Մովսէս Խորենացի 2003, էջ 1859-1860, 1867-1868:

³⁶ Յակորեան 2011, հ^տ 3-4, էջ 542:

³⁷ Տե՛ս, օր.՝ Toumanoff 1963, p. 155-192; Hewsen 1988-1989, p. 271-319; 1990-1991, p. 147-183; Մանասերյան 1999, էջ 77-85; Յարութիւնեան 2001, սն. 97-180; Хыршудян 2015, с. 21-68.

³⁸ Տե՛ս Marquart 1901, S. 165-173; Մարկվարտ 1903, էջ 1-5, 114-119; Адоиц 1908, с. 283; Կրկյաշարյան 1966, էջ 257-262: Ըստ Պլուտարքոսի մի հեգնալից պնդման՝ Տիգրան Մեծին միշտ ուղեկցում էին 4 արքայիկներ, որոնց շատերը համարում են հենց բղէշխներ: Տե՛ս Plut. Luc. XXI, 6; Պլուտարքոս 2001, էջ 55 («Նրա մօտ շատ թագաւորներ կային սպասաւորի դրութեամբ, իսկ նրանցից չորսին նա մշտապէս պահում էր իր մօտ որպէս ուղեկից կամ թիկնապահ. երբ նա գնում էր ձիով, նրանք ... վազում էին նրա կողքից, իսկ երբ նստած էր ինում եւ գրադում պաշտօնական գործերով, նրանք կանգնում էին նրա շուրջը, ձեռքները կրծքներին»):

ինտենսիվությամբ գոյատևած մինչև Արշակունիների թագաւորութեան բաժանումը Դ դ. վերջին) կատարել են դասական կողմնապահական-կուսակալական փոխարքայութիւնների գործառոյթը (մեր պատմիչների խօսքերով՝ «կողմնակալք», «սահմանապահք», «սահմանակալք»): Այն է՝ բղեշխն իրաւասութիւն ունէր թագաւորի անունից եւ «թագաւորից յետոյ երկրորդի» (Ստրաբոնի խօսքով՝ ὁ δεύτερος)՝ փոխարքայի պատուով իրականացնելու վարչա-տնտեսական ու զինուորական կառավարումը տէրութեան որոշակի սահմանային նահանգում՝ միաժամանակ, սակայն, իր *հրամանատարութեան տակ ունենալով* նաեւ դրա սահմանակից *կրտսեր դաշնակից* (ինչ-որ չափով՝ «սատելիտ») պետութեան ամբողջ զինական ուժն ու կրելով այդ երկրի *արտաքին սահմանի* պաշտպանութեան ողջ պատասխանատւութիւնը: Համարւում է, որ բղեշխի այդ իւրօրինակ ռազմա-վարչական հաստատութիւնը ձեւաւորուել է Իրանական տէրութեան պետական համակարգում Պարթեւների դարաշրջանում՝ գոյատեւելով մինչև Չ դարի Սասանեան արքայ Խոսրով Անուշիրուանի ժամանակը³⁹, իսկ Մեծ Հայքի թագաւորութիւն այն բերել է Տիգրան Բ-ն, ըստ ամենայնի՝ հէնց արքայից արքայի իրաւունքն ու պարտականութիւնները ստանձնելիս: Դրանից վաղ՝ Աքեմենեանների օրօք, Հերոդոտոսին եւ այլ յոյն հեղինակների յայտնի էին Պարսից միապետի այն բարձրաստիճան գորական պաշտօնեաները՝ կոչուած «արքայի աչք»՝ ὀφθαλμός τοῦ βασιλέου (ըստ Անտոնիոս Պալիարոյի վերականգնման՝ հէնց հին իրան. *pati-axš, որից՝ bitaxš եւ հայ. bdeaxš⁴⁰), որոնց նա իրենց գորախմբերով ուղարկում էր՝ վերահսկելու նահանգների սատրապներին⁴¹:

Ե դարի հայկական աղբիւրները գիտէին մեր երկրի *չորս* բղեշխութիւնների մասին, որպիսի թիւը, թերեւս, արտայայտում էր նրանց վաղ՝ դասական վիճակը: Յիշենք Ագաթանգեղոսի բնագրերը. «...գումարեաց զգլխաւորս նախարարացն եւ զկուսակալս աշխարհացն. Առաջին՝ իշխանն Անգեղ տան, երկրորդ՝ իշխանն Աղձնեաց, որ է Բղեշխն մեծ, երրորդ՝ իշխանն մարդպետութեան իշխանութեանն, չորրորդ՝ իշխանն թագակալ իշխանութեան սպետութեանն, հինգերորդ՝ իշխանն սպարապետութեան,

³⁹ Տե՛ս, օր.՝ **Новосельцев** 1980, с. 111; **Хуршудян** 2015, с. 60.

⁴⁰ **Pagliari** 1929–1930, p. 160–168.

⁴¹ **Her.** I, 114; **Հերոդոտոս** 1986, էջ 50: Հմմ. **Хуршудян** 2015, с. 26.

գաւրավար Հայոց աշխարհին, վեցերորդ՝ իշխանն Կորդովտաց⁴² աշխարհին, եաւթներորդ՝ իշխանն Ծոփաց աշխարհին, ութերորդ՝ իշխանն Գուգարացոց աշխարհին, որ Միւս անուանեալ բղեաշխն, ... մետասաներորդ՝ իշխանն Սիւնեաց աշխարհին, երկուսասաներորդ՝ իշխանն Ծաւղէից աշխարհին...» (Կեսարիա գնացող «Հայաստան աշխարհի ... ընտիրք, կուսակալք, կողմնակալք, հազարաւորք, բիւրաւորք» 16 բարձրագոյն իշխանների ցանկում)⁴³: Գուգարաց բղեշխին («որ Միւս անուանեալ բղեաշխն»⁴⁴) Մասքութների կողմում բոլոր մասնագետները համարում են՝ Վրաց եւ Աղուանից թագաւորութիւնների՝ հիւսիսային տափաստանաբնակների դէմ ուղղուած Կովկասեան լեռների պաշտպանական գծի պատասխանատուն: ...

Մենք փորձել ենք նաեւ փաստարկել, որ սահմանակից կրտսեր դաշնակից երկրի արտաքին սահմանի պաշտպանութիւնն իրականացնելու դիմաց բղեշխութիւն-կուսակալութիւնները յաճախ իրենց վարչական կառավարման տակ էին ստանում այդ երկրի բուն տարածքի մի սահմանային կտոր: Հայաստանի հիւսիսում դա վերաբերում է նախ եւ առաջ Գուգարք նահանգին հարեւան Մանգլեացփոր, Բողնոփոր եւ Քուիշափոր գաւառների դէպքին: Դրանք, ինչպէս տեսանք, «Աշխարհացոյց»-ի մի հատուածում ներկայացւում են իբրեւ Հայոց երկրից հանուած գաւառներ (Վիրքի նկարագրութեան հատուածում, ուր ասւում է. «եւ գՄանգլեացփոր, եւ [գՄամշողէ քաղաք ի Քուիշափոր, եւ] գԲողնոփոր, մինչեւ ցՊարուար գաւառ, որ պատէ գՏիփիսի քաղաքաւ. բայց երեք փորակդ ի Հայոց հանէ»), իսկ միւս հատուածում՝ Գուգարքի 9 գաւառների ցանկում, այդ փորակները չեն յիշատակւում («Ունի գաւառս ինն. գՉորոփոր, գԿորբափոր, գԾորբափոր, գՏաշիր, գԹռեղս, գԿանգարս, գՁաւլախս Վերի, գԱրտահան, գԿալ-

⁴² Ձեռագրերի մեծ մասում եւ Ուխտանէսի մօտ՝ «Կորդուաց» (նաեւ՝ «Կորդուացոց»):

⁴³ **Ագարք.**, գլ. ԾԺԲ, § 795, էջ 414; ՄՀ, հտ. Բ, էջ 1683-1684:

⁴⁴ Արմագիում (Կուրից հարաւ) պեղուած բղեշխների տապանատան մի երկկետեան (արամէրէն եւ յունարէն) վիմագրում Ձեւախա բղեշխը կոչուած է «կրտսեր» (“Ζηουάχου τοῦ νευτέρου πικράξου”). Տե՛ս **Церетели** 1941, с. 23. Տեղին նշենք, որ Կուրը Մեծ Հայքի ու Վիրքի սահման է համարւում անտիկ որոշ աղբիւրներում եւ Փաւստոս Բուգանդի մօտ («Եւ զհին սահմանն, որ յառաջն էր լեալ յերկիրն Հայոց եւ ընդ երկիրն Վրաց, որ է ինքն մեծ գեան Կուր, այնուհետեւ յինքն վտարեալ, դառնայր [Մուշեղ Մամիկոնեան սպարապետը] անտի», Փ.Բ, էջ 211):

արճ: ... Ունին արդ Վիրք՝ հանեալ ի Հա[յ]ոց»⁴⁵: Ընդ որում, հաւանական է, որ հայ բղէշիւների կառավարման տակ գտնուող այդ գաւառների տարածքը հիւսիսում հասնում էր մինչեւ Կուր գետ, որի ափին՝ Արմազիում, ձեւաւորուել էր նրանց տոհմական գերեզմանատունը: ... Այդ սերտութիւնը, ընդհուպ մինչեւ իրար անունով կոչուելը (օր.՝ Գուգարաց բղէշիւր՝ «իշխան Վրաց», Կաղմեաց կողմնակալութիւնը՝ «Նոր Ծիրական») նաեւ պատճառ էր դառնում Հայոց կենտրոնական իշխանութեան թուլութեան պահերին նրա դէմ համատեղ ելոյթների համար, որպէս կանոն՝ հրահրուած օտարի, առաւելապէս՝ Սասանեանների կողմից: Հիւսիսում նման մի համատեղ ապստամբութիւն է նկարագրել Փաստոս Բուզանդը («յետ սորա Գուգարաց բղէշիւն, եւ յետ սորա Ձորայ գաւառին տէրն, եւ Կողբայ գաւառին տէրն [ապստամբեցին յարքայէն Հայոց Արշակայ], եւ ընդ նոսա՝ Գարդմանաձորոյ տէրն»)՝⁴⁶:

Սասանեան տիրակալները Մեծ Հայքի 387 թ. բաժանման եւ 428 թ. Արշակունիների թագաւորութեան վերացման պահերին ինչ-որ ժամանակով պահպանեցին նախկին հայկական առանձին

⁴⁵ Տե՛ս **Անանուն (Է դար)** 2013, սն. 118-119 եւ 142:

⁴⁶ Ի դէպ, բղէշիական գործառոյթներով կուսակալութիւնների թուաքանակն ինչ-որ պահի էապէս աւելացել է չորսից՝ թէկուզ եւ, գուցէ, առանց *բղէշիւթիւն* անունը ստանալու: Դա վերաբերում է նաեւ հիւսիս-արեւմուտքում Սպերի Բագրատունեաց կուսակալութեանը, որի մասին Ազաթանգեղոսի երկի «Գրիգորի վարք» կոչուած տարբերակի՝ Լուսաւորչին Կեսարիա ուղեկցող 16 իշխանների ցանկում ասուած է մի կարեւոր լրացումով. «չորրորդ՝ ասպետութեան իշխանը, որը *պաշտպանում էր Կովկասեան լեռների կողմերը եւ Ծանիքը* [Տճնօն]»: Տե՛ս **Garitte** 1946, p. 73; **Ազաթանգեղոս** 1966, հ^տ Թ-Ժ, էջ 79; **Ազաթանգեղոս** 1977, էջ 178, ծն. 44: Մեր ընդգծած լրացումը կայ նաեւ «Վարքի» արաբերէն տարբերակում (գրչական սխալներով). «չորրորդ՝ իշխանն Ասպետաց՝ ըստ կոչմանն Ասպետ, որում յանձն էր պահպանութիւն լեռանց Կօսեաց եւ «Մ-տ-գ-ն»եանց [*իսն*. Տճնօն]» (**Март** 1906, с. 115; **Ման** 1911, էջ 49; **Жамкоян** 2016, с. 164). Այդ լրացումը յարում է Պատմահօր հաղորդմանը Բագարատ Բագրատունու մասին, որին Մեծ Հայքում Պարթեւ Արշակունիների իշխանութիւնն աւանդաբար Ք. ա. Բ դարում հաստատած Վաղարշակ Հայոց արքան (որի կերպարի տակ իրականում հանդէս է գալիս գլխաւորապէս Ք. յ. Ա դարի Տրդատ Ա թագաւորը) նշանակել էր «ի ծայրս հայերէն խաւսից կողմնակալ, իշխան բիւրուց եւ հագարաց, յարեւմտից կուսէ» (**Խոր.**, Բ.գ, էջ 105; **Մովսէս Խորենացի** 2003, էջ 1851):

բղեշխութիւններն ու կուսակալութիւնները (մասնաւորապէս՝ երկրի հիւսիսում)՝ հարեւան երկրների արտաքին սահմանների պաշտպանութեան եւ զօրական առումով նրանց նկատմամբ որոշակի գերակայութեան իրենց աւանդական գործառոյթներով⁴⁷: 428 թ. նրանց ստեղծած Վրաց մարզպանութեան մէջ մտցուեցին տուեալ պահի Վրաց թագաւորութիւնը եւ Գուգարաց բղեշխութիւնը, ընդ որում՝ վերջինը Մեծ Հայքի Արշակունիների թագաւորութեան կազմից հանուել էր նրա 387 թ. բաժանումից յետոյ, թէպէտ շարունակել էր պահպանել իր կուսակալական գործառոյթը Կովկասեան լեռների սահմանագծի պաշտպանութեան առումով՝ կազմելով հարեւան Վիրքի հետ միասին Սասանեան տէրութեանը ենթակայ նախամարզպանական շրջանի մի *խորհնակ վարչա-տարածքային գոյգ* (վերջինիս բնութագրիչները դեռ պիտի լրացուցիչ հետազօտուեն): Ողջ Ե դարում այդ գոյգի բաղադրիչները պայքարում էին իրար դէմ՝ իրական գերակայութեան համար, ինչը լաւագոյնս արտացոլել է Վարսկեն բղեշխի Շուշանիկ տիկնոջ նահատակութեան պատմութիւնը: Ըստ Բ. Յարութիւնեանի. «Անջատելով Գուգարաց բղեշխութիւնը Արեւելահայկական թագաւորութիւնից, նա [*ինս*՝ Պարսկական դիւանագիտութիւնը] ոչ միայն ծանր հարուած էր հասցնում հայկական պետականութեանը ընդհանրապէս, այլեւ՝ խրախուսելով Գուգարաց բղեշխի իշխանատենչութիւնը, յանձին բղեշխութեան ստեղծում էր լուրջ հակակշիռ Վրաց թագաւորութեանը: Վրաց թագաւորութեան եւ Գուգարաց բղեշխութեան քաղաքական մրցակցութիւնը օգնում էր պարսկական արքունիքին հաստատուն դարձնելու իր գերիշխանութիւնը այդ հեռաւոր երկրամասում» (էջ 185):

Թւում է, թէ նման պայքարը նշմարում է նաեւ հարեւան Ադուանքում: Ինչ-որ չափով այդ պայքարի լուծումը տուեցին իրենք՝ Սասանեանները՝ դարավերջին մարզպանական ընդարձակ լիազօրութիւնները վերապահելով թագաւորներին՝ Վրաց մարզպանութեան մէջ Վրաց արքայ Վախթանգ Գորգասալին, Ադուանից մարզպանութեան մէջ՝ Ադուանից արքայ Վաչագան Բ Բարե-

⁴⁷ Հմմ. **Հարությունյան** 1977, էջ 183 («Արեւելահայկական թագաւորութիւնը կորցրեց իր գերագոյն իրաւունքները բղեշխութիւնների նկատմամբ, որոնք այժմ անմիջականօրէն սկսեցին ենթարկուել պարսից արքայից արքային՝ վերածուելով կամ առանձին ինքնուրոյն վարչական միաւորների կամ էլ մտցուելով այս կամ այն վարչական շրջանի մէջ»): Հմմ. **Հարությունյան** 1976, հ^տ 2, էջ 57-74:

պաշտին: Ճիշտ է, դա տեւեց լոկ մի քանի տասնամեակ, եւ 523 թ., ըստ բիւզանդական աղբիւրների տեղեկանու, Կաւատ արքայից արքայի նոր ռէֆորմով երկու երկրներում էլ թագաւորական իշխանութիւնը վերացուեց:

Արդ՝ Քուիշափոր գաւառը (կենտրոնը՝ Քուիշա աւանի եւ Թեթրի-Ճոարո քաղաքի շուրջը), որի արեւմտեան սահմանով անցել էր 591 թ. պարսկա-բիւզանդական երկրորդ բաժանման սահմանագիծը, չի կարելի տարածել մինչեւ Չաւախքի ջրբաժան լեռնաշղթան (նոյնը վերաբերում է նաեւ Բողնոփորի արեւմտեան սահմանին): Թերեւս այդ գիծն անցել է Խրամ գետի՝ ուղիղ հիւսիս – հարաւ հոսող հատուածով, ինչպէս որ հետագայու անցնում էր Թիֆլիսի ու Ախալքալաքի գաւառների սահմանի մի կտորը:

Ուղղելի է նաեւ Թռեղք գաւառի հարաւային սահմանը. այն պիտի իջնէր մինչեւ Վիրահայոց լեռնաշղթան եւ յարէր Ծորփորի արեւմտեան սահմանագծին:

Գուգարքի բղեշխութեան կենտրոն Յուրտաւ-Մուղղաբիլը⁴⁸, ըստ արաբա-պարսկական պատմական աւանդոյթի՝ կառուցուել էր Կաւատ Ա-ի օրօք՝ Կարկառի եւ Գարդմանի հետ միաժամանակ (անշուշտ, հէնց իբրեւ կուսակալական կենտրոն):

Յաւարտս կրկնենք նաեւ, որ Բիւզանդիայի եւ Սասանեանների միջեւ Հայաստանի երկրորդ բաժանման սահմանագիծն անցել է երեք փորակ-գաւառներից (Բողնոփոր, Մանգլեացփոր, Քուիշափոր) հարաւ եւ արեւմուտք՝ դրանք թողնելով Իրանի տէրութեան կազմում: Այսպիսով՝ 591 թ. սահմանն անցել էր Աղստեւ գետով (որի ափերին, իրար դէմ-դիմաց բիւզանդացիներն ու պարսիկները կառուցեցին Կայծոն – Կայեան եւ Հաղարծին – Դաւթի բերդ ամրոցները), սպա՛հ Կուր գետով եւ նշուած երեք փորակների արեւմտեան սահմաններով: Հնարաւոր է, որ այդ սահմանագծի վրայ Սասանեանները կառուցել են Սամշիլդէ ամրոցը բիւզանդական մի ինչ-որ բերդի դիմաց (գուտ իբրեւ վարկած՝ դա կարող էր լինել, օրինակ՝ Քուէշ բերդը, որը գտնուում է մօտ 10 կմ արեւմուտք):

Սոյն յօդուածին կցուող Գուգարքի աշխարհացոյցեան քարտէզը պատրաստել ենք Ռուբէն Թարումեանի սիրալիք աջակցութեամբ:

⁴⁸ Նրա մասին մանրամասն տե՛ս **Մելիքսեթ-Քէլ** 1934, էջ 12-15 («Խրամ եւ Գաջենագետ գետերի ջրկիցի շրջակայքում»):

GUGARK PROVINCE OF GREATER ARMENIA ACCORDING TO “ASHKHARHAC'OYIC” OF THE 7TH CENTURY

Aleksan Yakobean

SUMMARY

The Armenian geographical work “Ashkharhac'oyic”, which was created for use by members of the Armenian delegation as an auxiliary material at the so-called Persian Council in Ctesiphon (616 or 618), gives a rather detailed description of the province of Gugark (graec. Γωγαρηνή). According to this description, Gugark consisted of 9 regions (gavars), which were separated from the Armenian country and included in the neighboring marzpanat of Iberia (Virq, Qartli) at the end of the 4th century. However, in the description of Iberia, 12 regions are listed that were torn away from Armenia. We associate this phenomenon with the main Bdešx (the Kurfurst) function of the region of Tashir, who for this received rights over three additional regions (Boĥnopor, Quishapor and Mangleac'por). A careful study of the text of “Ashkharhac'oyic” makes it possible to clarify the localization and boundary lines of several regions of Gugark, which were previously proposed by Suren Yeremyan and Babken Harutyunyan. This is especially true for the regions of Kangarq, Tṛeġq, Tsoboppor, Boĥnopor and Quishapor. The article is accompanied by a map of Gugark, which was compiled with the help of Ruben Tarumyan.

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Ագաթանգեղոս 1966, Ագաթանգեղոսի պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարք), Թարգմ. հունարեն բնագրից՝ **Հ. Բարթիկյանի**, Առաջաբան եւ ծանոթագրություններ՝ **Ա. Տեր-Ղևոնդյանի**, – «Էջմիածին», հ^մ Թ-Ժ, էջ 28-34, հ^մ Ը, էջ 46-51, հ^մ Թ-Ժ, էջ 79-87;

Ագաթանգեղոս 1977, Պատմություն Հայոց, Աշխարհաբար թարգմանություն ներածականով ու ծանոթություններով՝ **Ա. Տեր-Ղևոնդյանի**, Երևան;

Անանուն Է դարի 2013, Աշխարհացոյց, Գիտա-քննական բնագիր **Ա. Յակոբեանի**, – «Հանդես ամսօրեայ», ՃԻԷ տարի, Վիեննա-Երևան, սն. 35-194 ;

Դանիելեան Է. Լ. 1981, Հայ եկեղեցու նկատմամբ Խոսքով Փարուէզի վարած քաղաքականութիւնը, – ՊԲՀ, հ^մ 4, էջ 195-200;

- Խոր.** 1913 – **Մովսիս Խորենացու** Պատմություն Հայոց, Աշխատութեամբ՝ **Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան**, Տփղիս ;
- Կակաբաձէ Ս.** 1928, Ասորի հայրերի վարուց նախատիպերը, Տփղիս (վրացերէն);
- Կնիք հաւատոյ 1914, Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցույ... յաւուրս Կոմիտաս կաթողիկոսի համահաւաքեալ, Հրատ.՝ **Կարապետ եպ. [Տէր-Մկրտչեան]**, Վաղարշապատ ;
- Կոմիտաս կաթողիկոս** 2005, Կնիք հաւատոյ, – «Մատենագիրք Հայոց», հտ. Դ, Է դար, Անթիլիաս;
- Կրկյաշարյան Ս. Մ.** 1966, Բնէշխությունների առաջացումը Հայաստանում, – ՊԲՀ, հ^տ 4, էջ 257-262;
- Հարությունյան Բ. Հ.** 1976, «Գահնամակի» թվագրման հարցի շուրջը, – ՊԲՀ, հ^տ 2, էջ 57-74;
- Հարությունյան Բ. Հ.** 1977, Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացոյցի», – ԲԵՀ, հ^տ 2, էջ 176-198;
- Հարությունյան Բ.** 2003, Մեծ Հայքի Սիւնիք աշխարհն ըստ «Աշխարհացոյց»-ի (Պատմա-աշխարհագրական դիտարկումներ), – ՊԲՀ, հ^տ 1, էջ 119-146;
- Հարությունյան Բ.** 2007, Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումն ըստ «Աշխարհացոյց»-ի, – Շուշին Հայոց քաղաքակրթության օրրան. Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, Երեւան, էջ 21-45;
- Հերոզոտոս** 1986, Պատմություն ինը գրքից, Թարգմ.՝ **Ս. Կրկյաշարյանի**, Երեւան;
- Ղազար Փարպեցի** 2003, **Ղազար Փարպեցի** Պատմություն Հայոց, – Մատենագիրք Հայոց, հտ. Բ, Անթիլիաս, էջ 2197-2375;
- Ղևոնդ 1887** – Պատմություն Ղևոնդեայ Մեծի Վարդապետի Հայոց, աշխ. Ս. Մայխասեանցի, 2-րդ տպագրություն, Ս. Պետերբուրգ, Ի Տպ. Ի. Ն. Սկորոխովի:
- Մելիք-Բախչյան Ս. Տ. 1968**, Հայաստանը VII–IX դարերում, Երևան, ԵՊՀ հրատ.:
- Ճահինյան Ա. 2011**, Հայոց ինքնավար իշխանության տարածքն ու սահմանները Է դարում. - «Journal of the Society for Armenian Studies», vol. 20, էջ 55–68.
- Ճահինեան Ա. 2013**, Է դարի Հայոց իշխանության ինքնիշխանացումը, «Հայկազեան Հայագիտական հանդես», հոր. ԼԳ, էջ 165–180:
- Ճահինյան Ա. 2019**, Ժառանգական իշխանությունների կազմավորումն Իրանի քրիստոնյա մարգպանություններում Բյուզանդիայի հետ հակամարտության ավարտական փուլում (Զ դարավերջ – Է դարասկիզբ). - «ՎԷՄ համահայկական հանդես», ԺԱ (ԺԷ) տարի, թիվ 1 (65), հունվար-մարտ, 2019, էջ 30–50:
- Սերբու 1979** – Պատմություն Սերբուխի, աշխ. Գ. Վ. Արգարյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
- Al-Beladsori 1866** – Liber expugnationis regionum auctore Imamo Ahmed ibn Jahja ibn Djabir al-Beladsori (کتاب فتوح البلدان تالیف الإمام أحمد (بن يحيى بن جابر البلاذري), ed. M. de Goeje, Lugduni Batavorum, Brill, 1866.

- Al-Ja‘qubi 1883** – Ibn Wadhīh qui dicitur al-Ja‘qubi, *Historiae* (تاريخ أحمد (بن أبي يعقوب بن جعفر بن وهب ابن واضح الكاتب العباسيّ), ed. M. Houtsma, 1–2, Lugduni Batavorum, E.J. Brill.
- Ibn al-Athir 1353 A.H. / 1934/5 A.D.** – Al-Kamil fi-l-Tarikh (ابن الأثير، (الكامل في التاريخ): In 9 vols., al-Qahira, [S.l.].
- Khalifah ibn Khayyat 1386–1387 A.H. / 1967 A.D.** – تاريخ خليفة بن خياط، – حقه وقدم له أكرم ضياء العمري، النجف، ١٣٨٦–١٣٨٧ / ١٩٦٧ م – The History of Khalifah ibn Khayyat, ed. by Akram Diya’ al-‘Umari, Nagav, [S.l.].
- Khalifah ibn Khayyat 1387 A.H. / 1967 A.D.** – كتاب الطبقات لأبي عمر خليفة بن خياط شباب العصفري... رواية ابن عمران موسى بن زكريا بن يحيى التستري، حقه – Kitab al-Tabakat by Abu ‘Amr Khalifah ibn Khayyat Shabab al-Usfuri..., ed. by Akram Diya’ al-‘Umari, Baghdad, [S.l.].
- Al-Kufi 1389–1395 A.H. / 1969–1976 A.D.** – Kitabu’l Futuh by Abu-Muhammad Ahmad ibn A‘tham al-Kufi (كتاب الفتوح بأبي محمد أحمد بن أثم (الكوفي), ed. by ‘Abdu’l Mu‘id Khan, Sayid ‘Abdu’l Wahhab Bukhari, vol. 1–8, Hyderabad, Dar’irat al-Ma‘arif al-‘Usmaniya.
- At-Tabari 1879–1901** – Annales quos scripsit Abu Djafar Mohammed ibn Djarir at-Tabari (تاريخ الرسل والملوك لأبي جعفر محمد ابن جرير الطبري), cum aliis ed. M. de Goeje, ser. I–III, Lugduni Batavorum, E.J. Brill.

**ՄՈՒԹԱԶԻԼԻԶՄԻ ԿՐՈՆԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ
ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԱՐՏԱՑՈՒՈՒՄԸ ԱՐՈՒ ԱԼ-ՖԱԹՅ ԱԼ-
ՇԱՀՐԱՍՏԱՆԻԻ «ԿՐՈՆՆԵՐԻ ԵՎ ԱՂԱՆԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
(كتاب الملل والنحل) ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ:**

Անուշ Թամրայան
ՀՀ ԳԱԱ ԱԻ

Բանալի բառեր. *քալամ, մութազիլիզմ, ալ-Շահրաստանի, ալ-աշա-
րիյա, իսնաիլականություն, կադարիյա, ադիյա*

Իսլամի զարգացումը և տարածումը Ը - Թ դարերում կրոնի հիմնադրույթների համակարգման և դրանց փիլիսոփայական հիմնավորման անհրաժեշտություն առաջացրեց: Այս խնդիրները սկսեցին լուծել մութազիլիները՝ իսլամում քալամի¹ առաջին խոշոր դպրոցի ներկայացուցիչները, որոնք կարողացան մշակել իրենց գաղափարական հիմնադրույթները՝ համադրելով դրանք այլ կրոնների և փիլիսոփայական հիմնական ուղղությունների հետ:

Մութազիլիզմի հիմնադիրներն են համարվում Վասիլ Իբն Ատան (մահ. 748թ.) և Ամր Իբն Ուբայդը (մահ. 761թ.), որոնք հայտնի աստվածաբան Հասան ալ-Բասրիի աշակերտներն էին, սակայն առանձնացան նրանից մեծ մեղքերի ձևակերպման շուրջ տարաձայնությունների պատճառով²: Հեռանալով Հասան ալ-Բասրիից՝ նրանք հիմնեցին նոր դպրոց և կոչվեցին մութազիլիներ (առանձնացածներ): Արդեն Թ - Ժ դարերում մութազիլիզմում

¹ Արաբ. کلام - բառ, խոսք, միջնադարյան մուսուլմանական գրականու-
թյան մեջ այսպես էր կոչվում կրոնական և փիլիսոփայական թեմաների
վերաբերյալ ցանկացած դատողություն, որը մեկնաբանում է իսլամի
դրույթները՝ հիմնված բանականության, և ոչ թե կրոնական ավանդույ-
թին անվերապահ հետևելու վրա: Քալամը կարճ բնորոշվում է նաև որ-
պես ռացիոնալիստական աստվածաբանություն: Harry Austryn Wolfson,
The Philosophy of the Kalam, London, 1976, pp. 3-5, Wilferd Madelung,
Religious Trends in Early Islamic Iran, Oxf., 1988, p 28-30.

² Այս հարցի շուրջ Վասիլ Իբն Ատան չհամաձայնեց Հասան ալ-Բասրիի
հետ և հայտարարեց, որ իր կարծիքով մուսուլմանը, ով մեծ մեղքեր է
գործել, հավատացյալ չէ և միջանկյալ տեղ է գրադեցնում հավատքի և
անհավատության միջև, տե՛ս Петрушевский И.П., Ислам в Иране в VII-
XV веках, Л., 1966, с. 203, Michael Cook, Commanding Right and For-
bidding Wrong in Islamic Thought, UK, 2004, p.195.

ձևավորվեցին տարբեր, իրար հետ հակադրվող և հաճախ մրցակցող դպրոցներ (ուղղություններ), որոնց շրջանակում էլ մշակվեցին և հիմնավորվեցին մութազիլիզմի հիմնական կրոնափիլիսոփայական սկզբունքները³:

Մութազիլիզմի կրոնափիլիսոփայական հիմնական դրույթների, դրանց հիման վրա առանձնացած դպրոցների մասին բավական համակողմանի և համակարգված ձևով ներկայացվում է ԺԱ դարի աստվածաբան, փիլիսոփա Աբու ալ-Ֆաթի Մուհամմադ Իբն Աբդ ալ-Քարիմ ալ-Շահրաստանիի «Կրոնների և աղանդների մասին» աշխատության մեջ⁴ :

Ալ- Շահրաստանիի կյանքի և գործունեության մասին քիչ տեղեկություններ են մեզ հասել: Նա ծնվել է Խորասանի հյուսիսում՝ Շահրաստան քաղաքում, ըստ տարբեր աղբյուրների՝ 1075 կամ 1086 թվականին: Նա ստացել է ավանդական կրոնական կրթություն՝ ուսանելով իր ժամանակի հայտնի աստվածաբանների մոտ: Շատ ճանապարհորդելով՝ ալ-Շահրաստանին Խորասան և Խորեզմ քաղաքներում հայտնի է դարձել խալիֆայության տարբեր վայրերի գիտնականների հետ վարած փայլուն բանավեճերի շնորհիվ: Վերադառնալով ուխտագնացությունից՝ 1116 թ. ալ-Շահրաստանին մնաց Բաղդադում և երեք տարի քարոզեց ալ-Նիզամիյայի հայտնի մադրասայում: Այս քարոզների շնորհիվ, որոնց մշտապես ներկա էին լինում ականավոր գիտնա-

³ St' u Mohammad Sharif Khan, Mohammad Anwar Saleem, Muslim Philosophy and Philosophers, APH Publishing, 1994, pp 15-21:

⁴ Աշխատությունը հրատարակվել է մի քանի անգամ Եվրոպայում, Եգիպտոսում, Իրանում, Թուրքիայում, Հնդկաստանում: Այն թարգմանվել է պարսկերեն, թուրքերեն, գերմաներեն, անգլերեն և մասամբ՝ ռուսերեն: Մենք օգտվել ենք արաբերեն բնօրինակից՝ Abū al-Fath Muḥammad b. 'Abd al-Karīm al-Shahrastānī, Kitāb al-Mīlāl wa-l-Nihāl, Beirut, Lebanon, 1993, և ռուսերեն թարգմանությունից՝ Абуль-Фатха аш-Шахрастани, Книга о религиях и сектах, Китāб аль-Милаль ва ан-Нихаль, часть 1, Ислам, перевод с араб., введение и комментарий С.М. Прозоров, М., 1984, 269с., Мухаммад б. 'Абд ал-Карим аш-Шахрастани, Книга о религиях и религиозно-философских учениях. Гл. 2: Маги (пер. и коммент. С. М. Прозорова), Ишрак: ежегодник исламской философии, Новосибирск: Восточная литература, 2011, № 2, с.150-188.

կաններ, Ալ-Շահրաստանին մեծ ճանաչում է ձեռք բերել: Նա մահացել է իր ծննդավայրում 1153թ.-ին⁵:

Ալ-Շահրաստանիի կրոնական և քաղաքական հայացքների շուրջ միանշանակ կարծիքներ չկան: Նա մի կողմից ներկայանում է որպես աշարիական աստվածաբան⁶, մյուս կողմից՝ որպես իսմայիլական⁷ գաղափարներ կրող փիլիսոփա և քարոզիչ: Ալ-Շահրաստանիի ժամանակակիցներից ոմանք մեղադրում էին նրան հերետիկոսական ուսմունքների⁸ նկատմամբ հակվածու-

⁵ Encyclopedia of Medieval Philosophy, London, 2011, pp. 1188-1190, Bruce B. Lawrence, Shahrastani on the Indian Religions, Paris, 1976, pp. 13-17.

⁶ Ալ-աշարիյա (արաբ․[՝] الأشعرية), իսլամում աստվածաբանության (սուննիական քալամ) հինգ հիմնական ուղղություններից մեկը, իսկ Ժ դարից հետո դարձավ քալամի հիմնական դպրոցը: <Իմնադիրը ականավոր աստվածաբան Աբու ալ-Հասան Ալի ալ-Աշարին է (873 / 874-935թթ.), մանրամասն տե՛ս Вольф М. Н., Средневековая арабская философия: ашаритский калам. Учебное пособие, Новосибирск, 2008, էջ 48- 50, Andrew Rippin, Muslims: Their Religious Beliefs and Practices, 2014, p.84:

⁷ Իսմայիլականություն (արաբ․[՝] الإسماعيلية), իսլամի շիայական ճյուղի կրոնական շարժումների ընդհանրական անվանում, որը սկիզբ է առել Ը դարի վերջին շիայական շարժման տրոհման արդյունքում: Իսմայիլականների ուսմունքի համաձայն Աստված ժամանակ առ ժամանակ իր Աստվածային էությունը ներշնչում էր իր կողմից ուղարկված մարգարեներին (նատիկներին): Թվով յոթ մարգարե պետք է ուղարկվի աշխարհ, և վերջին՝ յոթերորդ մարգարեն կխորհրդանշի վերջին Աստվածային մարմնավորումը, որից հետո Աստվածային միտքը պետք է իշխի աշխարհում՝ հաստատելով համընդհանուր արդարություն: Իսկ մինչև մարգարեների ի հայտ գալը հաջորդաբար կառավարում են յոթ իմամներ, որոք Աստծո պատգամները պետք է տարածեն երկրի վրա, Ислам, Энциклопедический словарь, М. 1991, с. 110-114, Soumen Mukherjee, Ismailism and Islam in Modern South Asia, Cambridge University Press, 2017, pp. 2-4:

⁸ «Ուղղադավանություն» և «հերետիկոսության» ձևակերպումները հաստատվեցին Ը դարում՝ տարբեր ուղղությունների՝ իսլամից ճյուղավորվելու շրջանում: Ազատ կամքի ուսմունքը քարոզելու համար ծագումով դպտի Դայյան ալ-Գիմաշկին խալիֆ Հիշամի (724-743 թթ.) հրամանով անդամահատվեց: Սա խալիֆայությունում առաջին դեպքերից էր, երբ պատժում են ոչ թե իշխանության դեմ գործողությունների, այլ կրոնական հայացքների համար: Նույն խալիֆը հայածում և մահապատժի էր ենթարկում կադարիներին, Christine Caldwell Ames, Medieval Heresies, Cambridge University Press, 2015 pp.81-97, В. В. Бартольд, Работы по

թյուն ունենալու մեջ: Նա նաև մեղադրվում էր իր դասախոսությունների և քարոզների ժամանակ Ղուրանի տեքստը չհիշատակելու կամ մարգարեի խոսքերը չվկայակոչելու համար: Նրան դատապարտում էին Ղուրանի այաները փիլիսոփայորեն մեկնաբանելու փորձի համար⁹:

Ալ-Ճահրաստանին աստվածաբանության և փիլիսոփայության վերաբերյալ տասնյակից ավելի աշխատությունների հեղինակ է¹⁰: Այնուամենայնիվ, ամենահայտնին համարվում է նրա՝ 1127 թ. գրված «Կրոնների և աղանդների մասին» երկը: Սա համարվում է առաջին հանրագիտարանային արժեք ունեցող աշխատությունը, որտեղ համակարգված կերպով ուսումնասիրվում են վաղ միջնադարում Միջին Արևելքի և Միջերկրական ծովի ժողովուրդների կրոններն ու կրոնափիլիսոփայական ուսմունքները¹¹:

Աշխատության զլխավոր առանձնահատկությունն այն է, որ դրանում հեղինակը համակարգված, հնարավորինս անաչառ և անկողմանակալ կերպով ներկայացրել է տարբեր տեսակետներ: Հեղինակն օգտագործել է տարբեր աստվածաբանական դպրոցներին հարող հեղինակների (օրինակ՝ ալ-Բաղդադիի և Իբն Հազմի) կազմած ամենանշանակալից գործերը¹²: Սակայն, ի տարբերություն իր նախորդների, որոնք հիմնականում միակողմանիորեն էին ներկայացնում այլ կրոնների և իսլամի ներսում տարբեր ուղղությունների համոզմունքներն ու գաղափարները, ալ-Ճահրաստանին փորձել է խուսափել որևէ քննադատությունից՝ կենտրոնանալով հիմնականում նյութի տրամաբանական և ապացուցողական ներկայացման վրա: Անաչառ և օբյեկտիվ ներկայացումը, այնուամենայնիվ, չէր բացառում երբեմն որոշ ուսմունքների

истории ислама и Арабского халифата, сочинения, Т. 6, 1966, էջ 122, Энциклопедический словарь, Т 22, 1894, с.671:

⁹ Wilferd Madelung and Toby Mayer, *Struggling with the Philosopher, A New Arabic Edition and English Translation of Muḥammad b. ʿAbd al-Karīm b. Aḥmad al-Shahrastānī's Kitāb al-Musāraʿa*, London, 2001, pp. 2-6, B. B. Бартольд, նշվ. աշխ, էջ 627, Адам Мец, Мусуьманский ренессанс, М., 1973, с. 178.

¹⁰ *Encyclopedia of Medieval Philosophy*, pp. 1188-1190.

¹¹ *Dhimmi and Others: Jews and Christians and the World of Classical Islam*, Jerusalem, 1997, p. 127, *Medieval Heresies*, pp. 173-175.

¹² Paula Youngman Skreslet, Rebecca Skresle, *The Literature of Islam: A Guide to the Primary Sources in English Translation*, Oxf., 2006, pp.160-161.

բովանդակության չափավոր քննադատություն կամ դրանց քարոզիչների նկատմամբ հեղինակի վերաբերմունքի արտահայտում¹³:

Այս աշխատությունը բացառիկ է նաև իր ընդգրկումով նախախլամական շրջանում ձևավորված ուսմունքներից մինչև իսլամի պատմություն, դրա հիմնական ուղղությունների և ուսմունքների ներկայացում¹⁴: Աշխատությունը բաղկացած է հեղինակի նախաբանից և երկու մասերից: Նախաբանում հեղինակը խոսում է կրոնի (دين), հավատալիքի (الملة), կրոնական օրենքի (شريعة), հստակ ուղու (منهاج), իսլամի (الإسلام), միաստվածության (حنيفية), սուննայի (السنة), համաձայնության (الجماعة) մասին, որովհետև, ինչպես հեղինակն է նշում.«...դրանք արտահայտություններ են, որոնք հանդիպում են Աստվածային հայտնության մեջ (Ղուրանում), որոնցից յուրաքանչյուրն ունի իմաստ, որ առանձնացնում է այն, և էություն, որ համապատասխանում է դրան բառային և եզրույթային դրսևորումներով»¹⁵:

Աշխատության առաջին մասը սկսվում է փոքր ներածական հատվածով, որտեղ խոսվում է իսլամի, ինչպես նաև հավատքի (الإيمان) և բարեգործության (الإحسان), դրանց փոխկապակցվածության մասին¹⁶: Այնուհետև յոթ գլուխներով առանձին և շատ հանգամանորեն ներկայացվում են մահմեդականության հիմնական ուղղությունները և դրանց հետևորդները՝ մութազիլիներ, ջարաբիներ, սիֆաթիներ, խարիջիներ, մուրջիներ, շիաներ, ֆուռուխներ (أهل الفروع):

Ալ-Շահրաստանին, առաջին հերթին, նշում է աստվածաբանության հիմնական խնդիրները՝ միաստվածություն և Աստվածային հատկանիշներ (التوحيد والصفات), ճակատագիր և Աստվածային արդարություն (القدر والعدل), խոստում և սպառնալիք (الوعد والوعيد), հայտնություն և բանականություն (السمع والعقل), որոնք հիմք պետք է հանդիսանան տարբեր ուսմունքների նկարագրման համար: Այս խնդիրների տարբեր լուծումները, ըստ հեղինակի, հանգեցրին չորս խոշոր դպրոցների՝ կադարիների, սիֆաթիների, խարիջիների և շիաների ձևավորմանը: Եվ, ըստ հեղինակի, այս չորս հիմնական դպրոցներից հետագայում ձևավորվեցին բոլոր 73

¹³ В. В. Бартольд, նշվ. աշխ, էջ 263:

¹⁴ Laoust Henri. L'hérésiographie musulmane sous les Abbassides. In: Cahiers de civilisation médiévale, 10e année (n°38), 1967, p.171.

¹⁵ Kitāb al-Milal wa-l-Nihal, pp. 50-52.

¹⁶ Նույն տեղում, էջ 53-54:

աղանդները կամ ուսմունքները: Աղանդ ասելով՝ նա նկատի ունի մի խումբ մարդկանց, ովքեր սկզբունքային մեկ կամ մի քանի հարցերի շուրջ ընդհանուր կարծիք ունեին¹⁷: Աստվածաբանության առանձին հարցերի (مسائل) շուրջ աղանդների միջև տարբերությունները նշելիս ալ-Շահրաստանին միևնույն ժամանակ փորձում է չանտեսել հիմնական խնդիրները (قواعد): Իսլամի աղանդները ներկայացնելիս հեղինակը քննադատում է իրեն նախորդած մուսուլման աստվածաբաններին դրանց նկարագրման հարցում հաստատուն սկզբունք չունենալու համար¹⁸:

Աշխատության երկրորդ մասում, որ, ինչպես նշվեց, վերաբերում է նախաիսլամական՝ Ջահիլիյայի շրջանում ձևավորված ուսմունքներին, հեղինակը անդրադարձ է կատարում հին կրոններին և հավատալիքներին՝ միաստվածություն քարոզող (հուդայականներ, քրիստոնյաներ), դուալիստական (մանիքեականներ, զրադաշտականներ, սաբիացիներ, բրահմաններ), նաև ներկայացնում է հեթանոսական պաշտամունքների հետևորդների և նշանավոր փիլիսոփաների՝ մասնավորապես Աբու Ալի Իբն Սինայի տեսակետները¹⁹:

Առավել մանրամասն անդրադառնանք աշխատության մեջ մութագիլիզմին վերաբերող հատվածներին, դրա կրոնափիլիսոփայական առանձնահատկություններին, որոնք հեղինակի կողմից ներկայացվում են աշխատության առաջին գլխում: Նախ ներկայացվում է, թե ովքեր են մութագիլիները, որտեղից է ծագել այդ անունը:

Հեղինակը նշում է, որ մութագիլիներին անվանում էին «Աստվածային ճշմարտության և միաստվածության կողմնակիցներ» և կոչում էին նաև կադարիյաներ և ադլիներ²⁰: Սակայն կադարիյա

¹⁷ Kitāb al-Milal wa-l-Nihāl, pp. 54-56, Dominique Sourdel, La classification des sectes islamiques dans le "Kitāb Al-Milal" d'Al-Šahrastānī, Studia Islamica, No. 31, 1970, pp. 242-243, Laoust Henri, նշվ. աշխ. էջ 171:

¹⁸ Прозоров С.М., Аш-Шахрастани и его труд Китáб аль-Милаль ва ан-Нихаль, Введение., с. 22-23.

¹⁹ Dominique Sourdel, նշվ. աշխ. էջ 240, Laoust Henri, նշվ. աշխ. էջ 173:

²⁰ «Կադարիյաներ» (արաբ. القدرية – կարողություն, ունակություն բառից) էին կոչվում մարդու ազատ կամքի դրույթի կողմնակիցները, որոնք պնդում էին, որ մարդն ինքն է իր արարքների ստեղծողը: «Ադլիներ» (أهل العدل)՝ Աստվածային արդարության կողմնակիցներ, մութագիլիզմի հինգ սկզբունքներից մեկը, որով հաճախ բնորոշում էին մութագիլիներին: St'u The Encyclopaedia of Islam, New Edition, Volume IV, 1991,

անվանումը նրանք (մութագիլիները) համարում էին շատ երկիմաստ և այն ընդունելի էին համարում միայն նրանց համար, ովքեր ընդունում են կանխորոշման դրույթը²¹: Հեղինակը նշում է նաև, որ մութագիլիները խուսափում էին այդ անվանումից, քանի որ ավանդույթ կար, որով կադարիներին անվանում էին «համայնքի մոզեր»: Մեջբերում է անում մարգարեի խոսքից. «Կադարիյաները Ալլահի հակառակորդներն են կանխորոշման հարցում» և եզրահանգում, որ կանխորոշման շուրջ տարածայնությունների, Աստծո և մարդու գործողությունների մեջ բարու և չարի տարանջատման մասին չի կարելի պատկերացում կազմել համաձայն այն ուսմունքի, որ ընդունում է ապավինումը Աստծուն և կյանքի բոլոր հանգամանքների կանխորոշված և Աստծո դատաստանին հանձնված լինելը²²:

Մութագիլիզմի բուն ուսմունքի նկարագրումը հեղինակը սկսում է դրա բոլոր ուղղությունները համախմբող հիմնական կրոնափիլիսոփայական դրույթները ներկայացնելով: Նա նշում է հետևյալ դրույթները՝

❖ Աստծո նախասկզբնական հատկանիշների հերքում.

Հեղինակը, նշում է, որ մութագիլիզմի ընդհանուր հավատամքն ընդունումն է Աստծո մշտնջենական լինելը, և դա Նրան ամենալավ բնորոշող հատկությունն է: Սակայն նրանք բացարձակապես հերքում էին նախասկզբնական հատկանիշները՝ ասելով. «Աստված գիտեցող, ամենակարող, հավերժական է իր էությանը, և եթե հատկանիշները կիսեին Իր հետ հավերժությունը, որը Նրա հիմնական հատկանիշն է, ապա դրանք կկիսեին իր հետ նաև Աստվածային էությունը»²³:

Հեղինակը շարունակում է՝ մութագիլիները միակարծիք էին նաև այն հարցում, որ Աստծո խոսքը ստեղծված է ժամանակի մեջ և ինչ-որ մի նախահիմքում. «Դրանք տառեր և հնչյուններ են,

Leiden: E. J. Brill. pp. 368–372., Ислам, Энциклопедический словарь, с. 13, 125:

²¹ Աստծո կողմից ամեն ինչի կանխորոշված լինելու ուսմունքի մասին է խոսքը (արաբ. قدر՝ ճակատագիր բառից), մանրամասն տե՛ս Пиотровский М. Б., Ислам и судьба, Понятие судьбы в контексте разных культур, Москва, 1994, с. 92-97.

²² Kitāb al-Milal wa-l-Nihāl, pp. 56-57.

²³ Kitāb al-Milal wa-l-Nihāl, p. 57.

որոնց նմանները գետեղված են Մուրբ գրություններում, որպես Նրա պատմածի վկայություններ այն մասին, թե ինչ է գոյություն ունեցել այդ նախասկզբում...: Իսկ ցանկությունը, լսողությունը և տեսողությունը Նրա էության մեջ գոյություն ունեցող իրական հասկացություններ չեն, ունեն գոյության այլ միջոցներ և դրանց իմաստի կրողներ»²⁴:

❖ **Մարդանման Աստծո ընկալման բացառում**

Հեղինակը նշում է, որ մութագիլիները անհնար էին համարում հանդերձյալ կյանքում Աստծուն տեսանելը և Նրա՝ ցանկացած առումով և ցանկացած պարագայում մարդու կերպարանքով հանդես գալը: Նրանք պարտադիր էին համարում 'Ղուրանի՝ այդ առումով կասկածելի հատվածների այլաբանական մեկնաբանությունը. «Այս սկզբունքը նրանք անվանեցին **ուսմունք միաստվածության մասին**»:

❖ **Մարդն է իր գործողությունների և արարքների պատասխանատուն**

Հեղինակը նշում է, որ մութագիլիները համակարծիք էին, որ մարդն ունակ է ինքնուրույն գործել, մարդն է իր արարքների ստեղծողը՝ լավ և վատ, և հանդերձյալ կյանքում իր կատարած արարքների համար կատանա փոխհատուցում կամ կարժանանա պատժի: Նա գրում է. «Աստված գերծ է իրեն վերագրվող չարիքից և անարդարությունից կամ անհավատությունից ու անհնազանդությունից, որովհետև եթե Նա անարդարություն թույլ տար, Ինքը կդառնար անարդար, ճիշտ այնպես, ինչպես եթե արդարություն իրականացներ՝ կլիներ արդար»²⁵:

❖ **Աստվածային արդարության, խոստումի և սպառնալիքի սկզբունքները**

Մութագիլիները, ըստ հեղինակի, համարում էին, որ Աստված միայն բարին և լավն է իրագործում, իսկ մարդկանց բարօրության մասին հոգալը պայմանավորված է Իր իմաստնությամբ: Իսկ ինչ վերաբերում է մարդկանց համար «լավագույնն» անելուն և Աստծո ողորմածությանը, հեղինակը նշում է, որ դրա անհրաժեշտության վերաբերյալ կար անհամաձայնություն և մութագիլի-

²⁴ Նույն տեղում:

²⁵ Նույն տեղում:

ները այս սկզբունքն անվանեցին **Աստվածային արդարություն**: Նրանք, ըստ հեղինակի, համաձայն էին նաև այն հարցում, որ եթե հավատացյալը լքի այս աշխարհը հնազանդությամբ և ապաշխարելով, ապա կարժանանա վարձատրության և փոխհատուցման, իսկ եթե նա հեռանա առանց ապաշխարության, կարժանանա հավիտյան դժոխքի, բայց նրա պատիժը ավելի թեթև կլինի, քան անհավատների պատիժը: Մութագիլիները այս սկզբունքը կոչեցին **խոստումի և սպառնալիքի մասին ուսմունք**²⁶:

❖ Բարու և չարի տարանջատումը հնարավոր է միայն բանականության միջոցով, իսկ կրոնական պարտականությունները Աստծո կողմից ուղարկված փորձություններ են:

Հեղինակը նշում է, որ մութագիլիները նախ համաձայնեցին, որ Աստծո ճանաչողության հիմքերը և Նրա ողորմածության համար երախտագիտությունն անհրաժեշտ են հայտնությունից առաջ: Իսկ բարին չարից պետք է տարբերել միայն բանականությամբ: Նույն կերպ անհրաժեշտ է ընդունել լավը և խուսափել ստորությունից: Կրոնական պարտականությունների ի վերուստ շնորհումը Արարչի ողորմածությունն է, որ ուղարկվում է մարգարեների միջոցով՝ որպես փորձություն և քննություն²⁷:

Այս ընդհանուր սկզբունքները ներկայացնելուց հետո հեղինակն անդրադառնում է մութագիլիզմում առանձնացած բոլոր ուսմունքների (աղանդների) առանձնահատկություններին, դրանց միջև եղած տարբերություններին: Թվարկվում են 12 աղանդները՝ Վասիլիներ, Հուզայիներ, Նազգամիներ, Խաբիտիներ և Հադասիներ, Բիշրիներ, Մուամմարիներ, Մուռդարիներ, Մուամաիներ, Հիշամիներ, Չահիզիներ, Խայյատիներ և Քաբիներ, Չուբաիներ և Բահշամիներ, մանրամասնորեն ներկայացնում դրանց կրոնափիլիսոփայական բոլոր առանձնահատկությունները: Հեղինակը նշում է, որ այդ ուղղությունների հիմնադիրները մեծապես ազդվել են փիլիսոփաների՝ հատկապես բնափիլիսոփաների աշխատություններից: Մակայն, կրկին ըստ հեղինակի, մեծ մասամբ չեն ընկալել դրանք ողջ խորությամբ՝ հանգելով պարզամիտ և երբեմն անհեթեթ եզրակացությունների: Օրինակ՝ խոսելով Մուամաիների ուսմունքի հիմնադիր Մուամաի իբն ալ-Աշրա ալ-

²⁶ Kitāb al-Milal wa-l-Nihāl, pp. 57-58.

²⁷ Նույն տեղում, էջ 58:

Նունայրիի (մահ. 828) մասին, որ խալիֆ ալ-Մամունի²⁸ իշխանության օրոք շատ բարձր դիրք էր զբաղեցրել, հեղինակն ասում է, որ վերջինս իր ուսմունքով համադրել է հավաստի անհետեթությունն ու հոգու այլասերումը²⁹: Սակայն հեղինակը որոշ դեպքերում մեծ ակնածանքով է խոսում մութազիլիական դպրոցների հիմնադիրների մասին: Չահիզիների դպրոցի հիմնադիր Աբու Ուսման Ամր իբն Բահր ալ-Չահիզիի (մահ. 869թ.) մասին խոսելիս հեղինակը նշում է, որ նա ամենակիրթ մութազիլիներից էր և որ փիլիսոփաների բազում աշխատություններ ուսումնասիրելուց հետո նա միահյուսեց և տարածեց նրանց ուսմունքների մեծ մասը իր պերճախոս արտահայտությունների և իր նրբանաշակ սրամտության շնորհիվ³⁰:

Այսպիսով ալ- Շահրաստանիի 1127 թ. գրված «Կրոնների և աղանդների մասին» աշխատությունը բացառիկ էր և առանձնանում էր իր ժամանակի և իրեն նախորդած աստվածաբանական աշխատություններից. ա) իր ընդգրկումով՝ նախախալամական շրջանում ձևավորված ուսմունքներից մինչև իսլամի պատմություն, դրա հիմնական ուղղությունների և ուսմունքների ներկայացում, բ) համակարգված բնույթով՝ աստվածաբանության հիմնական խնդիրների ձևակերպում, որոնք հիմք պետք է հանդիսանան տարբեր ուսմունքների նկարագրման համար, գ) անաչառ և անկողմնակալ մոտեցմամբ իսլամի հիմնական ուսմունքները ներկայացնելիս:

Իսկ աշխատության՝ մութազիլիզմին վերաբերող գլխում հեղինակը ներկայացնում է դրա կրոնափիլիսոփայական հիմնական դրույթները, որոնք ընդհանուր են մութազիլիական բոլոր ուղղությունների համար: Այնուհետև հանգամանորեն անդրադառնում է մութազիլիական առանձին դպրոցների ուսմունքներին, դրանց ընդհանրություններին և տարբերություններին՝ երբեմն չհամաձայնվելով դրանց հետ: Այդ անհամաձայնությունը հեղինակը հիմնականում հիմնավորում է Ղուրանից մեջբերվող վկայություն-

²⁸ Աբու ալ-Աբբաս Աբդ Ալլահ իբն Հարուն ալ-Ռաշիդ (786-833), Աբբասյան յոթերորդ խալիֆ, ավելի հայտնի է ալ-Մամուն անվամբ, նրա իշխանության տարիներին մութազիլիզմը ընդունվեց՝ որպես խալիֆայության պաշտոնական կորնական ուսմունք, Rekaya, M., al-Ma'mūn, The Encyclopaedia of Islam, New Edition, Volume VI, Leiden: E. J. Brill. էջ 331:

²⁹ Kitāb al-Milal wa-l-Nihal, pp. 84-84.

³⁰ Kitāb al-Milal wa-l-Nihal, pp. 87-88.

ներով, փորձելով լինել շատ չափավոր և բարեխիղճ: Երբեմն հեղինակը որոշ դպրոցների հիմնադրույթներ համարում է հակասական կամ «խնճված» և, չնայած դրան, շատ մանրակրկիտ ձևով շարադրում է դրանք՝ այդպիսով հսկայական նյութ տրամադրելով հետագա հետազոտությունների համար:

**THE REFLECTION OF THE RELIGIOUS AND
PHILOSOPHICAL PRINCIPLES OF MUTAZILISM IN ABŪ
AL-FATH MUḤAMMAD AL-SHAHRASṬĀNĪ'S "ON
RELIGIONS AND SECTS" (كتاب الملل والنحل) WORK.**

Anush Tamrazyan

SUMMARY

The work "On Religions and Sects" ("Kitāb al-Milal wa-l-Nihāl") of 11th-12th centuries theologian and philosopher Abu al-Fath Muhammad ibn Abd al-Karim al-Shahrastani, written in 1127, is considered to be the first work of encyclopedic value. It is unique and stands out among the theological works of its time, primarily for its inclusion: from the teachings of the pre-Islamic period to the history of Islam, the presentation of the teachings of its main directions. The author systematically formulated the main problems of theology, which should be the basis for describing various teachings. Presenting the basic teachings (sects) of Islam, the author stands out also with a relatively impartial approach.

In the chapter on Mu'tazilism, the author outlines its main religious and philosophical provisions, common to all Mu'tazilite teachings. Then he discusses in detail the teachings of all Mu'tazilite schools, their similarities and differences, sometimes disagreeing with them. The author substantiates this disagreement mainly with the evidence quoted from the Qur'an, trying to be very moderate, conscientious, thereby providing a great deal of material for further research.

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Abū al-Fath Muḥammad b. 'Abd al-Karīm al-Shahrastānī, Kitāb al-Milal wa-l-Nihāl, Beirut, Lebanon, 1993;

- Абуль-Фатх аш-Шахрастани, Книга о религиях и сектах, Китáb аль-Милал ва ан-Нихаль, часть 1, Ислам, перевод с араб., введение и комментарий С.М. Прозоров, М. 1984;
- Andrew Rippin, Muslims: Their Religious Beliefs and Practices Associate Professor of Religious Studies Andrew Rippin Routledge, 2014;
- Адам Мец, Мусуьманский ренессанс, М. 1973;
- Бартольд В. В., Работы по истории ислама и Арабского халифата, сочинения, Т. 6, 1966;
- Bruce B. Lawrence, Shahrastani on the Indian Religions, Paris, 1976, p. 297;
- Вольф М. Н., Средневековая арабская философия: ашаритский калам. Учебное пособие, Новосибирск, 2008;
- Dhimmi and Others: Jews and Christians and the World of Classical Islam, Ed. by U. Rubin;
- Encyclopedia of Medieval Philosophy, London, 2011;
- The Encyclopaedia of Islam, New Edition, vol. I-XII, Leiden , Brill, 1986 – 2004;
- Ислам, Энциклопедический словарь, М. 1991;
- Harry Austryn Wolfson, The Philosophy of the Kalam, London, 1976;
- Laoust Henri. L'hérésiographie musulmane sous les Abbassides. In: Cahiers de civilisation médiévale, 10e année (n°38), 1967, pp. 157-178;
- Michael Cook, Commanding Right and Forbidding Wrong in Islamic Thought, UK 2004;
- Mohammad Sharif Khan, Mohammad Anwar Saleem, Muslim Philosophy and Philosophers, APH Publishing, 1994;
- Medieval Heresies, Christine Caldwell Ames, UK, 2015;
- Мухаммад б. 'Абд ал-Карим аш-Шахрастани , Книга о религиях и религиозно-философских учениях. Гл. 2: Маги (пер. и коммент. С. М. Прозорова), Ишрак ежегодник исламской философии, Новосибирск: Восточная литература, 2011, № 2, с. 150-188;
- Paula Youngman Skreslet, Rebecca Skresle, The Literature of Islam: A Guide to the Primary Sources in English Translation, Oxf. 2006;
- Sourdel Dominique, La classification des sectes islamiques dans le "Kitáb Al-Milal" d'Al-Šahrastānī, Studia Islamica, No. 31, 1970, pp. 239-247;

- Soumen Mukherjee, *Ismailism and Islam in Modern South Asia*, Cambridge University Press, 2017;
- Петрушевский И.П., *Ислам в Иране в VII-XV веках (курс лекций)*.
Ответственный редактор В.И.Беляев. Л., 1966;
- Пиотровский М. Б., *Ислам и судьба, Понятие судьбы в контексте разных культур*, М., 1994;
- Wilferd Madelung, *Religious Trends in Early Islamic Iran*, Oxf., 1988;
- Wilferd Madelung, Toby Mayer, *Struggling with the Philosopher, A New Arabic Edition and English Translation of Muḥammad b. 'Abd al-Karīm b. Aḥmad al-Shahrastānī's Kitāb al-Musāra'a*, London, 2001;

**EPISTOLARY EXCHANGES, TREATISES AND OPUSCULES:
ARMENIAN SOURCES ON RELIGIOUS POLEMICS
BETWEEN THE ARMENIANS AND THE GREEKS IN THE 12TH
CENTURY**

Isabelle Augé

Université Montpellier-3

Keywords: *Armenian Cilicia in the XII century, Documents of Armeno-Byzantine Church Negotiations, Manuel I Comnenus, Patriarch of Constandinople Michael of Anxialos, catholicoses Nersēs IV Šnorhali and Grigor IV Tlay, Theorianos's Dialexis, Nerses Lambrnac'i, Kostandin of Hierapolis.*

It is recognised by historians that, although the separation between the Armenian Church and the Greek Church effectively took place in the early 7th century¹, it was underway before this date and as far back as the councils of Dvin in 506 and 555. Under Arab rule, owing primarily to action taken by the Catholicos Yovhannēs III Awjnc'ī, we notice a normalisation of the doctrinal position of the Armenians who, whilst having refused Chalcedonism, also rejected the Eutychian form of Monophysitism². Discussions took place over the following centuries between the two parties, such as between the Catholicos Zak'aria and the Patriarch Photius³ or between the Catholicos-

¹ During the council of Dvin for the election of the Catholicos Abraham I in 607, the bishops announced the official condemnation of the council of Chalcedon: ("And thus, as did the former patriarchs of Armenia and the bishops, priests, princes and lay people, we have done away with the appalling anathemas and rejected all of the heretics: Arius and Macedonius and Nestorius, who we must not remember, and Eutyches and the Council of Chalcedon and the shameful Leo's *Tome*"), quoted in N. G. Garsoïan, *L'Église arménienne et le grand schisme d'Orient* (CSCO 574, Subsidia 100), Louvain 1999, p. 362. The whole work should of course be referred to for the question addressed here.

² J.-P. Mahé, « L'Église arménienne de 611 à 1066 », in *Histoire du christianisme* 4, *Évêques, moines et empereurs (610-1054)*, J.-M. Mayeur, Ch. and L. Pietri, A. Vauchez, M. Venard, Paris 1993, p. 457-547, here p. 478-486.

³ See I. Dorfmann-Lazarev, *Deux débats théologiques arméno-byzantins après le triomphe de l'orthodoxie. Le concile de Sirakawan (862) et la corres-*

historian Yovhannēs Drasxanakertc'i and the Patriarch Nicolas Mystikos⁴. With the Byzantine empire's advancement in the Middle East under the dynasty of the Macedonians, annexation policies of small Armenian kingdoms that had been restored in the late 9th and early 10th centuries meant that there was a lot of resentment on the religious front from the beginning of the 10th century onwards⁵. The Turks' presence in Asia Minor further complicated the situation and accentuated the displacement of the Armenian populations, accompanied by their religious superiors⁶, firstly to Cappadocia and then Cilicia. We are placing our study in the context of the emergence of an Armenian principality in Cilicia, in contact with the Greeks, the Franks having settled there due to the first crusade and the Muslims. The Armenians were therefore situated in a very different context to that of Greater Armenia, in an unprecedented geopolitical situation that was particularly rife with interreligious dialogue.

We propose to show the Armenian sources that highlight Armenian-Greek discussions and complete the insufficient and difficult to use Greek sources⁷. We shall also demonstrate that a study

pondance entre Photius et Sahak M̄rut (882), (CSCO 609, Subsidia 117), Louvain 2004.

⁴ I. Augé, « Hovhannēs de Draskhanakert (899-929) en dialogue avec Constantinople », *Bazmavep* CLXVI, 2008, p. 407-424.

⁵ Mahé 1993, p. 512-513.

⁶ After a vacant period, the Byzantines and the Armenians found a compromise in the reinstatement of a catholicos, namely Vahram Pahlawuni, son of Grigor Magistros. Owing to his family's Byzantinophilia, whilst still remaining closely attached to the established Church, he thus represented a good compromise for both the Byzantines and the Armenians. He ordained a lineage of 7 catholicoi who succeeded him to the patriarchal seat between 1066 and 1203, claiming to be descendants of Grigor Lusaworič'. They travelled to Cappadocia, Commagene and the Euphrates before settling in the Hromkla fortress in the mid 12th century: Mutafian 2012, vol. 1, p. 478-481.

⁷ The Greek texts have not always received the attention they deserve, despite their significant quantity. See, for example, the Greek edition and annotated translation of three of them in J. Darrouzès, *Trois documents de la controverse gréco-arménienne*, *REB* 48, 1990, p. 89-153. On page 89, the author writes: "There are a number of opuscles in Greek manuscripts with strong similarities between them resulting in a sense of déjà vu which can leave us indifferent to the text and conceal details that may be of interest".

of religious controversy benefits from a joint analysis of sources deriving from the different protagonists in question by focussing on the particularly prolific period of discussion that was the second half of the 12th century.

The first source that we would like to address here is the Armenian version of the letters exchanged between Nersēs Šnorhali and his successor Grigor Tlay, and the court of Constantinople from 1165-1178. The corpus of the letters was written by Nersēs Lamb-ronac'i, who addresses the reader in a manuscript colophon: at the request of his brother Het'um III, Lord of Lambron from 1170 to 1200, he compiled the letters and combined them with his own remarks⁸. These letters were then edited on numerous occasions and our study is based on an edition published in Jerusalem in 1871⁹ that includes the encyclical letter, the letters exchanged between Nersēs Šnorhali as well as his successor Grigor Tlay, with Constantinople (15 letters in total) and the letters sent by the Catholicos to the Armenians

The Armeno-Greek polemic became increasingly intense with the reign of Alexis I Comnenus and, for example, Niketas Stethatos' unpublished treatise as indicated by G. Dagron, *Minorités ethniques et religieuses dans l'Orient byzantin à la fin du X^e et au XI^e siècle: l'immigration syrienne*, TM 6, 1976, p. 177-216, included in G. Dagron, *Idées byzantines* (Bilans de recherche 8), Paris 2012, t. I, p. 265-301, here p. 300. The treaty is entitled *Κατὰ τῆς βλασφημίου τῶν Ἀρμενίων αἰρέσεως*; the first discourse addresses Christology; the second deals with the distinction between the Nativity and the Baptism of Christ; the third with the *Trisagion* and Peter the Fuller; the fourth and longest seeks to show that Armenian heresy was a summarisation of all previous heresies; the fifth addresses the azyme controversy and reproaches the Armenians for judaizing.

⁸ Garegin I Kat'olikos, *Yišatakarank'je'ragrac' [Colophons of manuscripts]*, vol. 1, Antelias 1951, N°281, col. 621.

⁹ *Āndhanrakan t'ult'k srboyn Nersēs Šnorhalwoy*, Jerusalem, 1871. All of these letters have been translated in various different works. Note, firstly, the partial Latin translation: J. Cappelleti, *Sancti Nersetis Clajensis Armeniorum catholici opera*, t. I, Venice 1833, as well as the French translation of all of the letters exchanged with Constantinople in I. Augé, *Églises en dialogue: Arméniens et Byzantins dans la seconde moitié du XII^e siècle* (CSCO vol. 633, subsidia t. 124), Louvain 2011 and the French translation of the letters exchanged between Nersēs and the Armenians in M. Vanérian, *La correspondance de saint Nersēs Chenorhali avec les Arméniens*, Thèse dactylographiée, Montpellier, June 2007.

(19 letters). In this last category, some of the texts directly regard the subject of study as they were sent not only by Nersēs, but also by Grigor Tlay, to the religious people remaining in Greater Armenia asking for their opinion on the peace talks currently in place with the Greeks with the objective of religious union. These doctors of faith, who had remained on historic Armenian territory under Muslim rule, did not traditionally have the same motivations for promoting inter-ecclesiastical dialogue as their co-religionists in Cilicia. They appear to be against any form of rapprochement, considering it a betrayal of their ancestral beliefs. The letters that are of primary interest to us here are those that form the central part of the collection on Armenian-Greek exchanges and their significance becomes clear when we look Greek sources on the same subject. During the active discussion period, from 1165 to 1178, the Byzantine Emperor Manuel Comnenus, sent a delegation to the Armenian catholicos at Hromkla on two occasions, brought each time by a certain Theorianos whose exact identity has not been formally established¹⁰. He left a relatively long report on this subject¹¹, in the form of a composite text that falls under several literary genres. As the text's title indicates, it is first and foremost a dialogue on the subject of faith between the various different protagonists although the dialogue is accompanied by other documents and, notably, by letters that make up the Greek version of the letters in Armenian in the collection compiled by Nersēs Lambronac'i. Other original documents can also be found in the account from the Greek delegate, including lengthy comments, diplomatic documents on simultaneous discussions with the Syriacs and a sermon on the subject of slander given to the Catholicos' entourage by Theorianos himself at the request of the latter¹². The

¹⁰ I. Augé, « Les relations arméno-grecques dans la seconde moitié du XII^e siècle: aspects diplomatiques », *Byzantinistica* X, 2008, p. 139-155, here p. 151.

¹¹ *Θεωριανοῦ ὀρθοδόξου διαλέξεως πρὸς τὸν Καθολικὸν τῶν Ἀρμενίων*, PG t. 133, col. 119-298.

¹² To our knowledge, the only detailed study of this text was given by C. Kirmizi, *Theorianos embassy to the Armenians: an attempt at reunion of the churches*, Birmingham M. Phil. 2002 (R. J. Macrides). The various elements that make up the text are analysed in appendix A, p. 100-101, which allows us to find our place in this complex document, the literary forms of which are analysed on pages 53-64.

annexed table¹³ clearly illustrates the much more complete nature of the Armenian sources for an understanding of this fundamental episode in religious Armenian-Greek relations as Theorianos only included seven letters in his report. These letters correspond chronologically with the time of his two visits to the seat of the Armenian Patriarch, in 1170 and 1172. The first two letters have been left out, in spite of their importance, as they include two professions of faith by Nersēs and, most importantly, a letter addressed to the Emperor, dated in 1166, in which the newly-instated Catholicos reveals to the Byzantine Emperor how he views the union and the prerequisites that must be met in order for the union to be sustainable¹⁴. Also absent from the Greek version are the last six letters found in the Armenian collection, notably the one sent by Nersēs Šnorhali to the Greek Patriarch Michel Anchialos as well as all the correspondence exchanged during the Catholicossate of Grigor Tlay. The Greek and Armenian records have a total of five letters in common: a systematic comparison between the letters preserved in the two languages shows that the translations are generally reliable, aside from a few minor differences¹⁵. Among these, the discrepancy between the dates can easily be explained by the fact that a letter sent by one or other of the parties is, in its original language, dated at the time it was sent whereas its translation bears the date of its registration in the recipient's chancellery. Among the texts studied here, the highest number of discrepancies are found in the letter sent by Nersēs Šnorhali to Manuel Comnenus at the end of the first embassy of Theorianos in October 1170: the titles differ greatly yet the end of the letter, which is present in the Greek version, is taken from the Armenian version¹⁶. The discrepancies identified cover

¹³ Table taken from Augé 2008a, p. 155, see *infra*, p.

¹⁴ For these reasons, this letter was stated by Lewon Zekiyan to be the "Chart of action for the union": see B. L. Zekiyan, « Saint Nersēs Chnorhali en dialogue avec les Grecs », in *In memoriam Haig Berberian*, Lisbon 1986, p. 861-883.

¹⁵ For a list of discrepancies and their analysis: Augé 2008a, p. 145-149. The best comparative study of the texts is by A. Bozoyan, *Hay-byuzandakan ekelec'akan banakc'ut'yunneri vaveragrera (1165-1178 t't')* [Documents on the Armenian-Byzantine ecclesiastical negotiations (1165-1178)], Erevan 1995.

¹⁶ See Kirmizi 2002, p. 36-39.

relatively minor points, even if, according to the summary table in annex, two letters, which have not been transmitted in their Armenian version, exist solely in Greek. In the summer of 1171, the Emperor Manuel Comnenus, according to his representative Theorianos, attached a secret letter to his official letter¹⁷ in response to a secret letter from the Catholicos¹⁸. The complete lack of reference to this secret correspondence in the Armenian collection has led some historians to disclaim its existence and consider it to have been completely fabricated by the Greek delegate. A careful analysis of the historical context and the difficult position of the leader of the Armenian Christian church certainly gives us more insight into the reasons for his attitude which could appear two-tier at first glance. In his official letter he states his willingness to consult the doctors of Greater Armenia whom he knows perfectly well to be unsupportive of the union. It is thus highly possible that he disclosed his own position in a secret letter in order to both reassure the Emperor of his good intentions and to avoid worrying his co-religionists.

Everything relating to the end of the discussion, notably the last two letters from Nersēs Šnorhali and all of the correspondence sent and received by his successor Grigor Tlay, is only known from the Armenian version which informs us up until the April 1178 meeting of the Armenian Synod of Hromkla for the question of the union. At the end of the Armenian Prelates' meeting, Grigor IV sent two letters to the Emperor and the Greek Patriarch of Constantinople. The latter was also signed by all those who participated in the Synod and marked the end of discussions.

The Armenian records of the Armenian-Greek discussions from 1165-1178 are therefore substantial and include a considerable amount of additional information when compared to the Greek sources available to us. A systematic comparison of the preserved documents

¹⁷ *PG* t. 133, col. 233b-235a. Joined to this letter is another letter from Michel Anchialos, which was also "secret", col. 224c-232c.

¹⁸ *PG* t. 133, col. 212: "Καὶ δοὺς ἡμῖν γραφὴν αὐτοῦ πρὸς τὸν εὐσεβέστατον, καὶ ἅγιον, καὶ φιλόχριστον ἡμῶν αὐτοκράτορα, περιέχουσαν τὸ ὅτι Δέχομαι τὴν τετάρτην μεγάλην καὶ οἰκουμενικὴν ἁγίαν σύνοδον ἐν Χαλκηδόνι": "And thus he gave us a letter for the truly devoted, holy and loving of Christ, our autocrat, in which he added this: "I pronounce the fourth great ecumenical council, the holy Council of Chalcedon".

in both languages shows us that the Armenian texts are generally reliable, even if we are obliged, on certain issues such as the question of whether or not the secret letters really existed, to put forward hypotheses that are difficult to prove. Either way, and in order to study the facts exhaustively, it is necessary to focus on the sources preserved in Greek and Armenian. In only studying one set of records we would be losing essential information and run the risk of coming to partial, or even biased, conclusions¹⁹...

The Armenian sources still retain some little-known documents relating to the Armenian-Greek discussions that took place in the second half of the 12th century: the first is entitled *Chapters asked of us by the Romans on the subject of peace with, beside them, the responses*²⁰.

A number of elements seem to indicate, as some historians have already stated²¹, that the text can be situated at the beginning of the Catholicosate of Grigor IV when, in 1176, the latter sent a delegation to Constantinople, led by the priest Kostandin, requesting the dignity of the Archbishop of Hierapolis²². The document's form is the first

¹⁹ See comments made on the records by Darrouzès 1990, p. 96-100.

²⁰ *Glxadrut'iwkn' hořomoc' zors pajajēn ar i mēnj i pets xalalut'ean ənd ors ew lucmunk' arənt'er edeal* in A. Palčean, *Histoire de la doctrine catholique chez les Arméniens et de leur union avec l'Église latine au concile de Florence* [*Patmut'iwkn kat'olikē vardapetut'ean i Hays ew miut'ean noc'a ənd hřomēakan ekelec'way i P'lorentean siwnhodosi*], Vienna 1878, p. 260-266.

²¹ See for example B. L. Zekiyān, « Les relations arméno-byzantines après la mort de saint Nersēs Chnorhali », *XVI^e congrès international des études byzantines*, Vienna 1981, *Actes II/4, Jahrbuch der Österreichischen Byzantinistik* 32/4, 1982, p. 331-337, here p. 332-333: "It appears to be almost certain that the Armenians' responses to the "nine chapters", penned by Nersēs Lambronac'i at the request of Grigor Tlay, had been prepared and sent to Constantinople during the priest Constantine's mission in 1176. This becomes evident, not only through Nersēs Lambronac'i's testimony that the Greeks renounced their liturgical and disciplinarian demands following the mission as well as their allusions to these issues, in either the letter from the Catholicos or in the Emperor's response".

²² *Əndhanrakan t'ult'k* (cit. n. 9), p. 166-168. It is interesting to note that, in the Catholicosate entourage, there was a priest of Greek language and rites with important functions as the Catholicos states that he had been his instructor. By looking to obtain a high seat for him in the Patriarchate of Antioch, the Catholicos was surely seeking to strengthen the union.

indication: although the writing of the document has been attributed to Nersēs Lambronac‘i, its preparation was surely collective since the first response is preceded by the reference "The Synod responds"²³. However, the letter sent by Grigor IV to the Emperor, via Kostandin, bears the following address: "To the Emperor of the Romans, crowned by Christ and loved by God, Manuel, you who are seated at the head of all the universe with great honour and authority, I, Grigor, humble Catholicos of the Armenians, and together with all of the Synod of the Armenian Church, we greet you in prayer"²⁴. It is thus probable that the letter from the Catholicos and the text in question here were formulated collaboratively at an Armenian Synod of which there is no trace in any source. The content of the letters, sent firstly by Grigor Tłay and responded to by the Byzantine Emperor, also support this hypothesis. In his letter, the Catholicos raises the issue of Greek demands, asking for their alleviation, and it is highly possible that he deemed it constructive to include a list of Armenian responses²⁵. The imperial response also includes what may be an allusion to the chapters, when Manuel writes: "above all, our Royalty has received the project from your Excellency regarding these issues"²⁶. Nersēs Lambronac‘i's own comments, when documenting the priest Kostandin's mission, insist on a lightening of Greek demands, formulated as follows: "The Armenian Catholicos Grigor, having received these letters and having read them in the company of the bishops and the doctors, is rejoicing greatly as, instead of the nine chapters requested during the authority of the holy Lord Nersēs (which seemed excessive to us), they asked only for the profession of

²³ *Glxadrut‘iwnk‘ hořomoc‘* (cit. n. 20), p. 260..

²⁴ *Āndhanrakan t‘ult‘k* (cit. n. 9), p. 166:.'

²⁵ *Āndhanrakan t‘ult‘k* (cit. n. 9), p. 167: "Now that your Holiness knows that the numerous requests [arising] from you distance some from peace [and push them] towards what is an old habit. However, there are many with whom we can not speak as we do with spirituals, but more like the fleshly whom we feed with milk instead of substantial food, as they are not able. It is for this reason that we ask you to lighten the previously established chapters so that divine peace may be restored and that love itself will bring forth and grow what it needs for its own development".

²⁶ *Āndhanrakan t‘ult‘k* (cit. n. 9), p. 170.

faith as the basis for the union; upon examination, they deem it to be orthodox and in accordance with the holy Fathers²⁷.

Having established that the text had been delivered to Constantinople during the mission led by Kostandin, the future Archbishop of Hierapolis, we must now analyse the content of the text which is preserved only in Armenian. The author responds conclusively to the demands presented to the Armenians a few years before, under the Catholicosate of Nersēs Šnorhali, by the Emperor Manuel Comnenus and delivered by Theorianos²⁸. The number of propositions and the content are absolutely identical and are in the form of a list of nine controversial points of which the first two involve dogmatic issues and the following focus on liturgical problems. The stance taken by the Armenian Prelate is interesting. Regarding the dogmatic issues, its position is clear from its responses to the first two chapters when it asks, firstly, for anathema to be cast on those who speak of one nature in Christ²⁹ and, secondly, to adhere to a given confession on the Christological front³⁰. He confirms his acceptance of the Greek position on the two natures of Christ, whilst remaining loyal to Cyril of Alexandria, his teachings and "The one incarnate nature of the Word". He also resumes these issues regarding the eighth point put forward by the Greeks, on the recognition of the Ecumenical councils of Chalcedon at Nicaea II³¹. If he declares himself willing to accept the council of Chalcedon, on which he considers himself to be sufficiently informed, he asks the Greeks for clarification on certain points, in particular on the need to cast anathema on Dioscoros (point 1) and on the issue of the fifth, sixth and seventh councils (point 8). Although he is not opposed to the possibility of such a recognition, he

²⁷ *Endhanrakan t'ult'k* (citation n. 9), p. 180:

²⁸ *Endhanrakan t'ult'k* (cit. n. 9), p. 156-157. See French translation in I. Augé, *Églises en dialogue* (cit. n. 9), p. 159-160.

²⁹ Quoted in the title 1, Eutychès, Dioscore, Timothée Ælure : *Glxadrut'iwnk' hořomoc'* (cit. n. 20), p. 260.

³⁰ *Glxadrut'iwnk' hořomoc'* (cit. n. 20), titre 2: Greek demands p. 260, Nersēs' response p. 260-261.

³¹ *Glxadrut'iwnk' hořomoc'* (cit. n. 20), p. 264.

demands that he be informed of the circumstances of the assembly meetings and the content of the decisions taken³².

With regards to liturgy, Nersēs Lambronac‘i’s responses, which reflect the Greeks’ demands, only make reference to the dispute’s conventional points such as the question of heortological discrepancies, the way to say the *Trisagion*, the species used for the Eucharist and the confection of the holy Chrism. Although the responses are of primary interest to us, it should be noted that, with regards to theology, the Armenian Prelate appears to be flexible and willing to concede some points as well as having an intelligent line of argument. For the festivals and calendar discrepancies, for example, he explains that it is impossible for him to make any amendments due to the weight of tradition³³ although he notes that only the Nativity and its related ceremonies are concerned. For the Eucharist, he presents the Greeks with a sort of deal, saying that if they forego the use of unleavened bread then he would be willing to do the same for the use of pure wine³⁴. This comment is interesting and clearly demonstrates that, like Nersēs Šnorhali, his senior in the Armenian-Greek negotiations, the Armenian Prelate only envisaged the negotiations on an equal basis and did not intend to have their conduct dictated by the Greeks. This attitude can also be seen upon analysis of the last point raised in the document sent by the Greeks, demanding that the choice of Armenian Catholicos be approved by the Emperor. Nersēs Lambronac‘i’s response is highly interesting and is revelatory of the way in

³² “The definition and the causes [of the meeting] of the fourth council are known by us. [We know] that it is in accordance with the three previous and this is why we have accepted it. And when you provide us with the circumstances of the other [councils], if they are in accordance with the profession of faith given at the previous councils, we shall welcome them gladly”.

³³ *Glxadrut‘iwnk‘ hořomoc‘* (cit. n. 20), title 4, p. 262-263.

³⁴ *Glxadrut‘iwnk‘ hořomoc‘* (cit. n. 20), title 6, p. 263: “We want you to celebrate the Eucharist with fermented bread, wine and water. On this point, we have deemed it fit that your Excellency acts as the see of the apostle Peter and as our weakness and, as such, it renews the commandment of love. As they are, and as are we, the disciples of the apostolic tradition who, like us, give unleavened bread for the sacrifice of Christ. And if God permits you to lower yourself thus and act like us then we are ready, for there is no obstacle to the Church union, to mix water with pure wine, for the glory of God”.

which he perceived the union. Following a rather lengthy consideration of the previous attempts to bring together the Churches, including several examples, he proceeds with the argument that makes his treaty so original: the need for a pure and simple consolidation of the two ecclesiastical hierarchies, Greek and Armenian: “And thus it is necessary, through an indestructible connection, to acknowledge love by marrying the See of Antioch with the Armenian Patriarch as, in uniting this chaste Virgin with this immaculate spouse, we believe that an enduring alliance will exist between our two peoples. And we hope, as our Lord subjected human nature, through his own body, to the power of God the Father, and, as such, in having this holy See and this holy Church for a body, the whole Armenian Church shall be placed under the power of the king of the Romans and combined with the great Church”³⁵. This is a bold claim from the Armenian Prelate, given the importance of the See of Antioch for the Empire. It is important to note that, in the last quarter of the 12th century, the town was the focus of continual struggles between the emperors of the Comnenian dynasty and the Normands who seized control after the first crusade. After having led several military expeditions in the region, in order to submit the princes of Antioch, the emperors managed to reinstate a Greek Patriarch on the town's seat with the election of Athanasius III, from 1165 until his death in 1170³⁶. Without Nersēs Lambronac‘i necessarily having been informed of this, it is certain that he was aware of it, from his knowledge of the Church's history, the importance of the seat and the daring nature of his request. It is therefore written at the end of his text that, if the Greeks did not agree, they should put forward propositions that they themselves deemed appropriate.

In any case, when Nersēs Lambronac‘i sent the text through the intermediary of Kostandin in 1176, he had surely thought long and hard about the union's functioning and understood that a completely new approach was needed if it was to stand the chance of lasting. The period was favourable to the union, particularly if we take into account the Emperor Manuel who was more open than his predecessors to various propositions. Moreover, the request for the seat of Hiera-

³⁵ *Glxadrut‘iwnk‘ hořomoc‘* (cit. n. 20), title 9, p. 265.

³⁶ Regarding the reestablishment see B. Hamilton, *The Latin Church in the Crusader States*, VR, London, 1980, p. 177.

polis for Kostandin was also a way of beginning to work towards this, with a Prelate close to the Catholicos on an important seat in the Greek ecclesiastical hierarchy. We get the impression from reading the Armenian sources and, in particular, from reading Nersēs Lambronac‘i’s opusculum, that a lasting solution that pleased all parties could have been found. The Armenian Prelate’s tone is conciliatory yet firm. He wishes to discuss matters and is willing to concede on some points but would like the discussions to take place on an equal footing and for both parties to make concessions in order to reach an agreement. A few years later, when he visited Constantinople following the death of Manuel Comnenus, the situation was entirely different.

To bring this short study to a close, we must address the last documentary record preserved in Armenian relating to these discussions, whilst being sure to reiterate that, for this phase of discussions, the Armenian sources are the only ones to take the dialogue into account as there is no mention in any of the Greek sources. The report is made up of manuscript colophons³⁷ and, most importantly, a narrative text recounting Nersēs Lambronac‘i’s visit to Constantinople in 1197³⁸.

³⁷ A. Mat‘evosyan, *Hayeren jeragreri hišatakaranner (e-žb darer)*, Erevan, 1988, N°292 and N°293 p. 292. The first colophon that Nersēs wrote in the monastery of Skewra, following his return, is accompanied by his *Commentary of the Proverbs* in which he explains how, during his time spent in Constantinople in 646 [1197], he had asked the Greeks to provide the Proverb commentaries existing in their language. As a result, he was able to ascertain that his own commentary was somewhat lacking. The second colophon, the content of which will be addressed further on, is more directly related to the visit as the Armenian Prelate outlines his impressions.

³⁸ These various documents have been identified and, in some cases, reproduced, in N. Akinian’s work, *Nersēs Lambronac‘i. Keank‘ə ew Grakan Vastaknerə [Nersēs Lambronac‘i, his life and literary works]*, Vienna, 1956. For the narrative text, we have used the edition published in Istanbul in 1861, *Xosak‘ut‘iwnk‘ Surb Nersēsi Lambronac‘woy and patriark‘in yunac‘ [The dialogue of Saint Nerses with the Greek patriarch]*. We have checked this edition’s conformity with four of the oldest manuscripts (Matenadaran N°732 (1322), N°581 (1371), N°228 (1457) and N°583 (15th century)). There is a summary of this text in the *Life of Nersēs Lambronac‘i*, written by Grigor of Skewra in 1204: Grigori Skewrac‘woc‘, *Nerbolean i surbn Nersēs*

Nersēs Lambronac‘i goes to the Byzantine capital at the request of the Armenian king Levon and, according to Smbat the Constable, was accompanied by two people: Halkam, the king's maternal uncle and someone named Połos³⁹; one of them may well have been author of the anonymous text on the discussions as the tone used by the latter aims to persuade the reader of his presence during proceedings. In order to do so, he provides specific details, outlines interventions from the various protagonists, either by referring to their name or function, and brings a 'living' aspect to the account. The historian's analysis comments on the rather unusual nature of the occasion as, although visits from high-ranking Armenian prelates may have taken place in the past, religious leaders had for some time avoided travelling in the Byzantine capital for fear of facing pressure to adhere to the Chalcedonian faith. Despite the conciliatory nature of discussions that took place from 1165-1178, Nersēs Šnorhali had therefore always refrained from travelling to Constantinople even though the Emperor had invited him several times in his correspondence. He had always found pretexts to justify his reasons for preferring to receive the Emperor's emissaries at Hřomkla⁴⁰. Despite his reservations, Nersēs

Lambronac‘i [Grigor Skewřac‘i, *Panegyric of saint Nersēs Lambronac‘i*], (Sop‘erk‘ Haykakank‘ ŹE [Écrits arméniens XV]), Venice, 1854, p. 53-55.

³⁹ See G. Dédéyan (intro., trans. and notes), *La chronique attribuée au connétable Smbat*, (Documents relatifs à l'histoire des croisades XIII), Paris, 1980, p. 72-73. The translated version by Gérard Dédéyan, which is based on the edition published in Venice in 1956, makes no reference to this Baron Połos, although he appears in the manuscript of Ējmiacin and therefore in the translated version in *Documents Arméniens in Recueil de Historiens des Croisades*, t. I, p. 633.

⁴⁰ At the beginning of the discussions, in 1165, Manuel Comnenus requested that Grigor III send his brother, Nersēs Šnorhali, who still only held the position of his Coadjutor, in order to discuss matters of faith. When the imperial letter arrived at its destination, the situation had changed due to the death of Grigor III and the rise of Nersēs to the position of Catholicos. In his reply to the Emperor, the newly-instated Catholicos cited his considerable responsibilities as the reason for refusing this invitation, not wanting to offend the Basileus. In his entirely rhetorical protest, he stresses that he would have derived great pleasure from such a visit: *Āndhanrakan t‘ult‘k* (cit. n. 9), p. 110-111. See French translation in I. Augé, *Églises en dialogue* (cité n. 9), p. 117-118.

Lambronac'i went to Constantinople in 1197, the date of which is given in a manuscript colophon. The discussions had certainly been prepared and one of the embassy's objectives was to raise the issue of religious concerns. An emissary visiting for an entirely different reason may often have been approached to discuss religious matters and the fact that Nersēs Lambronac'i was carrying a letter from the Catholicos demonstrates his willingness if this were to happen. The narration includes a short prologue documenting the arrival of the Armenian emissaries before the Emperor and the Patriarch, the presentation of the letters from the king Levon and the Catholicos as well as customary courtesies⁴¹. The proceedings, which took place in the church of Saint-Sophia, then began and the account becomes a form of interrogation with the Patriarch asking the Armenian Prelate to shed light on a number of conventional issues in the Armenian-Greek dispute, ranging from the crucial question of the nature of Christ to disagreements regarding customary rituals which have already been discussed in the documents analysed above⁴². There is no need discuss the content of the talks at any greater length since the issues raised are quite standard and unoriginal, as are the responses given by the Archbishop of Tarse. It is of greater interest to try and reconstruct the way in which proceedings unfolded and the atmosphere in which they took place, according to the anonymous account.

⁴¹ *Xosak 'ut 'iwnk' Surb Nersēsi* (cit. n. 38), p. 3: "When the holy Nersēs went to the king of the Greeks (Alexis III Ange – 1195-1203) and greeted him, they (Nersēs and the members of the delegation) gave him the instructions and letters from the Lord Grigoris, catholicos of the Armenians (Grigor VI – 1194-1203) and the king of the Armenians, Levon. And he (the Emperor) welcomed the holy Nersēs with great enthusiasm and showed reverence".

⁴² As was always the case, the Patriarch's first question was on the subject of the incarnation and the natures of Christ. The question was resolved quickly with Nersēs insisting that an agreement had been reached. Important liturgical issues were dealt with next, including the celebration of the Eucharist. Regarding the Armenians' use of unleavened bread, Nersēs Lambronac'i hid behind existing Roman authority, although he was later obliged to clarify his thoughts and set them in Scripture. Next were the conventional issues regarding the *Trisagion* and the confection of the holy Chrism. When the logothete attempted to question the Armenian Prelate on the blessing of the crosses, he refused to answer, undoubtedly finding the question too trivial.

Some evidence suggests that the dialogue took place in a positive environment that allowed each person to express their thoughts and present documents supporting their line of argument. In his manuscript colophon, Nersēs Lambronac‘i even explains that he had brought with him a number of texts relating to the Armenian-Greek controversy, the most important of which were the letters of Photius and the Patriarch Germanus of Constantinople. The protagonists used the texts where they felt it to be necessary, in particular while dealing with the question of the use of pure wine by the Armenians for the celebration of the Eucharist. We are, however, through a careful analysis of the text, able to detect a certain amount of tension and it is likely that the tone was actually far from friendly. The Armenian authors agree to commend Nersēs Lambronac‘i who apparently had no difficulty in standing his ground amongst the mass of Greek theologians. Grigor of Skewra, for example, stated that “assembled by the grace of the Spirit, he answered with as much amiability and intelligence as was possible, especially considering that he was foreign of language and origin and amongst so many intellects”⁴³. The end of the anonymous text is equally as eloquent when the author depicts a monk and Greek princes who go together to congratulate the Armenian Prelate and confirm his victory. The documents served the purpose of displaying the outstanding personality of Nersēs Lambronac‘i and his easy victory faced with the mass of Greek theologians. Furthermore, and above and beyond these rhetorical elements, an attentive reader can already detect the hostile nature of the discussions that took place and the difficult position of the Armenian Prelate. The signed colophon by the Archbishop of Tarse, written in Constantinople before his departure, confirms this impression. The tone is disenchanted and the disappointment clearly visible⁴⁴. Although Ner-

⁴³ *Nerbolean i surbn Nersēs* (cit. n. 38), p. 54.

⁴⁴ A. Mat‘evosyan, *Hayeren jeḡagreri hišatakaranner* (cit. n. 37), N°293, p. 292: “I, Nersēs, humble owner of this book, copied by my son Grigoris, I have brought the holy letters with me to Constantinople, in the year 646 (1197) of the Armenians. And with these letters, we have had a discussion [with them]; we have found them ignorant, reluctant and devoted to the ways of the Hebrews who do not wish to serve God in the newness of the spirit, but rather in the oldness of the letter. We are disappointed in our spiritual words and return full of shame for the hope that we had in their wisdom”.

sēs, when writing his *Chapters* some years earlier, still held some hope for the union, based on the principles of equality, he had now accepted the practical impossibility of its realisation.

The second half of the 12th century was a period rife with discussions between the Armenians and the Greeks, discussions of which there are numerous traces in the Armenian sources. Their depth is even more apparent in view of the preserved Greek sources which are much less complete. The discussions that took place between 1165-1178 are only partially included in Theorianos' account whilst Nersēs Lambronac'i's visit to Constantinople was ignored entirely.

This debate, dated in 1197, constitutes one of the last attempts to negotiate as the Armenians had by now turned their attention more to the Latins. The opening period, represented by the reign of Manuel Comnenus and the original propositions from Nersēs Lambronac'i on the subject of ecclesiology, was now over. It is important to note, however, the following peace talks with religious authorities of the Nicea Empire in the following century: there are records of exchanges between the Patriarchs of Constantinople Germain II (1222-1240) and Manuel II (1244-1254) on the one hand and the king Het'um I (1226-1270) and the Catholicos Kostandin I (1221-1267) on the other hand.

**ՆԱՄԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄՆԵՐ,
ՀԱԿԱՃԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԱՆՐ ԵՐԿԵՐ. ՀԱՅԿԱԿԱԿԱՆ
ՍԿՉԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ և ՀՈՒՅՆԵՐԻ ՄԻՋև
ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱԿԱՆ ՎԵՃԻ ՄԱՍԻՆ**

Իգաբեկ Օժե

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայերի և հույների միջև, հատկապես ԺԲ դարում ծավալված եկեղեցական փոխհարաբերությունների ընթացքում, ստեղծվել են բազմաթիվ բնագրեր հայերեն կամ հունարեն լեզուներով: Հռոկվածում քննարկել ենք մի քանի հայկական սկզբնաղբյուրներ: Դրանցից ամենակարևորը 1165-1178 թթ. կողմերի միջև փոխանակված նամակների ժողովածուն է, որը կազմել է Ներսէս Լամբրոնացին: Բացի այդ, պատասխանով հանդերձ պահպանվել է «Գլխադրութիւնք հոռոմոց, գորս պահանջեն առ ի մենջ ի պետս խաղաղութեան» երկը: Վերջապես, հասել է թղթերի ժողովածուն (ՊԻՄ), ուր մի շարք թղթեր ունեն պատմական բացատրու-

թյուններ, և 1197 թ. Կ. Պոլիս ուղարկված Ներսես Լամբրոնացու դեսպանագնացության նկարագրությունը:

BIBLIOGRAPHY

- Akinian 1956** – Կ.Ն.Վ. Ակինեան, Ներսես Լամբրոնացի, արքեպիսկոպոս Տարսոնի. Կեանքն եւ գրական վաստակները հանդերձ ազգաբանութեամբ Պահլաւունեաց եւ Լամբրոնի չեթմեանց, Վիեննա 1956 (Ազգային մատենադարան. ՃՀԹ) = N. Akinian, *Nersēs Lambronac‘i. Keank‘ə ew Grakan Vastaknerə... [Nersēs Lambronac‘i. archbishop of Tarsus, his life and literary works...]*, Vienna, 1956;
- Augé 2011** - I. Augé, *Églises en dialogue: Arméniens et Byzantins dans la seconde moitié du XII^e siècle* (CSCO vol. 633, subsidia t. 124), Louvain 2011;
- Augé 2008** - I. Augé, « Hovhannês de Draskhanakert (899-929) en dialogue avec Constantinople », *Bazmavep* CLXVI, 2008, p. 407-424;
- Augé 2008a** - I. Augé, « Les relations arméno-grecques dans la seconde moitié du XII^e siècle : aspects diplomatiques », *Byzantinistica* X, 2008, p. 139-155;
- Bozoyan 1995** – Ա.Ա.Բոզոյան, Հայ-բյուզանդական եկեղեցական քանակցությունների վավերագրերը (1165-1178 թթ.), Երևան, «Գիտություն» հրատարակչություն, 1995 = A. Bozoyan, *Haybyzandakan ekelec‘akan banakc‘ut‘yunneri vaveragerə (1165-1178 t‘t‘.) [Documents on the Armenian-Byzantine ecclesiastical negotiations (1165-1178)]*, Erevan 1995;
- Cappelletti 1833** - J. Cappelletti, *Sancti Nersētis Clajensis Armeniorum catholici opera*, t. I, Venice;
- Colophons 1951** - Յովսէփեան Գարեգին Ա կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց. Ե դարից մինչև 1250 թ., Ա հատոր, Անթիլիաս 1951 = Garegin I Kat‘oփikos, *Yišatakarank‘ jera-grac‘ [Colophons of manuscripts]*, vol. 1, Antelias 1951;
- Colophon 1988** - Հայերեն ձեռագրերի Հիշատակարաններ. ԺԳ դար / կազմեց Ա.Ա. Մաթևոսյան, Երևան, ՀՄՍՀ ԳԱ հրատարակչություն, 1984 =, *Hayeren jeragereri hišatakaranner: e-žb darer) / kazmec‘* A. Mat‘evosyan [Colophons of the Armenian Manuscripts: XIII century], Erevan, 1988;
- CSCO** – Corpus scriptorium christianorum orientalium;

- Dagron 2012** - G. Dagron, *Idées byzantines, t. I-II* (Bilans de recherche 8/I-II), Paris 2012;
- Dagron 1976** - G. Dagron, *Minorités ethniques et religieuses dans l'Orient byzantin à la fin du X^e et au XI^e siècle: l'immigration syrienne*, TM 6, 1976, p. 177-216;
- Darrouzès 1990** - J. Darrouzès, *Trois documents de la controverse gréco-arménienne*, REB 48, 1990, p. 89-153;
- Dorfmann-Lazarev 2004** - I. Dorfmann-Lazarev, *Deux débats théologiques arméno-byzantins après le triomphe de l'orthodoxie. Le concile de Širakawan (862) et la correspondance entre Photius et Sahak Mṛut (882)*, (CSCO 609, Subsidia 117), Louvain 2004;
- Garsoyan 1999** - N. G. Garsoïan, *L'Église arménienne et le grand schisme d'Orient* (CSCO 574, Subsidia 100), Louvain 1999;
- Grigor Skewratsi 1854** - Գրիգորի Սկեւռացոյ Ներբողեան ի Սուրբն Ներսէս Լամբրոնացի, Վենետիկ 1854 (Սոփերք հայկականը, ԺԵ) = Grigori Skewrac'woc', *Nerbolean i surbn Nersēs Lambronac'i* [Grigori Skewrac'i, *Panegyric of saint Nersēs Lambronac'i*], (Sop'erk' Haykakank' ŽE [Écrits arméniens XV]), Venice, 1854;
- Hamilton 1980** - B. Hamilton, *The Latin Church in the Crusader States*, London, Variorum Publications, 1980;
- Kirmizi 2002** - C. Kirmizi, *Theorianos embassy to the Armenians: an attempt at reunion of the churches*, Birmingham M. Phil. 2002 (R. J. Macrides);
- Mahé 1993** - J.-P. Mahé, « L'Église arménienne de 611 à 1066 », in *Histoire du christianisme 4, Évêques, moines et empereurs (610-1054)*, J.-M. Mayeur, Ch. and L. Pietri, A. Vauchez, M. Venard, Paris 1993, p. 457 – 547;
- Mutafian 2012** - C. Mutafian, *L'Arménie du Levant (XI^e-XIV^e siècle)*, 2 volumes, Paris 2012;
- PG** – Patrologia Graeca;
- REB** – Revue des études Byzantin;
- RHC, d.a.** - *Recueil de Historiens des Croisades. Documents Arméniens*, t. I – II;
- Smbat 1980** - G. Dédéyan (intro., trans. and notes), *La chronique attribuée au connétable Smbat*, (Documents relatifs à l'histoire des croisades XIII), Paris, 1980;
- Theorianos** - *Θεωριανού ὀρθοδόξου διάλεξις πρὸς τὸν Καθολικὸν τῶν Ἀρμενίων*, PG t. 133;

- TM** – Travaux et Mémoires (Centre de Recherche d’Histoire et Civilisation byzantines);
- Vanérian 2007** - M. Vanérian, *La correspondance de saint Nersēs Chenorhali avec les Arméniens*, Thèse dactylographiée, Montpellier, June 2007;
- Zekiyān 1982** - B. L. Zekiyān, « Les relations arméno-byzantines après la mort de saint Nersēs Chnorhali », *XVI^e congrès international des études byzantines*, Vienna 1981, *Actes II/4, Jahrbuch der Österreichischen Byzantinistik* 32/4, 1982, p. 331-337;
- Zekiyān 1986** - B. L. Zekiyān, « Saint Nersēs Chnorhali en dialogue avec les Grecs », in *In memoriam Haig Berberian*, Lisbon 1986, p. 861-883;
- Palčean 1878** – Գլխադրութիւնք հռոմոնց, զորս պահանջեն առ ի մէնջ ի պէտս իսադադութեան, ընդ որս եւ լուծմունք առընթեր եղեալ, in Ա. Պալճեան, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս եւ միութեան նոցա ընդ հռոմէական եկեղեցւոյ ի Փորենտեան սինհոդոսի, Վիեննա, ի Մխիթարան տպարանի 1878, էջ 260-266 (A. Palčean, *Glxadrut‘iwnk‘ horomoc‘ zors pajajen ar i mēnj i pets xatalut‘ean ənd ors ew lucmunk‘ arənt‘er edeal in Histoire de la doctrine catholique chez les Arméniens et de leur union avec l’Église latine au concile de Florence [Patmut‘iwn kat‘olikē vardapetut‘ean i Hays ew miut‘ean noc‘a ənd hromēakan ekelec‘way i P‘lorentean siwnhodosi]*, Vienna 1878);
- Lettres 1871** - Ընդհանրական թուղթք սրբոյն Ներսիսի Շնորհաւույ, Երուսաղէմ 1871 (*Əndhanrakan t‘ult‘k srboyn Nersēs Šnorhalwoy*, Jerusalem, 1871) = Les lettres universels de Nersē Chnorhali, Jérusalem 1871;

Author	Recipient	Armenian version ³¹	Greek version ³²
Nersēs Šnorhali	Alexis Axouch, Byzantine Duke of Cilicia and, through him, the Emperor Manuel Comnenus	p. 87-107	
Manuel Comnenus	The Catholicos Grigor III. When the letter reached its destination, his brother, Nersēs Šnorhali, had succeeded him	p. 107-109	
Nersēs Šnorhali	Manuel Comnenus	p. 109-120	
Nersēs Šnorhali who paired his previous letter with a profession of faith	Manuel Comnenus	p. 120-143	
Manuel Comnenus	Nersēs Šnorhali	p. 144-145	Col. 120a-121a
Nersēs Šnorhali	Manuel Comnenus	p. 145-153	Col. 212d-224c
Manuel Comnenus. This letter was accompanied by a list of	Nersēs Šnorhali	p. 154-157	The letter is found in col. 236B The chapters asked for by the

³¹ The references are to the edition specified *supra* note 9: *Ēndhanrakan t'ut'k srboyn Nersēs Šnorhalwoy*, Jerusalem, 1871.

³² The references are to the edition quoted note 11: *Patrologia Graeca* 133, col. 119-298.

nine points on which the Greeks ask the Armenians to reconsider			Greeks are documented in the dialogue by Theorianus col. 270a-c
Manuel Comnenus. The “secret” letter, transmitted only by Theorianus in the Greek version	Nersēs Šnorhali		Col. 233b-235a
The Patriarch of Constantinople Michael of Anchialos	Nersēs Šnorhali	p. 157-159	Col. 236d-240a
The Patriarch of Constantinople Michael of Anchialos. Transmitted only by Theorianus	Nersēs Šnorhali		Col. 224c-232c
Nersēs Šnorhali	Manuel Comnenus	p. 160-161	Very brief summary given in col. 276c-d
Nersēs Šnorhali	The Patriarch of Constantinople Michael of Anchialos	p. 161-165	
Grigor Tłay	Manuel Comnenus	p. 166-168	
Manuel Comnenus	Grigor Tłā	p. 169-175	

The Patriarch of Constantinople Michael of Anchialos	Grigor Tła	p. 175-180	
Grigor Tłay	Manuel Comnenus	p. 181-192	
Grigor Tłay	The Patriarch of Constantinople, successor to Michael of Anchialos and his Synod	p. 192-199	

**ՀԱՅ ՏՈՀՄԱԾԻՆ ՏԻԿՆԱՆՑ ԻԾԽԱՆԱԿԱՆ ԳԻՐՔԸ ԵՒ
ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ
ՀԻՇԱՏԱԿԳՐԵՐԻ**

Նագենի Ղարիբյան

Մաշտոցի անվ. Մատենադարան

Քանալի բառեր. *հիշատակարան, արձանագրություն, վիմագրություն, միջնադարյան հասարակություն, հայ իշխանուհիներ, նախարարական կարգ, կանայք միջնադարում*

Տարիներ առաջ հրատարակած մի յուրօրինակ հոդվածում Կլոդ Արմեն Մուրաֆյանը, պատմելով Կիլիկիո հայոց վերջին թագավորների սեռական կյանքի մասին, հետաքրքրագույն տեղեկություններ է հաղորդում նաև որոշ թագավորազուն կանանց վերաբերյալ, որոնք լույս են սփռում նրանց դիրքի, ուժեղ անհատականության, հասարակական կարգավիճակի եւ հատկապես իշխանական իրավունքների հետ կապված խնդիրների վրա¹:

Ցանկանալով մասնակից դառնալ մեր սիրելի կոլեգային, բարեկամին ու մեծ ընկերոջը մատուցվող երախտիքի հոբելյանական այս նախաձեռնությանը, եւ այս օրերին իսկ առիթ ունենալով պարապել նրա փարիզյան աշխատանոցում² կվորձեմ ի պատիվ իրեն արձագանքել հայ կանանց թեմային՝ նրանց տոհմական ծագմամբ պայմանավորված մի երեւոյթի շուրջ նախնական դիտարկումներով, որն առավելագույն դրսեւորումն է ստանում նույն՝ Կիլիկյան թագավորության դարաշրջանում, սակայն հայկական աշխարհի հակառակ, հյուսիս-արեւելյան տարածքներում:

Այսպես, միջնադարյան ձեռագիր հիշատակարաններում եւ հատկապես վիմագրություններում տեղ գտած բազմաբնույթ ձեւակերպումները եւ անվանական տեղեկությունները թույլ են տալիս վերանայել սովորութային իրավունքի եւ կանոնական կարգադրությունների շրջանակներում արձանագրված՝ կին-տղամարդ հարաբերությունների եւ կանանց կարգավիճակի մասին մեր պատկերացումները, առնվազն՝ եկեղեցական պատվերների, նվիրատվությունների եւ թողնվող հիշատակների համատեքստում²:

¹ **Mutafian 2009:**

² Պատվիրատու կանանց մասին տե՛ս **Rapti 2014** հոդվածը:

Հետաքրքիր է նշել անմիջապես աչքի զարնող այն հանգամանքը, որ առնվազն մինչև ԺԴ դարը պահպանված փաստա-նյութերում կանանց անունները բավական հաճախակի են հանդիպում լինի կողակցի, այրու, մոր, քրոջ, թե դստեր դերում: Ընդամին, որքան հնարավոր եղավ մինչև այժմ պարզել ուսումնասիրվող տեքստերի հաղորդած տեղեկություններից, այս իրողությունը կախված չէ հասարակական դիրքից եւ սոցիալական ծագումից: Կան հիշատակագրեր, որտեղ անվանապես նշվում են միայն ընտանիքի տղամարդիկ, իսկ կանայք՝ ընդհանրական գոյականով, ինչպես, օրինակ, 1154 թ. մի հիշատակարանում գրիչն ընթերցողներին խնդրում է աղոթքներում հիշել «...զՄտեփաննոս քահանայ, եւ զեղբայր իւր զԱնտրեսս ք[ահա]նայ, զՎարդն եւ զամուսին [իւր] ... »³: Նույնկերպ, ըստ Վեհափառի Ավետարանում պահպանված տեղեկության՝ Մարգիս քահանան նորոգել է ձեռագիրը «ի բարեխաւսութիւն ինձ եւ որդւոյ իմոյ Վարդա եւ մաւր նորին:»⁴

Սակայն, կան այնպիսի հիշատակագրեր, որտեղ բոլորն են նշվում անվանապես կամ նշվում են ոմանք՝ առանց սեռի տարբերակման: Այսպես, ԺԲ դարի հիշատակարաններից մեկում Յովանէս անունով մի կուսակրոն քահանա առանձին-առանձին նշում է իր ընտանիքի բոլոր անդամներին.

«...եւ գրել զսա յիշատակ իւրն եւ ծնողաց իւրոց Պատրկին եւ Հերիքայի, եւ եղբարցն Լիւանոսի եւ Մխիթարա ... եւ քերցն իւրոց Չուհային եւ Լիբանանու, եւ զաւակաց իւրեանց Մարգսի, Մխիթարա, Խարիֆշահին եւ Կարապետին, քեռոյն իւրո Մարեմտրո.....»⁵:

Նույն պատկերն է աշխարհիկ քահանաների դեպքում, որոնցից շատերը չեն մոռանում արձանագրել հատկապես իրենց կանանց անունները. «...յիշեցէք ... զՅովհաննէս եւ զԳրիգոր ընդ նոսին եւ զՏիարծէք քահանա եւ զամուսին իւր զՏիկին: Ընդ նոսին եւ զզերառաջնորդս մեր զհոգետէր Աւետիք եւ զամուսինս զԱշախ... եւ զհոգետոր հայր մեր զՅակոբ եւ զամուսին իւր զԳոհար...»⁶:

³ ՄՄ 832, **Մարթեւոսյան 1988**, էջ 168:

⁴ ՄՄ 10780, **Անդ**, էջ 115:

⁵ ՄՄ 1007, **Անդ**, էջ 312:

⁶ ՄՄ 6332 (1095թ.), **Անդ**, էջ 117:

Իշխանական տների անդամների թողած հիշատակագրերը եւս նույն խճանկարն են արտացոլում: Հայտնի «Լազարեան Աւետարանում», օրինակ, Վանանդի իշխանը չի նշում իր կնոջ անունը. «Ես Սահակ Վանանդացի որդի Վարդա Վանանդացույ որում կրկին Մլեհ կոչեին (...) ի մաքրութիւն հոգույ իմոյ եւ կողակցի իմոյ գտանել ողորմութիւն յաւուրն այցելութեան»⁷: Սակայն Ադամանի եկեղեցու՝ այժմ ավերված արձանագրության մեջ Գրիգոր իշխանը հիշատակում է իր կին Մարիամին, որի հետ միասին են պատվիրել եկեղեցու շինարարությունը.

«Զսան եւ եւթն հմւոյ Հերակղի բարեպաշտ թագաւորի ... եւ, Գրիգոր եղուստր եւ Մարիամ իմ կին շինեցաք զուրբ եկեղեցիս վասն մեր հոգւոց»⁸: Միասնական նախաձեռնության մասին է վկայում նաեւ Գրիգոր Մամիկոնյանի եւ իր կին Հեղինէի թողած հիշատակագիրը.

«...հիմնարկեցաւ սուրբ Կաթողիկէս ի ձեռն Գրիգորի Մամիկոնենի Հայոց իշխանի եւ Հեղինէի նորին զուգակցի ի բարեխաւութիւն շինողաց զսա...»⁹: Իսկ Գագիկ թագավորի Ավետարանում հավասարապէս հիշատակված են արքայական ընտանիքի երեք անդամները.

«Չստացող սրբոյ Աւետարանիս զԳագիկ Շահան...շահ՝ որդի Աբասայ, զԳորանդուխտ թագո[ւ]հի եւ զՄարեմ յիշես[ցեք]:»¹⁰

Որոշ հիշատակարաններ հաղորդում են կանանց անունները նշելու կոնկրետ դրոշապատճառներ, որոնք բացի նյութական ու ֆինանսական օգնությունից կարող են լինել տվյալ ձեռնարկին այլ տիպի մասնակցության ձեւով.

«... զԳրիգոր, զՄայթոս, զՊետրոս, եւ զկին ոմն բարեպաշտ, որ եղեւ առաջարկութեան գրոցս անուն նորին Հռիփսիմ՝ յիշեսցիք ի Զրիստոս»¹¹,

«Դարձեալ աղաչեմ յիշել զԽաչաւուրն եւ սիրելի հարազատսն իւր, զՎարդագէլն եւ զկենակից նորին զԽաթունիկն, որ բազում գթով եւ խնամոտ սիրով սպասաւորեաց մերում նուաստութեանս»¹²

⁷ ՄՄ 6200, (887թ), Անդ, էջ 40:

⁸ Կոստանեանց 1913, էջ 1:

⁹ Անդ:

¹⁰ Երուս. n° 2556 (1064թ.), Մաթեոսյան 1988, էջ 102:

¹¹ Փարիզ 110 (ԺԲ դ.), Անդ, էջ 278:

¹² ՄՄ 4509 (1217թ), Մաթեոսյան 1984, էջ 106:

«Չկին ոմն տառապեալ մեղաւք, որոյ անուն Թագուհի, յիշես- ջիք ի Քրիստոս, եւ Աստուած ձեզ ողորմեսցի, ամէն»:¹³

Հետաքրքրական է, որ երկու բարեպաշտ կանանց նվիրված հետեւյալ ջերմ ու երախտագիտական պատմության մեջ նրանց ծնողների եւ ազգականների անունները չեն հիշատակվում, իսկ Գոհարի ամուսին Գրիգորը տեղ է գտել կնոջից հետո:

«Արդ կանայք երկուք բարեպաշտք եւ սրբասնեայք, որոց անուանք նոցա կոչին Գոհարս եւ Խոսրովիդուխդ, ... վասն յիշատակի իւրեանց եւ ծնողաց իւրեանց եւ ազգականաց իւրեանց, գնեցին զԱւետարանս զայս Գոհարս եւ Խոսրովիդուխտն՝ տուեալ զբազումս զգինս կայանքս այս, եւ զսակաւքն Մարգարէն եւ Սուքիասն, եւ ետուն յանուն Աստուածածնին առաջի բազում վկայից: ... Տէր Յիսուս Քրիստոս, ի քո յահաւոր զալստեանդ ողորմեա Գոհարին եւ Գրիգորի՝ առն իւրում, եւ Խոսրովիդուխտոյ, եւ իւրոցն ամենայնի...»¹⁴:

Բազմաթիվ են այն հիշատակագրերը, որոնցում առաջին դեմքով կանայք են հանդես գալիս՝ որպէս պատվիրատուներ, ստացողներ, նվիրատուներ կամ իրենց ամուսնու գործի շարունակողներ, եւ դարձյալ, ազնվական ծագումն ախտորոշիչ չի թվում: Այսպէս, Աննա Առուեղեանի՝ Բազարանի եկեղեցու շինարարական արձանագրության («...յետ երից ամաց մահուան Բոին կատարեաց սուրբ եկեղեցիս Աննայ Բոին ամուսին...»¹⁵) կամ Սլքէ թագուհու թողած նվիրատվական գրության («Ես՝ Սլքէ աղախին Քրիստոսի եւ Հայոց թագո[ւ]հի (...) ետու զԱւետարանս ի Վարագ, ի Սուրբ Աստուածածնիս, գոր իմ ձեռամբս եւ ծառայք եմ շինեալ, յաւզնականութիւն ինձ եւ արքային իմոյ Գագկայ, եւ զաւակաց իւրոց ...»¹⁶) կողքին գտնում ենք ոմն Վրաց տիկին Մելտեի կամ Տիկնացի վկայությունները.

¹³ Վենետիկ, 88 (1205), **Անդ**, էջ 54: Այս կնոջը ձեռագրի գրիչ Կոզման տասնչորս տարի հետո կրկին հիշատակում է մեկ այլ Ավետարանում (ՄՄ 7734, 1219թ), բոլորից առանձին՝ «գտառապեալն կին ոմն Թագուհի»: Հետաքրքիր կլիներ բացահայտել Թագուհու տառապանքի աղբյուրը եւ նրանց միջեւ եղած կապը:

¹⁴ ՄՄ 2877 (1183), **Մաթեոսյան 1988**, էջ 240:

¹⁵ Արձանագրության վերլուծությունը տես **Greenwood 2004**:

¹⁶ Վենետիկ 1 (862թ), **Մաթեոսյան 1988**, էջ 49:

«Քրիստոս Աստուած ողորմի Վրացտիկնի Մելտե, որ եղև միաբան Սուրբ Աստուածածնի եւ իւր սպասաւորացն...»¹⁷:

«Այլ զի եւ ես, Տիկնաց, աղախին Քրիստոսի, միաբանեցայ Նախավկայիս: Յայսմ արբէ ի հետ զինչ մեր կարողութիւն լինի, ծառայութիւն առնենք սրբոյս»¹⁸:

Հանդիպում են նաեւ այնպիսի հիշատակագրեր, որտեղ ընդամենը մեկ հոգի է անվանապես նշված՝ գրության «գլխավոր դերակատարը», լինի մեծ իշխան, քաղքենի, թե վանական: Այդպիսին է հինգերորդ դարավերջով թվագրվող Տեկորի մայր եկեղեցու նվիրատվական արձանագրությունը՝ «Սահակ Կամսարական շինեաց զայս վկայարան սրբոյ Սարգսի եւ (...) յիւր բարեխաւսութիւն եւ բոլոր ազգիս եւ ամուսնի եւ որդեկաց եւ սիրելեաց»¹⁹, եւ 1121թ. հիշատակարանը՝ «Ի խնդրո սրբասէր եւ ընտրեալ եղբայր մերոյ Յոհաննիսի պատուական ծերունոյ, ի յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց եւ եղբարց եւ ամենայն ազգատոհմի, ի յարդար արդեանց իւրոց, ի վայելումն անձին իւրոյ յաստիս եւ ի հանդերձելումն...»²⁰:

Այսպիսի դեպքերում վկայությունների գերակշռող մեծամասնությունն արական անուններով է, սակայն պահպանված են նաեւ կանանց հեղինակային գրություններ, ինչպես, օրինակ, 988թ. Աննաւան (Տրտիաւեր) գյուղաքաղաքում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում.

«Հռոփսիմէի եւ որդեկաց նորա աղալթս արարէք: ... ՉՄարթա աղախին Տեառն մի անտէս առնէք...»²¹:

Հոդվածն ավելորդ չձանրաբեռնելու համար սահմանափակվելով դիպվածաբար ընտրված վերոբերյալ մեջբերումներով՝ արձանագրենք, որ ըստ ուսումնասիրված նյութի՝ հիշատակագրություններում անվանապես նշվելու առումով հայ միջնադարյան հասարակությունում, թվում է, չկար գենդերային խտրականություն: Կարելի է ենթադրել, որ տղամարդկանց անունների թվային գերակշռությունն առաջին հերթին կապված է նրանց՝

¹⁷ ՄՄ 2877 (ձեռագիրը Ժ դարի է, սակայն այս հիշատակարանը թվագրվում է ԺԳ-ի սկզբով), **Մաթեոսյան 1984**, էջ 108 եւ ծնթ.:

¹⁸ ՄՄ 2374 (1173թ.), **Անդ**, էջ 214:

¹⁹ Արձանագրության վերլուծությունները տես **Թորամանյան 1942**, էջ 218-220 եւ **Greenwood 2004**:

²⁰ ՄՄ 285, **Մաթեոսյան 1984**, էջ 127:

²¹ ՄՄ 8906 (988թ), **Մաթեոսյան 1988**, էջ 69:

Ֆինանսական միջոցների տնօրինման, հասարակական կյանքում ավելի ակտիվ դերի, ինչպես նաև եկեղեցական գործունեության շրջանակներում, մասնավորապես՝ շինարարական եւ ձեռագրական արվեստների բնագավառում բացառապես արական ներկայության հետ: Կանայք, որքանով իրավունք ունեին իրենց սեփական միջոցների, օժիտի կամ ժառանգության նկատմամբ, եւ կամ իրավասու էին ստանձնել մահացած ամուսնու ունեցվածքի կառավարումը, կարող էին հանդես գալ եւ ընտանիքի արական ներկայացուցիչների կողքին, եւ առանձին²²:

Հայտնի է, որ հիշատակագրությունները թողնվում էին՝ կատարած աստվածահաճո աշխատանքով, բարեգործությամբ կամ արված նվիրատվությամբ «ի գիրն կենդանի» արձանագրվելու, այդպիսով՝ ծիսական արարողակարգերում եւ աղոթքներում հատուկ հիշվելու ակնկալիքով, որպեսզի Քրիստոսի Երկրորդ գալստյանը կարողանան հիշվել եւ հարություն առնելով՝ արժանապես հանդերձյալ հավերժական կյանքին: Այլ խոսքով՝ երկրային կյանքի ընթացքում հարկավոր էր հնարավորության սահմաններում որեւէ «հիշատակ» թողնել, հակառակ դեպքում մահկանացուի անունը կմոռացվեր, եւ նա կգրկվեր փրկվելու հնարավորությունից: Այդ ձեռնարկի համար հատկացվող գումարը կամ ունեցվածքը կոչվում էր «հոգեբաժին» կամ «հոգու թոշակ»: Այս առումով խոսուն է Անիի արձանագրություններից մեկը, որի կին հեղինակն իր միջոցներով կառուցել է տալիս քաղաքի պարիսպների պաշտպանական աշտարակներից մեկը.

«Ես Մամխաթունս դուստր Խաչերեսին Լաւռեցո, անժամ ի Քրիստոս գնացի, յիմ հաւրն ի հալալ դրամէն որ ինձ տուեալ էր, անհիշատակ էի, շինեցի գրուրջնս յիշատակ ինձ առ Քրիստոս»: ²³

Բացի այդ, դատելով որոշ հիշատակարանների բովանդակությունից՝ բավական էր որպես հուշում «կենդանի գրքում» նշել տվյալ ընտանիքի ներկայացուցչի կամ մի քանի ներկայացուցիչների անունները (որոնք հիմնականում գլխավոր պատվիրատուներն ու նվիրատուներն էին կամ կատարողները), որպեսզի մնացյալին Աստված ճանաչէր, ինչպես կարելի է եզրակացնել, օրինակ, 1291թ հետեյալ վկայությունից.

«...որք վերժանէք, մանգունք մակաժուք (...) զտուրբ եւ զպատուական քահանա Սիեովն՝ զստացող սուրբ Աւետարանիս, իւր

²² **Rapti 2014:**

²³ *Դիվան (I)*, էջ 3:

հարազատ եղբարքն եւ պատուեալ ծնողի իւրոյ, որոյ զանունն Տէր ճանաչէ:...»²⁴:

Ահա թե ինչու կարող ենք տեսնել միայն մեկ անուն նշող գրություններ, որոնք ընդգրկում են ընտանիքի այլ անդամների, բայց նաեւ՝ առաջին դեմքով գրված հիշատակարաններ, որտեղ կանայք ներկայանում են իրենց արական հարազատի անունով.

«Ես Տանկիս դուստրս տուեալ եմ զիմ բաժին հողն ի Խաշուտն Մուրբ Յեհնա՝ իմ հոգոյս Աստուծոյ կամաւքն, որ չունի որիկ իշխանութիւն թէ Աստուած կամի ...»²⁵:

Հիշատակի գրություններում նկատվող գենդերային հավասարությունը պատահական չէ. այն արտահայտում է «Քրիստոսի մեջ» եւ հանդերձալ կյանքում բոլոր հավատացյալների հավասարության ավետարանական սկզբունքը: Այդուհանդերձ, մեզ հասած արձանագրությունների եւ հիշատակարանների մեջ բավական մեծ թիվ են կազմում այնպիսիները, որոնցում կանանց անվանական առկայությունն ավելի հավակնոտ ու տիրական երանգ է պարունակում: Նրանք, թվում է, ոչ միայն անհատապես հանդես են գալիս որպես լիարժեք պատվիրատուներ եւ նվիրատուներ՝ տղամարդ հարազատների հետ հավասար հիմունքներով, այլեւ հատուկ շեշտում են իրենց տոհմական ծագումը: Այդպիսի մի հրաշալի օրինակ է 1169 թվակիր «Մասնոյ Ավետարանը», որ ընդօրինակվել է՝ «... ի տէրութեան Սանսնոյ Վեգենայ մեծի պռոտօնուելեպիմոսի, որդւոյ Չորդուանելի թոռն Թոռնկա մեծի հզորի եւ քաջի, որ (...) հրամանաւ երանելի քրիստոսասէր թագուհոյ Մելքսեթոյ, ամուսնոյ Վեգենայ, որ է յագգէ Արծրունի եւ ի շառաւեղէն Սրբոյն Վարդանայ, դուստր մեծ իշխանին Մոկաց Հմայելի»²⁶:

Այս առումով հետաքրքրական է նաեւ Նախնավանի Նորամանուկ վայրում Արտավազդ Կամսարականի երբեմնի կանգուն դամբարանին արված արձանագրությունը (725-760 թթ միջա-

²⁴ ՄՄ 283 (1033), **Մաթեոսյան 1988**, էջ 83-84: Ծիսական այս բանաձեւը վերարտադրում է Ե-Չ դարերով թվագրվող՝ Երուսաղեմի հայտնի հայկական խճանկարի հիշատակագրությունը, որ ըստ ամենայնի նվիրված է ուխտագնացներին. «Վասն յիշատակի եւ փրկութեան ամենայն Հայոց զորոց զանուանս Տէր գիտէ»:

²⁵ Նվիրատվությունը կատարվել է Բասենի գավառում գտնվող Սբ. Յոհաննու վանքին, տե՛ս **Մաթեոսյան 1988**, էջ 130 եւ ծնթ. 2:

²⁶ Երուսաղեմ 725, **Անդ**, էջ 194:

կայք), որտեղ նա իր անհատական տիտղոսների կողքին հիշվում է նաև որպես Շուշանի ամուսին (եւ ոչ՝ հակառակը); վերջինս, սակայն, ներկայանում է իր տոհմական ծագմամբ.

«... ի սմա է հանգուցեալ ընդ հարս իմ երանելի տէր Արտաւազդ Կամսարական Ապսիիւպատ պատրիկ եւ իշխան Հայոց, որդի Հրահատայ պատրիկ Ծիրակայ եւ Արշարունեաց տեառն եւ ամուսին Շուշանայ Մամիկոնենի»²⁷:

Հաճախ կանանց անունը եւ ծագումը հանդես են գալիս անգամ ամուսնու անվանից առաջ, ինչպես վկայում է Վարազա վանքի Սբ. Սոփիա եկեղեցու այժմ անհետացած արձանագրությունը (981), որ թողել է Վասպուրականի թագուհի Խուշուշը. «... Ես Խուշուշ խաթունս դուստր Գազկայ յազգէն Բագրատունեաց, կենակից Սենեքերիմ ար[քայի] սուրբ տանարացս յիշեցէք ի մաքուր...»²⁸, կամ Տեղերի վանքի հիմնադիր եւ հովանավոր, Վաչուտյան տիկին Մամախաթունի 1232թ արձանագրությունը.

«...եւ Մամախաթուն, շինեցի զեկեղեցիքս ... յիշատակ ինձ եւ առն իմոյ Վաչէի...»²⁹:

Կան եզակի դեպքեր, երբ կնոջ ծագման մանրամասն տեղեկություններից գատ ամուսնու անունը, յինի գործող թագավոր, իշխան, թե տվյալ նահանգի տեր, չի հիշատակվում: Այդպիսին է, օրինակ, Մարմաշենի մայր եկեղեցու հարավային պատին Մարիամ դշխուհու թողած գրությունը, որ վերոնշյալ Խուշուշի դուստրն էր.

«...եւ Մարիամ Ափխազաց եւ Հայոց թագուհի, դուստր մեծին Սենիքերիմա եւ թոռն Գազ/կա Հայոց արքայի, որ ետու...»³⁰, կամ Արցախի Խադայի վանքի մատուռին Չարարյանների քույր Դովի թողած հիշատակագիրը. «...եւ, Դովս, դուստր Սարգսի,

²⁷ **Կոստանեանց 1913**, էջ 3: **Ալիշան 1881**, էջ 174: Տես նաև **Greenwood 2004**: Նշենք, որ արձանագրության տարբեր հրատարակություններում որպես ճիշտ ընթերցում է ընտրված «ընդ հարս իւր» արտահայտությունը, այնինչ Ալիշանը (Ծիրակ, էջ 174) հայտնում է, որ իր գրքում երկրորդ անգամ մեջբերված արձանագրությունը, որտեղ կա «ընդ հարս իմ» բանաձեւը, ավելի ճիշտ է: Սա ենթադրել է տալիս, որ արձանագրության հեղինակը ոչ թե Շուշանն է, այլ մեկ այլ անձ, որ հավանաբար Կամսարական տոհմից էր, բայց ոչ Արտավազդի անմիջական ընտանիքից, կամ, ավելի շուտ, դամբարանը Արտավազդի հայրերինը չէր:

²⁸ **Լալայան 1911**, էջ 66: **Ոսկեան 1940**, էջ 276:

²⁹ Արձանագրությունը եւ մեկնաբանությունը տե՛ս **Ղարիբյան 2014**:

³⁰ **Դիվան (X)**, էջ 97:

քոյր Չաքարէի եւ Իւանէի շինեցի զգաւիրս եկեղեցոյս եւ զմատուռս...»³¹: Դավիթ Անհողին թագավորի դուստր Հրանուշը, որ իրեն թագուհի է կոչում, Սանահնի Սբ Գրիգոր եկեղեցու պատին հիշատակում է միայն իր եղբայրներին, որոնք այդ ժամանակ թագավոր էին. «...եւ Հրանուշ թագուհի, դուստր Դաւթի արքայի, շինեցի զնշխարատունս եւ զեկեղեցիս ... վասն իմ մեղաց թողութեանն եւ իմ եղբարցն արեւշատութեան...»³², իսկ Վայոց ձորի Սբ Սիոն վանքի եկեղեցում Խաչենի տիրուհի Մամքանի արձանագրությունը նշում է միայն նրա որդուն. «...եւ Մամքան, դուստր Հասանայ, իմ որդի Վախթանկ, զիմ ոսկի առպնճանի գոնծէն տ/ւաք...»³³: Միայն որդիներին է նշում նաեւ Սանահնի մեծ գավթում 1240թ հիշատակագիր թողած Դուդան. «...եւ Դուդա, մայր Վարհամայ եւ Զրդին, միաքանեցայ Աստուածածինս...»³⁴:

Տպավորությունն այնպիսին է, որ այս ձեւով միտվել է արձանագրել հասարակական համակարգում նրանց հաստատութեանական (ինստիտուցիոնալ) դիրքն ու կարգավիճակը, որ կարող էր լինել հավասար ամուսնու դիրքին եւ կամ գերակա: Այլ կերպ ասած՝ նման բնույթի հիշատակագրերը մեզ թույլ են տալիս ենթադրել, որ ընտանեկան եւ հասարակական հարաբերություններում տոհմական ծագումն ավելի առաջնային էր, քան գենդերային պատկանելությունը³⁵:

Իրերի նման դրությունը թերեւս զարմանալի չէ, եթե հաշվի առնենք միջնադարյան հայ հասարակության տոհմական կամ ժառանգական-դինաստիական բնույթը, որ անհիշելի ժամանակներից սկսած ձեւավորել էր պետական-քաղաքական կառավարման կենտրոնախույզ կամ այսպես կոչված «դաշնային» կերպը, երբ յուրաքանչյուր տոհմ ի դեմս ավագ ներկայացուցչի անօտարելիորեն ինքնիշխան էր իր սեփական ժառանգական տարածքում եւ թագավորին ենթակա էր այնքանով, որքանով վերջինս

³¹ *Դիվան (V)*, էջ 127:

³² *Դիվան (IX)*, էջ 116: Արձանագրությունը մեջբերված է ըստ՝ **Ղաֆա-դարյան 1957**, էջ 187:

³³ *Դիվան (III)*, էջ 56:

³⁴ *Դիվան (IX)*, էջ 59:

³⁵ Նման եզրահանգման, սակայն ավելի շուտ դասակարգային ու վարչական ենթակայության համատեքստում, հանդիպում ենք Լեւոն Խաչիկյանի հոդվածում (**Խաչիկյան 1958**), որ զարգացնում եւ առավել երանգավորում է Չառա Պողոսյանը (**Poghosian 2019**):

տոհմապետ եւ ժառանգաբար թագավոր էր³⁶: Այս տոհմերի ավագների միջեւ էին բաժանվել նաեւ տերության ռազմաքաղաքական եւ հասարակական գործառույթները՝ նախարարությունները³⁷:

Ըստ աղբյուրներում պահպանված տեղեկությունների՝ տոհմական-նախարարական տների միջեւ հարաբերություններում գործում էր հստակ կարգավորված առաջագահությունը կամ աստիճանակարգությունը, որ դարձյալ անօտարելիորեն ժառանգական էր³⁸: Ընդամին, հասարակական այս կառուցվածքը հիմնված էր վաղնջական, ի բնե, «անստեղծ» իշխանական տների կամ «իշխանական ազգի» խավի վրա, որոնց տիտղոսն ու պատիվը կապված էին արյան ծագման հետ եւ ձեռքբերովի չէին, այլ ավելի շուտ համարվում էին Աստծո կողմից շնորհված. «...որ բնիկ յԱստուծոյ հաստատուն հիմնակառուցեալ ունի գաթոռ հայրենի տէրութեան իւրոյ», Մամիկոնյաններից սերված Թռռնիկյանների գերդաստանի մասին հայտնում է «Սասնոյ Ավետարանի» հիշատակարանը³⁹:

Ինչպես նրբորեն նկատել է Կիրիլ Թումանովը, այս իշխանական տներն արդեն իսկ «գրադեցնում էին հասարակական բուրգի գազաթը՝ նախքան ժողովրդի մնացյալ հատվածը կրթությունար ազնվական եւ ոչ ազնվական դասերի; այդպիսով նրանք տարբերվում են սովորական ազատներից եւ գերակա են ավելի ուշ շրջանում ազնվական տիտղոս ձեռք բերած եւ իշխանական դարձած այլ ընտանիքների նկատմամբ»⁴⁰: «Իշխանական ծագման» պատիվը, որ պատկանում էր տոհմի բոլոր անդամներին անխտիր, ոչ միայն շարունակում էր նույն գերակայությամբ պահպանվել՝ նույնիսկ ավատատիրական ունեցվածքի եւ կարողության նվազման, նախարարական տիտղոսի եւ ժառանգական գործառույթի կամ վարչական պաշտոնի կորստի դեպքում, որպի-

³⁶ Հայ նախարարական համակարգի մասին տես **Адоиц 1908**, с. 453-479, եւ **Kévorkian et Mahé 1988**: Միջտոհմական հարաբերությունների մասին ավելի մանրամասն տես **Toumanoff 1963**, p. 33-144:

³⁷ **Անդ**:

³⁸ **Адоиц 1908**, с. 453-479: **Հարությունյան 1976**: **Garsoyan 1982**: Ավելի թարմ՝ **Garsoïan 2012**:

³⁹ **Մաթեւոսյան 1988**, էջ 194:

⁴⁰ **Toumanoff 1976**, p. 25: Ըստ հեղինակի՝ այս համակարգը հատուկ էր ամբողջ Կովկասի հասարակություններին:

սիք տեղի ունեին սկսած Է դարից՝ հայ ընտրանու կառուցվածքի աստիճանական փոփոխության հետեւանքով⁴¹, այլեւ փոխանցելի էր ամուսնական կապերով, ըստ այդմ՝ կին ներկայացուցիչների միջոցով: Այսպիսով՝ երկրորդ կարգի նախարարական տները կարող էին հաջորդ սերնդում հասարակական առաջխաղացում ունենալ եւ քաղաքական առաջնակարգ դիրք ստանալ՝ խնամիանալով ավելի հին եւ իշխանական ծագման տոհմերի հետ⁴²: Այս հնարավորությունը հատկապես էական նշանակություն պետք է ունենար խնամի ընտանիքի՝ հարաբերականորեն նոր կամ ձեռքբերովի ազնվականության պարագայում, որի հիմնադիրները զուգահեռաբար նաեւ ջանում էին «կռել» իրենց ծագման հնության եւ անձեռակերտության կամ թագավորագուն արյան մասին ավանդույթը⁴³: Եւ թեեւ Է դարից ի վեր տոհմական նախարարական այս համակարգը սկսում է աստիճանաբար փոփոխության ենթարկվել՝ տեղը զիջելով ազնվական տիտղոսների եւ քաղաքական գործառույթների՝ թագավորի կողմից շնորհվելու եւ ըստ վերջինիս մատուցված ծառայությունների իշխանական դիրքի առաջխաղացում ակնկալելու սկզբունքին⁴⁴, այդուհանդերձ, տոհմական ծագումնային գերապատվությունը եւ դրա ընձեռած օրինական իրավունքն, ըստ ամենայնի, շարունակում էին սովորության նույն ուժն ունենալ: Ահա թե ինչու, մեր կարծիքով, կարելու էր համարվում հիշատակագրություններում ճշտել ազնվածին կանանց հայրանունները, տոհմանունները եւ առկայության դեպքում՝ ընտանիքի գլխավորի ընթացիկ բարձր կարգավիճակը. այդպիսով, բացի նրանց անհատական եւ ինքնիշխան դիրքից, ամրագրվում էր նաեւ նրանց անօտարելի տիտղոսն ու տոհմական պատիվը ամուսնու ընտանիքին փոխանցած լինելու եւ այդպիսով՝ վերջինիս «շուքն» ավելի փայլեցնելու հանգամանքը:

Հայտնի է, որ նախարարական ավագագահության համակարգում Մամիկոնյաններն ավանդաբար համարվել են երկրորդը՝

⁴¹ Այս մասին մանրամասն տես **Garsoïan 2012**:

⁴² **Անդ**:

⁴³ Ինչպես, օրինակ, Բագրատունիները՝ Մովսես Խորենացու ջանքերով, կամ նրա մեթոդին հետեւող Չաքարյանները՝ Կիրակոս Գանձակեցու եւ Վարդան Արեւելցու, եւ Օրբելյանները՝ Ստեփանոս Օրբելյանի ջանքերով: Տե՛ս **La Porta 2008-2009**: Չաքարյանների մասին տե՛ս **Մարգարյան 1992 եւ 1994**: **La Porta 2012**: Տե՛ս նաեւ **Pogossian 2019**:

⁴⁴ **Garsoyan 1982 եւ 2012**: **Limper 1980**, p. 36:

թագավորական ընտանիքից հետո, եւ պահպանել են այդ պատիվը երկար ժամանակ: Նրանցից հետո էին Բագրատունիները, Սյունիները, Արծրունիները, Ամատունիները, ապա նոր՝ Կամսարականները⁴⁵: Այսպիսով թերեւս կարելի է բացատրել Համագասպ Կամսարականի՝ վերոբերյալ դամբանական արձանագրության մեջ Շուշան Մամիկոնյանի դիրքի շեշտումը. չնայած այս երկու ընտանիքների միջեւ խնամիական կապերը վկայված են առնվազն Ե դարից եւ, հավանաբար, շարունակվում են մինչեւ Ժ-ԺԱ դարերը⁴⁶, այդուհանդերձ, Մամիկոնյանների գերագահությունն անառարկելի փաստ է թվում: Այդ հարաբերությունը նկատվում է մինչեւ իսկ Անիի Պահլավունյաց Սբ. Գրիգոր եկեղեցու երկու արձանագրությունների շեշտադրումներից, որոնց հեղինակ «տիկնանց տիկին» Շուշանը վստահաբար ծագումով Մամիկոնյան պետք է լիներ⁴⁷: Մամիկոնյանների կրտսեր ճյուղից էին նաեւ վերոհիշյալ Դուդան⁴⁸ ու Վաչուտյան հարս Մամախաթունը: Հատկանշական է, որ Մամախաթունը թաղված է իր կառուցած Տեղերի վանքում, ամուսնուց առանձին. վերջինս իր համար հանգստարան էր ընտրել Հովհաննավանքը, որի արձանագրության մեջ, այդուհանդերձ, հանդես է գալիս նաեւ Մամախաթունը՝ որպես շինարարության եւ նվիրատվությունների մասնակից⁴⁹: Ինչպես հնարավոր է պարզել տարբեր փաստանյութերից՝ Վաչուտյանների կապերը Մամիկոնյանների հետ պարբերական բնույթ ունեին:

Բուտ Առուեղյանի կին Աննան Կամսարական էր եւ ակնհայտորեն արտոնյալ դիրք ուներ ամուսնու կարգավիճակի համեմատությամբ, որի անունը հայտնի չէ հայկական աղբյուրների տեղեկությունների համադրությամբ կազմված ցուցակների մեջ⁵⁰:

⁴⁵ **Garsoian 2012**:

⁴⁶ Դատելով Կամսարականներից սերող Գրիգոր սպարապետի (981-1040) եւ «տիկնանց տիկին» Շուշանի միությունից, որի անունը եւ թողած արձանագրություններում նկատվող տիրական տոնը վկայում են Մամիկոնյան ծագումը (տե՛ս **Mutafian 2012**, t. I, p. 240-41 եւ t. II, pl. 11):

⁴⁷ Տե՛ս **Դիվան (I)**, էջ 31 եւ 32:

⁴⁸ **Դիվան (IX)**, էջ 59:

⁴⁹ **Ալիշան 1890**, 168: Տե՛ս նաեւ **Ղարիբյան 2014**:

⁵⁰ **Garsoian 2012**: Թե՛ն Առուեղյան տոհմանվան բացակայությունը չի հերքում նրանց գոյության իրողությունը վաղ ժամանակներում, սակայն միաժամանակ չի արտոնում նրանց գերակա համարել Կամսարականների նկատմամբ:

Գրիգոր Մամիկոնյանի կին Հեղինեն սերում էր Աղվանքի մարգպան-իշխանի տնից, որն այդ պահին հավասար դիրք ուներ Գրիգորի տան հետ: Նույնը կարելի է ասել Գագիկ Կարսեցու կնոջ՝ Գորանդուխտի մասին, որը Վրաց արքայադուստր էր⁵¹: Իսկ նրանց դուստր Մարենը պատմությանը հայտնի է կաթողիկոսական աթոռի վերականգնման մեջ ունեցած կարեւոր դերակատարությամբ, Կապադովկիայում իրենց Ծամնդավ ամրոցի հերոսական պաշտպանությամբ եւ «կյուրուպլատի» տիտղոսով: Հիշատակարաններից մեկը նրան բնութագրում է «բարեպաշտ եւ հզոր» ածականներով⁵²:

Գարձյալ՝ Սյունիքի թագուհի Մարիամը, որի անվան հետ է կապված Հայաստանում նոր վանական շարժման հիմնադրումը, Անիի արքա Աշոտ Բագրատունու դուստրն էր: Սյունյաց տոհմի նկատմամբ իր տոհմի գերակայությունը, որ ավելի վաղ արմատներ ուներ, քան Բագրատունիների թագավորացումը եւ Սյունիքի թագավորության հռչակումը, նկատելի է նրա անվան եւ գործունեության հետ կապված վկայություններում, նրան բնութագրող ձեւակերպումներում⁵³: Այդ հարաբերությունը հակառակ վեկտորով արտահայտվում է Անիի Գագիկ Ա-ի կին Կատրանիդեի՝ առաջին դեմքով գրված արձանագրության մեջ, ուր Հայոց թագուհին համեատորեն ներկայանում է որպես ամուսնու հրամանը կատարող.

«...ի ժամանակս աստուածապատիւ եւ հոգեւոր տեառն Սարգսի Հայոց կաթողիկոսի եւ ի մեծապայծառ թագաւորութեանն Գագկա Հայոց եւ Վրաց շահանշահի, եւ Կատրանիդէ Հայոց թագուհի, դուստր Վասակայ Սիւնեաց թագաւորի ... հրամանաւ առն իմո Գագկա շահանշահի շինեցի գուրբ Կաթադիկէս...»⁵⁴

⁵¹ **Մաթեւոսյան 1988**, էջ 102, ծնթ. 3: **Mutafian 2012**, p. 267:

⁵² **Mutafian, Անդ**:

⁵³ Մասնավորապես՝ Սեւանի վանքի հիմնադրման պատմության (**Մաթեւոսյան 1988**, էջ 41) եւ Վանեվանի եկեղեցու արձանագրության մեջ (**Կոստանեանց 1913**, էջ 6), ըստ որի եղբոր՝ սպարապետ Ծապուհ Բագրատու կողմից նա նշանակվել էր այդ շինարարական նախաձեռնության «վերակացու եւ տեսուչ»: Մարիամ Սյունեցու գործունեության եւ պատմիչների վկայությունների վերլուծությունը տե՛ս **Rapti 2014** եւ **Pogossian 2012**:

⁵⁴ **Դիվան (I)**, էջ 35:

Նմանապես, Սասնա Թռռնիկյանների տոհմը, որ սերում էր Մամիկոնյաններից, եթե ոչ երկրորդական, ապա առնվազն հավասար աստիճան պետք է ունենար Արծրունի արքաների համեմատությամբ, որոնց տանից հարս եկած էլ իրեն թագուհի անվանող Մելեքսեթը, բացի Մոկպաց իշխանի դուստրը լինելուց, սերում էր Սուրբ Վարդանի շառավղից:

Ափիսագաց եւ Հայոց թագուհի ներկայացող Մարիամը Վասպուրականի եւ Անիի՝ կրկնակի արքաների ժառանգ էր, որ 1030 թ. գնացել էր Կոստանդնուպոլիս՝ Ռոմանոս կայսրից խաղաղության դաշինք կնքելու եւ իր որդի Բագրատի համար կյուրոպաղատության պատիվ խնդրելու⁵⁵: Եթե նրա՝ Վրաց թագավոր Գեորգի Բ-ի (1014-1027) կինը եղած լինելու փաստը վավերական է⁵⁶, ապա պետք է եզրակացնել, որ ամուսնու անվան բացակայությունը տվյալ արձանագրության մեջ ենթադրում է Մարիամի տոհմական գերակայությունը:

Կանանց տիրական ու հավակնոտ, ինքնիշխան ու անկախ դիրք ցուցանող ներկայությունը հիշատակագրերում, որ արդեն նկատելիորեն հաճախանում է Թագավորությունների ժամանակաշրջանում (Թ-ԺԱ դդ.), առավելագույն արտահայտության է հասնում ԺԲ դարավերջից սկսյալ եւ ԺԳ-ԺԴ դարերում՝ հատկապես Հայաստանի հյուսիսային եւ արեւելյան հատվածներում: Արդեն մեջբերած մի քանի օրինակներին կարելի է ավելացնել հիշատակարանների եւ արձանագրությունների երկար շարք, որտեղ ազնվագարմ կանայք հանդես են գալիս լրիվ ինքնուրույն եւ անկախ ձեռով: Բավական է հիշել Հաղպատի վանքում Կյուրիկե Գ արքայի դուստրեր Մարիամի եւ Ռուսուզանի թողած վկայությունները՝ շինությունների, ձեռագրերի եւ ոսկեհուռ մասնապահարանների մասին, նույն վանքի Սր. Աստվածածին եկեղեցու շինարարությունը ֆինանսավորած խաչենցի իշխանուհի Խաթունին, որ ներկայանում է որպես Դեսոմեանց ազգից Հասանի

⁵⁵ Տե՛ս Աճառյան 2006, էջ 252:

⁵⁶ Այս մասին հնարավոր եղավ տեղեկություն գտնել միայն Վիքիպեդիայում.

(https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%A1%D6%80%D5%AB%D5%A1%D5%B4_%D4%B1%D6%80%D5%AE%D6%80%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB?fbclid=IwAR3jtlc4BPwH5B1qG6-FhUI1hS9xTDV2fkKT17ffuA9z6HkIOV-kYDboxIk), որտեղ հիմնավորման աղբյուրներ նշված չեն:

դուստրը, Նորավանքին մեծ նվիրատվություն արած Գոնցեն, «թոռն Հասանայ եւ դուստր պարոն Խաւարսվկա»: Նրանց մեջ հատկապես աչքի են ընկնում Արցախի իշխանությունների՝ Խաչենի եւ Դիզակի ազնվական կանայք, ինչպես, օրինակ, վերոհիշյալ Դովիը, որ Վախթանգ իշխանի որդի Հասանի կինն էր, բայց գրեթե միշտ ներկայանում է միայն իր տոհմաձառով. «...եւ Դովս, դուստր Սարգսի, քոյր Չաքարէի եւ Իւանէի, շինեցի զգաւիթս եկեղեցւոյս եւ զմատուռս եւ տվի զաւետարանս եւ յԱնկաբա Կուց երկիրն եւ զիմ Հակուդենայ Մատաղիսն...»⁵⁷:

Հետաքրքրական է Բուրթել Օրբելյանի քույր Ռուզուքանի՝ Մեծ Իրանքի Սբ. Հակոբ վանքում թողած արձանագրությունը, որտեղ նա նշում է եւ հորը, եւ մորը՝ վերջինիս պատվելով «պարոն» տիտղոսով, մինչդեռ ամուսնուն նշում է միայն անունով, առանց տոհմական ծագման.

«...եւ Ռուզուքան անարժան աղախին Քրիստոսի, ամուսին Հասանայ, դուստր մեծ իշխանին Էլիզումին, պարոն մաւրն Թամթէի միաբանեցա տանս Մեծիրանց...»⁵⁸: Այս նույն Թամթայի տապանաքարի վրա կարդում ենք ածականներ, որոնցով սովորաբար մեծարվում են տղամարդ իշխանագույնները. «Չաշխարհաշէն ... դշխտափառ պարոն զԹամթա իսթունն, մայր Բիրթեյին յիշեցեք...» (1312)⁵⁹: «Պարոն» կամ «պատրոն» կոչումը, որ անշուշտ որոշակիորեն ենթադրում է նաեւ գործուն քաղաքական ու իշխանական կարգավիճակ, այս շրջանում հանդիպում է այլ կանանց անվանումների կողքին: Այդպիսիներից են Խաղբակյան Չաջուռի դուստր Վանենին (ԺԳ դ.)՝ «...յիշեցջիք ի Տէր Աստուած զքրիստոսասէր պատրոնն զՎանենի՝ զստացող սուրբ մատենիս», Սյունյաց Ասփան, Մամքանն ու Մինախաթունը (ԺԴ դ.)՝ «Յիշեցջիք ... զմեծ իշխանաց իշխանն, զհանգուցեալն առ Քրիստոս՝ զպարոն Չալալն, եւ զհաւրաքոյրք սորա, զամենաւրինեալն ի կանայս՝ զպարոն Ասփայն եւ զՄամքանն, եւ զմայր սոցին՝ զպարոն Մինախաթունն»⁶⁰: Նույն հիշատակարանը Սիւսական նահանգի իշխաններ եւ տերեր Ամիր Բուրթելի, Պոլտայի, Ծահիշահի, Ելիկումի եւ Ադրողի կողքին նշում է նաեւ վերջինիս «գերամեծար ծնաւդ» պարոն Գոնցային, իսկ Հայոց թառում

⁵⁷ Խաղարի վանքի մատուռ, 1224թ, *Դիվան* (V), էջ 127:

⁵⁸ Անդ, էջ 16:

⁵⁹ *Դիվան* (III), էջ 238:

⁶⁰ Խաչիկյան, Մաթեւոսյան, Ղազարյան, 2018, էջ 251-252:

գրված մեկ այլ հիշատակարանում (1297թ) որպես նահանգի տեր են հիշվում Խոշաքը եւ իր որդի Չաքարիան⁶¹: Նույնկերպ, ընթացիկ տիրակալների, հոգևոր առաջնորդների եւ նահանգի իշխանների անունները նշող կանոնական բանաձևերում սկսում են տեղ գտնել նաեւ կանանց անունները. «Կամաւն Աստոճյ եւ հայրապետութեան Տէր Գրիգորո եւ իշխանութեան Հասանա ու Մամբանին, Գրիգոր եւ Ասթէին, մեր միաբան եղբարքս...»⁶²:

Հանդիպում են գրություններ, որոնցում հեղինակը ներկայացնում է ոչ միայն հոր, այլեւ մոր տոհմով, իսկ երբեմն՝ միայն մոր տոհմով: Այդպիսին են, օրինակ, Խաչենի Հասան իշխանի թողած արձանագրությունները. «Ես Հասան, որդի Վախթանգա եւ Խորիշահի, Տէր Խաչենոյ...»⁶³, «...եւ Հասան որդի Վախթանգա եւ Խորիշահի, շինեցի գեկեղեցիս...»⁶⁴, եւ Նորավանքում, Սմբատի դամբարանում Գրիգորի թողած արձանագրությունը. «...եւ Գրիգոր, թոռն Դովին, գնեցի...»⁶⁵: Իվանե Չաքարյանի որդի Ավագը, բացի իր պայծառափայլ հորից, հիշվում է նաեւ մորով՝ Խոշաքով, որ Կեչառիսի եկեղեցու երկու արձանագրություններում մեծարված է «պատրոն» եւ «պարոն» տիտղոսներով: Այս նույն Խոշաքը Շիրակավանի եկեղեցու 1229 եւ 1232թթ արձանագրություններում ներկայանում է ոչ միայն լոկ որպես թագուհի, այլեւ որպես Հայոց եւ Վրաց տների «վերաիշխող», մինչդեռ իր ամուսին Իվանե Չաքարյանի միայն պալատական պաշտոնն է նշված. «...եւ Աթաբէկ Իւանէ եւ Խոշակս Վրաց եւ Հայոց թագո[ւ]հի...» եւ «...եւ Աթաբէկ Իւանէ եւ Խոշակս վերաիշխող տանս Վրաց եւ Հա[յ]ոց եւ նովին թագո[ւ]հի...»⁶⁶: Ըստ մեկ այլ արձանագրության՝ Խոշաքը Շիրակավանի բնակիչներին ազատում է որոշ հարկերից, որոնք համայնքապետ Գաւգէնն (կամ Գաւրգէն) էր պարտադրել՝ այսպիսով հաստատելով իր գերակայությունը նրա

⁶¹ **Մաթեոսյան 1984**, էջ 796:

⁶² **Դիվան (IV)**, 1973, էջ 315: Տե՛ս նաեւ էջ 317՝ նույնարվանդակ երկրորդ արձանագրությունը:

⁶³ **Անդ**, էջ 79:

⁶⁴ **Դիվան (V)**, էջ 79:

⁶⁵ **Դիվան (III)**, էջ 239:

⁶⁶ Արձանագրությունները տե՛ս **Ալիշան 1881**, էջ 10:

նկատմամբ ոչ միայն տոհմական տիտղոսով, այլև արդեն գործուն իշխանությամբ⁶⁷:

ԺԱ-ԺԳ դարերին վերաբերող պատմական աղբյուրները գալիս են հաստատելու հիշատակագրերում արտահայտվող այս միտումները՝ տեղեկացնելով կրոնական, քաղաքական, ռազմական եւ դիվանագիտական բազմաթիվ իրողություններում ու միջադեպերում կանանց ակտիվ մասնակցության մասին: Ըստ այդմ՝ լոկ «դիվանագիտական նվեր» համարվելուց զատ⁶⁸, այս կանայք հառնում են որպես ինքնաբավ ու խոշոր քաղաքական դեմքեր, նահանգների ու իշխանական տների ղեկավարներ եւ տանուտերեր՝ «պատրոններ»: Չաքարյան Իվանի եւ Խոշակի դուստրը՝ նշանավոր Թամթան, նման հրաշալի օրինակ է՝ արդեն տարածաշրջանային ու միջազգային մասշտաբներով⁶⁹:

Հիշատակագրերում եւ աղբյուրներում արտահայտվող այս միտումներն ակնհայտորեն աղերսվում են հայ քաղաքական-հասարակական համակարգում տեղի ունեցած խորքային փոփոխություններին, երբ պատմական մի շարք հանգամանքների բերումով⁷⁰ հին տոհմական ժառանգական ընտանիքները, ի դեմս արական ներկայացուցիչների, թուլանում եւ մասնատվում են՝ փոխադարձաբար կանացի անդամներին հանձնելով տոհմական պատվի, հասարակական ազդեցության եւ քաղաքական ակտիվության լծակները, ի հավելումն՝ շատ դեպքերում նաեւ հողային եւ գույքային սեփականությունը: Մյուս կողմից, այս ընթացքում հրապարակ եկած նոր ազնվական վերնախավի համար, որ կարիք ուներ հաստատելու քաղաքական իշխանության օրինական իրա-

⁶⁷ Արձանագրությունն ըստ **Կոստանեանց 1913**, էջ 71: Խոշակի մասին ավելի մանրամասն տե՛ս **Pogossian 2019**:

⁶⁸ **Eastmond 2012**:

⁶⁹ Թամթայի «ոդիսականի» մասին տե՛ս ամբողջությամբ իշխանուհուն նվիրված մենագրությունը (**Eastmond 2017**) եւ վերջինի վերաբերյալ արդեն իսկ նշված ծավալուն գրախոսությունը (**Pogossian 2019**):

⁷⁰ Դրանց շարքում մասնավորապես նշվում են ըյուզանդական նվաճողական քաղաքականության, սելջուկյան արշավանքների, ապա վրաց թագավորության իշխանության հաստատման հետեւանքով ազնվական դասի բնաջնջումը կամ բռնի ու կամավոր արտագաղթը, ավանդական նախարարական տոհմական համակարգի քայքայումը եւ ժողովրդագրական տեղաշարժերը: Այս ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական համակարգի փոփոխությունների մասին տե՛ս **Մարգարյան 1990**: **Garsoïan 2012**: **La Porta 2013** եւ **2008-2009**:

վունքը, ծագումնաբանական առասպելների փնտրտուքի եւ այլ-ազգի իշխանագուն օրիորդների հետ դիվանագիտական ամուսնություններ կնքելուն զուգահեռ էական գործոն պետք է համարվեր նաեւ «ի բնե», հին նախարարական եւ թագավորական գերդաստանների կանանց հետ ամուսնական կապերի հաստատումը, որով եթե ոչ անմիջապես նրանց, ապա նրանց որդիներին կփոխանցվեր հայկական եւ ընդհանրապես կովկասյան հասարակության հիմնաքար համարվող արյունակցական տոհմականությունը⁷¹:

Այսպես, Հայաստանի հյուսիսային եւ արեւելյան շրջանների տեր Չաքարյանները, որոնք առաջին հիշատակագրերում ներկայանում են մինչեւ միայն երեք սերունդ իջնող տոհմաձառով, ընդամին նշելով միայն նախնիների անունները, սկսած արդեն ԺԳ դարի առաջին տասնամյակներից իրենց հոչակում են Բագրատունյաց արքայական տոհմի շառավիղներ⁷²: Մեր կարծիքով, այսպիսի հավակնության հիմքում որպես օրինական հիմնավորում չէր կարող լինել լոկ երեւակայական «թխված» առասպելը, ինչպես ենթադրվում է, այլ՝ ավելի «շոշափելի» մի կովան, որպիսին էր Բագրատունյաց տան հետ խնամիությունը: Թեեւ այդ մասին որեւէ հստակ տեղեկություն չի պահպանվել տոհմի ավագ սերունդների հետ կապված, այնուամենայնիվ, ենթադրվում է, որ «պարոն» Խոշաքը Բագրատունի էր⁷³: Մյուս կողմից, եթե հավաստի է, թե Չաքարյան եղբայրներն սկզբում իրենց համարել են Արծրունյաց տոհմի ժառանգներ՝ սերելով Ամիր-Քուրդ Արծրունու քույր Սահակդուխտից, որը նրանց մայրն էր⁷⁴, ապա դարձյալ մայրական ժառանգականությամբ կողմնորոշվելով՝ կարող էին ի վերջո իրենց Բագրատունի հոչակել, քանի որ Արծրունիները Բագրատունիների հետ բազմահարկ խնամիություն ունեին արդեն իսկ Թ դարից սկսած:

Նույն սկզբունքով եւ դրդապատճառներով էին առաջնորդվում տարածաշրջանի մյուս նորաբույս ազնվական ընտանիքները՝ Վաչուտյանները, Խաղբակյանները կամ Պռոշյանները, Օրբել-

⁷¹ Այս հարաբերությանն անդրադարձել է Գ. Հովսեփյանը՝ Խաղբակյանների տան առնչությամբ (**Յովսեփեան 1969**, էջ 13-16) եւ Մերջիո Լա Պորտան՝ Չաքարյանների վերաբերյալ (**La Porta 2008-2009**):

⁷² **Մարգարյան 1994: La Porta 2012:**

⁷³ **Հովհաննիսյան 1957**, էջ 155:

⁷⁴ Տե՛ս **Տեր-Ղեւոնդյան 1971:**

յանները եւ «Հայոց արեւելից կողմանց» մյուս իշխանությունները⁷⁵, որոնք ավատատիրական նոր ձեւավորված աստիճանասանդուղքում իրենց դիրքն օրինականացնելու կամ մեկը մյուսի հանդեպ գերազահությունն իրավունքով հաստատելու խնդիր ունեին: Այսպես, Չաքարեի եւ Իվանեի քույր Դոփը, ինչպես նշեցինք, Խաչենի իշխան Վախթանգյան Հասանի կինն էր, իսկ մյուս քույրը՝ Խորիշահը, ամուսնացած էր Սակոյան Վախթանգ Տանգիկի հետ, որի մայրը, սակայն, Վրաց արքայադուստր Կատան էր: Հավանաբար այդ պատճառով է, որ Խորիշահն իր թողած արձանագրություններում միշտ հանդես է գալիս ամուսնուց հետո, ինչպես, օրինակ, Մեծ Իրանի Սբ. Հակոբայ վանքում. «...ես Խորիշահ, ամուսին Վախտանգա տեառն Խաչենոյ, դուստր մեծին Սարգսի, քոյր Չաքարի եւ Իւանոյ...»⁷⁶: Այդուհանդերձ, նրա որդին՝ Հասան Չալայ Դոյան, որ ի դեպ կին էր վերցրել ավելի բարձր դիրք ունեցող՝ Սյունիքի իշխանադուստր Մամբանին, նոր տոհմ է հիմնում՝ Հասան-Չալայանները, հետեւելով իր մորաքույր Դոփի օրինակին, որի անվամբ նույնանում է տարածաշրջանի մյուս՝ Դոփյանների տոհմաձառը:

Դարձյալ, Լոռու Բագրատունի Կյուրիկեի դուստր Մաման ամուսնացած էր Հաթերքի իշխան Վախթանգ Սակոի որդի Հասանի հետ, իսկ մյուս դուստրը՝ Ռուսուքանը, Օրբելյան Իվանեի հետ: Դատելով 1173թ Հաղպատի վանքում գրված մի ձեռագրի հիշատակարանից՝ վերջինս, օգտվելով այդ միությունից, հավանում էր տեր ճանաչվել Անի եւ Դվին քաղաքների ու շրջակա գավառների վրա՝ ջանալով նախկին փայլը վերադարձնել Բագրատունյաց տիրություններին եւ հատկապես Անի քաղաքին⁷⁷: Այդ պատճառով է, որ Անիում կենալը նրա համար կարելուք նշանակություն ուներ. «...ես առաւել ի մեծ ամիրսպասալարէն յԻվաննէ եւ ի զուգակցէ նորին ի բարեսէր թագուհւոյն Ռուսուգանայ, որ էր յազգէ Բագրատունեացն, մերոց կորուսեալ ազգիս թագաւորաց, որ ցուցանէր զգութ հարց իւրոց եւ նորոզէր զիւրոց նախնեացն սէր առ ամենեսեան: ... Քանզի ամենայն տեղի, որ ի նախնեացն

⁷⁵ Այս ընտանիքների տոհմաձառի եւ պատմության քննությունը, ըստ անվանացանկերի, տե՛ս **Toumanoff 1963** եւ **Mutafian 2012**: Հայոց արեւելից կողմանց տոհմերին ամբողջությամբ նվիրված վերջին մենագրությունը՝ **Հակոբյան 2020**:

⁷⁶ *Դիվան* (V), էջ 12:

⁷⁷ Այս մասին տե՛ս նաեւ **La Porta 2008-2009**:

սորա շինեալ էին եւ նուազեալ յետո, ի սորայ աւուրս պայծառանային եւ նորոգէին վերստին, եթէ ի մերում գաւառիս եւ եթէ ի գաւառն Անույ՝ սեփհական քաղաքին իւրեանց, եւ ի նոյն իսկ յԱնի, եւ եթէ ի գաւառն Դըւնա, վասն զի յամենայն տեղի իշխանութիւն եւ երկիւղ մեծի սպասալարին Իւանէի՝ առն սորա հասանէր... Որ եւ կամեցաւ զգերեզմանս առաջնոյ թագաւորացն, որ ի սուրբ ուխտիս, առաւել պատուել եւ պայծառացուցանել...»⁷⁸: Նկատենք, որ (ինչպէս տեսանք Խոշակի դեպքում) Ռուսուգ(ք)անն անվանվում է թագուհի, բայց ոչ՝ նրա ամուսինը, որ պատվվում է միայն «ամիրսպասալար» նորաստեղծ զինվորական տիտղոսով⁷⁹: Այլ կերպ ասած՝ նա արյան իրավունքով թագուհի էր, սակայն ամուսինը թագավոր չէր համարվում, ինչը եւս մեկ անգամ հավաստիացնում է տիտղոսների տոհմական-ժառանգական բնույթի կենսունակությունը ԺԲ դարավերջի իրողություններում: Ըստ այդմ՝ նրանց որդիներն արդէն արքայական արյուն ունեին եւ ուստի չվիճարկվող օրինականությունն⁸⁰: 1199թ Անին անցնում է Չաքարէ ամիրսպասալարի ձեռքը, որն, ինչպէս արդէն նշեցինք, նույնպէս հավակնում էր Բագրատունյաց ժառանգությունը⁸¹:

Ավելի ուշ շրջանում Օրբելյանները, Վաչուտյանների նման, ամուսնական հաստատուն կապեր էին հաստատել նաեւ Մամիկոնյանների հետ, որոնցից է, օրինակ, վերը նշված Էլիկում-Թամթա գույզը⁸²:

⁷⁸ **Մաթեւոսյան 1988**, էջ 207:

⁷⁹ Այս տիտղոսը հավանաբար ստեղծվել է Վրաց թագավոր Դավիթ Դ-ի (1089-1125) օրոք (տե՛ս **Bedrosian 1983**, էջ 235):

⁸⁰ Հատկանշական է, որ Ստեփաննոս Օրբելյանը, հավաստիացնելով, որ իր տոհմը մայրական գծով ազգակից էր է՛ւ վրաց, է՛ւ հայոց թագավորական ընտանիքներին, չի մոռանում նշել, որ այդ պատճառով էլ կրում էին Բագրատունյան անուններ՝ Սմբատ եւ Իվանէ (Յովհաննէս), ինչպէս որ Լիպարիտը, Ելիկումն ու Բուրթելը «ի Ճենաց» եկած նախնիների անուններով էին, իսկ որոշներն էլ վրացական անուններ էին կրում (տե՛ս **Օրբելեան 1861**, էջ 278):

⁸¹ Այս փոփոխության հետաքրքիր մանրամասները եւ պատմական արժանահավատ վերլուծությունը տալիս է Լա Գորտան (**La Porta 2008-2009**):

⁸² Կիրիլ Թումանովը համարում է, որ Օրբելյանների տոհմաձառը սերում է 1177-ին Հայաստան վերադարձած Լիպարիտյան-Մամիկոնյաններից (**Toumanoff 1963**, p. 210-11):

Սահմանափակվելով ներկայացված նյութով, որ, ինչպես նշեցինք, հիշատակագրերի հսկայածավալ ամբողջության մեջ դիպվածականորեն ընտրված ընդամենը մի քանի օրինակների շուրջ արված նախնական դիտարկումներ են՝ ի պատիվ սիրելի Կողո Մութաֆյանի եւ հայագիտության ու հայ մշակույթի մեջ նրա ներդրած վաստակառատ ավանդի, շարադրանքն ամփոփենք ակնկալիքով, որ միջնադարյան հայ քաղաքակրթության մեջ կանանց դիրքի, կարգավիճակի եւ խաղացած դերի մասին հետազոտությունները կշարունակեն զարգանալ առավել համապարփակ եւ համակարգված սկզբունքով: Այս առումով ցանկալի կլինեն հատուկ ուշադրության արժանացնել հայ կանանց տոհմաբանական արտոնությունների եւ նրանցով ճյուղավորվող տոհմածառերի բացահայտման խնդիրների վրա, որոնք կարող են նոր գիտելիքի աղբյուր դառնալ եւ օգնել լույս սփռել հայ միջնադարյան պատմության ուսումնասիրության շատ հարցերի վրա:

LE STATUT PRINCIER ET LES PRETENTIONS DES FEMMES DE LA HAUTE NOBLESSE ARMENIENNE

Nazeni Gharibian

RÉSUMÉ

Les inscriptions lapidaires et les colophons des manuscrits arméniens médiévaux contiennent certains renseignements concernant les femmes, qui peuvent aider à mieux comprendre leur statut social, leur position dans la famille et dans la société. L'analyse de l'ensemble de ce corpus permet de constater que dans la société médiévale arménienne, l'origine familiale, la généalogie et l'échelle sociale comptaient beaucoup plus que le genre (gender). Surtout dans le milieu aristocratique, en raison de la structure dynastique et héréditaire du système politico-social arménien, l'appartenance de souche à telle ou telle vieille famille dynastique prévalait à tout autre position et charge; ainsi, la « noblesse de race » était une dignité inaliénable, même si les familles aient perdu, au fil des siècles, leurs titres politiques ou leurs domaines fonciers. D'après les documents en question, cette dignité aurait dû être octroyée également aux membres femelles des grandes familles, qui gardaient la notion de l'échelle aristocratique et l'exprimaient dument sur leur inscriptions mémorielles en se présentant avant tout par leur nom, leur descendance et

leur position et, dans certains cas, en omettant ceux de leur époux. Cette tendance devient symptomatique à l'Époque des Royaumes (IX^e-XI^e siècle) et trouve son apogée à la période suivante (XII^e-XIV^e), surtout dans les régions nord-est de l'Arménie où une nouvelle aristocratie dirigeante étaient formée à l'issue de la campagne de libération arméno-géorgienne contre la domination seldjukide.

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ադոնց (Ն.) 1987, *Հայաստանը Հուստինիանոսի ժամանակաշրջանում* (հայերեն թարգմ.), Երևան, ԵՊՀ հրատ.,

Ալիշան (Ղ.) 1881 - *Շիրակ. Տեղագրություն պատկերացոյց*, Վենետիկ, Ս. Ղազար,

Ալիշան (Ղ.) 1890 - *Այրարատ. բնաշխարհի Հայաստանեայց*, Վենետիկ, Ս. Ղազար,

Դիվան (I,II...) - Դիվան *հայ վիճագրության*, I. (Անի քաղաք), կազմ. Հ. Օրբելի, ՀՍՍՌ ԳԱ, Երևան 1966; III (Վայոց ձոր), կազմ. Ս. Բարխուդարյան, Երևան 1967; IV (Գեղարքունիք), կազմ. Ս. Բարխուդարյան, Երևան 1973; V (Արցախ), կազմ. Ս. Բարխուդարյան, Երևան 1982; IX (Լոռու մարզ), կազմ. Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Սաղումյան, Երևան 2012; X (Շիրակ), կազմ. Ս. Բարխուդարյան, Երևան 2017,

Թորամանյան (Թ.) 1942 - *Հայկական նարտարապետություն*, I, Երևան, «Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակություն»,

Լալայան (Ե.) 1911 - «Վասպուրականի նշանաւոր վանքեր», *Ազգագրական հանդես*, էջ 37-100,

Խաչիկյան (Լ.) 1958 - «XIV-XV դարերի հայկական գյուղական համայնքի մասին», *ՊԲՀ* 1, էջ 110-38,

Խաչիկյան (Լ.), Մաթեոսյան (Ա.), Ղազարյան (Ա.) 2018 - *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԴ դար*, Մասն Ա (1301-1325), Մատենադարան, Երևան,

Կոստանեանց (Կ.) 1913 - *Վիմական տարեգիր. ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց*, Ս. Պետերբուրգ,

Հակոբյան (Ա.) 2020 - *Արքայատոհմերն ու իշխանատոհմերը բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում անտիկից մինչեւ ԺԳ դար*, Երևան, ՀՀԳԱ, Գիտություն հրատ.,

Հարությունյան (Բ.) 1976 - «Գահնամակի թվագրման հարցի շուրջը», *ՊԲՀ* 1976/2, էջ 57-74,

- Ղարիբյան (Ն.) 2014** - «Նոր դիտարկումներ Տեղերի վանքի շուրջ», Չ. Հակոբյան, Լ. Միքայելյան (խմբ.), *Անտառ Ծննդոց* (Հողվածների ժողովածու՝ նվիրված Ֆելիքս Տեր-Մարտիրոսովի հիշատակին), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, էջ 355-377,
- Մաթևոսյան (Ա.) 1984** - *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար*, Երևան, Մատենադարան ,
- Մաթևոսյան (Ա.) 1988** - *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր*, Երևան, Մատենադարան,
- Մարգարյան (Հ.) 1990** - «Տիրապետող դասակարգը Հայաստանում XII-XIII դարերում», *ՊԲՀ* 1990/4, էջ 39-46,
- Մարգարյան (Հ.) 1992** - «Չաքարյանների ծագման ավանդությունը միջնադարյան հայ պատմագրության մեջ», *ՊԲՀ*, 1992/2-3, էջ 139-152,
- Մարգարյան (Հ.) 1994** - «Չաքարյանների ծագումը», *ՊԲՀ* 1994/1-2, էջ 156-175,
- Յովսեփեան (Գ.) 1969** - *Խտադբակեանք կամ Պոռշեանք Հայոց պատմության մեջ*, Անթիլիաս,
- Ոսկեան (Հ. Հ.) 1940** - *Վասպուրական-Վանի վանքերը*, մաս Ա, Վիեննա,
- Տեր-Ղևոնդյան (Ա.) 1971** - «Չաքարիայի եւ Իվանեի արաբատառ արձանագրությունը Անբերդում», *ՊԲՀ* 1971/1, էջ 185-187,
- Bedrosian (R.) 1983** - "Amirspasalar", in: Joseph Reese Strayer (ed.), *Dictionary of the Middle Ages*;
- Eastmond (A.) 2012** - "Diplomatic Gifts: Women and Art as Imperial Commodities in the Thirteenth Century", *Liquid and Multiple: Individuals and Identities in the thirteenth-century Aegean*, G. Saint-Guillain, D. Stathokopoulos (eds.), Paris, Centre de recherche d'Histoire et Civilisation de Byzance, Monographies n° 35, p. 105-133;
- Eastmond (A.) 2017** - *Tamta's World: The Life and Encounters of a Medieval Noblewoman from the Middle East to Mongolia*, Cambridge University Press;
- Garsoïan (N.) 2012** - « Esquisse de l'évolution du *naxararut'awn* arménien durant l'interrègne (VIIe-IXe siècle) », *REArm* 34, p. 41-71;
- Garsoyan (N.) 1982** - "Armenian Social Structure", *Dictionnaire of the Middle Ages*, J. Strayer, NY, p. 488-491;

- Greenwood (T.) 2004** - "A Corpus of Early Medieval Armenian Inscriptions", *Dumbarton Oaks Papers*, 58, 27-91;
- Kévorkian (R.), Mahé (J.-P.) 1988** - *Arménie: 3000 ans d'histoire*, MAJC, Marseille, (sous la rédaction de), p. 109-111;
- La Porta (S.) 2008-2009** - "Lineage, Legitimacy, and Loyalty in Post-Seljuk Armenia: A reassessment of the Sources of the Failed Ōrbēlean Revolt Against King Giorgi III of Georgia", *REArm* 31, p. 127-165;
- La Porta (S.) 2012** - "'The Kingdom and the Sultanate Were Conjoined': Legitimizing Land and Power in Armenia during the 12th and Early 13th Centuries", *REArm* 34, p. 73-118;
- La Porta (S.) 2013** - "Re-Constructing Armenia: Strategies of Co-Existence amongst Christians and Muslims in the Thirteenth Century", in B. Crostini, S. La Porta (eds.). *Negotiating Co-Existence: Communities, Cultures and Convivencia in Byzantine Society*, Trier, WVT Wissenschaftlicher Verlag, p.251-272;
- Limper (B.), 1980** - *Die Mongolen und die christlichen Völker der Kaukasus. Eine Untersuchung zur politischen Geschichte Kaukasiens im 13. und beginnenden 14. Jahrhundert*, PhD Dissertation (University of Köln), Köln;
- Mutafian (C.) 2009** - « La vie sexuelle des derniers rois d'Arménie », *Aramazd, Journal of Near Eastern Studies*, IV/1, p. 136-147;
- Mutafian (C.) 2012** - *L'Arménie du Levant (XIe-XIVe siècle)*, t. I-II, Paris, Les Belles lettres;
- Pogossian (Z.) 2012** - "The Foundation of the Monastery of Sevan: a Case Study on Monasteries, Economy and Political Power in IX-X Century Armenia", *Le Valli dei Monaci*, Atti del convegno internazionale di studio (Roma-Subiaco 17-19 maggio 2010), a cura di L. Ermini Pani, Spoleto, p. 181-215;
- Pogossian (Z.) 2019** - "Women, Identity, and Power: A Review Essay of Antony Eastmond;
- Rapti (I.) 2014** - « Le mécénat des princesses arméniennes », E. Malamut, A. Nicolaidès (dir.), *Impératrices, princesses, aristocrates et saintes souveraines: de l'Orient chrétien au Moyen Âge et au début des temps modernes*, Presse universitaire de Provence, p. 249-272;
- Tamta's World", *Al-'Uṣūr al-Wuṣṭā* 27: 233-266;
- Toumanoff (C.) 1963** - *Studies in Christian Caucasian History*, Georgetown University Press;

- Toumanoff (С.) 1976** - *Manuel de généalogie et de chronologie pour l'histoire de la Caucasic chrétienne (Arménie, Géorgie, Albanie)*, Roma, Edizioni Aquila;
- Адонц (Н.) 1908** – Армения в эпоху Юстиняна. Политическое состояние на основе нахарарского строя, С.-Пб. [Тексты и разыскания по армяно-грузинской филологии. кн. XI].

Նազենի Ղարիբյան, Հայ տոհմաձին տիկնանց իշխանական դիրքը եւ հավակնություններն ըստ միջնադարյան հիշատակագրերի



Տարսայիճ Օրբեյանը եւ Խաչենի Հասան Ջալալ Դոլայի դուստր Մինա Խաթունը. Իշխանական գույգի պալատի՝ այժմ կորած բարձրաքանդակ, որ հավանաբար զարդարում էր մուտքերից մեկի բարավորը. Եղեգիս, 1274. (Նկարը՝ ըստ Mutaflan 2012, t. II, pl. 31)

KOLOPHONE ARMENISCHER ÜBERSETZER SYRISCHER LITERATUR (12.-13. JAHRHUNDERT)¹

Andrea Schmidt

L'Université de Louvain-la-Neuve

& Azat Bozoyan

Institute of the Oriental

Studies of NAS RA, Erevan

In der Epoche des 12.-13. Jahrhunderts lagen Nordsyrien und Kilikien im Schnittpunkt blühender Kulturen. Die Gebiete waren multiethnisch und vielsprachig geprägt. In den Klöstern des Amanus-Gebirges wirkten Mönche der Melkiten, Georgier und Lateiner neben Syrern und Armeniern.² Darunter gab es eine kleine Zahl von Armeniern, die vor langer Zeit das chaledonische Glaubensbekenntnis angenommen hatten und Seite an Seite mit melkitischen und lateinischen Mönchen arbeiteten. Sie behielten die armenische Sprache in ihrer Liturgie bei und übersetzten und verfassten Traktate in armenischer Sprache.³

¹ Die beiden Verfasser dieses Artikels haben sich Anfang der neunziger Jahre des letzten Jahrhunderts in der Wohnung von Claude Mutafian kennengelernt, als er ihnen grosszügig und hilfsbereit seine Bibliothek und Wohnung im Zentrum von Paris einige Tage lang für Studien zur Verfügung stellte. Dem Nestor der Erforschung Kilikiens sei dieser gemeinsame Beitrag mit Hochachtung zugedacht.

² Cl. Cahen, *La Syrie du Nord à l'époque des Croisades et la principauté franque d'Antioche*, Paris 1940, p. 140-148. Zu den armenischen, syrischen, lateinischen und byzantinischen Klöstern im Amanus und in Nordsyrien, vgl. die aus der Literatur erhobene Aufstellung bei K.-P. Todt - B.A. Vest, *Syria (Syria Prōtē, Syria Deutera, Syria Euphratēsia)*, (Tabula Imperii Byzantini, 15), Wien 2014, p. 422-427, 447-447; und Ա. Բոզոյան, “Մեւ լեռների վանական համալիրներն ըստ հ. Ղ. Ալիշանի տեղադրութեան”, in: Բազմա-վեպ 178 (2020), p. 294-303.

³ Zu den armenisch-chaledonischen und lateinischen Übersetzern siehe : H. Марр, Аркаун, монгольское название христиан в связи с вопросом об армянах-халкедонитах, in: Византийский Временник, XII (1906), N 1-2, Appendix, p. 31-40; Յովհաննէս Քոննեցի, *Յաղագս քերականին*. Բնագիրը հրատարակությանը պատրաստեց Լ.Ս. Խաչիկյանը, Ներածությունը Լ.Ս. Խաչիկյանի և Ս.Ա. Ավագյանի, Երևան 1977, p. 17-35; A. Bozoyan, “Le traducteur Siméon Plndzahank et la question de l'identité nationale”, in :

Die syrischen und armenischen Kirchen hatte eine starke Position inne. Armenisch war die Sprache der politisch einflussreichen Klasse. Die monastischen Bildungszentren und kirchlichen Amtssitze der Christen standen miteinander in Kontakt und partizipierten am Reichtum ihrer Bibliotheken. Es kam zu einem regen Geistesaus-tausch. Neue literarische Zentren bildeten sich heraus und die Über-setzungsliteratur blühte auf. Die Oberhäupter der armenischen Kirche, die seit 1149 in Hromkla residierten, förderten die Rezeption von Werken verschiedener christlicher Gemeinschaften. Besonders die Übersetzung syrischer Werke nahmen nach der ersten Epoche inten-siver Literaturrezeption (5. bis 7. Jh.) einen neuen Aufschwung. Die Epoche bezeichnet man auch als „Renaissance“ der syrisch-armen-schen Literaturbeziehungen.⁴

Das Gebiet von Melitene war ein wichtiges Zentrum der sy-rischen Christen. Südöstlich von Melitene lag das Kloster Barsauma, eines der reichsten und mächtigsten Klöster, bis 1293 Hauptsitz des syrisch-orthodoxen Patriarchen.⁵ Das Kloster war ein bedeutendes Wallfahrtszentrum sowohl für syrische wie armenische Christen. Es pflegte enge Beziehungen zu Hromkla und den Klöstern in Kilikien. Die reiche Klosterbibliothek wurde von armenischen Gelehrten für ihre Übersetzungsinteressen genutzt. Mitte des 13. Jahrhunderts kam es aufgrund der mongolischen und seldjukischen Kämpfe zu einem Exodus syrischer Bevölkerung aus Melitene nach Kilikien. Die Syrer stellten den grössten, nicht armenischen Bevölkerungsanteil im Land und hatten an der ökumenischen und politischen Stärke des armeni-schen Königreichs Anteil. Die syrischen Klöster besaßen beträchtliche Ländereien in Kilikien. Es wurden neue syrische Kirchen erbaut, in

M. Dokhtourichvili, G. Dédéyan, I. Augé (ed.), *L'Europe et le Caucase. Les relations interrégionales et la question de l'identité*, Tbilisi 2012, p. 164-172.

⁴ E.G. Mathews, “Syriac into Armenian: The Translators and their Trans-lations”, in: *Journal of the Candian Society for Syriac Studies* 10 (2010), p. 32; A. Schmidt, “Die armenisch-syrischen Beziehungen im Spiegel der kilikischen Übersetzungsliteratur”, in: A. Drost-Abgarjan – H. Goltz (ed.), *Armenologie in Deutschland*, (Studien zur Orientalischen Kirchengeschichte, 35), Münster 2005, p. 120.

⁵ E. Honigmann, *Le couvent de Barsauma et le patriarcat jacobite d'Antioche et de Syrie*, (CSCO, 146; Subsidia, 7), Louvain 1967, p. 58, 63f ; Todt – Vest, *Syria*, p. 444-445.

Sis u.a. eine Kirche des hl. Barsauma; 1264 erhielt Sis einen syrischen Bischofssitz.⁶

In diesem Beitrag wollen wir die Kolophone der syrisch-armenischen Übersetzungen aus der Epoche untersuchen. Sie lassen erkennen, wer der Auftraggeber der jeweiligen Übersetzung war, und was das Anliegen. Sie zeigen auch, mit welchen Schwierigkeiten die Übersetzer zu kämpfen hatten bei der Übertragung eines Textes aus der syrisch-semitischen Sprache in die lexikalisch und syntaktisch ganz anders strukturierte armenische Sprache. Gebildete Armenier in Nordsyrien und Kilikien waren in der Regel polyglott. Ihre Sprachkenntnisse reichten jedoch nicht aus, um schwierige oder thematisch komplexe Werke selbständig zu übersetzen. Daher zogen sie einen syrischen Muttersprachler zur Hilfe, der eine Grundübersetzung des jeweiligen Textes machte. Diese Vorlage wurde in Zusammenarbeit mit dem syrischen Übersetzer oder nachträglich von einem Armenier redigiert und zu einem sprachlich und inhaltlich homogenen Werk umgeformt. Wir stellen die wichtigsten Kolophone dieser armenischen Redaktoren aus dem 12.-13. Jh. vor. Zunächst aus der Zeit von Katholikos Grigor II. Vkasaser (1066-1105).

Der Johanneskommentar des Johannes Chrysostomos

Drei Übersetzer waren sukzessive an der armenischen Übersetzung des Johanneskommentars von Johannes Chrysostomos beteiligt, ein Syrer, ein Grieche und ein Armenier. Auftraggeber war Katholikos Grigor II. Der armenische Übersetzer war Kirakos aus Kloster Drazark (c. 1050-1127). Kirakos hatte sich bereits mit der armenischen Übertragung des griechischen Apostelkommentars von Chrysostomos um 1085 als fähiger Übersetzer erwiesen. Er war dem Katholikos mit vielerlei literarischen Arbeiten zu Diensten.⁷ In seinem langen Kolophon zum Johanneskommentar rühmt Kirakos den Katholikos als einen zweiten Grigor Lusaworič « eine kostbare leuchtende Perle Armeniens, seinen geistlichen und fürsorglichen Vater ». Dann schreibt er, daß der Katholikos die Übersetzung zunächst einem Priester Andreas aus einer syrischen Vorlage aufgetragen habe

⁶ P. Kawerau, *Die Jakobitische Kirche im Zeitalter der syrischen Renaissance*, Berlin 1960 (2. Ed.), p. 79, 113, 119.

⁷ Zum Werk von Kirakos Drazarke'i vgl. Ն. Պողոսեան, Հայ գրողներ, Երուսաղէմ 1971, p. 203-205.

(սկիզբն ետ առնել թարգմանութեան նախ յաստուրոյն լեզուէ ... զԱնդրէաս երէց ասորի զթարգմանիչ):⁸ Dieser Syrer Andreas über- setzte die ersten 13 Kapitel, doch konnte er die Aufgabe nicht zufriedenstellend erfüllen, weil, so Kirakos, die syrische Sprache redselig (Syrisch als Übersetzungssprache) und von anderer Gestalt sei als die Armenische (քանզի շարփասդի պիտատարագ գոյ լեզուն ասորի ի մերս հայկազանցս արամեանս ազգ եւ լեզու). Das Projekt wurde abgebrochen. Daraufhin wurde Kirakos nach Mesopotamien entsandt, um einen fähigen Mann zu finden, der den Kommentar aus einer originalen griechischen Vorlage übersetzen konnte. Er traf auf den „Rhetor“ Theophist, der als Kartularius und Protonotarius (յունա- կանն հռետոր Թէոփիստ որ էր քարտուղար եւ պրոտոնոտար) ein hoher Beamter unter einem Fürsten Aaron war.⁹ Theophist führte die armenische Übersetzung ab Kapitel 14 fort, nun aber auf Grundlage eines griechischen Textes. Er erhielt dafür reichlich Sold und Ge- schenke (բազում ծախիւք առատատոր պարգեւաւք նմա ետ թարգ- մանել). Nachdem er zwanzig Kapitel übersetzt hatte, verstarb er plötz- lich. Insgesamt, konstatiert Kirakos in seinem Kolophon, waren 33 Kapitel übersetzt worden (ի սկզբանն տասն եւ երեք ճառ յասորի լե- զուէ ... իսկ քսան ի յունականէն, որ են երեսուն եւ երեք ճառ). Es ob- lag ihm, die restlichen 55 Kapitel aus dem Griechischen zu übersetzen (բազում ճառք մնացին անթարգման, յոր ես ձեռնարկելայ նոյնպէս առատաբար զմնացեալսն ետու աւարտել նմին առն ... եւ է ճառիցս թիւ, գոր նորոզի ի յայտ ածաք, յիտուն եւ հինգ ճառ). Gleichzeitig verbesserte er die Übersetzung der vorangegangenen Kapitel. An dem Manuskript des griechischen Rhetors Theophist beklagt er, dass es unverständlichen und ungeeignet sei (անաւգուտ ի կարդայոյ եւ յի- մանարոյ), er habe viel an der Übersetzung gearbeitet, um sie zu korrigieren, insbesondere den Wortsinn (ուղիղ յարիմեցի ... բոտ մտաց բանիցն), ohne aber etwas an dem göttlich inspirierten Text des Chrysostomos hinzuzufügen oder auszulassen (բազում աշխատեցայ ի սայս, սակս անհարմար եւ խղթմի թարգմանութեան հռետորին յու-

⁸ Zur syrischen Überlieferung des Johanneskommentars, die spätestens Ende 6. Jh. in 88 Kapitel vorliegt (Kap. 44-59 verloren), vgl. J.W. Childers (ed.), *The Syriac Version of John Chrysostom's Commentary on John. I. Mémoré 1-43*, (CSCO, 651; Script. Syr., 250), Leuven 2013, p. VIII—XXXV.

⁹ Zur Identifikation Aarons vgl. Peeters, “Traductions et traducteurs dans l’hagiographie orientale”, p. 274. Er nennt Theophist irrtümlich Theophil.

նականի որ էլ ջանացի յերիւրել միայն, ոչ յաւելուլ էլ ոչ պակասեցուցանել յաստուածաշունչ բանիցն). Um den Text verständlich zu machen, so Kirakos, habe er den entstellten Wortschatz und die erratiche Satzstruktur umgeformt (*գրագրելոյ պրայրած էլ թիւրած էր բանքն էլ տունքն էլ աւելի էլ պակաս ... յերիւրեցար յուղիղն բար էլ բանս ըստ մերումս գիտասկտոր էլ զիւրթին բանսն*). Daneben konsultierte er noch andere Handschriften (*այլ ի կրկին աւրինաց*), denn die anderen Manuskripte waren, wie man seiner etwas lakonischen Bemerkung entnehmen darf, durch Alter unbrauchbar geworden.

Über seine Redaktion des Johanneskommentars berichtet Kirakos ausführlich in einem langen Kolophon. Seine Überarbeitung war im Jahr 1117 abgeschlossen. Erhalten ist der Kolophon in einer Handschrift, die 1332 durch einen Stephanos im kilikischen Kloster Akanc‘ geschrieben worden war.¹⁰ Hier die wesentlichen Auszüge aus dem umfangreichen Text:

Չաստուածապետական բոլոր գոյութիւնն, թէ զի՞նչ երբեր իցէ առ ի յասացելոցն աւրինարանի, գեր զբան էլ անհաս ի մտաց իմանալեացն էլ ի մարմնաւորաց ...

յիշեցէք զամենատրուպ էլ զբազմամեղս զԿիրակոս, որ բազում աշխատեցայ ի սայս, սակս անհարմար էլ իւրթնի թարգմանութեան հռետորին յունականի, որ էլ ջանացի յերիւրել միայն, ոչ յաւելուլ էլ ոչ պակասեցուցանել յաստուածաշունչ բանիցն: Իսկ

¹⁰ M-1347, f. 414r-417v; vgl. Մաթևոսյան, *Ձեռագրերի հիշատակարաններ Ե - ԺԲ դդ.*, p. 145-150. Seltsamerweise ist dieser wichtige Kolophon in der ausführlichen Beschreibung der Handschrift vergessen worden, siehe Ա. Քեօշկերեան et al. (ed.), *Մայր Յուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան մատենադարանի*, IV, Երևան 2008, col. 1034-1042. Kirakos‘ Kolophon wurde zum ersten Mal veröffentlicht von Հ. Ոսկերեան, *Մեկնություն պրոյ Անտարանին՝ որ ըստ Յօհաննու*, Կոստանդնուպօլիս: ի տպարանի Գրիգոր դպրի Մարտրանեցւոյ, 1717. Die Abschrift enthält einige unwesentliche orthographische Varianten. Auszugsweise ist der Kolophon auch veröffentlicht in Ն.Ա. Ոսկանյան, Ք.Ա. Կորկոսյան, Ա.Մ. Սափայան, *Հայ գիրքը 1512-1800 թվականներին. Հայ հնատիպ գրքի մատենագիտություն*, Երևան 1988, p. 217-218.

Der Kolophon enthält keine Datierung. Kirakos‘ Übersetzung wird von dem Schreiber Stephanus in M-1347, f. 417v, auf das Jahr 1117 datiert, siehe Մաթևոսյան, *Ձեռագրերի հիշատակարաններ Ե - ԺԲ դդ.*, p. 150. Peeters, “Traductions et traducteurs dans l’hagiographie orientale”, p. 273, gibt mit 1112 eine falsche Datierung an.

եթե ի վեր գոյով սորայս մակացութիւն եւ պակաս ինչ կամ այլստարագ եղեւ, աղաչեմ չլինել մեղադիր, գայս գիտելով, թե ոչ ի ծուլութենէ կամ յանփոյթ առնելոյ եղեւ, այդ յանհուսութենէ հատակոտոր թարգմանելոյն: Բայց ըստ իս՝ ոչինչ պակասեցուցեալ ի ճշմարտութենէ, ուստի եւ զսխալանսն անտես առնել Աստուծոյ եղբայրական սիրով զիջեալ ըստ իս, աղաթեցեք ի վերայ վշտացելոյս, ներքին եւ արտաքին պատերազմաւք:

Այդ (sic) եւ զանգիւտ Հայկազանցս զլուսաւոր մարգարիտս զպատճառն զերանելի Լուսաւորչին մերոյ զփոխանորդ զԳրիգորիս, զհոգեւոր հայր մեր եւ զխնամածու յիշեցեք ի Տէր: Վասն զի նա եղեւ սկիզբն գտուրք Աւետարանիս Մեկնութիւնս գրելոյ ի գիրս յայս, ի ձեռն բազում աղաչանաց իմոց զինքն զերանելին, որ եւ լուեալ ինձ ըստ աստուածասէր եւ պատուիրանասէր հոգւոյ իւրոյ, սկիզբն ետ առնել թարգմանութեան նախ յասուրւոյն լեզուէ, եւ քանզի շաղփաղփ այլատարագ գոյ լեզուն ասորի ի մերս Հայկազանցս արամեանս ազգ եւ լեզու, ըստ որում վերստին իմ աղաչանս ի ձեռն առեալ վկայասէր ոգւոյ, ի յունականէ առնել զթարգմանութիւն զերահրաշ ճառիցս եւ աստուածախաւս բանիցս, աստուածաբան աստարանչիս Յովհաննու Մեկնութեան, ի ձեռն հոմանուն երանելի պատրիարգին Կոստանդնուպալսի, տիեզերակեցոյց աշխարհալոյս վարդապետի, Ոսկեբերանն կոչեցելոյ մականունութեամբ, որպէս վերագոյնդ առ նա արարեալ իմ Կիրակոսի զբանս մաղթանաց, վասն զի յարմար գոյ յունականն բարբառ ի մերս ըստ թարգմանութեանն:

Արդ ունկնդիր եղեալ ինձ՝ թողեալ զԱնդրեաս երեց ասորի զթարգմանիչ, յղէ ի Միսապաւտամն գաւառ առ յունականն հռետոր Թէոփիստէ կոչեցեալ, որ էր քարտուղար եւ պոռոյնաւտար իշխանին Առան կոչեցելոյ, եւ բազում ծախիւք առատատուր պարգեւաւք նմա ետ թարգմանել գտուրք գիրսս: Եւ արդ, նա ի Քրիստոս փոխեալ երանելի կեանսն, բազում ճառք մնացին անթարգման, յոր եւ ձեռնարկեալ նոյնպէս առատաբար զմնացեալսն ետու ավարտել նմին առն: Եւ է ճառիցս թիւ, զոր նորոզի ի յայտ ածաք, յիսուն եւ հինգ ճառ, քանզի զերեսուն եւ զերիսն բազում յուղիւք առաջին մերոց թարգմանչացն գտաք թարգմանեալ: Ի սկզբանն տասն եւ երեք ճառ յասորի լեզուէ, բանքն իսկ ցուցանէն: Իսկ քսան ի յունականէն, որ են երեսուն եւ երեք ճառ:

Բովանդակն էր լեալ գիրքն թարգմանած ի հայս, եւ ի ծուլութենէ եւ յանփոյթ առնելոյ այլքն կորուսեալ եղծեալ էին յաւրինակս հինս, ուր եւ կայր, եւ այս, զոր գտաք ի յախմար եւ ի

տգէտ խաւարած գրագրելոյ այլայլած եւ թիւրած էր բանքն եւ տունքն եւ աւելի եւ պակաս, անաւգուտ ի կարդալոյ եւ յիմանալոյ, այլ ըստ մտաց բանիցն եւ այլ ի կրկին աւրինաց, եւ ըստ այսմ գնորոգ թարգմանեալս բազում ջանիւ եւ աշխատութեամբ յերիւրեցաք յուղիղն բառ եւ բանս ըստ մերումս զհաստակոտոր եւ զխրթին բանսն, եւ ըստ վերագոյն գրելոցն ոչ աւելի եւ ոչ պակաս:

Արդ այսպէս գրեցաք եւ տուաք վերջին աւուրց վերջին դարուս ...

Այդ եւ յանիշխանութեան գոլով տիեզերք, քանզի կարծեալքն իշխանք ի սուր եւ յաւեր դարձան յիրեարս, եւս եւ որ թագաւորք անուանէին:

Եւ մեք ի սոյն աւուրքս աշխատեալք նորոգեցաք զսա եւ տուաք ի յշատակ աստուածասէր եղբարց սրբոց, թերեւս անձանց եւ բազմաց աւգուտս գործիցեն, որ եւ հովսեցեալք եւ ցրտացեալք եղեն բնաւք ի պատուիրանաց Աստու[ա]ծոյ ի սիրոյ գրոց: Չայս գրեցաք, զի որք ընթեռնուցուք իմացեալք զմերս եւ զսուրք դիտապետին ջանս ...

Es folgen Kolophone aus der Zeit von Grigor III. Pahlawuni (1113-1166) und Grigor IV. Tlay (1173–1193).

Die Vita des Barsauma

Der syrische Wanderasket Barsauma war ein einflussreicher Mönchsführer. Er verteidigte die Lehre des Euty chius und Dioskur und agitierte in den kirchenpolitischen Streitigkeiten um die Konzile von Ephesus II und Chalcedon. Er starb um 456 in dem nach ihm benannten Kloster bei Melitene. Die syrische zum grössten Teil fiktive Biographie¹¹, ein sehr langer Text von Wundern und Exorzismen, wurde in der 2. Hälfte des 5. Jahrhunderts von Anhängern, darunter einem Priester Samuel, zusammengestellt.¹² Die Verfasserschaft Samuels

¹¹ A. Palmer (transl.), “The Life of Barsauma”, in: V. Menze – J. Hahn, *The wandering holy man. The life of Barsauma. Christian asceticism, and religious conflict in late antique Palestine*, Oakland 2020, p. 187-271. Palmer bereitet eine Edition auf Grundlage von Ms. Damas. 12/17 (1185-86 AD) vor.

Zur Autorschaft und dem historischen Wert der syrischen Barsauma-Vita vgl. Menze – Hahn, *The wandering holy man*, p. 2-4, 11-19.

¹² Menze – Hahn, *The wandering holy man*, p. 7-10. Nach Mitte 6. Jh. Datieren den Text u.a. J.-M. Fiey, *Saints syriaques*. Edité par L.I. Conrad, (Studies in Late Antiquity and Early Islam, 6), Princeton 2004, p. 49f; L. van Rompay,

wird auch in der armenischen Ausgabe der Vita erwähnt. Barsauma galt den syrischen und armenischen Christen als grosser Heiliger.¹³ Seine Reliquien im Barsaumakloster bei Melitene wurden verehrt. Besonders die in einem goldenen Schrein verwahrte Armreliquie soll große Wunder bewirkt haben - den chalcedonischen Griechen oftmals zum Spott. Der Franke Joscelin II., Kreuzfahrerfürst von Edessa, plünderte um 1148 das Kloster und raubte den teuren Reliquienschatz. Der Diebstahl war ein grosser Skandal. Später wurde der Schrein zurückgegeben.¹⁴

Durch die große Barsauma-Verehrung war eine armenische Übersetzung der syrischen Lebensbeschreibung des Heiligen notwendig geworden. Das älteste Zeugnis der armenischen Übersetzung des syrischen Textes ist ein Homiliar aus dem 12. Jh.¹⁵ Davor ist eine Erwähnung Barsaumas in der armenischen Literatur nicht bezeugt. Mit der Übersetzung verbunden sind zwei Kolophone.

1) Der erste Kolophon besteht aus zwei unabhängigen Teilen. In der Ich-Form steht der erste Teil und zwar von dem oben genannten Priester Samuel (*ևս Շմուէլ ևնասան եւ յետին քահանայ*) geschrieben, der sich als Verfasser der syrischen Vita ausgibt. Er erklärt, er habe die Vita « mit grossem Mitgefühl geschrieben, aber viele Wunder-

“Barsawmo”, in: S. Brock et al. (ed.), *Gorgias encyclopedic dictionary of the Syriac heritage*, Piscataway 2011, p. 50.

¹³ Des Barsauma wird in der armenischen Kirche am 1. Februar gedacht. Das Synaxar bemerkt zu seinen Reliquien : « ils opèrent beaucoup de miracles, et il est notre intercesseur auprès du Christ » (G. Bayan (ed./trad.), *Le synaxaire arménien de Ter Israel*, VI: *Mois de Aratz*, (Patrologia Orientalis, 19,1), Turnhout 1974 (2^{ème} ed.), p. 128.

¹⁴ J.-B. Chabot (trad.), *Chronique de Michel le Syrien*, III, Paris 1905, p. 238-239, 259-f, 283-288, 293, 295-296. Zu den wiederholten Plünderungen des Klosters vgl. D. Weltecke, *Die "Beschreibung der Zeiten" von Mor Michael dem Grossen (1126-1199). Eine Studie zu ihrem historischen und historiographiegeschichtlichen Kontext*, (CSCO, 594; Subsidia, 110), Leuven 2003, p. 71, 76-78.

¹⁵ M-1522 (ճատրնսիր, 12. Jh.), f. 465v-482v: Վարք եւ քաղաքավարութիւն երիցս երանեալ ճգնազգեաց վկայ]իին Քրիստոսի սրբոյն Պարսամու միայնակեցի որ եղեւ ի Միջագետս Ասորոց յամս ամպարիշտ թագաւորին Մարկիանոսի. Incipit: Ամենայն ժամանակ ընդունելի Աստուծոյ ...

erzählungen ausgelassen, weil das Leben des seligen Barsauma und seine Reliquien allseits bekannt sind »:

Ես Շմուէլ նուաստ եւ յետին քահանայ ի բագում գրիթոյ գրեցի զվարս երանելոյն Պարսամաչի, ի գրագում նշանաց զանց արարաք, վասն զի յայտնի են վարք երանելոյն եւ նշանք ընդ ամենայն տեղիս: Այլ այս անչափ գրեցաւ, զի հաւատասջիք եւ աւրինեցէք զԱստուած, որ այնչափ փառաւոր առնէ զուրբս իւր.

Indes stimmt dieser Kolophon nicht mit dem sehr viel längeren Kolophon Samuels in der syrischen Vita überein, in dem derselbe, hier in der dritten Person, als Verfasser der Barsauma-Vita nebst etlicher anderer Werke vorgestellt wird.¹⁶

2) Eine zweiten später hinzugefügten Subscriptio entnehmen wir, dass die Vita 1125 in Melitene ins Armenische übersetzt wurde (*թարգմանեցաւ պատմութիւն*) “unter der Schirmherrschaft des Heiligen Grigor (des Erleuchters) durch den sündhaften Mönch Grigor”. Der Erstübersetzer Grigor war zweisprachig, wobei nicht klar ist, ob seine Muttersprache Syrisch oder Armenisch war. Auftraggeber der Übersetzung war entsprechend dem Übersetzungsdatum Grigor III.:

Թարգմանեցաւ պատմութիւն երանելոյս ի թվականիս Հայոց ի նորում շրջանի յամի քառասներորդի առաջներորդի, հրամանաւ տեառն Գրիգորի Հայոց կաթողիկոսի, ի մայրաքաղաք

¹⁶ Palmer, *The Life of Barsauma*, § 165, p. 271: « Now it was the priest Samuel who wrote down these acts (consisting) of the achievements of the champion Barsauma. He was one of Barsauma’s first disciples. But all of us know that all these things have been written down in truth. This same priest Samuel also wrote many metrical homilies and teaching-songs and sermons on the Faith and on various subjects; and refutations of all superstitions; and a refutation of the Dyophysites; and fine commentaries on the Scriptures. As for us, slaves of Christ, who have concluded this book, we conjure you by almighty God, let no one dare to change even one of its excellent words! Whoever copies from this manuscript shall copy them out right down to this point! May the grace of our Lord and His mercy be on all of us, now and always, forever and ever, Amen! » (2. Kolophon der Handschrift Damas. syr. 12/17 (1185 AD). Barsauma soll Anhänger nach Armenien entsendet haben (Palmer, “The Life of Barsauma”, § 154, p. 267). Der erste Kolophon in der Handschrift ist zwar wie der armenische in der ersten Person abgefasst doch anonym.

Մելիտինի, ընդ հովանեաւ սրբոյն Գրիգորի, ձեռամբ Գրիգորի մեղապարտ կրաւնաւորի, բարեխաւսութիւն ինձ եւ ի փառս ամենասուրբ Երրորդութեանն, յաւիտեան եւ յաւիտենից յաւիտեանս. ամէն.¹⁷

⁶⁴ Die Handschrift TU MaXIII 70 (1432 AD), f. 158v, fügt hinzu: սոսնաւեալ ողի Վարդան Վարդապետն, « die jämmerliche Seele Vardan Vardapet ». Diese Variante mit dem Einschub des Namens von Vardan Arewelc'i wird von der Mehrzahl der Handschriften nicht bezeugt, dennoch hat Sawalaneanc' die Variante in den Haupttext der Edition aufgenommen, vgl. Սաւալանեանց, *Տեսնն Միխայելի պատրիարքի Ասորոց ժամանակագրութիւն*, p. 613; Langlois, *Chronique de Michel le Grand*, p. 375.

Milde Gottes und danach in die Gebete und Fürsprache seiner Diener
...

Zusammenfassung

Was lässt sich aus den Kolophonen an Erkenntnis über die syrisch-armenischen Übersetzungen gewinnen, die unter den Katholikoi der Pahlawuni-Dynastie gefördert wurden? Die syrischen Übersetzer waren in der Regel Geistliche. Die Übersetzungen schienen wortwörtlich gewesen zu sein, vielleicht waren sie interlinear⁶⁵, denn wie man aus der Kritik der armenischen Redaktoren erfährt, folgten sie lexikalisch und syntaktisch genau der syrischen Vorlage, was zu obskuren und unverständlichen Übersetzungen führte. Zwar schienen sich die syrischen Übersetzer der Eigentümlichkeiten ihrer Muttersprache bewusst gewesen zu sein, doch beherrschten sie nicht die syntaktischen und semantischen Feinheiten der armenischen Zielsprache. Ihre Übersetzungen werden mit vielerlei Ausdrücken kritisiert: sie seien *սյրացած, անհարմար, անաւգուտ, փոյթ, խղթին, խաւարած, թիրած, ծանւծուտ, տգէտ, շարփաղիփ*, nutzlos für das Lesen und das Verständnis des Textes (*անաւգուտ ի կարդալոյ եւ յիմանալոյ*). Bei der Sergius-Vita wird die dürftige Sprachkenntnis des syrischen Übersetzers beanstandet (*սղաւտարար զմերս զհոտոյի դարձիւն*), und bei der Sarug-Homilie die literarisch ungeschliffene armenische Sprache (*անարվեստ մերոյ դարձեալն*). Stellenweise gab es Lücken und Fehlübersetzungen. Auch schienen dialektale Ausdrücke (*աշխարհաւորէն բանից*) der im armenischen Umfeld lebenden syrischen Übersetzer vorzukommen, etwa die armenische Umgangssprache von Melitene.⁶⁶ Wiederholt wird auf die grosse strukturelle Verschieden-

⁶⁵ Interlinearität und Übersetzungsfehler aus dem Syrischen schimmern in den redaktionieren armenischen Versionen stellenweise durch, vgl. L. Ter-Pétrossian, *Textes arméniens relatifs à S. Éphrem*, (CSCO, 473; Script. Arm., 15), Louvain 1985, p. xvii; Hilkens, “Memra on the Five Talents”, p. 357-390.

Zu den fehlerhaft aus dem Syrischen übertragenen Stellen in der armenischen « Sententiae Syriacae » vgl. Kaufhold, “Die armenischen Übersetzungen byzantinischer Rechtsbücher”, p. 80-82.

⁶⁶ Zu dialektal gefärbten Übersetzungen aus dem Arabischen ins Lateinische in derselben Epoche vgl. M.-T. d’Alverny, “Les traductions à deux interpretes: d’arabe en langue vernaculaire et de langue vernaculaire en

heit beider Sprachen hingewiesen (*այրատարագ գոյ լեզուն սսորի ի մերս Հայկազանցս արամեանս սոգգ եւ լեզու*). Die Tätigkeit des syrischen Erstübersetzers wird als *թարգմանէլ* oder *փոխէլ* bezeichnet. Aus den Kolophonon lässt sich nicht erschließen, ob der syrische Übersetzer an seiner Vorlage allein arbeitete, oder ob er sich den Text vorlesen ließ. Immerhin versprach seine Ur- bzw. Erstübersetzung ein erstes Verständnis des Textinhalts (*գրնույթին բանին եւ գկարգ պատմութեանն ամբողջ ունէր*), sie genügte aber weder der grammatikalischen und semantischen Genauigkeit noch der stilistischen Ästhetik des armenischen Empfängers (*յարմարութեամբ բանից եւ շողկասցս բանից ոչ գուգիր ընդ մերումս լեզուի*).

Wie sich der Herausforderung gestellt wurde, beleuchtet der Kolophon von Nerses Schnorhali für die Barsauma-Vita. Nerses übertrug die wirre und unangebrachte Wortwahl in eine klare und schmuckvolle armenische Sprache (*ըստ մերոհն սոհն սիղարբսից, պայծառ եւ յոգնասպանոյն բանից*); er berichtigte ebenso Syntax und Orthographie. Die Redaktion des armenischen Bearbeiters wird als *յամարէլ, յերիւրէլ, յիկէլ, սրբագրէլ, փոխէլ, փոխարկէլ*, und *ուղիղ յարիւնէլ* bezeichnet. Ein anderer Ausdruck für die Überarbeitung ist *ստորոգէլ* überprüfen, so Nerses für die Redaktion der Sarug-Homilie. Nerses von Lambron wiederum verwendet den Ausdruck *յեղաշրջէլ* transformieren bzw. verständlich machen. Vardan Arewelc'i bezeichnet sich selbst bei der Redaktion der Chronik Michaels als ein am Text Mitwirkender, der dem Übersetzer beistand (*satarel*).

Die Kolophone der syrisch-armenischen Übersetzungsliteratur aus dem 12.-13. Jahrhundert machen deutlich, dass die unschönen wörtlichen und dialektal gefärbten Erstübersetzungen, die « nicht unserer armenischen Sprache entsprechen », unmittelbar nach Erhalt des Textes oder einige Jahre später grammatikalisch, lexikalisch und stilistisch überarbeitet wurden. Neben den Katholikoi der Pahlawuni Dynastie traten die namhaften Gelehrten Nerses Schnorhali, Nerses von Lambron und Vardan Arewelc'i dafür ein, den literarischen Schatz des syrischen Volkes zu heben, oder, anders gesagt, ihn nach den zurückliegenden ersten Jahrhunderten syrisch-armenischer Übersetzungstätigkeit wiederzuentdecken. Das multiethnische und polyglotte Königreich von Kilikien bot dafür ein fruchtbares Feld. Die

latin”, in: *Traductions et traducteurs au Moyen Âge. Actes du colloque ... les 26-28 mai 1986*, Aubervilliers 1989, p. 198-201.

armenischen Gelehrten verstanden, dass die syrische Literatur die eigene theologische, hagiographische oder historische Bildung bereicherte und ergänzte. Um sie nutzbar zu machen, nahmen sie aktive Kontakt mit syrischen Klöstern und Übersetzern auf. Das Barsauma-Kloster bei Melitene spielte dabei eine wichtige Rolle.

Die Ur- bzw. Erstversion der syrischen Übersetzer ist nicht mehr erhalten. Nach der Verbesserung des Textes durch die armenischen Redaktoren war sie überflüssig geworden. Die heute auf uns gekommenen Übersetzungen aus dieser Epoche stellen die letzte Etappe des Adaptionsprozesses syrischer Werke für die armenische Literatur dar.

ԱՍՈՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ ՀԻՃԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ (ԺԲ-ԺԳ ՂԴ.)

**Անդրեա Շմիդտ
Ազատ Բոզոյան**

ԱՍՓՈՓՈՒՄ

ԺԲ-ԺԳ ղդ. Հյուսիսային Ասորիքը և կիլիկյան Հայաստանը գտնվում էին ծաղկող քրիստոնեական մշակութային խաչմերուկում: Ամանուխ լեռների և նրա շջակայքի վանքերում կողք-կողքի աշխատում էին ասորի և հայ, մելկիտ հույն և վրացի, ինչպես նաև լատին վանական-մատենագիրներ: Ներկա հետազոտության մեջ քննվում են Ամենայն Հայոց Պաշտօնի կաթողիկոսների հովանու ներքո կատարված թարգմանությունների հիշատակարանները: Հեղինակները մասնագետների ուշադրությունն են հրավիրում հիշատակված սկզբնաղբյուրներում պահպանված թարգմանական արվեստի յուրահատկություններին վերաբերող տեղեկությունների վրա: Հատկանշական է, որ հայերեն թարգմանված բնագրերի մի նշանանակալի մասի ասորերեն բնագրերը չեն պահպանվել: Այդ իսկ պատճառով, մեզ հասած հայերեն թարգմանությունները և նրանց բերած թարգմանական մոտեցումների հետազոտությունը ձեռք են բերում ուրույն մշակութային արժեք:

BIBLIOGRAPHIE:

- I. Augé**, *Byzantins, Arméniens & Francs au temps de la croisade. Politique religieuse et reconquête en Orient sous la dynastie des Commènes 1081-1185*, Paris, Geutner, **2007**;
- Ն. Ալիինեան**, *Ներսէս Լամբրոնացի, արքեպիսկոպոս Տարսուհի կէսանքն եւ գրական վաստակները հանդերձ ազգաբանութեամբ պահպառուներու Լամբրոնի հերթանաց*, (Ազգ. Մատեն., 179), Վիեննա **1956**;
- G. Bayan** (ed./trad.), *Le synaxaire arménien de Ter Israel, VI: Mois de Aratz*, (Patrologia Orientalis, 19,1), Turnhout 1974;
Bibliotheca hagiographica orientalis (BHO), Bruxelles 1910;
- P. Boisson-Chenorhokian**, *Kirakos Ganjakec'i (XIIIe siècle). Histoire d'Arménie. Traduction, Introduction et Notes*, (CSCO 696; Subsidia 144), Leuven **2021**;
- A. Bozoyan**, “La réception du droit dans l’Arménie Cilicienne”, in: P. Bruns – H.O. Luthe (ed.), *Orientalia Christiana*, (Eichstätter Beiträge zum Christlichen Orient, 3), Wiesbaden **2013**, p. 75-84;
- A. Bozoyan**, Le traducteur Siméon Plndzahank et la question de l’identité nationale. – in : *Actes de colloque : L’Europe et le Caucase. Les relations interrégionales et la questions de l’identité /* Sous la direction de M. Dokhtourichvili, G. Dédéyan, I. Augé, Tbilisi, Edition Université d’Etat Ilia, **2012**, p. 164-172;
- Ա. Բոզոյան**, “Մեւ լեռների վանական համալիրներն ըստ հ. Ղ. Ալիշանի տեղադրութեան”, in: Բազմավեպ 178 (**2020**), p. 294-303;
- Ա. Բոզոյան**, “Այլազգի թարգմանիչները հայ մատենագրության մեջ” in: *Լեւոն Խաչիկյան – 90 / Նյութեր Մատենադարանի հիմնադիր տնօրենի ծննդյան իննսունամյակին նվիրված միջազգային գիտաժողովի* (9-11 հոկտեմբերի 2008 թ.), Երևան, «Նաիրի» **2010**, p.273-282;
- Cl. Cahen**, *La Syrie du Nord à l’époque des Croisades et la principauté franque d’Antioche*, Paris **1940**;
- J.-B. Chabot** (trad.), *Chronique de Michel le Syrien, III*, Paris **1905**;
- J.W. Childers** (ed.), *The Syriac Version of John Chrysostom’s Commentary on John. I. Mémrê 1-43*, (CSCO, 651; Script. Syr., 250), Leuven **2013**;
- A. de Halleux**, *Philoxène de Mabbog, sa vie, ses écrits, sa théologie*, Louvain **1963**;

- A. Drost-Abgaryan** – H. Goltz, “Deutsche Übersetzung der «Schrift des Glaubensbekenntnisses der Armenischen Kirche» des Hl. Nerses Šnorhali”, in: **W. Beltz** - A. Drost-Abgaryan, *Čutik Halleakan. Kleine Sammlung armenologischer Untersuchungen*, (Hallesche Beiträge zur Orientwissenschaft, 20), Halle **1995**, p. 181-194;
- J.-M. Fiey**, *Saints syriaques*. Edité par L.I. Conrad, (Studies in Late Antiquity and Early Islam, 6), Princeton **2004**;
- Gregorios Yuhanna Ibrahim**, *The Edessa-Aleppo Syriac Codex of the Chronicle of Michael the Great*, Piscataway **2009**;
- E. Honigmann**, *Le couvent de Barsauma et le patriarcat jacobite d’Antioche et de Syrie*, (CSCO, 146; Subsidia, 7), Louvain **1967**;
- A. Hilken**, “The Armenian Reception of the Homilies of Jacob of Serugh: New Findings”, in: M. Toca – D. Batovici (ed.), *Caught in Translation. Studies on Versions of Late Antique Christian Literature*, (Texts and Studies in Eastern Christianity, 17), Leiden – Boston **2020**, p. 64-84;
- A. Hilken**, “The Manuscripts of the Armenian Homilies of Jacob of Serugh: Preliminary Observations and Checklist”, in: *Manuscripta* 64, 1 (**2020**), p. 1-71;
- A. Hilken**, “The Armenian Version of Jacob of Serugh’s Memra on the Five Talents”, in: *Le Museon* 133,2 (**2020**), p. 345-395;
- L.-A. Hunt**, “The Syriac Buchanan Bible in Cambridge: Book Illumination in Syria, Cicilia and Jerusalem of the later Twelfth Century”, in: *Orientalia Christiana Periodica* 57 (**1991**), p. 331-370;
- Յովհաննես Քոնեցի**, Յաղագս քերականին / Բնագիրը հրատարակությանը պատրաստեց Լ.Ս. Խաչիկյանը, Ներածությունը Լ.Ս. Խաչիկյանի և Ս.Ա. Ավագյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, **1977**;
- J. Karst**, *Grundriss der Geschichte des armenischen Rechtes*, I, Stuttgart **1906**;
- H. Kaufhold**, *Die armenischen Übersetzungen byzantinischer Rechtsbücher. Erster Teil: Allgemeines, Zweiter Teil: Die “Kurze Sammlung” (“Sententiae Syriacae”)*, (Forschungen zur byzantinischen Rechtsgeschichte, 21), Frankfurt/M. **1997**;
- H. Kaufhold**, “Zur syrischen Kirchengeschichte des 12. Jahrhunderts. Neue Quellen über Theodoros bar Wahbun”, in: *Oriens Christianus* 74 (**1990**), p. 115-151;
- Ա. Քեօշկերեան** et al. (ed.), *Մայր Յուզակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան մատենադարանի*, IV, Երևան **2008**;

- H. Mapp**, Аркауи, монгольское название христиан в связи с вопросом об армянах-халкедонитах, in: *Византийский Временник*, XII (1906), N 1-2, Appendix;
- Ա.Ս. Մաթևոսյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ դ., Երևան 1984;
- Ա.Ս. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ Ե – ԺԸ դդ., Երևան 1988;
- E.G. Mathews**, “Syriac into Armenian: The Translators and their Translations”, in: *Journal of the Candian Society for Syriac Studies* 10 (2010), p. 20-44;
- E.G. Mathews**, “Jacob of Serugh, Homily on *Good Friday* and other Armenian Treasures. First Glances”, in: G.A. Kiraz (ed.), *Jacob of Serugh and his Times. Studies in Sixth-Century Syriac Christianity*, Piscataway 2010, p. 145-174;
- V. Menze – J. Hahn**, *The wandering holy man. The life of Barsauma. Christian asceticism, and religious conflict in late antique Palestine*, Oakland 2020;
- Պ. Մուրադյան**, ԺԱ-ԺԳ. դարերի հայ-վրացական դավանական խնդիրները և Մխիթար Գոշի «առ վրացիան» թուղթը. Աղբյուրագիտական քննություն և բնագրեր, Էջմիածին 2011;
- Ն.Ա. Ոսկանյան, Զ.Ա. Կորկոտյան, Ա.Մ. Սավալյան**, Հայ գիրքը 1512-1800 թվականներին. Հայ հնատիպ գրքի մատենագիտություն, Երևան 1988;
- P. Peeters**, “Traductions et traducteurs dans l’hagiographie orientale à l’époque byzantine”, in: *Analecta Bollandiana* 40 (1922), p. 241-298;
- P. Peeters**, “La Passion arménienne de S. Serge le Stratélate”, in: *Huschardzan. Festschrift aus Anlass des 100 jährigen Bestandes der Mechitharisten-Kongregation in Wien (1811-1911) und des 25. Jahrganges der philologischen Monatschrift "Handes Amsorya" (1887-1911)*, Wien 1911, p. 188-192;
- Ն. Պողարեան**, Հայ գրողներ, Երուսաղեմ 1971;
- Ն. Պողարեան**, Մայր Յուզակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, IV, Երուսաղեմ 1969;
- Ն. Պողարեան**, Մայր Յուզակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, IX, Երուսաղեմ 1979;
- S. Սաւալյանեանց**, Տեսնն Միխայէլի պատրիարզի Ասորոց ժամանակագրութիւն, Յերուսաղեմ 1870;

- A. Schmidt**, “Die armenisch-syrischen Beziehungen im Spiegel der kilikischen Übersetzungsliteratur”, in: A. Drost-Abgarjan – H. Goltz (ed.), *Armenologie in Deutschland*, (Studien zur Orientalischen Kirchengeschichte, 35), Münster **2005**, p. 119-126;
- A. Schmidt**, “Die zweifache armenische Rezension der syrischen Chronik Michaels des Großen”, in: *Le Muséon* 109, 3-4 (**1996**), p. 299-319;
- A. Schmidt**, “The Armenian Versions I and II of Michael the Syrian”, in: *Hugoye* 16,1 (**2013**), p. 93-128;
- A. Schmidt**, “Manuscrits arméniens de la chronique du Michel le Syrien dans le fond patriarcal à Jérusalem”, in: C. Mutaflan – G. Dédéyan (ed.), *La Méditerranée des Arméniens (XI-XVe siècles)*, Paris **2014**, p. 179-190;
- A. Schmidt**, “Die armenische Weltchronik des Michael Syrus. Identifikation der zwei Hauptversionen”, in: R.B. Finazzi et al. (ed.), *Circolazione di testi e superamento delle barriere linguistiche e culturali nella tradizioni orientali*, Milano, Centro Ambrosiano **2021** (Orientalia Ambrosiana, 7) [im Druck];
- R.W. Thomson**, “Literary Interactions between Syriac and Armenian”, in: *Journal of the Canadian Society for Syriac Studies* 10 (**2010**), p. 3-19;
- K.-P. Todt - B.A. Vest**, *Syria (Syria Prōtē, Syria Deutera, Syria Euphratēsia)*, (Tabula Imperii Byzantini, 15), Wien **2014**;
- M. Vanérian**, *La correspondance de Saint Nersēs Chnorhali avec les Arméniens* (Dissertation Univ. Montpellier), Montpellier 2007;
- D. Weltecke**, *Die "Beschreibung der Zeiten" von Mor Michael dem Grossen (1126-1199). Eine Studie zu ihrem historischen und historiographiegeschichtlichen Kontext*, (CSCO, 594; Subsidia, 110), Leuven **2003**.

**ՀԱՅԱՉԳԻ «ՀՐԵՇԱՎՈՐ ԵՐԿՎՈՐՅԱԿՆԵՐԸ»
ՄՈՍՈՒԼՈՒՄ. ԱՐԱԲԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ
ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Գագիկ Գանիեյան

Մաշտոցի անվ. Մատենադարան

Աբաս թագավորի (929-953 թթ.) երկարամյա գահակալության ընթացքում Բագրատունիների հայոց թագավորությունը, անցնելով ներքին քաղաքական պառակտումների և իշխանների կենտրոնախույս նկրտումների դեմ պայքարի, շրջակա մուսուլմանական տերություններին հաջողությամբ դիմակայելու շրջան, թևակոխել էր բարգավաճման մի շրջափուլ, ինչպիսին Մեծ Հայքը երկար ժամանակ չէր տեսել¹: Աբասին հաջորդած որդին՝ Աշոտ Գ-ը (953-978 թթ.), ժառանգել էր տնտեսական և ռազմական հզորության բարձրակետում գտնվող թագավորություն: Աշոտ Գ-ը միջնադարյան հայկական աղբյուրներում հաճախ հորջորջվել է «բարեպաշտ» և «ողորմած» մականուններով՝ նկատի ունենալով նրա բարեգութ վերաբերմունքն ընչազուրկների, հիվանդների և անդամալույծների նկատմամբ: Արքայի այսօրինակ վարքն այնքան ընդգծված է եղել, որ որոշ ժամանակակիցների կողմից անգամ ամբաստանվել է պետական գործերն անուշադրության մատնելու մեջ: Օրինակ, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ պատմիչը (Ժ-ԺԱ դար) իր «Տիեզերական պատմություն» երկում այսպես է արտահայտվում Աշոտ արքայի մասին. «Այս Աշոտ խաղաղասէր բարուք կալեալ զաշխարհս Հայոց՝ խոնարհութեամբ եւ ողորմածութեամբ զանցոյց զամենեքումբք, վստն զի զգոնչացեալսն (իմա՝ ուրուկներին, քրտտոներին) եւ զկաղսն եւ զկոյրսն հաւաքէր առ ինքն եւ բարձակից ինքեան առնելով ի խրախնանույթիւնսն. Չոմանս ի նոցանէ իշխանս եւ իշխանաց իշխանս եւ կիւրապաղատս անուանէր եւ զբաւանոյր նորաք... Այլ և զբաժակն իւր թագաւորական ըմպելեաք մատուցանէր նոցա, եւ յորժամ թարախս վիրաց նոցա խառնէր ընդ գինոյն, յայնժամ զմնացորդս նոցա առնել ինքն ճաշակէր: Եւ այնքան առատաձեռնութեամբ բաշխէր կարաւտելոց՝ մինչեւ ի մահուն իւրոյ ոչ լինել դրամ մի ի զանձատան նորա. այլ եւ զկապուտ զարդուցն եւ զբազմականացն եւ որմոց տայր կարաւտելոց: Եւ

¹ Աբաս արքայի կառավարման շրջանի մասին տե՛ս **Եղիազարյան 2017**:

*քանեսց գմեղս իւր ողորմութեամբ եւ գթով տնանկաց»*²: Այսպիսով, պատմիչի վկայությամբ՝ հիվանդների և կարիքավորների նկատմամբ արքայի հոգածությունն այնպիսի չափեր էր ընդունել, որ պետական գանձարանը դատարկվել էր: Իր բարեգործությունների և սրբակենցաղության համար արքան սրբադասվել է Հայոց եկեղեցու կողմից, և նրա վարքը տեղ է «Յայսմատուրք» ժողովածոյում³:

Նույն այս ժամանակ Միջագետքում՝ Մոսուլում և գրեթե ողջ Ջագիրայի տարածքում, իշխում էր Աբու Մուհամմադ ալ-Հասան իբն Համդանը (935-969 թթ.), ով ավելի շատ հայտնի էր *Նասիր ալ-Դաուլա* («դինաստիայի հաղթական պաշտպան») մականվամբ: Նասիր ալ-Դինի կառավարման շրջանն աչքի է ընկել գահին տիրանալու համար մերձավորների խարդավանքներով, հարևանների՝ ի մասնավորին Բուխների (կամ Բուվայհիների) պետության հետ մշտական հակամարտության և լարված հարաբերությունների բազմաթիվ դրվագներով: Ներքին քաղաքականության հարցում էլ Մոսուլի տիրակալը մեծ ժողովրդականություն չի վայելել՝ ժամանակակիցների կողմից մեղադրվելով սաստիկ հարկապահանջությամբ բնակչությանը կեղեքելու մեջ⁴:

Նասիր ալ-Դաուլայի կառավարման սկզբի մի դրվագ կապում է նրան Հայաստանի հետ: Բանն այն է, որ հոր մահից հետո ժառանգելով իշխանությունը Մոսուլում՝ նա բախվում է ընդդիմության հզոր ալիքի: Ալ-Հասանի գահակալության հետ չէին կարող հաշտվել հատկապես ալ-Հասանի հորեղբայրները՝ Նասրը և Սաիդը, որոնք իշխանության հասնելու իրենց նկրտումները փորձում էին իրագործել՝ օգտվելով Բաղդադի Արբասյանների լայն աջակցությունից: 935 թ. (հիջրայի 322 թ.) ալ-Հասանը, սպանում է իր հորեղբայրներից մեկին և ալ-Ռադի խալիֆայի (կառ. 934-940 թթ.) վեզիր Իբն Մուլկայի հետ բախումից վախենալով՝ անգամ ստիպված է լինում թողնել Մոսուլն ու փախչել Հայաս-

² Տե՛ս **Ասողիկ 2000**, էջ 755 և **Ասողիկ 2000ա**, էջ 232-233: Հմմտ. **Վարդան 1862**, էջ 89:

³ Տե՛ս **Յայսմատուրք 1834**, էջ 226: Աշոտ Ողորմածի կառավարման շրջանի մասին տե՛ս **G. Dédeyan 2014** և **Եղիազարյան 2020**:

⁴ Նասիր ալ-Դաուլայի գահակալության մասին տե՛ս **al-Samir 1970**, Տ. 202-300; **Bowen 1993**, pp. 994-995, ինչպես նաև **Canard 1951** աշխատությունը՝ նվիրված Համդանյան դինաստիայի պատմությանը:

տան⁵: Այստեղից նա պատրաստվում էր կրկին վերագրավել Մոսուլը⁶: Ըստ արաբ պատմիչների Իբն Միսքավայիի (մահ. 1030 թ.) և Իբն Չաֆիր ալ-Ազդիի (մահ. 1216 թ.)՝ ալ-Հասանն ապաստան է գտել «*ալ-Չալիսզանի երկրում*» (*bilād al-Zawazān*), որ Վասպուրական աշխարհի Անձևացիք գավառն է⁷: Իբն Չաֆիր ալ-Ազդիին էլ գրում է, թե նրան հայատակվեցին «*Հայաստանի բոլոր թագավորները, և նա վերցրեց նրա խարսջը* (իմա՝ «հարկը» -Գ.Դ.)»⁸: Նույն հեղինակը վկայում է, որ մեկ տարի անց, երբ ալ-Հասանը Բաղդադի խալիֆա ալ-Ռադիից (կառ. 934-940 թթ.) «*իշխանության տվչություն*» ստացավ և ճանաչվեց որպես Մոսուլի կառավարիչ, նա ստիպված եղավ կռվել Արգնի իշխան Ալի իբն Չաֆար ալ-Դայյամիի հետ և օգնության խնդրանքով դիմեց «*Հայոց թագավոր Իբն Թուռնիկին և այդ երկրի մյուս իշխաններին*»⁹: Ճիշտ է՝ արաբ հեղինակն ամենայն հավանականությամբ «*հայոց թագավոր*» ասելով նկատի է ունեցել ոչ թե Աբասին, այլ Տարոնի իշխաններից մեկին, այնուամենայնիվ, ինչպես երևում է, Նասիր ալ-Դաուլյան հավանաբար հետագայում էլ պահպանել է իր կապը Հայաստանի և նրա իշխանավորների հետ:

Այժմ, Հայոց թագավորության և Մոսուլի ամիրայության տիրակալների վերաբերյալ այս փոքրիկ ակնարկը հիմք ընդունելով, անցնենք հողվածի հիմնական մասին՝ ներկայացնելով արաբական աղբյուրներում արձանագրված մի արտասովոր պատմություն: Այսպես, Իբն ալ-Չաուզի պատմիչը (մահ. 1201 թ.) իր *Al-Muntazam* երկում հիշրայի 352 թվականի (963 թ.) ներքո գրում է. «*Սաբիթ իբն Սինան*¹⁰ *պատմիչն ասել է՝ Մոսուլի ինձ*

⁵ **Gotha Ms. Orient. A 1555** (Ġamāl al-Din ‘Alī [i]bn Zāfir al-Azdī, *Aḥbār al-duwal al-munqatī‘a*), էջ 81ա:

⁶ **Canard 1991**, p. 127; **նույնի՝ 1948**, p. 84.

⁷ Տե՛ս **Ibn Miskawayh 2003**, §. 185 և **Ibn Miskawayh 1921**, p. 368 Հմմտ. **al-Nuwayri 2004**, §. 73; **al-Dahabī 1992**, §. 32: «Ալ-Չալիսզան» տեղանվան մասին տե՛ս **Yāqūt 1977**, §. 158, ինչպես նաև **Յակուտ ալ-Համավի 1965**, էջ 76-77, 175:

⁸ **Gotha Ms. Orient. A 1555**, էջ 81ա:

⁹ Տե՛ս Անդ, էջ 85բ: Տե՛ս նաև **Canard 1948**, p. 84; **Եղիազարյան 2016**, էջ 39-40, ինչպես նաև **նույնի՝ 2017**, էջ 37:

¹⁰ Բաղդադցի պոլիմաթ՝ բժիշկ, Աբբասյան խալիֆաների՝ արքունի բժշկապետ, փիլիսոփա, աստղագետ, մաթեմաթիկոս Աբու ալ-Հասան Սաբիթ իբն Սինանն է (մահ. 975 թ.)՝ նշանավոր Սաբիթ իբն Կուրբայի (մահ. 901 թ.) թոռը: Ի շարս բազմաթիվ գիտությունների՝ իր «ուժերը

համար վստահելի որոշ մարդիկ պատմել են, որ 352 թվականին որոշ հայ իշխաններ (*batāriqa al-arman*) Նասիր ալ-Գաուլայի մոտ են ուղարկել երկու հայ մարդու՝ իրար կպած քաանհինգ տարեկան, ողջ-առողջ՝ նրանց հոր հետ: Մերտաճումը որովայնի հատվածում էր. նրանք երկու փոր ունեին, երկու պորտ, երկու ստամոքս: Տարբեր էին նրանց սովածության և ծարավի ժամերը, ինչպես նաև միզելու և արտաթորելու: Նրանցից յուրաքանչյուրն ուներ մեկ [առանձին] կուրծք, երկու ուս, երկու վերին վերջույթ (իմա՝ մատներից մինչև ուս), երկու ձեռք, երկու կոնքազոր, երկու սրունք, երկու ոտնայթաթ, երկու միզուկ: Նրանցից մեկը կանանց հասկում ուներ, մյուսը՝ տղամարդկանց: Եվ երբ նրանցից մեկը պետքարան էր մտնում, մյուսը [ստիպված] նրա հետ էր մտնում: Նասիր ալ-Գաուլան նրանց երկու հազար դիրհամ շնորհեց և ցանկացավ նրանց ողարկել Բաղդադ, բայց հետո մտափոխվեց»¹¹: Սաբիթ իբն Մինանի վկայությունն Իբն ալ-Չաուզիից փոխառելով՝ իրենց երկերում հաջորդ սերունդների պատմիչներից պահպանել են նաև Իբն ալ-Դավադարին (մահ. 1335 թ.), ալ-Չահաբին (մահ. 1348 թ.), Իբն Քասիրը (մահ. 1373 թ.), Իբն Թադրի Բիրդին (մահ. 1470 թ.), ալ-Սուլուտին (մահ. 1505 թ.) և այլք¹²:

փորձել է» նաև պատմագրության մեջ՝ «Շարունակություն» գրելով ալ-Տաբարիի (մահ. 923 թ.) *Tārīḥ al-rusul wa-l-mulūk* («Մարգարեների և արքաների պատմություն») երկի համար: Այդ երկը թեև կորած է, բայց հետագա պատմիչների (այդ թվում Իբն ալ-Չաուզիի) երկերում պահպանվել են նրանից կատարված բազմաթիվ մեջբերումներ:

¹¹ **Ibn al-Ġawzī 1992b**, §. 151.

¹² **Al-Bīrūnī 2001**, §. 89-90 (բնագրում *al-Arman* («հայեր») բառը մի տեղ գրչագրական սխալով *Rūm* է, այն է՝ «հռոմներ», «հույներ», մեկ այլ տեղում՝ *al-Aramiyyūn*, այն է՝ «արամեացիներ»); **Ibn al-Dawādārī 1992**, §. 409; **al-Dahabī 1989**, §. 12; **Ibn Kaṭīr 1998**, §. 262-263; **Ibn Taġrī Birdī 1992a**, §. 384; **al-Suyūṭī 2003**, §. 317:

Միջնադարյան արաբական պատմագրության մեջ համակցված երկվորյակների ծնունդի վերաբերյալ այլ հաղորդումներ էլ կարելի է գտնել: Օրինակ՝ Իբն ալ-Ասիրը հիջրայի 458 թ. (1065/1066 թ.) ներքո գրում է Բաղդադի մերձակայքի Բար ալ-Ազաջ (*Bāb al-Azaġ*) բնակավայրում (**Ibn al-Aṭīr 1987b**, §. 377), իսկ 597 թ. (1200/1201 թ.) ներքո (**Ibn al-Aṭīr 2003**, §. 276)՝ Բաղդադում սույն անոմալիայով ծնված զույգերի մասին: Գուցե այս վերջին դեպքի մասին է գրում ասորի պատմիչ Բար Հերբեռան իր «Ժամանակագրության» մեջ, թեև հաղորդումը դնում է 1205 թվականի ներքո. «*Այս տարում ունի կին Բաղդադում ծնեց մի երեխա, որը երկու գլուխ, չորս ոտք և չորս ձեռք ուներ և նույն օրն էլ մահացավ*»: Տե՛ս **Bar**

Արաբ պատմիչի նկարագրությունից պարզ է, որ խոսքը գույգ եղբայրների մասին է, որոնք ժամանակակից բժշկության մեջ «*համակցված*», երբեմն էլ «*սիամակսև*» երկվորյակներ են կոչվում (տե՛ս պատկեր 1): Սաղմնային զարգացման ընթացքում ձվաբջջի թերի բաժանմամբ և մարմնի տարբեր մասերի և օրգանների ներանումով և սերտանումով պայմանավորված՝ այսպիսի երկվորյակները լույս աշխարհ են գալիս իրար կպած: Համակցված երկվորյակներն ավելի հաճախ մահացած են ծնվում, իսկ եթե ոչ, ապա ստիպված են լինում ամբողջ կյանքում միաձուլված ապրել իրենց քրոջ կամ եղբոր հետ: Միջնադարում այսպիսի անոմալիայով ծնված երկվորյակները, չարի և չարիքի մարմնացում համարվելով, հաճախ կեղեքվում էին ամբողջ կյանքի ընթացքում կամ դատապարտվում մահվան: Կախված միաձուլման հատվածից՝ համակցված երկվորյակների մի քանի տարատեսակ են առանձնացնում: Դատելով արաբ պատմիչի նկարագրությունից՝ հայագգի եղբայրները կցված են եղել կրծքավանդակի ստորին մասի հյուսվածքներով: Արդի բժշկությունն այս տարատեսակի երկվորյակներին *քսիֆոպագուս* (xiphopagus) է անվանում: Հետաքրքիր է, որ Նասիր ալ-Դաուլան սկզբում ցանկացել է երկվորյակներին ուղարկել Բաղդադ, բայց հետո անհայտ պատճառով (գուցե՞ քաղաքական) հրաժարվել է իր մտադրությունից:

Վերոնկարագրյալը, անշուշտ, արաբական հասարակության մեջ այդօրինակ անոմալիայի առաջին դեպքը չէր: Չորօրինակ, ավանդության համաձայն՝ երկվորյակներ են եղել նաև իսլամի

Hebraeus 1932, p. 361: Որոշ արաբագիր պատմիչներ էլ (ալ-Չահաբի, ալ-Քութուբի, ալ-Մակրիզի, Իբն Թադրի Բիրդի) գրում են մամլուքյան սուլթան ալ-Մալիք ալ-Չահիր Բայբարսի (կառ. 1260-1277 թթ.) օրոք՝ հիջրալի 662 թ. (1263/1264 թ.), Եգիպտոսում եղած մի ուրիշ դեպքի մասին: Հաղորդվում է, որ սուլթան Բայբարսին ցույց տալու են բերել մեռելածին մի արարած, որը երկու գլուխ ուներ, չորս աչք, չորս ձեռք և չորս ոտք: Սուլթանը կարգադրել է անմիջապես թաղել նրան: Տե՛ս **al-Dahabī 1999**, §. 11; **al-Kutubī 1980**, §. 295; **al-Maqrīzī 1957**, §. 517; **Ibn Tagrī Birdī 1992b**, §. 187: ԺԵ-ԺՉ դարի պատմիչ Իբն Սիբատն (մահ. 1520 թ.) իր *Šidq al-ahbār* («Հաղորդումների ճշմարտություն») երկում այս դեպքը ներկայացնելուց հետո (թեև սխալմամբ դնում է 660 թ. (1261/1262 թ.) ներքո), որպես այդ անոմալիայի օրինակ, մատնանշում է այդ իրադարձությունից շուրջ 300 տարի առաջ տեղի ունեցած հայագգի երկվորյակների դեպքը: Տե՛ս **Ibn Sibāṭ 1993**, §. 407:

մարգարե Մուհամմադի մեծ պապը՝ Կուրայշ ցեղի Բանու Հաշիմ տոհմի հիմնադիր և անվանադիր Հաշիմ իբն Աբդ Մանաֆը (մահ. 497 թ.)՝ այսինքն Աբդ ալ-Մուտտալիբի (մահ. 579 թ.) հայրը, և նրա եղբայր Աբդ Շամս իբն Աբդ Մանաֆը: Պատմվում է, որ նրանցից մեկի ոտնաթաթի մի մատը սերտանած է եղել մյուսի ճակատին: Հիշյալ նկարագրությունից հետևում է, որ դեպքն անգամ այն ժամանակների համար այնքան էլ բարդ չի եղել, քանի որ ըստ ավանդության՝ նրանց հայրը՝ Աբդ Մանաֆը, կարողացել է սրով անջատել երկվորյակներին, որից հետո երկուսն էլ ապրել են: Թեև ժամանակակիցները չարագուշակել ու պարսավել են հոր արարքը՝ համոզված լինելով, որ եղբայրների միջև թափված արյունը նրանց մշտական գոտության և թշնամանքի, ինչպես նաև հետագա արյունահեղության պատճառ պիտի դառնար¹³: Այս կանխագուշակումը, ըստ էության, կատարվել է երկու եղբայրների հետնորդները հիմնել են Օմայյան և Աբբասյան տոհմերը, որոնք թշնամական վերաբերմունք ունեին իրար նկատմամբ:

Եվս մի օրինակ: Չաքարյա ալ-Կազվիին (մահ. 1283 թ.) իր կոսմոգրաֆիկ երկում՝ *‘A ‘ğā’ib al-mahlūqāt wa-ğarai’b al-mawğūddāt* («Արարչագործության հրաշալիքների և էակներից զարմանալիքների մասին») վերնագրով, Թ դարասկզում պատահած նույնատիպ մի դեպք է ներկայացնում՝ մեջբերով ականավոր կրոնաիրավագետ Աբու Աբդ Ալլահ Մուհամմադ ալ-Շաֆիին (մահ. 820 թ.)՝ ուղղափառ իսլամի չորս կրոնաիրավագիտական դպրոցներից (արաբ.՝ *մազհաբ*) մեկի՝ *շաֆիսկանության* հիմնադրին: Վերջինս պատմում է Եմենում գտնվելու ժամանակ¹⁴ անձամբ իր աչքով տեսածը. «*Երբ Եմենի երկրում մի գյուղ մտա, այնտեղ մի մարդ տեսա, որի մարմինը՝ մեջտեղից (իմա՝ գոտկառեղից) մինչև ներքև, կանացի էր, իսկ մեջտեղից մինչև վերև՝ երկու առանձին մարմիններից էր բաղկացած՝ չորս ձեռքերով, երկու գլխով, երկու դեմքով: Նրանք մշտապես իրար հետ էին, [միասին] ուտում*

¹³ **Al-Ṭabarī** 1968, թ. 252; **Ibn al-Ğawzī** 1992a, թ. 211; **Ibn al-Aṭīr** 1987a, թ. 554: Ըստ ալ-Յակուբիի (մահ. 897 թ. հետո)՝ եղբայրները կցված են եղել կրունկներով (*wa-‘aqbuhu multasiq bi-aqbihi*): Տե՛ս **al-Ya ‘qūbī** 2010, թ. 293:

¹⁴ 790-ականների վերջերից մինչև 803 թվականն ալ-Շաֆիին կառավարչական պաշտոն է զբաղեցրել Եմենի Նաջրան քաղաքում: Մրանից մակաբերելի է, որ դեպքը թվագրելի հենց այս միջակայքով:

էին, միասին խմում, վիճում իրար հետ և հաշտվում: Ես մի քանի տարի հետո էի նրանցից, և երբ կրկին վերադարձա, ինձ ասացին, որ, թող Ալլահը ողորմի մարմիններից մեկին, որը մահացել է: Նրան պարանով կապել և ձգել են, մինչև որ թուլացրել և կտրել են, և մնացել է մյուս մարմնով՝ շարունակ անցուդարձ կատարելով (կամ շրջելով, բառացի՝ գնալ-գալով-Գ.Դ.) շուկայում»¹⁵: Անշուշտ, այս նկարագրությունն արդի բժշկության չափանիշներով «վիրահատական միջամտություն» չէս կոչի: Բայց եթե անգամ երկվորյակներից մեկը կենսական որևէ օրգան չի կիսել իր զույգի հետ, և անջատումից հետո շարունակել է ապրել և օրեր անց չի մահացել, ինչպես որ սովորաբար պատահում է, սա իրավամբ պիտի համարել միջնադարյան արաբական բժշկության բացառիկ ձեռքբերումներից մեկը: Հատկանշական է, որ Կազվինիի երկի աշխարհի տարբեր գրադարաններում պահվող գրչագրերում պահպանվել են հիշյալ պատմության հիման վրա եմենցի երկվորյակներին պատկերող մանրանկարներ: Ստորև ներկայացնում ենք երկի մեզ հասանելի երեք հնագույն ձեռագրերի (Սուլեյմանիյե գրադարան, Բավարիայի ազգային գրադարան, Բրիտանական թանգարան) համապատասխան մանրանկարները (տե՛ս պատկեր 2, 3, 4, 5): Ընդ որում, Բրիտանական թանգարանի ձեռագրում կա նաև իր զույգից անջատված և բնականոն կյանքով ապրող կնոջը պատկերող մանրանկար¹⁶:

Բժշկությունը դարերի ընթացքում համակցված երկվորյակներին վիրաբուժական միջոցներով առանձնացնելու մեթոդներ է մշակել: Խնդրո առարկա ժամանակաշրջանում՝ այսինքն Ժ

¹⁵ Հրատարակված տեքստն ու երկի մեզ հասած հնագույն ձեռագրերի բնագրերը (տե՛ս հաջորդ ծանոթագրությունը) որոշ բնագրային տարբերություններ ունեն: Հատվածի թարգմանության համար հիմք ընդունեցինք հրատարակված տեքստը: Տե՛ս **al-Qazwīnī 2000**, թ. 386: Նույն պատմությունը հեղինակն արձանագրել է իր մյուս *Atār al-bilād* («Երկրների հուշարձաններ») աշխարհագրական բառարանում՝ Եմենին նվիրված հատվածում: Տե՛ս **al-Qazwīnī 1998**, թ. 386:

¹⁶ Բրիտանական թանգարանի ձեռագիրը թերևս հնագույնն է պահպանված գրչագրերից: Վերջերս Լոնդոնյան ձեռագրի արվեստագիտական արժեքը գնահատելու հիմնավոր փորձ է կատարել Ստեֆանո Կարբոնին՝ մանրամասն ուսումնասիրելով և նկարագրելով ձեռագրի պարունակած բոլոր մանրանկարները՝ համեմատական աղերսներ անցկացնելով մյուս կարեվորագույն ձեռագրերի հետ: «Եմենյան երկվորյակներին» պատկերող մանրանկարների մասին տե՛ս **Carboni 2015**, p. 346:

դարում, բժշկությունը նրանց հաջողությամբ առանձնացնելու այն միջոցները չունեի, ինչպես որ այժմ: Եմենցի երկվորյակների պատմությունը ցույց է տալիս, որ որոշ «թեթև դեպքերում» միջնադարյան բժշկապետների փորձերը երբեմն նաև հաջողությամբ էին պսակվում: Անշուշտ, այսպիսի հաջող «վիրահատությունների» մասին ասելուսներից ոգևորված և միջնադարյան արաբական բժշկության բարձր մակարդակը հաշվի առնելով է, որ հայոց իշխանները երկվորյակներին ուղարկել էին Մոսուլ՝ հավանաբար հույս ունենալով, որ վերջինիս օգնությամբ հնարավոր կլինի անջատել նրանց:

Վերադառնալով «հայագգի» երկվորյակների պատմությանը՝ նշենք, որ Իբն ալ-Չաուզին ևս մի վկայություն է ներկայացնում միջադեպի մասին՝ այս անգամ որպես սկզբնաղբյուր հիշատակելով Մուհամմադ իբն Աբի Տահիրին և Ալի իբն ալ-Մուհասսին ալ-Թանուխիին¹⁷, ով իր հերթին իր հոր հաղորդումն է վկայակոչել. «Մոսուլի մեծաթիվ մարդիկ և այլոք, որոնց նկատմամբ մենք վստահություն ունենք, մեզ պատմել են, բացի այդ տեղեկությունը մեզ ճշմարիտ էր այն հիմքով, որ դրա մասին շատ էին խոսում, այն բացահայտ էր և արժանահավատ: [Այսպես, հիջրայի] 340-ական թվականներին Մոսուլում երկու տղամարդու էին տեսել, որոնց Հայաստանի տերն էր Նասիր ալ-Դաուլային ուղարկել, որպես զարմանալիք: Նրանք մոտ 30 տարեկան էին և կպած էին մի կողով գոտկատեղից վերև՝ մինչև թևատակ: Նրանց հետ էր նրանց հայրը, ով նրանց մասին ասում էր, որ նրանք այդպես երկվորյակ են ծնվել: Նրանց սովորաբար տեսնում էին երկու շապիկ և երկու տաբատ հագած՝ յուրաքանչյուրը մեկը, մյուսից առանձին հագուստներով, որովհետև ուսերի և ձեռքերի կպած լինելու պատճառով նրանց հա-

¹⁷ Խոսքն *adab*-ի գրականության բաղդադցի հեղինակ, դատավոր, պետական գրագիր Աբու Ալի ալ-Մուհասսին իբն Ալի ալ-Թանուխիի (մահ. 994 թթ.) մասին է, ով ամենաշատը հայտնի է տարբեր թեմաներով իր հավաքած գվարճաբանությունների ժողովածուներով: Նրա երկերից *Niṣwār al-muḥāḍara*-ն, օրինակ, բարձրաստիճան պաշտոնյաների հետ կապված պատմությունների և գվարճախոսությունների հավաքածու է: Ըստ այս աշխատության խմբագիր Աբբուր ալ-Շալջիի՝ հայ երկվորյակների վերաբերյալ պատմությունը հավանաբար ներառված է եղել երկի մեզ չհասած հատորներից մեկում, ուստի նա հրատարակել է այն՝ երկի իր խմբագրած չորրորդ հատորի էջերում՝ փոխառելով Իբն ալ-Չաուզիի երկից: Տե՛ս **al-Tanūḥī 1995**, ՝. 240-241: Ալ-Թանուխիի մասին կենսագրական ակնարկ տե՛ս նաև **Fahndrich 2000**, pp. 192-193:

մար բարդ էր քայլերը: Նրանցից յուրաքանչյուրը սերտասնման կողմից իր եղբորը հարող ձեռքը նրա մեջքի հետևն էր անցկացնում, և այդպես քայլում էին: Երբ երկուսով ձի էին հեծնում, անհնար էր, որ մեկն իջնի առանց նրա հետ մյուսի իջնելու: Երբ նրանցից մեկը ցանկանում էր կարիքների հոգալ, մյուսն էլ նրա հետ էր գնում, նույնիսկ երբ դրա անհրաժեշտությունը չունէր: Նրանց հայրը պատմել էր, որ երբ ծնվել են, ցանկացել է բաժանել նրանց, բայց նրան ասել են, որ նրանք կմահանան, քանի որ նրանց կցունը կողքից է, և անհնար է, որ կենդանի մնան, ուստի այդպես էլ թողել է, և ողջ-առողջ են մնացել: Նասիր ալ-Դաուլան նրանց շնորհների է արժանացրել, պատվո հագուստներ հագրել: Մոսուլցիները նրա մոտ էին գալիս, զարմանում նրանցով, նվիրատվություններ անում նրանց:

Աբու Մուհամմադն ասել է. «Ոմանք ինձ ասել են, որ նրանք իրենց երկիրն են վերադարձել, նրանցից մեկը հիվանդացել է և մահացել, իսկ մյուսը մի քանի օր մնացել է, մինչև որ նրա եղբայրը սկսել է փոել, իսկ առողջ եղբայրը [պարզ է, որ անկարող է եղել] անջատվել: Եվ ոչ հայրն է կարողացել թաղել մահացածին, մինչև որ առողջը հիվանդացել է վշտից և զարշահտոից և նույնպես մահացել, որից հետո միասին թաղվել են: Ասում են՝ Նասիր ալ-Դաուլան նրանց համար հավաքել է բժիշկներին և ասել. «Արդո՞ք հնար կա նրանց անջատելու: Բժիշկները նրանց հարցրել են սովածության մասին, թե արդո՞ք միաժամանակ են սովածանում: [Մեկը] պատասխանել է, որ երբ իրենցից մեկը սովածանում է, որոշ ժամանակ հետո մյուսն է սովածանում, երբ իրենցից մեկը դեղորայք է ընդունում փորլուծության համար, այն մեկ ժամ անց մյուսի վրա էլ է ազդում: Երբ մեզանից մեկը կարիքների հոգալու անհրաժեշտություն է ունենում, մյուսը չի ունենում, բայց մեկ ժամ հետո նա էլ է նույնը ցանկանում: Հետազոտության ենթարկեցին և պարզեցին, որ նրանք ունեն մեկ որովայն, մեկ պորտ, մեկ ստամոքս, մեկ լյարդ, մեկ փայծախ, և կցման պատճառով նրանք գրկված էին կողոսկրերից: Նրանք իմացան, որ բաժանելու դեպքում, կմահանան: Իմացան, որ նրանք երկու սեռական օրգան ունեն և չորս ամորձի: Եվ երբ նրանց միջև տարաձայնություն էր լինում, նրանք լուրջ վեճ էին ունենում, մինչև իսկ նրանցից մեկը երդվում էր մյուսի հետ օրերով չխոսել, որից հետո կրկին հաշտվում էին»¹⁸:

¹⁸ Ibn al-Ğawzī 1992b, p. 151-152. Հայ երկվորյակների վերաբերյալ այս պատմությանը վերջերս անդրադարձել է նաև ալ-Թ-անուխիի մատենա-

Այս երկրորդ վկայության մեջ բաղդադցի պատմիչի կողմից «Հայաստանի տեր» հորջորջված ինքնակալի նույնականացման ամենահավանական ու ամենաձանրակշիռ թեկնածուն մեր կարծիքով հայոց Աշոտ Ողորմած արքան է¹⁹, որն իր գահակալման գոնե 953-966 թթ. ընդգրկող շրջանում, հաջողությամբ ապահովեց Բագրատունյաց պետության միասնականությունն ու ամբողջականությունը և անգամ որոշ տարածքային ձեռքբերումներ ունեցավ՝ արաբներից (Համդանյաններից) ազատագրելով հարավարևմտյան Հայաստանի որոշ շրջաններ: «*Ղեռ Մուկրտաղիր խալիֆի ժամանակ (908-932 թթ.)*,- գրում է Ա. Տեր-Ղևոնդյանն Աշոտ Ողորմածի մասին,- *Աշոտ Երկայթի ստացած Շահանշահ տիտղոսը նրա օրոք որոշ ինաստ ստացավ*»: Հայաստանի մյուս իշխաններն ու թագավորները (օրինակ՝ Վասպուրականի Արծրունի տերերը) «*րնդունում էին Բագրատունի թագավորի ընդհանուր գերիշխանությունը, որն իրավամբ համարվում էր Շահան Շահ Հայոց Մեծաց*»²⁰:

Ինչպես տեսնում ենք, Բագրատունյաց Հայաստանից ժամանած հայազգի երկվորյակների պատմությունը ժամանակակիցների և արաբ պատմիչների կողմից լայն արձագանքի է արժանացել՝ ավելին քան եմենցի երկվորյակների պատմությունը, որի մասին միջնադարյան արաբական մատենագրության մեջ եզակի հիշատակումներ են պահպանվել: Հատկանշական է, որ «միջազգային իրարանցում» հարուցած նմանատիպ մի դեպք էլ գրեթե նույն ժամանակ տեղի է ունեցել նաև բյուզանդական իրականության մեջ: Բյուզանդական մի շարք աղբյուրներ վկայում են, որ Ժ դարի 40-50-ականներին Կապադոկիայից Կոստանդնուպոլիս են տեղափոխվել և այնտեղ առժամանակ ապրել են նույնատիպ երկվորյակներ, որոնք, որքան էլ տարօրինակ է, կրկին ազգությամբ հայ են եղել:

1984 թ. Գ. Պենտոգալոսը և Ջ. Լասկարատոսն առանձին հոդված են նվիրել այս հայ երկվորյակների դեգերումների մասին

գրական ժառանգության հետազոտող Ջուլիա Բրեյը: Տե՛ս **Bray 2006**, pp. 215-249 (մասնավորապես՝ pp. 221-223):

¹⁹ Հազիվ թե «Հայաստանի տիրոջ» ավելի հավանական թեկնածու համարվի 963 թվականին Վասպուրականի թագավորության գահը գրադեցնող Աբուսահլ-Համագասպ Արծրունին (959-969 թթ.):

²⁰ **Ա. Տեր-Ղևոնդյան 1965**, էջ 170: Բագրատունի թագավորների կրած տիտղոսների մասին մանրամասն տե՛ս **նույնի՝ 1979**, էջ 73-80:

բյուզանդական պատմիչներ Սկիլիցեսի և Թեոփանեսի Շարունակողի հայտնած տեղեկությունների լուսաբանմանը: «Այդ օրերին մի հրեշավոր արարած եկավ կայսերական քաղաք Հայաստանից. համակցված երկվորյակների գույգ՝ մեկ ընդհանուր պորտով, բայց նրանք դուրս քշվեցին քաղաքից որպես չարագուշակներ: Հետո նրանք վերադարձան Կոստանդին [VII]-ի²¹ թագավորության օրոք: Երբ երկվորյակներից մեկը մահացավ, որոշ արհեստավարժ բժիշկներ փորձեցին կտրել մահացած մասը և հաջողության հասան, բայց կենդանի երկվորյակն ընդամենը մի կտրն միջոց սպրեց և հետո ինքն էլ մահացավ»²²: Հատկանշական է, որ Սկիլիցեսի պատմության այժմ Իսպանիայի ազգային գրադարանի ձեռագրատան թիվ MS Graecus Vitr. 26-2 ձեռագրում պահպանվել են հայ երկվորյակներին և նրանց վիրահատությունը ներկայացնող մանրանկարներ (տե՛ս պատկեր 6, 7, 8): Սա վկայում է այն մեծ հետաքրքրության, որ այս դեպքը հարուցել է բյուզանդական հասարակության մեջ:

Դեպքը հար և նման նկարագրությամբ է ներկայացնում նաև Թեոփանեսի Խոստովանողի երկի անանուն շարունակողը՝ մանրամասնելով միայն, որ երկվորյակներից մեկը վիրահատությունից հետո երեք օր է ապրել²³:

Հիշյալ հոդվածում ներկայացված հաղորդումներին կարող ենք ավելացնել Լևոն Սարկավազ անունով ևս մի ժամանակակից բյուզանդացի տարեգրի վկայությունը, ով, ինչպես գրում է, ինքն անձամբ իր աչքով քանիցս տեսել է նրանց. «Այս ժամանակ արու երկվորյակները, ուլքեր եկել էին Կասպաղովկիայի շրջանից, թափառում էին Հռոմեական Կայսրության բազմաթիվ շրջաններում: Ես՝ այս տողերի հեղինակս, հաճախ եմ տեսել նրանց Ասիայում՝ հրեշավոր և յուրահատուկ մի զարմանալիք: Նրանց մարմնի տարբեր մասերն ամբողջական էին և լրիվ, բայց նրանց կողերը կպած էին իրար՝ թևատակից մինչև կոնքազդր՝ միացնելով նրանց մարմինները, միաձուլելով իրար: Իրենց իրար հարող ձեռքերով նրանք գրկում էին մեկը մյուսի վիզը, մյուս երկուսով ձեռնափայտ էին բռնում, որով օգնում էին իրենց քայլելիս: Նրանք 30 տարեկան էին, ֆիզիկապես լավ զարգացած էին, թվում էին երիտասարդ և առույգ: Երկար ճանապարհորդությունների ժամանակ նրանք ջորի էին հեծնում՝ նստելով

²¹ Կոստանդին Է Ծիրանածին (կառ. 945-959 թթ.):

²² John Skylitzes 2010, p. 224.

²³ Թեոփանեսի Շարունակող 1990, էջ 255-256:

կողք-կողքի՝ կանացի ձևով: Նրանք աննկարագրելի քաղցր և բարի խառնվածք ունեին»²⁴:

Ամփոփելով վերոգրյալը՝ նշենք, որ բյուզանդացի բժիշկները, փաստորեն, համարձակություն էին ունեցել հաջողությամբ վիրահատելու գույզին: Ավելին, առողջ եղբայրն ապրել է երեք օր և հետո միայն մահացել է: Այսպիսի արդյունքը տպավորիչ է՝ անգամ արդի բժշկության գիտատեխնիկական զարգացման մակարդակը հաշվի առնելով: Մարդկությունն իր պատմության հետագա դարերին հիշյալ անոմալիայի այլ դեպքեր էլ է տեսել և ժամանակի ընթացքում այսպես ծնված երկվորյակների անջատման վիրաբուժական եղանակներ մշակել: Թեև երկվորյակներից մեկի մահացության հավանականությունը մեր օրերում էլ շարունակում է բավականին բարձր լինել, այնուամենայնիվ, հիմա կարելի է հաճախ լսել հրաշքով ավարտված այդօրինակ վիրաբուժական միջամտությունների և վիրահատությունից հետո լիարժեք կյանքով ապրող համակցված երկվորյակների մասին. մի բան, որն իրագործելու հնարավորությունը միջնադարյան քաղաքակրթությունը չուներ: Համակցված երկվորյակների տարանջատման բժշկագիտությանը հայտնի առաջին հաջող վիրահատությունը տեղի է ունեցել Կոստանդնուպոլսի, Եմենի և Մոսուլի դեպքերից շուրջ ութ-ինը դար անց՝ 1689 թ., շվեյցարացի վիրաբույժ Յոհաննես Փատիոյի կողմից (1649-1691 թթ.)²⁵:

THE ARMENIAN “MONSTROUS TWINS” IN MOSUL: EVIDENCE FROM ARABIC SOURCES

Gagik Danielyan

SUMMARY

The reign of Ašot III (953-978) of Bagratid Armenia was marked by peace, political stability and economic prosperity. The king was renowned for his pious and benevolent attitude towards the poor and the disabled. For his charitable deeds, he earned the nickname “merciful” and after his death was even canonized by the Armenian Church. Ibn al-Ğawzī’s *Al-Muntazam fī tārīh al-mulūk wa-l-umam* contains an interesting report of two conjoined men, sent in 352 A.H./963 A.D by the “lord of Armenia”, who most probably was Ašot

²⁴ Leo the Deacon 2005, p. 207.

²⁵ Van der Weiden 2004, pp. 125–127; Kompanje 2004, pp. 537-541.

III, to Nāṣir al-Dawla al-Hamdānī, the governor of Mosul and al-Ġazīra. It comes clear from the further description that the historian is talking about conjoined twins. Given the high level of the medieval Arabic medicine, the Armenian authorities sent the twins to Mosul, probably hoping that it would be possible to separate them. Other accounts of conjoined twins can be found in the medieval Arabic historiography.

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԶԵՆԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Gotha MS. Orient. A 1555 - Forschungsbibliothek Gotha der Universität Erfurt, Ms. Orient. A 1555;

MS Graecus Vitr. 26-2 - Biblioteca nacional de España (Madrid), MS Graecus Vitr. 26-2;

Yeni Cami 813 - Süleymaniye Kütüphanesi (Istanbul), Yeni Cami 813;

MS. Or. 14140 - British Library (London), MS. Or. 14140;

Cod. Arab 464 - Bayerische Staatsbibliothek (München), Cod. Arab 464;

ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Bar Hebraeus 1932 - *The Chronography of Gregory Abū'l-Faraj (Bar Hebraeus), the son of Aaron, the Hebrew Physician, the first part of his Political History of the World*, vol. I, trans. E.A. Wallis Budge, Oxford University Press, London, 1932 (reprinted by Gorgias Press, 2003);

Al-Birūnī 2001 - Al-Birūnī, Abū al-Rayḥān Muḥammad [i]bn Aḥmad, *Al-Atār al-bāqiya min al-qurūn al-ḥāliya*, taḥqīq wa-ta'liq Parwīz Azkā'i, Mīrāt Maktūb, Tehrān, 2001;

Al-Dahabī 1989 - Al-Dahabī, Šams al-Dīn Abū 'Abd Allāh Muḥammad [i]bn Aḥmad [i]bn 'Utmān, *Tārīḥ al-Islām wa-wafayāt al-mašāhīr wa-l-a'lām*, ǧ. 26, bi-taḥqīq 'Umar 'Abd al-Salām Tadmūrī, Dār al-Kitāb al-'arabī, Bayrūt, 1989;

Al-Dahabī 1992 - Al-Dahabī, Šams al-Dīn Abū 'Abd Allāh Muḥammad [i]bn Aḥmad [i]bn 'Utmān, *Tārīḥ al-Islām wa-wafayāt al-*

- mašāhīr wa-l-a'lām*, ğ. 24, bi-tahqīq 'Umar 'Abd al-Salām Tadmūrī, Dār al-Kitāb al-'arabī, Bayrūt, 1992;
- Al-Dahabī 1999** - Al-Dahabī, Šams al-Dīn Abū 'Abd Allāh Muḥammad [i]bn Aḥmad [i]bn 'Utmān, *Tārīḥ al-Islām wa-wafayāt al-mašāhīr wa-l-a'lām*, ğ. 49, bi-tahqīq 'Umar 'Abd al-Salām Tadmūrī, Dār al-Kitāb al-'arabī, Bayrūt, 1999;
- Ibn al-Aṭīr 1987a** - Ibn al-Aṭīr, 'Izz al-Dīn Abū al-Ḥasan 'Alī [i]bn Muḥammad, *Al-Kāmil fī al-tarīḥ*, ğ. 1, bi-tahqīq Abī al-Fidā 'Abd Allāh al-Qādī, Bayrūt, 1987;
- Ibn al-Aṭīr 1987b** - Ibn al-Aṭīr, 'Izz al-Dīn Abū al-Ḥasan 'Alī [i]bn Muḥammad, *Al-Kāmil fī al-tarīḥ*, ğ. 8, bi-tahqīq Muḥammad Yūsuf al-Daqqāq, Dār al-Kutub al-'ilmiyya, Bayrūt, 1987;
- Ibn al-Aṭīr 2003** - Ibn al-Aṭīr, 'Izz al-Dīn Abū al-Ḥasan 'Alī [i]bn Muḥammad, *Al-Kāmil fī al-tarīḥ*, ğ. 10, bi-tahqīq Muḥammad Yūsuf al-Daqqāq, Dār al-Kutub al-'ilmiyya, Bayrūt, 2003;
- Ibn al-Dawādārī 1992** - Ibn al-Dawādārī, Abū Bakr [i]bn 'Abd Allāh, *Kanz al-durar wa-ġāmi' al-ġurar*, ğ. 5, ū. 409, Bayrūt (Franz Steiner Verlag, Wiesbaden), 1992;
- Ibn al-Ġawzī 1992a** - Ibn al-Ġawzī, Abū al-Faraġ 'Abd al-Rahmān [i]bn 'Alī [i]bn Muḥammad, *Al-Muntaẓam fī tārīḥ al-mulūk wa-l-umam*, ğ. 2, bi-tahqīq Muḥammad 'Abd al-Qādir 'Aṭā wa-Muštafā 'Abd al-Qādir 'Aṭā, Dār al-Kutub al-'ilmiyya, Bayrūt, 1992;
- Ibn al-Ġawzī 1992b** - Ibn al-Ġawzī, Abū al-Faraġ 'Abd al-Rahmān [i]bn 'Alī [i]bn Muḥammad, *Al-Muntaẓam fī tārīḥ al-mulūk wa-l-umam*, ğ. 14, tahqīq Muḥammad 'Abd al-Qādir 'Aṭā wa-Muštafā 'Abd al-Qādir 'Aṭā, Dār al-Kutub al-'ilmiyya, Bayrūt, 1992;
- Ibn Kaṭīr 1998** - Ibn Kaṭīr, Abū al-Fidā 'Abd Allāh, *Al-Bidāya wa-l-nihāya*, ğ. 15, bi-tahqīq 'Abd Allāh ibn 'Abd al-Muḥsīn al-Turkī, Dār Haġar, al-Qāhira, 1998;
- Al-Kutubī 1980** - Al-Kutubī, Muḥammad ibn Šākir, *Uyūn al-Tawārīḥ*, bi-tahqīq Fayšal al-Sāmir and Nabīlah 'Abd al-Mun'im Dāwūd, ğ. 20, Dār al-Rašīd li-l-našr, Baġdād, 1980;
- Ibn Miskawayh 1921** - *The Eclipse of the Abbasid Caliphate. Original Chronicles of the Fourth Islamic Century*, vol. 4, ed., trans., and elucidated by H.F. Amedroz and D.S. Margoliouth, Basil Blackwell, Oxford, 1921, p. 368;
- Ibn Miskawayh 2003** - Ibn Miskawayh, Abū 'Alī Aḥmad [i]bn Muḥammad [i]bn Ya'qūb, *Taġārib al-umam wa-ta'āqub al-*

- himam*, ǧ. 5, bi-taḥqıq Sayyid Kasrawı Ḥasan, Dār al-Kutub al-‘ilmiyya, Bayrūt, 2003;
- Ibn Sibāt 1993** - Ibn Sibāt, Ḥamza [i]bn Aḥmad [i]bn ‘Umar, *Şidq al-aḥbār*, bi-taḥqıq ‘Umar ‘Abd al-Salām Tadmūrī, Ṭarābulus, 1993;
- Ibn Taǧrī Birdī 1992a** - Ibn Taǧrī Birdī, Abū al-Maḥāsin Yūsuf, *Al-Nuǧūm al-zāhira fī mulūk Mişr wa-l-Qāhira*, ǧ. 3, bi-taḥqıq Muḥammad Ḥusayn Şams al-Dīn, Dār al-Kutub al-‘ilmiyya, Bayrūt, 1992;
- Ibn Taǧrī Birdī 1992b** - Ibn Taǧrī Birdī, Abū al-Maḥāsin Yūsuf, *Al-Nuǧūm al-zāhira fī mulūk Mişr wa-l-Qāhira*, ǧ. 7, bi-taḥqıq Muḥammad Ḥusayn Şams al-Dīn, Dār al-Kutub al-‘ilmiyya, Bayrūt, 1992;
- John Skylitzes 2010** - *John Skylitzes, A Synopsis of Byzantine History 811-1057*, tr. by J. Wortley, with introduction by J.-Cl. Cheynet and B. Flusin and notes by J.-Cl. Cheynet, Cambridge, Cambridge University Press, 2010;
- Leo the Deacon 2005** - *The History of Leo the Deacon: Byzantine Military Expansion in the Tenth Century*, Introduction, translation, and annotations by A.-M. Talbot and D.F. Sullivan, Dumbarton Oaks, Washington, 2005;
- Al-Maqrīzī 1957** - Al-Maqrīzī, Taqī al-Dīn Aḥmad, *Kitāb al-sulūk li-ma’rifat duwal al-mulūk*, ǧ. 1.2, bi-taḥqıq Muḥammad Muştafā Ziyāda, Maṭba‘at al-ta’līf wa-l-tarǧama wa-l-naşr, al-Qāhira, 1957;
- Al-Nuwayrī 2004** - Al-Nuwayrī, Şihāb al-Dīn Aḥmad [i]bn ‘Abd al-Waḥḥāb, *Nihāyat al-arab fī funūn al-adab*, ǧ. 23, Dār al-Kutub al-‘ilmiyya, Bayrūt, 2004;
- Al-Qazwīnī 1998** - Al-Qazwīnī, Abū Yaḥyā Zakaryā [i]bn Muḥammad [i]bn Maḥmūd, *Aṭār al-bilād wa-aḥbār al-‘ibād*, Dār Şādir, Bayrūt, 1998;
- Al-Qazwīnī 2000** - Al-Qazwīnī, Abū Yaḥyā Zakaryā [i]bn Muḥammad [i]bn Maḥmūd, *‘Aǧā’ib al-maḥlūqāt wa-l-ḥaywanāt wa-ǧarā’ib al-mawǧūdāt*, Bayrūt, 2000;
- Al-Suyūfī 2003** - Al-Suyūfī, Ğalāl al-Dīn ‘Abd al-Raḥmān [i]bn Abī Bakr [i]bn Muḥammad, *Tārīḥ al-ḥulafā’*, Dār Ibn Ḥazm, Bayrūt, 2003;
- Al-Ṭabarī 1968** - Al-Ṭabarī, Abū Ğa‘far Muḥammad [i]bn Ğarīr [i]bn Yazīd, *Tārīḥ al-rusul wa-l-mulūk*, ǧ. 2, bi-taḥqıq Muḥammad Abū al-Faḍl Ibrāhīm, Dār al-Ma‘ārif bi-Mişr, 1968;

- Al-Tanūhī 1995** - Al-Qāḍī Abī ‘Alī al-Muḥassin [i]bn ‘Alī al-Tanūhī, *Niṣwār al-muḥāḍara wa-aḥbār al-muzākara*, bi-taḥqīq ‘Abbūr al-Šalḡī, Dār Šādīr, Bayrūt, 1995;
- Al-Ya‘qūbī** - Al-Ya‘qūbī, Aḥmad ibn Abū Ya‘qūb ibn Ğā‘far [i]bn Wahb [i]bn Wādih, *Tārīḥ al-Ya‘qūbī*, ǧ. 1, bi-taḥqīq ‘Abd al-Amīr Muhannā, Bayrūt, 2010;
- Yāqūt 1977** - Yāqūt, Šihāb al-Dīn Abū ‘Abd Allāh al-Ḥamawī al-Rūmī, *Mu‘ǧam al-buldān*, ǧ. 3, Dār Šādīr, Bayrūt, 1977;
- Ասողիկ 2000** - Ստեփանոս Տարունեցի Ասողիկ, *Պատմությունն տիեզերական*, բնագիրը կազմեց՝ Գ. Մանուկեան, *Մատենագիրք Հայոց*, հտ. ԺԵ., Ժ դար, Պատմագրություն (երկու գրքով, գիրք Բ), Անթիլիաս, 2010, էջ 617-829;
- Ասողիկ 2000ա** - Ստեփանոս Ասողիկ Տարունեցի, *Տիեզերական պատմություն*, թարգ., առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վ.Հ. Վարդանյանի, Երևանի համալսարանի. հրատ., Երևան, 2000;
- Թեոփանեսի Ճարունակող 1990** - *Թեոփանեսի Ճարունակող*, թարգ. բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Հ. Բարթիկյանի (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 15, Բյուզանդական աղբյուրներ Ե), ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1990;
- Յայսմաուրք 1834** - *Յայսմաուրք ըստ կարգի ընտրելագոյն օրինակի Յասմաուրաց Տէր Իսրայէլի*, Տպ. Պ. Արապեան Ապուլեիսցոյ, Կոստանդնուպօլիս, 1834;
- Վարդան 1862** - *Հայկարումն պատմութեան Վարդանայ վարդապետի*, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1862:

ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Bowen 1993** - H. Bowen, “Nāṣir al-Dawla”, in *The Encyclopaedia of Islam, New Edition*, vol. VII (MIF-NAZ), E.J. Brill, Leiden-New York, 1993, pp. 994-995;
- Bray 2006** - J. Bray, “The physical world and the writer’s eye. Al-Tanūkhī and medicine”, in *Writing and representation in Medieval Islam. Muslim horizons*, ed. by J. Bray, Routledge, London-New York, 2006, pp. 215-250;
- Canard 1948** – M. Canard, “Les H’amdanides et l’Arménie”, *Annales de l’Institut d’Etudes orientales*, Tome VII, Alger, 1948;
- Canard 1951** - M. Canard, *Histoire de la dynastie des H’amdanides de Jazira et de Syrie I*, Alger, 1951;

Հայ իրանագետներից այս ոլորտում հիմնարար աշխատանք է կատարել Հ. Դ. Փափազյանը: Երկար տարիներ աշխատելով Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում՝ նա ձեռնամուխ է լինում այնտեղ պահվող արաբատառ վավերագրերի ուսումնասիրման ու հրատարակման գործին:

Հ. Փափազյանի աշխատանքի արգասիքն են պարսկերեն, օսմաներեն և արաբերեն աղբյուրների, հատկապես վավերագրերի վրա հիմնված գիտական հետազոտությունները հայոց պատմության ու իրանագիտական տարաբնույթ հարցերի շուրջ²⁰, ինչպես նաև պարսից վավերագրերի եռալեզու (հայերեն, ռուսերեն, պարսկերեն) գիտական հրատարակությունը՝ «Մատենադարանի պարսկերեն վավերագրերի» երեք պրակներով: Այս շարքի առաջին պրակի կազմության ընթացքում մշակվում են պարսկերեն վավերագրերի ուսումնասիրության և հրատարակության այն հիմնական սկզբունքներն ու աշխատանքի մեթոդ-

¹⁶ **Տեր Հովհաննիսյան 1880**, էջ 145:

¹⁷ **Բաֆֆի 1964**, էջ 367:

¹⁸ **Աճառյան 1927**:

¹⁹ **Петрушевский 1949**, էջ 8-10, 360-364:

²⁰ **Փափազյան 1973**:

ները, որոնք այնուհետև ևս կիրառվում են հետագա պրակների վրա աշխատելիս: Խորհրդային Միության ժամանակաշրջանում գիտական հրատարակչությունները ուղղորդվում էին ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի կողմից: Նույն ակադեմիայի Պատմության ինստիտուտի նախաձեռնությամբ 1954 թ. մշակվել էր վավերագրերի հրատարակչության կանոնների նախագիծ, որն էլ ըստ երևույթին ուղեցույց էր հանդիսացել Հ. Փափազյանի կողմից Մատենադարանի պարսկերեն վավերագրերի շարքի հրատարակման պատրաստելու համար²¹:

Պարսկերեն վավերագրերի ուսումնասիրության մեթոդիկան մշակելիս Հ. Փափազյանը հաշվի էր առել և օգտագործել Խորհրդային արևելագետների կողմից պարսկերեն վավերագրերի հրատարակչության արդեն առկա փորձը և մեթոդները: Մասնավորապես, դեռ 1936 և 1937 թթ. հրատարակվել էին Յուրի Ն. Մառի խմբագրությամբ և նրա հիշատակին նվիրված Նախիջևանի և Ղուբայի խաների պարսկերեն վավերագրերի ժողովածուները: Այդ ժողովածուներից առաջինում, որ հրատարակվել էր Կ. Սմիրնովի և Ջ. Գաիրովի աշխատասիրությամբ²², 24 պարսկերեն վավերագրերը ներկայացվում էին հետևյալ կերպ. նախ ֆոտոպատճեններ էր, ապա պարսկերեն տեքստը, այնուհետև բովանդակության ռուսերեն մեկնաբանությունը և թարգմանությունը: Մյուս ժողովածուի մեջ, որ հրատարակվել էր Ֆ. Ռոստոպչինի թարգմանությամբ, բացակայում էին ներկայացվող 29 պարսկերեն վավերագրերի ֆոտոպատճենները և մեկնաբանությունները, բայց առկա էր տերմինաբանական բառարան, որը չկար նախորդ ժողովածուի մեջ²³:

Հ. Փափազյանը քաջաձանոթ էր նաև Մ. Խուբայի և Վ. Փուրթուրիձեի աշխատասիրությամբ 1949 և 1955 թթ. հրատարակված պարսկերեն վավերագրերի ժողովածուներին, որոնցից վերջինը նրա գնահատմամբ «կարևոր ավանդ էր պարսկերեն արխիվային վավերագրերի ուսումնասիրության և հրատարակչության գործում»²⁴: Նույն ժամանակահատվածում Խորհրդային վավերագիտությունը որոշակի քայլեր էր կատարել նաև Միջին Ասիայի հանրապետությունների պարսկերեն և օսմաներեն

²¹ Փափազյան 1959, 72:

²² Смирнов, Гаиров 1936:

²³ Ростопчин 1937:

²⁴ Փափազյան 1956, 18:

արխիվային հավաքածուների նմուշների ուսումնասիրության ուղղությամբ: 1950-ականներին արդեն տպագրվել էին Պ. Իվանովի և Օ. Չեխովիչի աշխատասիրությամբ այդ հավաքածուներից բազմաթիվ կալվածագրեր և այլ շարիաթական նոտարական փաստաթղթեր²⁵:

Պարսկերեն փաստաթղթերի ուսումնասիրության և ներկայացման Հ. Փափազյանի որդեգրած սկզբունքները ներառում են դրանց ձեռագրագիտական նկարագրությունը, բովանդակային տվյալների համակողմանի աղբյուրագիտական քննությունը և ներկայացումը ժամանակաշրջանի իրողությունների համատեքստում: Ձեռագրագիտական նկարագրությունը բովանդակում է տեղեկություններ արխիվային գրանցման, բնագրային հատկանիշների (բնագիր, թե պատճեն), չափսերի, գրչության վերաբերյալ, որոնք հաջորդում են յուրաքանչյուր փաստաթղթի հերթական համարի տակ տրված անոտացիային: Լրացուցիչ տվյալները վավերագրի պատմության, եթե պատճեն է, դրա կազմության ժամանակի և նոտարական լինելու կամ չլինելու, վիճակի և նորոգման, վավերագրերի ձեռքբերման հետ կապված անձանց ու իրադարձությունների, հայերեն գրությունների և այլ կարևոր մանրամասների վերաբերյալ գետեղված են յուրաքանչյուր վավերագրին հատկացված առանձին ծանոթագրության մեջ:

Հարկ է նշել, որ Հ. Փափազյանի կողմից յուրաքանչյուր փաստաթուղթ ենթարկվել է մանրակրկիտ ձեռագրագիտական և աղբյուրագիտական հետազոտության՝ պարզելու համար դրանց հրապարակման հանգամանքները և պատմահամեմատական վերլուծությամբ արժևորելու համար փաստաթղթի հաղորդումները:

Մատենադարանի պարսկերեն հրովարտակների առաջին պրակը լույս է ընծայվել 1956թ. և ընդգրկում է 1449-1594 թթ. 23 հրովարտակ: Պրակի առաջարանում արժևորվում են ներկայացվող վավերագրերը որպես տվյալ ժամանակաշրջանի Իրանի ու Հայաստանի սոցիալ-տնտեսական պատմության սկզբնաղբյուրներ, պարզաբանվում են դրանցում կիրառվող տերմինոլոգիայի, տեղանունների և եկեղեցական անունների, դրանց հայերեն տառադարձման առանձնահատկությունները:

²⁵ **Иванов 1954, Чехович 1954.**

Փաստաթղթերի բնագրերը թարգմանված են հայերեն ու ռուսերեն, ընդ որում Հ. Փափազյանը ջանացել է հնարավորինս «հարազատ մնալ բնագրին» և «պահպանել արտահայտչական այնպիսի առանձնահատկություններ, որոնք հատուկ են այդ կարգի վավերագրերին, արտահայտում են ժամանակի ոգին և բնորոշ են դիվանական գրագրության ոճին»²⁶:

Պարսկերեն փաստաթղթերի ուսումնասիրության և ներկայացման նույն սկզբունքներն ու մեթոդիկան է կիրառում Հ. Փափազյանը այդ շարքի հերթական հաջորդ պրակներում:

Ժամանակագրորեն շարունակելով հրովարտակների շարքը, նա երկրորդ պրակում ուսումնասիրում և հրատարակում է հետագա՝ 1601-1650 թվականների Սեֆյան շահերի ու տեղական կառավարիչների 43 հրովարտակ: Գրքի առաջաբանում հեղինակը լայն աղբյուրագիտական հենքի վրա ընդարձակ անդրադարձ է կատարում ԺԷ դարի Արևելյան Հայաստանի պատմությանը, առանձնապես կանգ առնելով պրակում ընդգրկված վավերագրերի հետ կապվող պատմական իրադարձությունների և իրողությունների վրա²⁷: Չնայած խորհրդային շրջանում կրոնական հաստատությունների նկատմամբ գիտնականներին պարտադրվող կողմնակալ վերաբերմունքին և աթեիստական մոտեցմանը՝ Փափազյանին հաջողվել է քննադատաբար, սակայն առողջ մոտեցմամբ լուսաբանել ներկայացվող հրովարտակների հետ կապվող և Հայոց եկեղեցուն վերաբերող կարևոր հարցերը, պարզաբանել պատմական փաստերն ու տեղեկությունները: Համակողմանի ուսումնասիրվում են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ու Աղվանից կաթողիկոսությունների, Տաթևի, Ագուլիսի Ս. Թովմա Առաքյալի և Դարաշամբի Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքերի հողատիրության զանազան հարցեր:

1968 թ. Հ. Փափազյանի ջանքերով Մատենադարանի պարսկերեն վավերագրերի շարքի հերթական պրակում հրատարակվում են 1305-1592թ. 27 կալվածագիր²⁸: Այս պրակի կառուցվածքը մի փոքր տարբերվում է նախորդ պրակներից միայն նրանով, որ պարսկերեն վավերագրերի ֆոտոպատճենները դրված են հաջորդաբար գրքի վերջում և ոչ պարսկերեն բնագրերի կողքին: Սակայն վավերագրերի ուսումնասիրման ու ներկայացման

²⁶ Փափազյան 1956, 38:

²⁷ Փափազյան 1959, 7-70:

²⁸ Փափազյան 1968:

սկզբունքները անփոփոխ են, իսկ ընդարձակ առաջաբանում վավերագրերի պատմագիտական արժեքի և աղբյուրագիտական քննությունից բացի զգալի տեղ է հատկացված դրանց որպես դիվանական գրագրության նմուշների լեզվաոճական և կառուցվածքային առանձնահատկությունների պարզաբանմանը:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի շարքի պրակներն ունեն տերմինների բառարաններ, որոնցում մասնագիտական բարձր մակարդակով բացատրվում է դրանց իմաստն ու գործառական նշանակությունը:

Հ. Փափազյանի աշխատասիրությամբ հրատարակված պրակներում ընդգրկված վավերագրերը հարուստ պատմական տեղեկություններ դրեցին գիտական շրջանառության մեջ՝ նպաստելով հայագիտության ու իրանագիտության զարգացմանը և գիտության այդ ոլորտներում այլևայլ հարցերի բազմակողմանի խորքային քննությանը: Փափազյանը հաճախ ինքն է վերլուծում այդ վավերագրերի տարաբնույթ տվյալները հողվածներում²⁹ և Արևելյան Հայաստանի ագրարային հարաբերությունների ուսումնասիրությանը նվիրված իր աշխատության մեջ³⁰, հաճախ առաջին անգամ և առավել հիմնավոր կերպով անդրադառնալով հայ ժողովրդի պատմության այնպիսի հարցերի, ինչպիսիք էին հայ ազնվականության ունեգրկումը բեյթ ուլ-մալի հաստատության միջոցով, հայության նկատմամբ Սեֆյան Իրանի վարած ձուլման քաղաքականությունը և այլն:

Հիշյալ պրակների հրատարակումը ծանրակշիռ ներդրում էր պարսկերեն վավերագիտության զարգացման գործում: Այն ոչ միայն ուսումնասիրողների համար մատչելի էր դարձնում հիշյալ փաստաթղթերը և ցույց տալիս դրանց կարևորությունն ու պատմական նշանակությունը, այլև պրակներում ներկայացված բնագրային ընթերցման հարուստ փորձը ուղեցույց հանդիսացավ այդ բնագավառում ոչ միայն Հայաստանի, այլև արտերկրի շատ ուսումնասիրողների համար:

Փափազյանի ուսումնասիրությունները այս բնագավառում լայն արձագանք գտան արտերկրում ու որոշակի խթան հանդիսացան իրանագիտության այս ճյուղի զարգացման համար:

²⁹ Հ. Փափազյանի հողվածների բարձր գիտական արժեքն ու հիմնարար նշանակությունը հաշվի առնելով՝ 2020 թ. դրանք վերահրատարակվեցին երկհատորյա ժողովածուի մեջ (տե՛ս **Փափազյան 2020**):

³⁰ **Папазян 1972.**

Մատենադարանի առաջին տնօրեն Լ. Խաչիկյանի հավաստմամբ, Մատենադարանի պարսկերեն վավերագրերի հատորների հրատարակությամբ Հ. Գ. Փափազյանը «համընդհանուր ճանաչում գտավ որպես հմուտ մասնագետ. նրա աշխատանքը բարձր գնահատանքի արժանացավ նշանավոր արևելագետներ Վ. Մինորսկու, Ռ. Ռոնտրի, Հ. Բուսեի, Ժ. Օբենի, Չայոնյկովսկու և ուրիշների կողմից»³¹:

Հիրավի, Փափազյանի հրատարակած վերոհիշյալ պրակները լայնորեն օգտագործված ու հղված են եվրոպացի ու իրանցի հետազա շրջանի հեղինակներ Հ. Բուսեի³², Ֆեկետեի³³, Ջ. Ղայեմնադամի³⁴ կողմից, որոնք իրենց հերթին կազմելով վավերագրերի ժողովածուներ և պարսկերեն վավերագրագիտությանը վերաբերող ուսումնական ձեռնարկներ՝ զարգացրեցին պարսկական աղբյուրագիտության այս ճյուղը:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի տվյալների լայն ընդգրկմամբ է իրականացրել Հ. Փափազյանը իր հիմնարար հետազոտությունը՝ նվիրված Արևելյան Հայաստանի ԺԶ-ԺԷ դարերի հողային հարաբերություններին³⁵:

Որպես այս բնագավառում առավել հմուտ մասնագետ, հայ արևելագետը խմբագրել է Վրաստանի արխիվների պարսկերեն հրովարտակաների ժողովածուները, որի առաջաբանում բարձր է գնահատված նրա ներդրումն այդ ժողովածուի արժանի գիտական մակարդակով հրատարակության պատրաստելու գործում³⁶:

Հ. Փափազյանի հետազոտությունները հանդիսացել են նաև պարսկերեն վավերագրերի բնագավառում մեր աշխատանքի ուղեցույցը՝ մշտապես առաջնորդելով հետազա շրջանի վավերագրերի ուսումնասիրության հարցում: Մատենադարանի պարսկերեն հրովարտակաների հաջորդ երեք պրակներում՝ հայերեն ու անգլերեն թարգմանություններով և գիտական մեկնաբանություններով հրատարակվեցին ԺԷ դարի երկրորդ կեսից մինչև 1829 թ. ընկած ժամանակահատվածի 241 պարսկերեն

³¹ Խաչիկյան 1980, էջ 10:

³² Busse 1959, էջ 4, 5, 227:

³³ Fekete 1977. էջ 565:

³⁴ 136, 90, 84, 425. ص. قاييم مقامی 1350

³⁵ Папазян 1972, էջ 302:

³⁶ Тбилисская коллекция персидских фирманов, 1995, էջ 9, 1989, էջ 8:

հրովարտակները³⁷: Ի լրումն այս շարքի արարագետ Մովսես Խեչոյի հետ համահեղինակությամբ 2018 թ. հրատարակվեց “Մատենադարանի պարսկերեն վավերագրերի” հերթական 3-րդ հատորը, որում հայերեն թարգմանությամբ, գիտական մեկնաբանություններով ներկայացվեցին Մատենադարանի ԺԷ-ԺԸ դարերի 24 շարիաթական նոտարական վավերագրեր: Այս հատորի ընդարձակ առաջաբանում փորձ է արվում ընդհանրացնել գիտելիքները պարսկական շարիաթական նոտարական վավերագրերի տեսակների, դրանց կազմության սկզբունքների, կառուցվածքային ու լեզվաճանաչական առանձնահատկությունների մասին, նաև քննել դրանցում հայկական տեղանունների ներկայացման ձևերը և կրած փոփոխությունների պատճառները³⁸:

Մատենադարանի պարսկերեն հրովարտակների շարքից դուրս են մնացել այն հրովարտակները, որոնք ավելի ուշ են ստացվել կամ հայտնաբերվել, քան ժամանակագրորեն հերթական պրակն էր պատրաստվում: Մասնավորապես, ուշ ստացված լինելու պատճառով առանձին հոդվածով են հրատարակվել Մատենադարանի պարսկերեն ամենահին, իլխանական հրովարտակները, որոնք նաև աշխարհի հնագույն պարսկերեն վավերագրերից են՝ հրապարակված լինելով 1330 թ.³⁹: Ավելի ուշ էր ստացվել նաև Մելիք-Շահնագարյանների ֆոնդը, որի վաղ շրջանի վավերագրերը դուրս էին մնացել Հ. Փափագյանի հրատարակած հատորներից: 2014 թ. հայտնի է դառնում, որ Մատենադարանի կաթողիկոսական դիվանի 1Է և 1ը թղթապանակներում պահվող 755 պարսկերեն վավերագրեր երբևէ ուսումնասիրված ու նկարագրված չեն եղել արխիվային ցուցակներում: Ուստի դրանց մեջ պահվող Մեֆյան ու Աֆշարական դինաստիայի շահերի մի քանի հրովարտակներ ևս դուրս են մնացել նշված շարքից⁴⁰:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի տվյալները ընկած են նաև Վահագն Հակոբյանի Երևանի խանության ԺԸ. դարի երկրորդ կեսի պատմության հարցերի ուսումնասիրությանը նվիրված աշխատության հիմքում: Աշխատության մեջ խանական հրովարտակների ու նամականու տվյալների ներ-

³⁷ **Կոստիկյան 2005, 2008, 2021:**

³⁸ **Կոստիկյան, Խեչո 2018:**

³⁹ **Փափագյան 1962**, էջ 379-401:

⁴⁰ Տես այդ վավերագրերը **Կոստիկյան, Գևորգյան 2018:**

գրավմամբ նորովի հետազոտվել է Երևանի խանության տվյալ ժամանակաշրջանի վարչաքաղաքական կառուցվածքի, հարևան խանությունների, Վրաստանի թագավորության, իրանական, օսմանյան և ռուսական իշխանությունների հետ փոխհարաբերությունների տարաբնույթ հարցերը⁴¹: Այնուամենայնիվ այս վավերագրերի բնագրերի ամբողջական հրատարակությունը դեռ չկա: Նման հետազոտությունը ևս կարող է բացահայտել բազմաթիվ նոր մանրամասներ, նամանավանդ որ վերոհիշյալ ուսումնասիրության շրջանակներում դիտարկվել են միայն Երևանի խանությանը վերաբերող վավերագրերը, իսկ հարևան Ղարաքաղի ու Նախիջևանի խանությունների ԺԸ-ԺԹ դարերի պատմությանն առնչվող նյութերը հիմնականում դեռևս չեն ուսումնասիրվել: Մատենադարանի կաթողիկոսական դիվանի պարսկերեն վավերագրերի մի ստվար խումբ վերաբերում է Ազուլիսի հայ վաճառականներին, որոնք ԺԸ-ԺԹ դարերում այդ քաղաքից հեռանալիս իրենց անշարժ գույքը հանձնում են Ս. Թովմա Առաքյալի վանքին: Վերջին ժամանակներս որոշ աշխատանք է տարվել այդ վավերագրերի ուսումնասիրության ուղղությամբ, սակայն այս վավերագրերի մեծ մասը ևս դեռևս լիովին հետազոտված ու հրատարակված չէ⁴²:

Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանում պահվող պարսկերեն վավերագրերը ևս մեծ կարևորություն ունեն հայոց պատմության ուսումնասիրության տեսանկյունից: Այնտեղի պարսկերեն վավերագրերից լայնորեն օգտվել է Հ. Տեր-Հովհաննեսնը իր Նոր Ջուղայի պատմությունը շարադրելիս, ինչպես նաև այդ աշխատության մեջ թարգմանաբար ներկայացրել դրանցից մի քանիսը⁴³: Այդ հավաքածուի փաստաթղթերից օգտվել է նաև Վ. Ղուկասյանը ջուղահայ համայնքին նվիրված իր հետազոտությունը գրելիս, իսկ որպես հավելված գրքի վերջում անգլերեն լեզվով թարգմանաբար ներկայացրել դրանցից 12-ը⁴⁴: Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի վավերագրերից երեքի՝ Սեֆյան շահ Թահմասպ Ա-ի և Սեֆի Ա-ի վաճառականների գանձվող հարկերին վերաբերող հրովարտակաների պարսկերեն

⁴¹ Հակոբյան 2021:

⁴² Կոստիկյան 2020, Margaryan, Kostikyan, Tovmasyan 2021:

⁴³ Տեր-Յովհաննեսն 1880, էջ 36-39, 48, 52 և այլն:

⁴⁴ Ghougassian 1998, էջ 201-290

բնագրերը պատճեններով ներկայացրել է Վ. Փափազյանը⁴⁵: Վերջին ժամանակներս Նոր Ջուղայի այս թանգարանի Սեֆյան հրովարտակաների բնագրերը ուսումնասիրվել և ընդարձակ առաջաբանով հրատարակվել են իրանցի հետազոտող Հաշեմի Շուքուհ ալ-Սադաթի կողմից⁴⁶: Առանձին հոդվածում ուսումնասիրվել և հայերեն թարգմանությամբ մատչելի են նաև Նադիր շահի հրովարտակաները, որոնք պահվում են Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանում⁴⁷:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ Մատենադարանի պարսկերեն վավերագրերը որպես հայոց պատմության սկզբնաղբյուրներ, մշտապես գտնվել են հայագետների ուշադրության կենտրոնում և օգտագործվել հայոց պատմության տարբեր հարցերի քննության ժամանակ: Ընդ որում առավել մեծ ուշադրության են արժանացել հրովարտակաները: Չնայած այս ոլորտում կատարված զգալի աշխատանքին, կան նաև մեծաթիվ պարսկերեն վավերագրեր, մասնավորապես շարիաթական-նոտարական փաստաթղթեր ու պաշտոնական նամակներ թե Մատենադարանում և թե Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանում, որոնք հետազոտված ու հրատարակված չեն և դրանց ուսումնասիրությունը բազում օգտակար փաստեր ու իրողություններ ի հայտ կբերի հայագիտության մեջ:

THE STUDIES ON PERSIAN DOCUMENTS IN ARMENIA AND THE PROSPECTS OF ITS DEVELOPMENT

Kristine Kostikyan

SUMMARY

Persian source studies, especially the study of Persian historical documents, have long established traditions in Armenia. It is strongly connected with the importance of these documents in protection of the rights of the Armenian Church and its subjects under the rule of the foreign powers, using Persian as official language. The start of the studies of Persian documents in Armenia may be considered the second half of 18th century and was connected with the activities of Catholicos Simeon Yerevanč'i. The author examines the valuable

⁴⁵ Փափազյան 1990, 172-177:

⁴⁶ .1394 هاشمی

⁴⁷ Կոստիկյան 2016, էջ 273-215:

contribution of some specialists in this field and focuses on the achievements of H. Papazian. The article considers the methods of work and main principles of publication of Persian documents in Soviet Union, which were the basis also for Papazian's work. The author draws also some aspects for future developments in this field.

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աճառյան 1927 - Աճառյան Հ., Վավերագրեր հայ-պարսկական յարաբերությանց մասին, Երևան, (Ձեռագրի իրավունքով՝ 40 օրինակ):

Խաչիկյան 1980 - Խաչիկյան Լ., Վաստակաշատ արևելագետը, Սովետական Հայաստան, 3, էջ 10-13:

Կոստիկյան 2005ա - Կոստիկյան Ք., Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ Գ, Երևան, «Չանգակ -97» հրատ.:

Կոստիկյան 2005բ - Կոստիկյան Ք., Գեղարքունիքի Մելիք-Շահնագարյանների պատմությունից, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXIV, Երևան, էջ 310-322:

Կոստիկյան 2008 - Կոստիկյան Ք., Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ Դ, Երևան, «Նաիրի» հրատ.:

Կոստիկյան 2011 - Կոստիկյան Ք., Իրանի պալատական պատմագիր Սարավին Աղա Մուհամմադ Խանի 1795թ. Ղարաբաղյան արշավանքի մասին, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXVIII, Երևան, էջ 336-349:

Կոստիկյան 2016բ - Կոստիկյան Ք., Նոր Ջուղան Իրանի Նադիր շահի իշխանության շրջանում, Հանդես ամսորեայ, Վիեննա-Երևան, թիւ 1-12, էջ 273-215:

Կոստիկյան, Գևորգյան 2018 – Կոստիկյան Ք., Գևորգյան Հ., Մեֆյան շահերի նորահայտ հրովարտակները Մատենադարանի կաթողիկոսական դիվանում, «Բանբեր Մատենադարանի», 26, էջ 58-75:

Կոստիկյան, Խեչո 2018 - Կոստիկյան Ք., Խեչո Մ., Մատենադարանի պարսկերեն շարիաթական նոտարական փաստաթղթերը (ԺԷ-ԺԸ դարեր), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:

Կոստիկյան 2020 – Կոստիկյան Ք., Մատենադարանի պարսկերեն վավերագրերը Ազուլիսի 17-րդ դարի հայ վաճառական-

ների մասին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ” հ. XXXIII, պրակ I, Երևան, 2020, էջ 488-516:

Կոստիկյան 2021 - Կոստիկյան Ք., Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ Ե, Երևան, Մատենադարանի հրատ.:

Հակոբյան 2021 - Հակոբյան Վ. Երևանի խանության ԺԸ. դարի երկրորդ կեսի պատմության հարցերն ըստ Մատենադարանի պարսկերեն վավերագրական նյութերի, Երևան, Մատենադարանի հրատ.:

Մաշտոցի անվան Մատենադարան (ՄՄ), Կաթողիկոսական դիվան, թղթ. 2ր վավ. 210:

Ջալալեանց 1858 - Սարգիս Ջալալեանց, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, Մասն Բ, Տփիսիս, տպ. Ներսիսեան Հոգևոր Հայոց Ճեմարանի:

Սիմեոն Երևանցի 2003, Ջամբռ, Երևան, Մուղնի հրատ.:

Սմբատեանց 1895 - Սմբատեանց Մ. արք., Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գալառի որ այժմ Նոր Բայազիտ գալառ, Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի:

Սմբատեանց 1896 - Սմբատեանց Մ. արք., Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց, եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից որք ՚ի Շամախուոյ թեմի, Տփիսիս, տպարան Մովսէս Վարդանեանցի:

Տէր-Մկրտչեան 1914 - Տէր-Մկրտչեան Կ., Դօփեանք եւ Մէլիք Շահնագարեանք, Նիւթեր հայ մելիքութեան մասին, Ս. Էջմիածին, Ելեքտրաշարժ Տպ. Մայր Աթոռոյ:

Տէր Յովհանեանց 1880 - Տէր Յովհանեանց Յ., Պատմություն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հ. Ա, Նոր Ջուղա, տպ. Ամենափրկչեան Ս. Վանաց:

Տէր Յովհաննիսեանց 1880 - Տէր Յովհաննիսեանց Գ., Բաղտասար Մետրապօլիտ Հասան-Ջալալեանցի համառօտ կենսագրութիւն, Փորձ, Տփիսիս, 1880, հ. 5, էջ 131-164:

Բաֆֆի 1964 - Բաֆֆի, Խամսայի մելիքություններ, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, Հայպետհրատ, էջ 161-383:

Փափազյան 1956 - Փափազյան Հ., Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Հրովարտակներ, պրակ Ա, Երևան, ՀՄՍՌ ԳԱ հրատ.:

Փափազյան 1959 - Փափազյան Հ., Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Հրովարտակներ, պրակ Բ, Երևան, պրակ Բ, Երևան, ՀՄՍՌ ԳԱ հրատ.:

- Փափազյան 1962** - Փափազյան Հ., Երկու նորահայտ իլիսանական յառլիղներ, Բանբեր Սատենադարանի, հ. 6, Երևան, 1962, էջ 379-401:
- Փափազյան 1968** - Փափազյան Հ. 1968, Սատենադարանի պարսկերեն վավերագրերը, II, Կավվածագրեր, պրակ Ա, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
- Փափազյան 1973** – Փափազյան Հ., Ջրատիրության մասին դիվանական վավերագրերը և շահ Սաֆիի 1638 թ. հրովարտակր, Բանբեր Սատենադարանի, հ. 11, 1973, էջ 223-232 :
- Փափազյան 1978** - Փափազյան Հ., Ռաշիդ-Էդ-Դինը Կիլիկյան Հայաստանի մասին, ՊԲՀ, հ. 2 (81), էջ 129-139 :
- Փափազյան 2020** – Փափազյան Հ., Հոդվածներ, Երևան, «Անտարես» հրատ.:
- Փափազյան 1990** - Փափազյան Վ., Հայաստանի առևտրական ուղիները միջազգային առևտրի ոլորտում XVI-XVII դարերում, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ.:
- Иванов 1954** – Иванов П., Хозяйство Джуйбарских шейхов, Москва-Ленинград, изд. АН СССР.
- Мукминова 1966** – Мукминова Р., К истории аграрных отношений в Узбекистане XVI в. по материалам “Вакф-наме”, Ташкент, изд. “Наука”
- Սապազյան 1972** - Սապազյան Ա., Ագրարные отношения в Восточной Армении в XVI- XVII веках, Ереван, изд. АН АрмССР.
- Петрушевский 1949** - Петрушевский И. П., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-начале XIX вв., Ленинград, изд. Ленинградского гос. Университета им. А. А. Жданова.
- Ростопчин 1937** - Ростопчин Ф., Указы Кубинских ханов, кн. III, Тбилиси, изд. Груз. Фил. АН ССР.
- Смирнов, Гаиров 1936** – Смирнов К. Н., Гаиров Дж., Передняя Азия в документах (Нахичеванские рукописные документы XVII-XIX вв.), кн. I, Тифлис изд. Груз. Фил. АН СССР.
- Тбилисская коллекция персидских фирманов 1989**, т. II, подг. М. Тодуа, Тбилиси, изд. Гл. арх. упр. при Сов. Мин. Гр. ССР.
- Тбилисская коллекция персидских фирманов 1995**, т. I, подг. М. Тодуа, Кутаиси, изд. Центр. гос. ист. архив Грузии.
- Хубов 1811** - Хубов Е., Описание достопамятныхъ происшествій въ Арменіи, СПб., тип. Иоаннесова.

- Чехович 1954** – Чехович О., Документы к истории аграрных отношений в Бухарском ханстве, Ташкент, изд. АН СССР.
- Busse 1959** - Busse H., Untersuchungen zum Islamischen Kanzleiwesen, Kairo, Kommissionsverlag Sirovic Bookshop.
- Fekete 1977** - Fekete L., Einführung in die Persische Paläographie, 101 Persische Dokumente, Budapest, Akademiai Kiado.
- Ghougassian 1998** – Ghougassian V., The Emergence of the Armenian Diocese of New Julfa, University of Pennsylvania, Scholars Press Atlanta, Georgia.
- Kostikyan 2017** - Kostikyan K., Catalogue of Persian Manuscripts in the Matenadaran, Yerevan, 2017, Nairi.
- Margaryan, Kostikyan, Tovmasyan 2021** – Margaryan G., Kostikyan K., A. Tovmasyan, Agulis on the Crossroads of International trade through Caucasus in XII-XVIII centuries, The History, Archeology and Ethnography of the Caucasus, volume17, № 4 (2021), pp. 848-858.
- قایم مقامی ج.، 1350** مقدمه ای بر شناخت اسناد تاریخی، تهران، سلسله انتشارات انجمن آثار ملی.
- هاشمی ، ش.، 1394** ارامنه جلفای نو در عصر صفوی، تهران، سازمان اسناد و کتابخانه ملی جمهوری اسلامی ایران.

**ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՏ. ԲՈՒՌՆԱՇԵԻԻ
ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԿՈՒՄ**

Գոհար Մխիթարյան
ՀՀ ԳԱԱ ԱԻ

Բանալի բառեր. *Քարթլի-Կախեթի թագավորություն, Երևան, Նախիչևան, Շուշի, Գյանջա, Նուխի, Թավրիզ, Ուրմիա, աղբերիժանական խաներ, Հերակլ II, Սողոմոն I :*

ԺԸ դարում Արևելյան Վրաստանի շուրջը ստեղծված ռազմա-քաղաքական իրավիճակի պատմա-քաղաքական վերլուծությունն ու լուսաբանումը լավագույնս արտացոլվել է ժամանակի ռուսական տպագիր սկզբնաղբյուրներում: Սույն հոդվածում հարցի քննությունը ներկայացվում է Գեորգիևսկի դաշնագրի կնքման (1783 թ.) արդյունքում բարձրաստիճան զինվորական և վրաց Հերակլ Բ թագավորի արքունիքում Ռուսական կայսրության ներկայացուցիչ (ռեզիդենտ) Ստեպան Բուռնաշևի «Վրաստանի նկարագրությունը կամ Քարթլիի և Կախեթի թագավորության քաղաքական դրության նկարագրությունը» պատմագիտական աշխատությամբ¹:

Երբ 1735 թ. օսմանյան զորքերը քեցին Այսրկովկասը, այն ամբողջությամբ վերադարձավ իրանական ազդեցության ոլորտ, որը պատմագիտության մեջ երբեմն բնութագրվում է «դզրաշականություն» եզրույթով²: Սակայն 1736 թ. կնքվեց թուրք-իրանական հաշտության պայմանագիրը, որով Օսմանյան կայսրությունը ճանաչեց Իրանի իրավունքները Արևելյան Կովկասի նկատմամբ: Նույն թվականին սկսվեց ռուս-թուրքական պատերազմ, բայց տարածաշրջանը դուրս չմնաց օսմանյան կառավարության ուշադրությունից:

Վրաց իշխանների մի մասը հանդես էր գալիս Վրաստանում իրանական շահերի և ազդեցության օգտին, մյուս մասը՝ օսմանյան: Այսպես, Քսանիի էրիսթավ Շանշեն 1741 թ. ապաստան է գտնում Ախալցխայի փաշայի մոտ, քանի որ պարտություն էր

¹ Ստ. Բուռնաշևի կյանքի և գործունեության մասին տե՛ս **Օտար աղբյուրները Հայաստանի և հարակից երկրների մասին 2020:**

² **Пайчадзе 1970**, էջ 182:

կրել իշխան Գիվի Ամիլախվարիից, որին պաշտպանում էր Իրանը³:

Ռուսական կայսրությունը ևս ուշիուշով հետևում էր Վրաստանում ընթացող ռազմա-քաղաքական զարգացումներին: Այդ հարցում ռուսական իշխանություններին մեծ ծառայություն էին մատուցում վրաց իշխանները, որոնք Վախթանգ Զ-ի որդի արքայազն Բաքարին Քարթլիում գահ վերադարձնելու հույսը չէին կորցրել⁴:

Վրաստանում ծավալվող ներքաղաքական պայքարում Քարթլիի թավադների շարքում առանձնանում էր Գիվի Ամիլախվարին, որին գործուն աջակցություն էր ցուցաբերում Օսմանյան կայսրությունը: Նադիր շահը Քարթլիի իշխանին հակադրեց Կախեթի թագավոր Թեյմուրազ Բ-ին, իսկ դա իր հերթին սրեց թուրք-իրանական պայքարը տարածաշրջանում: Այսպես, Գիվի Ամիլախվարիին պաշտպանում էր Օսմանյան կայսրությունը, իսկ Թեյմուրազ Բ-ին՝ Իրանը:

1744 թ. թուրքերը գրավեցին Ռուխը, իրանցիները՝ Գորին, Թեյմուրազի գորքերը՝ Սուրամը⁵: Մյուս կողմից, թուրքական զորքերը համառ դիմադրության էին հանդիպում Թեյմուրազ և Հերակլ արքաների միացյալ ուժերի կողմից: Նույն թվականին վերջիններս Նադիր շահից ճանաչվել էին համապատասխանաբար Քարթլիի և Կախեթի թագավորներ: Գիվի Ամիլախվարիին այլ բան չէր մնում, քան հաշտվել Թեյմուրազ II-ի հետ՝ դադարեցնելով պայքարը Քարթլիի դեմ: Ինչպես իրավացիորեն նկատել է պատմաբան Ի. Տորոպիցինը, հակաիրանական այս պայքարը, որի գլուխ կանգնած էր Գիվի Ամիլախվարին ձեռնառու էր թե՛ ռուսական կողմին, թե՛ թուրքական: Երկու կողմերն էլ օգտվում էին վրաց ժողովրդի ազատագրական պայքարից՝ նպատակ ունենալով ապակայունացնել իրավիճակը իրանահպատակ իշխանություններում, Նադիր շահի ուշադրությունը կենտրոնացնելով հակապետական ընդվզումների դեմ: Ընդ որում, Ռուսաստանը գործում էր մեծ զգուշավորությամբ՝ անմիջապես չներգրավվելով այդ պայքարում, դրանով իսկ զերծ մնալով Իրանի դժգոհությունից ու մեղադրանքներից, իսկ Օսմանյան կայս-

³ Նույն տեղում, էջ 204-205:

⁴ **Торопицын 2010**, էջ 331-337:

⁵ **Турцокова, Хапизов 2019**, էջ 158:

րությունը, ընդհակառակը, բացահայտ պաշտպանում էր վրացիների հակաիրանական պայքարը⁶:

ԺԸ դարի երկրորդ կեսին Վրաստանը շարունակում էր բաժանված մնալ մեծ ու փոքր վարչա-քաղաքական միավորների՝ Քարթլիի և Կախեթի միացյալ և Իմերեթական թագավորությունների և երեք ինքնուրույն ու ինքնիշխան իշխանությունների (Գուրիա, Մեգրել և Սվանեթ): Ավատական այդ հինգ միավորների միջև մշտապես առկա էին երկպառակություններ, որոնք հաճախ վեր էին ածվում ավատատիրական արյունահեղ պատերազմների: Վերը նշված վարչա-քաղաքական միավորներից յուրաքանչյուրն իր հերթին բաժանվում էր առանձին ավատատիրական տիրույթների՝ էրիսթավությունների, որոնք իբրև կանոն շջնամական հարաբերությունների մեջ էին միմյանց հետ:

Իրանում Նադիր շահի սպանությունից հետո (1747 թ.) ստեղծված խառնակ ժամանակաշրջանում Քարթլիում շարունակում էր կառավարել Թեյմուրազը, իսկ Կախեթում՝ նրա որդի Հերակլը: Սակայն Քարթլիում գահի նկատմամբ իր հավակնություններով հանդես էր գալիս Վախթանգ Չ-ի (1703-1724 թթ. Քարթլիի թագավոր⁷) որդին՝ Բաքարը, որը հոր հետ փոխադրվել էր Ռուսական կայսրություն: Սակայն Թեյմուրազ Բ-ին ոչ միայն հաջողվում է շահի կողմից ստանալ Ղազախ և Բորչալու գավառների կառավարման իրավունքը, այլև նա դադարում է հարկ վճարել Իրանին, և Քարթլին ու Կախեթը ձեռք են բերում փաստական անկախ թագավորությունների կարգավիճակ: 1748-1750 թթ. վրաց արքաներից իրենց կախվածությունը ճանաչեցին Երևանի, Նախիջևանի և Գանձակի խաները՝ պարտավորվելով հարկ վճարել⁸:

Չնայած ձեռք բերած ռազմական հաջողություններին՝ Թեյմուրազ II-ը և Հերակլ II-ը չպետք է իրենց ինքնավստահ ու ապահով զգային Քարթլիի գահին, քանի դեռ Ռուսաստանի կայսրությունում գտնվող Վախթանգ Չ-ի ժառանգները կարող էին իրենց հավակնությունները ներկայացնել վրացական թագի նկատմամբ: Վախթանգի ժառանգների հավակնություններին դիմա-

⁶ **Торопицын 2010**, էջ 337:

⁷ Ի դեպ, 1973 թ. սկիզբ է առել Վախթանգ Չ-ի աճյունի տեղափոխման հարցը Վրաստան, որն առաջուր լուծում չի ստացել (տե՛ս **Волхонский, Муханов, 2016**):

⁸ **История Грузии 1962**, էջ 357-358:

կայելու գործում կարևոր օժանդակություն կհանդիսանար, եթե Ռուսաստանը ճանաչեր Թեյմուրազի և Հերակլի թագավորությունը:

Մյուս կողմից, ԺԸ դ. երկրորդ կեսին ևս օսմանյան պետության օժանդակությունը վայելող լեզգիներն իրենց արշավանքներով Վրաստանի համար անվտանգային լուրջ խնդիրներ էին առաջացրել: Ուստի օսմանա-դադատանյան ընդհանուր ճակատի դեմ 1758 թ. դաշինք կնքեցին նաև Քարթլիի Թեյմուրազ Բ, Կախեթի Հերակլ Բ և Իմերեթի Սողոմոն Ա թագավորները:

Քերիմ խան Չենդի իշխանությունը Կուրից հյուսիս ընկած տարածքներում ձևական բնույթ էր կրում՝ պարարտ հող նախապատրաստելով թուրքական ագրեսիայի համար: Իրանի հարավային և կենտրոնական նահանգներում իր հակառակորդներին պարտության մատնած Քերիմ խանը հայացքն ուղղել էր նաև դեպի հյուսիսային նահանգներ: Լեզգիական արշավանքներին դիմակայելու խնդիրը, Քերիմ խանի հզորացումն ու Իրանի սպառնալիքը՝ մի կողմից, իսկ մյուս կողմից՝ ռուսական կայսրից ճանաչում ստանալու և իրենց իշխանության օրինականությունը հաստատելու ձգտումը, Թեյմուրազ Բ-ին հարկադրեցին կրկին դիմել Ռուսաստանի օգնությանը: Ռուսական կայսրության համար լարված իրավիճակ էր ստեղծվել նաև միջազգային հարաբերություններում՝ կապված Յոթնամյա պատերազմի մեջ (1756-1763) ներքաշվելու վտանգի հետ⁹: Ըստ այդմ ռուս-թուրքական հարաբերությունների սրումը, որի արդյունքը լինելու էր պատերազմը, քաղաքական զարգացումների անցանկալի սցենար էր:

Տարածաշրջանային փոփոխությունները հաշվի առնելով՝ Ռուսական կայսրությունը գրեթե չէր արձագանքում Քարթլիի Թեյմուրազ Բ և Կախեթի Հերակլ Բ արքաների օգնության խնդրանքներին¹⁰: Արևելյան Վրաստանին որևէ օգնության ցուցաբերումը կնշանակեր հարաբերությունների լարում Օսմանյան կայսրության հետ: Ուստի 1752 թ. ապրիլին Օսմանյան կայսրությունում գտնվող ռուս լիազոր ներկայացուցիչ Ա. Օբրեսկովին տրված ցուցումներում նշվում էր. «Եթե մենք ինքներս պարսկական գործերի մեջ չենք մտնում, ապա չենք կարող Բարձր

⁹ **История дипломатии 1959**, էջ 355: XVIII դ. կեսի ռուս-թուրքական հարաբերությունների պատմությունը միջազգային հարաբերությունների համատեքստում տե՛ս նաև **Михнева 1985**).

¹⁰ **Мачарадзе 2007**, էջ 179:

Դռանը խորհուրդ տալ՝ հետևելու մեր օրինակին. դուք պետք է թուրքական նախարարներին ներշնչեք, որ Բարձր Դուռը պարտավոր է պարսիկներին թույլ տալ ինքնուրույն կարգավորել սեփական գործերը, քանզի նրանց թույլ լինելու պատճառով թուրքական սահմաններին ոչինչ սպառնալ չի կարող»¹¹:

Միաժամանակ ռուսական իշխանություններն արձանագրում էին, որ պետք չէր ցույց տալ, թե դա անհանգստացնում է Ռուսաստանին: «Մենք միայն խորհուրդ ենք տալիս Բարձր Դռանը և չենք հարկադրում, – նշվում էր ռեսկրիպտում ու ավելացնում, – թուրքական նախարարներին կրկնեք, որ մինչև հիմա մենք վրացիներին օգնություն չենք ցուցաբերում և որ այդ ազգն¹² արժանի չէ այնպիսի հայտնի տերության ուշադրության, ինչպիսին Բարձր Դուռն է, ու նրանց վրա բարկանալու պատճառ չունի»¹³: Այս բոլոր «ներշնչանքներին» պետք է հետևեր թուրքական նախարարների «պատասխանը», ինչից հնարավոր կլիներ «ինչ որ եզրակացություն անել Բարձր Դռան որոշման կապակցությամբ»¹⁴: Ռուսաստանում վախենում էին «պարսկական գործերին» թուրքերի հնարավոր միջամտությունից, բայց կանցյեր Օբրեզկովը հստակ անբանագրում էր. «Բարձր Դուռը չի կարող ենթադրել, որ վրացիները Ռուսաստանից օգնություն չստանային և իմ ներշնչանքները միայն կհաստատենին նրա ենթադրությունները»¹⁵:

ԺԸ դ. երկրորդ կեսին քաղաքական անկայունության մեջ հայտնված Իրանը քիչ վտանգավոր էր Ռուսական կայսրության համար, իսկ 1751 թ. ռուսական ռազմական ուժերը ոչնչացրել էին դեռևս Նադիր շահի օրոք անգլիացի Էյթոնի կողմից կառուցված իրանական նավատորմը: 1752 թ. աշնանը ռազմածովային նավատորմի մի խումբ սպաներ Ելիզավետա Պետրովնա կայսրուհու կողմից բարձր պարգևների են արժանանում՝ յուրաքանչյուրին 3000-ական ռուբլի և մեկ աստիճանով զինվորական կոչման բարձրացում¹⁶:

¹¹ Соловьев 1896, էջ 737:

¹² Հրամանագրում գրված է «народец» էլ ավելի նսեմացնելով վրացիների դերն ու նշանակությունը:

¹³ Соловьев 1896, էջ 737:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նույն տեղում, էջ 738:

¹⁶ Նույն տեղում:

1760 թ. Թեյմուրազը, Քարթլիի կառավարումը հանձնելով որդուն՝ Կախեթի թագավոր Հերակլ Բ-ին, շքախմբով ճանապարհվեց Սանկտ Պետերբուրգ, որտեղ էլ 1762 թ. կնքեց իր մահկանացուն՝ ի չիք դարձրնելով բոլոր սպասելիքները: Ելիզավետա Պետրովնային ուղղված գրությունում կանցյեր Ա. Բեստուժևը գրում էր, որ պետք է խուսափել վրացական թագավորների հետ հարաբերությունների հաստատումից և այնտեղի գործերին միջամտելուց՝ թուրքերի կասկածները ցրելու նպատակով¹⁷: Ռուսական կառավարող շրջանակներն այդ կերպ փորձում էին հեռացնել ռուս-թուրքական վերահաս պատերազմը:

Մինչդեռ 1762 թ. հոր մահից հետո Հերակլ Բ-ը միավորել էր երկու թագավորությունները և իրեն հռչակել Քարթլի-Կախեթի միացյալ թագավորության արքա: Հերակլ II-ի օրոք վրացական զինված ուժերի ընդհանուր թվաքանակը հասնում էր 12000-ի¹⁸: Իրանի տերության կառավարիչ Քերիմ-խան Չենդը ճանաչելով Հերակլ II-ին՝ հաստատել էր նրա իրավունքները Երևանի և Գանձակի խանությունների նկատմամբ¹⁹:

Շուտով վրաց թագավոր Թեյմուրազ Բ-ի մահվան կապակցությամբ 1762 թ. հունվարին կանցյեր Մ. Վորոնցովի Հերակլ Բ-ին գրած ցավակցական նամակում արքայազն բառը Պյոտր Գ-ի (1761-1762) ձեռքով փոխարինված էր «արքազան ցար» եզրույթով, և նրան էին ուղարկվել դրամական պարզև ու թանկարժեք նվերներ²⁰: Նաղիր շահի մահից հետո ռուսական կառավարությունն իր պաշտոնական գրագրություններում վրաց տիրակալին կոչում էր արքայազն, տիրակալ, բայց երբեք՝ արքա, պատճառաբանելով, որ Օսմանյան կայսրությունն ու Իրանն այդ տիտղոսով չեն դիմում նրանց: Ռուսական դիվանագիտության այդպիսի շրջադարձը պայմանավորված էր Իրանում ծագած քաղաքական խռովությունների հետևանքով Արևելյան Վրաստանում օսմանա-իրանական հնարավոր ազդեցության ուժեղացմամբ: Հետևաբար, փորձելով Այսրկովկասի նկատմամբ «անտարբեր վերաբերմունք» ցուցաբերել, ռուսական դիվանագիտությունը հիմնական շեշտը դնում էր Օսմանյան կայսրության զսպման քաղաքականության վրա:

¹⁷ **Мачарадзе 1968**, էջ 182-186:

¹⁸ **Головин 1864**, էջ 175:

¹⁹ Նույն տեղում, էջ 363:

²⁰ **Мачарадзе 1968**, էջ 490:

Ներքին սպառնալիքների մեջ առավել վտանգ էին պարունակում կենտրոնախույս ուժերը, որոնց սանձահարման նպատակով Հերակլը վերացրեց երկու իշխանություններ՝ Քսանիի և Արագվիի էրիսթավությունները:

Արտաքին վտանգներից 1760-ական թթ. վերջերին Վրաստանի անվտանգության համար լուրջ սպառնալիք էին օսմանյան պետությունը, որի տիրապետության տակ էր Արևմտյան Վրաստանը, ինչպես նաև լեզգիական արշավանքները, որոնց դիմակայելու համար Հերակլը ստիպված էր դիմել Ռուսաստանի օգնությանը: Վերջինիս օժանդակությունն անհրաժեշտ էր նաև Արևմտյան Վրաստանին օսմանյան լծի դեմ պայքարում: Երբ 1768 թ. սկսվում է ռուս-թուրքական պատերազմը, ռուսական դիվանագիտությունը որոշում է Օսմանյան կայսրության նկատմամբ դիվերսիա իրականացնել, որում մեծ տեղ էր հատկացվում նաև Վրաստանին: Եկատերինա Բ կայսրուհուն 1768 թ. նոյեմբերի 12-ին ուղղված գեկուցագրում Գ. Օրլովը նշում էր. «Ինչպես Մորեա, Դավազիա, Վրաստան, այնպես էլ թուրքական բոլոր շրջաններում ապրող մեր օրենքի ժողովուրդներին տեղեկացնել, որ Ռուսաստանը ստիպված է թուրքերի հետ պատերազմել օրենքի համար»²¹:

Սկզբնական շրջանում պայքարի շեշտը դրվում էր Իմերեթի թագավորության Սողոմոն Ա-ի վրա, որը դեռևս 1750-ական թթ. վերջից հաջող պայքար էր մղում Օսմանյան Թուրքիայի դեմ, իսկ Հերակլ Բ-ի տիրույթները «թուրքական հարևանությունից բոլորովին նեղված չէին»²²: Առաջարկվում էր վրացիներին խրախուսել՝ խոստանալով, որ Օսմանյան կայսրության հետ խաղաղության կնքման ժամանակ «իրենք չեն մոռացվի», ինչպես նաև տրամադրել նրանց Փինանսական ու ռազմական օգնություն²³: Սակայն Սողոմոն թագավորը փորձում է օգտվել ստեղծված իրավիճակից և 1769 թ. գարնանը Սանկտ Պետերբուրգ է ուղարկում միտրոպոլիտ Մաքսիմին՝ խնդրելով Իմերեթը վերցնել ռուսական բարձր հովանու ներքո, տրամադրել 5 000 զինվոր ու զգալի դրամական աջակցություն²⁴:

Այդ նույն ընթացքում հակաթուրքական պայքարին միա-

²¹ **Архив Государственного Совета 1869**, էջ 10:

²² **Мачарадзе 1988**, էջ 283-288:

²³ Նույն տեղում:

²⁴ **Мачарадзе 1988**, էջ 302-305:

նալու պատրաստակամություն է հայտնում Հերակլը. ռուս-թուրքական պատերազմը հարմար առիթ էր դիտվում վրաց գործիչների կողմից օտար լուծը թողափելու պայքարում Ռուսաստանից ռազմական օժանդակություն՝ 5 զունդ զինվոր, ստանալու առումով: Բացի այդ, Հերակլը պահանջում էր հնարավոր խաղաղության պայմանագրի կնքման ժամանակ հատուկ հողված ներատել Քարթլի-Կախեթի թագավորության մասին որպես Ռուսական կայսրության հովանու տակ գտնվող երկրի²⁵:

Հերակլ Բ-ը հույս ուներ Վրաստան ժամանած ռուս զեներալ-մայոր Գոտլիբ Կուտր Հենրի Տոտլերենի զորամասի միջոցով պարտության մատնել օսմանցիներին Ախալցխայի ուղղությամբ մարտերում և իր տիրապետությունը հաստատել այնտեղ և Կարսում՝ «օսմանյան լծից ազատագրելով քրիստոնյաներին»²⁶:

Գեներալ-մայոր Գ. Տոտլերենը, սակայն, զործում էր առանց Հերակլի հետ իր գործողությունները համաձայնեցնելու և ձգտում էր թելադրող դիրք ձեռք բերել Վրաստանում: Նա մտադիր էր օգտագործել վրաց օժանդակությունը Արևմտյան Վրաստանի թուրքական ամրոցները գրավելու և Վրաստանում Ռուսաստանի տիրապետությունը հաստատելու համար: Այդ հանգամանքը հարուցեց Հերակլի դժգոհությունը և պատճառ դարձավ նրանց միջև սուր հակասությունների²⁷: Մյուս կողմից, կայսրուհի Եկատերինա Բ-ը Հերակլ Բ-ին 1769 թ. նոյեմբերի 27-ին է ուղարկում «Սուրբ Անդրեյ Նախավկայի» շքանշանը, դրամական պարգև և շնորհում ռուսական բանակի զեներալ-պորուչիկի կոչում: Ի պատասխան՝ 1770 թ. Քարթլի-Կախեթի թագավորը ռուսական կայսրուհուն է ուղարկում Ասպինձայի ճակատամարտում թուրքերից որպես ավար ձեռք բերված 25 դրոշ և 8 արծաթյա գուրգ²⁸:

Ռուսական կայսրությունը ստիպված էր հակասությունները չխորացնելու նպատակով մեղքը բարդել զեներալի ինքնակամ գործողությունների վրա, իսկ 1771 թ. ետ կանչեց նրան: Սակայն Վրաստանում Գ. Տոտլերենին փոխարինած զեներալ-մայոր Ա. Սուխոտինը ևս հրահանգ չուներ զբաղվելու վրաց թագավորների

²⁵ **Мачарадзе 1988**, էջ 318, 335:

²⁶ **Грамоты и другие исторические документы XVIII века, относящиеся к Грузии 1902**, էջ 244:

²⁷ **Волхонский 2017**, էջ 38-46:

²⁸ **Տե՛ս Գոգիտիձե 2007**, էջ 49-51:

տիրույթների ընդարձակման ու նրանց հզորացման խնդիրներով: Հակառակ վրաց թագավորների հորդորների՝ 1771 թ. ամռանը Ա. Սուխոտինը պաշարում է Փոթին, սակայն հիվանդությունների և շոգի պատճառով կորցնելով մի քանի հարյուր զինվոր՝ ստիպված հրաժարական է տալիս: Շուտով ռուսական զորամասը 1772 թ. ետ կանչվեց Վրաստանից՝ վրաց թագավորներին միայնակ թողնելով օսմանյան ներխուժման վտանգի և լեզգիական հանախացած արշավանքների առջև²⁹: Ռազմական առումով ռուսական զորքերի հեռացումը տարածաշրջանից «աղետարեր չէր» վրացական իշխանությունների համար, բայց այն «նախկին պայմանավորվածությունների խախտում էր»³⁰:

Չհրաժարվելով ռուսական ռազմական օգնությամբ իր աշխարհաքաղաքական գաղափարից՝ Հերակլը 1771 թ. ձմռանը վրաց կաթողիկոսին և արքայագն Լևանին ուղարկում է Սանկտ Պետերբուրգ: Վրաց թագավորը խնդրում էր 4000 զինվոր ուղարկել տարածաշրջան՝ հաջորդ տարի գարնանը համատեղ ուժերով Ախալցխան ազատագրելու համար: Փոխարենը նա խոստանում էր իր և իր հաջորդների անունից ճանաչել Ռուսաստանի իշխանությունը³¹:

Ռուսական իշխանությունների կողմից հարուցած ձրգձգումները հաղթահարելուց և ամբողջ 1772 թվականն Աստրախանում անցկացնելուց հետո, վրաց դեսպանությանն ի վերջո հաջողվում է ժամանել Սանկտ Պետերբուրգ: 1773 թ. փետրվարի 8-ին Ն. Պանինը վրաց դեսպանությանն է հանձնում ռուսական արքունիքի պաշտոնական պատասխանը, որտեղ հայտնվում էր, թե Ռուսաստանը չի կարող բավարարել վրացական խնդրանքը, ուստի նա դա նկատի կունենա առաջիկայում ռուս-թուրքական հաշտության բանակցությունների ժամանակ³²: Սակայն ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո 1774 թ. կնքված Բյուչուկ-Կայնարջի պայմանագրի 23-րդ հոդվածով հիշատակության արժանացավ միայն Արևմտյան Վրաստանը³³:

²⁹ **Мачарадзе** Указ. соч., Ч. III. Вып. 2, էջ 792:

³⁰ **Нольде** 2013, էջ 761:

³¹ **Грамоты и другие исторические документы XVIII века, относящиеся к Грузии 1891**, էջ 329-330:

³² Նույն տեղում, էջ 373-374:

³³ **Полное Собрание Законов Российской Империи (ПСЗРИ) 1830**, էջ 964:

Պայմանագրի մեջ չէր կարող ներառվել Արևելյան Վրաստանի հարցը, սակայն Հերակլը, փորձելով օգտվել պատերազմում Թուրքիայի կրած պարտության հանգամանքից և քայլեր ձեռնարկել Ախալցխայի նկատմամբ, որոշում է կրկին դիմել Ռուսաստանի օգնությանը՝ խնդրելով գեներալ Մեդեմին գործով մոտենալ Վրաստանի սահմաններին: Ստանալով Մեդեմի գեկուցագիրն այդ մասին՝ Եկատերինա Բ-ը 1775 թ. հուլիսի 28-ին պատասխանում է գեներալին, թե Հերակլը շարունակում է միջոցներ փնտրել այստեղի օժանդակությունն իր սեփական շահերին ծառայեցնելու նպատակով: Կայսրուհին հրահանգում է Մեդեմին, որ Հերակլն արժանի չէ ուշադրության, և կարգադրում է «ընթացություն պահպանել» մինչև Հերակլի կողմից նոր դիմումի ստացվելը, իսկ այնուհետև ծանուցել նրան, թե նրա խնդրանքի բավարարումն անհնար է, և թող նվաճումներն ու ձեռքբերումները կատարի սեփական ուժերով: Ահա նման իրադրության պայմաններում էր, որ Հերակլը 1776 թ. կատարեց դիվանագիտական նոր շրջադարձ՝ Օսմանյան կայսրության հետ պայմանագիր կնքելով³⁴:

Օսմանյան պետության հետ մշտական հակամարտության մեջ գտնվող Սողոմոն I թագավորի մոտ Հերակլի դիվանագիտական այս քայլը լուրջ կասկածներ հարուցեց՝ սրելով նրանց հարաբերությունները: Հերակլն ապաստան տվեց Սողոմոն I-ի դեմ ապստամբած նրա որդուն՝ Ալեքսանդրին, իսկ Սողոմոնը՝ որոշ ժամանակ անց Վախթանգ Չ-ի թոռանը՝ Ալեքսանդրին, որը հավակնում էր Զարթլիի գահին: Վերջինս, մինչ այդ Ռուսաստանից անցնելով Իրան, ապաստանել էր Զերիմ-խան Չենդի մոտ:

Վրաստանի համար լուրջ սպառնալիք էր այն հանգամանքը, որ Ղուբայի Փաթի Ալի խանին հաջողվել էր իրեն ենթարկել Դերբենդի, Շամախու, Բաքվի խանությունները, որին դիմակայելու անհրաժեշտությամբ էլ պայմանավորված էր Հերակլ Բ-ի համագործակցությունը Ղարաբաղի (Արցախի) Իբրահիմ խանի հետ: Փաթի Ալի խանի դրդումով Գանձակի Մահմեդ խանը 1778 թ. դադարեցրեց Հերակլին հարկի վճարումը: Այնժամ Հերակլի և Իբրահիմ խանի գործերը համատեղ արշավանքով պարտության մատնեցին Փաթի Ալի խանի և Գանձակի խանի գործերին և Գանձակում հաստատեցին համատեղ կառավարում՝ նշանակելով երկու կառավարիչներ:

³⁴ БУТКОВ 1869, էջ 289:

Քերիմ-խանի մահը (1779 թ.) ավելի էր սրել իրավիճակը, և լուրեր էին տարածվում, թե Հերակյն ավարտելով դեպի Երևան իր արշավանքը, այնուհետև կարող է շրջվել դեպի Իրանի խորքերը: Տեսնելով Երևանի բերդի գրավման ձգձգումը՝ Հերակյը զինվորներին հրամայեց պատրաստ լինել ձմեռելու Հայաստանում: Արշավանքն արդեն ձգվել էր մոտ երեք ամիս, երբ Հերակյի անունով նամակ ստացվեց այն մասին, որ վրացական զահի նկատմամբ հավակնություններով Արևմտյան Վրաստան է ժամանել Բաքար արքայազնի որդի Ալեքսանդրը: Հերակյը ստիպված էր Երևանում մոռուրավ նշանակել Մուխրանի տիրոջը՝ Հովհանին, և շտապ կարգով վերադառնալ:

Շուտով վրա է հասնում անձնական ողբերգությունը, երբ 1781 թ. մահանում է Հերակյի որդին՝ զահի ժառանգորդ արքայազն Լևանը:

Ամփոփելով նշենք, որ գտնվելով Թիֆլիսում՝ Ս. Բուռնաշևը կարողացել է ոչ միայն շարադրել Վրաստանի ԺԸ դարի քաղաքական պատմությունը, այլև ներկայացնել Կովկասյան տարածաշրջանի ռազմաքաղաքական իրադրությունը, ինչպես նաև մուսուլմանական խաների փոխհարաբերություններին ու խոշոր պետությունների նկատմամբ վրաց տիրակալների քաղաքական դիրքորոշումներին վերաբերող մանրամասներ:

**[ՎՐԱՍՏԱՆԻ] ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽՔԱՆ
ՌՈՒՄԱԿԱՆ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԱՆՑՆԵԼԸ**

Հերակլ թագավորի տիրույթները կազմում են երկու թագավորություն՝ *Քարթլի* և *Կախեթի*: Վերջինը նրան էր անցել ժառանգաբար իր ծնողի՝ *Թեյնուրազ* թագավորի մահից հետո, երբ նա վախճանվեց *Ասորասխանում Ռուսաստանից* վերադարձի ճանապարհին³⁵: *Քարթլի* գահին նա բարձրացել է *Նադիր շահի* կողմից՝ այն [Վրաստանը] թուրքերից գրավելուց հետո: Այն ժամանակ իշխող թագավոր *Վախթանգը* չկարողանալով դիմակայել թուրքական ուժերին, ընտանիքով հեռանում է *Ռուսաստան*, որի ժառանգները հիմա էլ [սպրում են] այնտեղ: Այսպիսով, [վրացական] երկու թագավորությունները միավորվեցին³⁶:

Հերակլ թագավորը դառնալով նրանց տերը՝ հաջող պայքարում էր ոչ միայն պարսիկների դեմ, որոնք *Նադիր շահի* մահից հետո երկպառակտչական կռիվների մեջ էին և [նրանց տիրույթները] բաժանվել էին զանազան խանությունների, այլև թուրքերի՝ որոնց հետ խաղաղություն են ձեռք բերել [Քյուչուկ-] Կայնարջի պայմանագրով, որով [Հերակլի տիրույթները] հանգիստ են թողնվել թուրքերից³⁷:

[Հերակլը] հարևան պարսիկների համար սարսափ է դարձել, քանի որ նրանցից իր տիրույթներին է միացրել երկու խանություններ՝ *Գյանջայի* և *Երևանի*: Այնուհետև [վրաց թագավորը] ջախջախիչ հաղթանակ է տարել լեռնական ժողովուրդների նկատմամբ, որոնք *ախարական* խանի գլխավորությամբ արշավել

³⁵ Волхонский 2019, էջ 56-77:

³⁶ Հերակլ թագավորի պետականաշինությունը հետևյալ կերպ է բնորոշում արևմտյան հետազոտողներից մեկը. «Վրացական ազնվականության, հայկական դիվանագետների ու գործակալների, վարձու չերքեզների, օսերի և կամիկների հետ միասին Հերակլը քիչ ավելի քան կես դարում Մուխրանի Բագրատունիների բոլորովին անհայտ թագավորությունից ստեղծեց կովկասյան խոշորագույն պետություն, որը ձգվում էր Դարյալից դեպի Նախիջևան, Լիխորի լեռնաշղթայից մինչև Դաղստանի նախալեռներ և Շիրվանի ավազներ» (Allen, 1932, էջ 204):

³⁷ Договоры России с Востоком, политические и торговые 1869, էջ 35-36:

էին *Վրաստան*: [Հերակլը] դաշինքներ կնքեց նրանց հետ՝ մեծ թվով պատանդներ պահելով իր մոտ: [Լեռնական տիրակալներից] ոմանց ժոճիկի տեսքով հարկ էր տալիս, ոմանց իր մոտ [գինվորական] ծառայության էր կանչում և նրանց հետ *պարսիկների* դեմ պատերազմում: Թեև ոչ բոլորի, բայց նշված այս բազմաթիվ ժողովուրդների հետ հաստատել էր խաղաղություն:

Նման կապերի պարագայում *լեռնական* ժողովուրդներից շատերը լինելով ոչ կախյալ՝ շատերն առանց առաջնորդի են, իսկ ընդհանրապես՝ վայրենի և ուխտադրուժ՝ նրանք երբեք բաց չեն թողնում [վրացական] տարածքների ավերման [հնարավորությունը], թեև միշտ պարտություն են կրել [վրաց թագավորից]: [Լեռնականները] չկարողանալով մեծաքանակ ամբոխով բացահայտ ձևով վերջնական ավերել [երկիրը], սկսեցին մասնակի ամայացնել այն՝ ավազակների նման ցրվելով անտառներով ու կիրճերով: Այդ պատճառով էլ *վրացիների* համար դարձել են անհասանելի, [քանի որ] ճանապարհներն անանցանելի են, բնակավայրերը՝ ամայացած, ու երկրագործների համար դաշտերում աշխատելն անվտանգ չէ: Ամենուր այս տեսակի կողոպուտները առաջնորդում էին *վրաց* իշխանները, որոնք իրենց իսկ դավաճանության հետևանքով չարացած փախչում էին *Դաղստան*, իսկ այնտեղից հավաքագրելով թափառականների՝ կեղեքում էին իրենց հայրենիքը:

Արքայազն *Լեոնը* [Լևան], ինչպես վերը նշվեց, սահմանափակեց գիշատիչների հանդգնությունը, բայց այժմ էլ կան տեղեկություններ *լեզգիների* հարձակումների մասին, փոքր լեռնանցքներով, որոնց ճանապարհը *վրացիներն*՝ իրենք են ցույց տվել: Անհրաժեշտ է, որպեսզի նրանք միավորվեն, սեր տածեն հայրենիքի նկատմամբ, որպեսզի չարագործներին արմատախիլ անեն:

Օսերն ու *կարաբղդացիները* միշտ հաշտ են եղել *Վրաստանի* հետ և հիմա էլ թագավորի պահանջով գումարի դիմաց ծառայում են նրան պատերազմի դեպքում:

Պարսկաստանի ադրերիժանական բոլոր *խաներից*³⁸ [միայն] *Շուշիի Իբրահիմ* խանն է թագավորի հետ ունեցել 26 տարվա

³⁸ «Ադրերիժանական խաներ» եզրույթի մասին տե՛ս **Օտար աղբյուրները Հայաստանի և հարակից երկրների մասին 2020**, էջ 31-34:

անընդմեջ բարեկամություն³⁹: Նա՝ գրավելով *Գյանջան*, նրա հետ էր բաժանում [հավաքագրվող] տարեկան հարկը և քաղաքում երկու կողմերից կառավարիչներ նշանակում⁴⁰:

Նուխիի խանն իր տիրությունների փոքրության պատճառով երբեք որևէ հետաքրքրություն *Վրաստանի* համար չի ներկայացրել: *Կովկասյան* լեռներին մոտ գտնվելու աշխարհագրական դիրքի պատճառով [Նուխիի] խանը փոփոխում է իր քաղաքական վարքագիծը⁴¹. Երբեմն [խանությունը] թագավորի դեմ է լեզգիների ու ճարերի հետ, երբեմն էլ՝ [Հերակլի] նկատմամբ ընկերական է⁴²:

Երևանի ներկայիս *Հուսեյն խանի* հայրը պարտություն կրելով Հերակլ թագավորից՝ ոչ միայն նրանից կախման, այլև բացարձակ ու հավիտենական հպատակության մեջ ընկավ, որի մասին նա հանդիսավոր կերպով գրավոր պարտավորություն ստորագրեց և մինչև իր մահը հավատարիմ մնաց թագավորին⁴³:

³⁹ Ղարաբաղի Փանահ խանը մահացել է 1760-ական թթ. սկզբին, իսկ Իբրահիմ խանը, տարեգրի փոխանցմամբ, իշխանության էր եկել 1762 թ. (հմմ. **Միրզա Յուսուֆ Ներսեսով 2000**, էջ 63. տե՛ս ծնթ. 133):

⁴⁰ Հերակլ II արքան և Իբրահիմ խանը գրավում են Գանձակը և նրանից ստացվող եկամուտները կիսում (տե՛ս РГАДА, ГАРИ, р. 23, д. 13, ч. 7, л. 246):

⁴¹ Հերակլ [Վրաց] արքայի հետ հազվադեպ է շփում ունենում և քանի որ Վրաստանից [բավականին] հեռավորության վրա է գտնվում, փոխադարձ անհամաձայնությունների պատճառ չկա: Հետևաբար չի կարելի խոսել նրանց [միջև] առանձնահատուկ թշնամանքի, կամ բարեկամության [գոյության] մասին (**Օտար աղբյուրները Հայաստանի և հարակից երկրների մասին 2020**, էջ 41):

⁴² Հուսեյն խանի քաղաքականությունից դժգոհ ազգականներից Հաջի Աբդ ալ-Ղադերը, նախապես ստանալով Իբրահիմ խանի աջակցությունը՝ 1780 թ. խռովություն է բարձրացնում նրա դեմ և գրավում Շաքին: Նա դաշնակցում է Փաթի Ալի խանի հետ ընդդեմ Ղարաբաղի խանի, որին սկսում է աջակցել սպանված Հուսեյն խանի որդի Մուհամմադ Հասանը: Վերջինս 1784 թ. իշխանության է գալիս և կոտորում Հաջի Աբդ ալ-Ղադերի ընտանիքը: Այսպիսով՝ 1780-ական թթ. կեսերից Շաքիում թուլանում է Ղուբայի խանի քաղաքական ազդեցությունը՝ իր տեղը զիջելով Ղարաբաղի Իբրահիմ խանին:

⁴³ Վրաց աղբյուրի փոխանցմամբ՝ Հերակլ արքան 1760 թ. Իրանի տիրակալ Քերիմ-խան Չենդից ուղերձ է ստանում՝ օգնել բռնելու աֆղան խռովարար Ազադ խանին՝ փոխարենը խոստանալով Երևանի խանությունը: Քերիմ խանը պահում է խոստումը և գերեվարած Ազադ խանին ստանալուց հետո Երևանի խանին այսպիսի նամակ է գրում. «Որքան էլ

Մնացած խաները՝ *Թավրիզի*⁴⁴, *Ուրմիայի*⁴⁵, *Էտյի*⁴⁶, *Նախի-ջևանի*⁴⁷ և այլ փոքրիկ տիրակալներ թագավորի հետ հիմնականում հաշտություն ունեին: Նրա [թագավորի] անձնական սիրանքների նկատմամբ ունեցած հարգանքից ելնելով [այդ տիրակալները] հաճախ զանազան նվերներ էին ուղարկում, և նրանց հպատակների միջև առևտուրն անխափան է իրականացվում:

Թուրքիայի կողմից *Կարսի* փաշան [Հերակլի հետ] մշտապես պահպանում էր դրացիական բարեկամություն, սակայն քաղաքական որևէ կապեր չունենալով [վրաց թագավորի հետ]:

Ախալցխայի Սուլիման փաշան վրացական *Մամջիսեի այթաբեկություն* շրջանի ժառանգական իշխանական տոհմից է: Այն *թուրքերի* կողմից 150 տարի առաջ գրավվելու հետևանքով իր բոլոր ենթակաների հետ միասին *մահմեդականացվել* է: Հնագույն ժամանակներից [Ախալցխայի փաշայությունը] *Արաստանի* հետ առանձնահատուկ կապեր ու [առևտրային] շրջանառություն ունի, չնայած ամկա վաղեմի թշնամանքի, քանի որ *վրաց* թագավորները ենթադրում են, որ [իրենք] *Մամջիսեի այթաբեկության* իշխանության նկատմամբ ունեն ժառանգական իրավունքներ: Այդ պատճառով էլ իրենց [արքայական] տիտղոսում գրում են

պետական հարկ լինի քեզ վրա դրված, բոլորը Իրակլի թագավորին պիտի տաս և նրան հնազանդվես, ինչպես էլ հնազանդության կարգն է» (**Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 1955**, էջ 176): 1779 թ. Երևանի Հուսեյն Ալի խանը (1762-1783), օգտվելով Իրանում Քերիմ-խան Չենդի մահվան (1779 թ.) հետևանքով առաջացած խառնակ իրավիճակից, հրաժարվում է ենթարկվել Հերակլին (տե՛ս **Бутков, 1869**, էջ 73):

⁴⁴ Հերակլ արքայի հետ Թավրիզը հազվադեպ է հարաբերություններ ունենում, այն էլ միայն փոխադարձ հարգանքի շրջանակներում և այն դեպքում, երբ վաճառականներ են գալիս այնտեղից Թիֆլիս (**Օտար աղբյուրները Հայաստանի և հարակից երկրների մասին 2020**, էջ 56):

⁴⁵ Հերակլ արքայի հետ առերես խաղաղություն է պահպանում (Նույն տեղում, էջ 56):

⁴⁶ Հերակլ թագավորի գաղտնի թշնամին էր, իսկ նրա որդին՝ Հուսեյն խանը, լինելով մոտ թուրքերին, չի կարելի հուսալ, թե հակառակ կգնա իր հոր բռնած ճանապարհին (Նույն տեղում, էջ 56):

⁴⁷ Հերակլ արքայի նկատմամբ նրա բարի վերաբերմունքի վրա հույս դնել չի կարելի (Նույն տեղում, էջ 56):

նրա [Սամցխեի այթաբեկության] ժառանգական իշխաններ⁴⁸: *Ռուսաստանի՝ թուրքերի* հետ ունեցած պատերազմի ավարտից հետո [1]774 թվականին [փաշան] թագավորին Բարձր Դռան կողմից նվերներ էր ուղարկում ջանալով թեքել նրան [Օսմանյան կայսրության] կողմը, և հուսադրում էր նրան [Օսմանյան կայսրությանը] [վրաց] թագավորի բարեգործությամբ և հակվածությամբ:

⁴⁸ Սամցխեի իշխանները 1344 թ. վրաց թագավորից ստացել են այթաբեկի (թագաժառանգի խնամակալի) տիտղոս, սակայն Լենկ Թեմուրի ավերիչ արշավանքների հետևանքով Աթաբեկությունը ժԵ դարում մասնատվում է: Սամցխե Սաաթաբագոն (բառացի՝ Սամցխեի Աթաբեկություն) դառնում է Վրաց թագավորության մասնատման հետևանքով առաջացած առավել խոշոր պետական կազմավորումներից մեկը: ԺՁ դարի վերջին՝ ԺԷ դարի սկզբին այն նվաճվեց Օսմանյան կայսրության կողմից և նրա տարածքների մեծ մասից կազմավորվեց Գուրջիստանի էյալեթը (Сванидзе, 1976, էջ 24; Ашхамахова, Силантьева 2013, էջ 97-98):

Ծանոթագրություններ

Վրաց թագավորը մշտապես կարող է իր ուղարկված վստահելի վանականների և [օսմանյան] *սերայում*⁴⁹ գտնվող գերի *վրացուհիների* միջոցով ստանալ անհրաժեշտ տեղեկատվությունը:

Իմերեթի թագավոր յուսահոգի *Սողոմոնը* *Հերակլ* թագավորի հետ մշտապես ընտանեկան թշնամանք է ունեցել: Թեև առերես հաշտվել են՝ միասին հավատքի սրբազնագույն հաղորդություն ընդունելով՝ և մեկը մյուսին նշխարքներ մատուցելով, սակայն ներքին տարաձայնությունները մշտապես առկա են եղել, քանի որ ապաստան են տվել միմյանց դեմ ըմբոստացած ազնվականներին ընդհանուր թշնամիների՝ *մահմեդականների* դեմ օգնություն տրամադրելու հարցում միմյանց չէին մերժում:

THE DESCRIPTION OF THE POLITICAL CONDITION OF GEORGIA IN THE HISTORICAL WORK OF ST. BURNASHEV

Goar Mxitaryan

SUMMARY

The article considers political condition of Georgia before conclusion of Georgievskiy treaty in 1783. The round of problems related to definition of the place of Georgia within the regional realities of 1750–1770s – relations of the King of Kartli-Kakheti Irakli II with Dagestan rulers and "Adrebijan khans" is presented in the article. The author shows influence of various factors on the process of Russian-Georgian rapprochement of 1760–1770s. The author has also revealed that the way to cooperation of the Russian-Georgian agreement was very complex and controversial.

The article also gives a brief description of the Russian historical essay of the XVIII century by S.Burnashev "The Picture of Georgia

⁴⁹ Սերայը սուլթանի պալատն էր Կոնստանդնուպոլիսի մոտ, Բոսֆորի նեղուցի և Մարմարա ծովի միջև, որտեղ գտնվում էին բազմաթիվ սենյակներ՝ նաև սուլթանի հարեմը (*Полный словарь иностранных слов, вошедших в употребление в русском языке, 1911, с. 351*).

or description of political state of the kingdoms of Kartali and Kakheti made by Colonel and cavalier Burnashev in Tiflis in 1786 for His Highness Irakli Temurazovich of Kartalin and Kakheti" and an extract from it is given. It is evident that during the description of the events S. Burnashev based first of all on his personal recollections and accounts of eyewitnesses. The author writes in great detail and clearly about those military and political events in the region where he himself took part or knows the information from first-hand accounts, but the text sometimes slips into a vague description when it comes to those events that the author knew by hearsay. This circumstance, of course, gives more credibility to this work.

Most of the above information relates to the relationship between the Georgian kings Irakli II and Solomon I, military campaigns and raids of Dagestan troops in Georgia. At the same time, the source also contains a lot of information about political relations between King Irakli II of Kakheti and "the Khans of Adrebijan" as well as about the influence of Iran and Turkey on the situation in the region. These data allow us to reconstruct some episodes of military and political history of the South Caucasus in the XVIII century.

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Միրզա Յուսուֆ Ներսեսով 2000 – Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, Թարգմանությունը բնագրից, ներածությունը և ծանոթագրությունները Ք. Կոստիկյանի, Եր., «Չանգակ-97», 2000, 321/38 էջ:

Օտար աղբյուրները Հայաստանի և հարակից երկրների մասին 2020 – հտ. 19: Ռուսական աղբյուրներ, պր. Ա. Ստեպան Բուռնաշև, Նկարագրություն Պարսկաստանում աղբյուրի ժամանակյան նահանգների և նրանց քաղաքական կարգավիճակի, Թարգմանությունը բնագրից, ներածությունը և ծանոթագրությունները՝ Գ. Ժ. Մխիթարյանի, Եր., «Գիտություն»:

Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 1955 – Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հտ. Գ (ԺԸ-ԺԹ դդ.), Թարգմանեց՝ Լ. Մելիքսեթ-Բեկ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

Архив Государственного Совета, 1869 – Архив Государственного Совета, Под ред. Н. В. Калачова, П. М. Фон Кауфмана,

- И. А. Чистовича, Г. Ф. Штендмана и др., Т. 1, Ч. 1, Совет в царствование императрицы Екатерины II, 1768–1896 гг., СПб.
- Ашхамахова, Силантьева 2013** – Ашхамахова А., Силантьева В., Особенности управления Османской империей завоеванными территориями (на примере княжества Самцхе-Саатабаго) // Научный Вестник ЮИМ, № 3.
- Бутков 1869** – Бутков П. Г., Материалы для новой истории Кавказа, с 1722 по 1803 год, Ч. I, СПб., Типография Императорской академии наук.
- Волхонский 2019** – Волхонский М. А., Военно-политический союз Петра I и Вахтанга VI. Причины поражения (1722–1723) // Кавказский сборник, Т. 11 (43), Под ред. В.В. Дегоева, Москва, с. 56-77.
- Волхонский 2017** – «Мы держимся здесь... одним счастьем наша великия государыни». Русский корпус генерал-майора Г.Г. Тотлебена в Грузии (1768–1772) // Военно-исторический журнал. № 7, с. 38-46.
- Волхонский, Муханов 2006** – Волхонский М.А., Муханов В.М., О перспективах российско-грузинского диалога по вопросу перезахоронения царей Вахтанга VI и Теймураза II (Возвращаясь к напечатанному), Международная аналитика, Вып. 2 (16), М., ИМИ МГИМО МИД России.
- Гогитидзе 2007** – Гогитидзе М., Военная элита Кавказа: В 2-х Т.: Т. I: Генералы и адмиралы из Грузии / ред. Н. Джавахишвили. – Тбилиси: НИЦ ист. груз.-кавказ. отношений, С. 49-51.
- Головин 1863** – Головин А., Историческое обозрение Грузии.
- Грамоты и другие исторические документы XVIII века, относящиеся к Грузии 1902** – Грамоты и другие исторические документы XVIII века, относящиеся к Грузии. Под редакцией Цагарели А. А., ординарного профессора Императорского С.-Петербургского университета, СПб., Типография В. Киршбаума, Т. 2, Вып. 2. С 1769 по 1801 год.
- Грамоты и другие исторические документы XVIII века, относящиеся к Грузии 1891** – Грамоты и другие исторические документы XVIII века, относящиеся к Грузии, Под редакцией Цагарели А.А., ординарного профессора Императорского С.-Петербургского университета, СПб., Типография В. Киршбаума, Т. I. С 1768 по 1774 год.

- Договоры России с Востоком, политические и торговые 1869** – Собрал и издал Т. Юзефович, СПб., Типография О.И. Бакста.
- История Грузии 1962** – История Грузии, т. I, С древнейших времен до 60-х годов XIX века, Под ред. Н.А. Бердзенишвили, Тбилиси.
- История дипломатии** ¹⁹⁵⁹ – История дипломатии, т. I, Под ред. А. В. Зорина, В. С. Семенова, С. Д. Сказкина, В.М. Хвостова, Москва.
- Мачарадзе В. Г., 1968** – Материалы по истории русско-грузинских отношений второй половины XVIII века, Т. I, Ч. II, Посольство Теймураза II в Россию, Тбилиси, [б. и.].
- Мачарадзе В. Г., 1997** – Материалы по истории русско-грузинских отношений второй половины XVIII века, Ч. III, Вып. II, Русско-турецкая война 1768-1774 гг. и Грузия, Тбилиси, Изд-во Тбил. университета.
- Мачарадзе В. Г., 2007** – Материалы по истории русско-грузинских отношений во второй половине XVIII века, Часть I, Русско-грузинские отношения в 40-50-е годы XVIII века, Тбилиси, Изд-во Тбил. университета.
- Мачарадзе В. Г., 1988** – Материалы по истории русско-грузинских отношений второй половины XVIII века, Ч. III, Вып. I. Русско-турецкая война 1768-1774 годов и Грузия, Тбилиси, Изд-во Тбил. университета.
- Михнева 1985** – Михнева Р., Россия и Османская империя в международных отношениях в середине XVIII века (1739-1756), Москва.
- Нольде 2013** – Нольде Б. Э., История формирования Российской империи / Пер. с фр. Л. Ф. Сахибгареевой; под ред. канд. ист. наук И. В. Кучумова; отв. ред. В. А. Тишков. СПб.
- Пайчадзе 1970** – Пайчадзе Г. Г., Русско-грузинские отношения в первой половине XVIII века. Тбилиси.
- Полный словарь иностранных слов, вошедших в употребление в русском языке 1911** – Полный словарь иностранных слов, вошедших в употребление в русском языке, Сост. по лучшим источникам М. Попов, Москва, Тип. т-ва И.Д. Сытина.
- Полное Собрание Законов Российской Империи (ПСЗРИ) 1830** – Полное Собрание Законов Российской Империи

- (ПСЗРИ), Собрание первое, 1649-1825 гг., Под ред. М.М. Сперанского, Типография II отделения собственной Е. И. В. Канцелярии, 1830, Т. XIX.
- РГАДА, ГАРИ, р. 23, д. 13, ч. 7, л. 246.
- Сванидзе 1976** – Сванидзе М., Вопросы землевладения в Османской империи на примере Ахалцихского (Чилдырского) пашалыка // Проблемы истории и культуры, Москва.
- Соловьев 1896** – Соловьев С. М., История России с древнейших времен, кн. V, т. XXIII, СПб.
- Торопицын 2010** – Торопицын И.В., Антиперсидская борьба в Грузии как фактор сближения интересов России и Турции в 40-х гг. XVIII в., // Османский мир и османистика. Сборник статей и юбилею со дня рождения А.С. Тверитиновой (1910-1973), Москва, с. 331-337.
- Тупцокова, Хапизов 2019** – Тупцокова Л.К., Хапизов Ш.М., Сведения о дагестанцах в исторической хронике Папуны Орбелиани «Вести о Картли» // История, археология и этнография Кавказа. Т. 15. № 2, с. 149-187.
- Allen 1932** – Allen W. E. D., A History of the Georgian People, London.

ՀԵԹՈՒՄ Բ, ԹԵ՛ ՀԵԹՈՒՄ Ա

Ռուբեն Վարդանյան
Հայաստանի պատմության թանգարան
(ՀՊՌ)

Քանալի բառեր. *Կիլիկիայի Հայոց թագավորության և Մերձավոր Արևելքի պատմություն, Հեթում Ա, Հեթում Բ, դրամների վերագրման խնդիրներ*

Կիլիկիայի Հայոց թագավորությունում թողարկված արծաթե, արծաթապղնձե և պղնձե դրամները, որոնց վրա ընթերցվում է ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՒՈՐ... գրությունը, հայտնի են հետևյալ տիպերով.

արծաթ՝

1. թագուհին և թագավորը ձողաբարձ խաչի երկու կողմում կանգնած / խաչակիր առյուծ,

2a. թագավորը ձի հեծած / արաբերեն գրություն,

2b. թագավորը ձի հեծած / արաբերեն գրություն,

պղինձ՝

3a. թագավորը գահին նստած / հավասարաթև խաչ,

3b. թագավորը գահին նստած / հավասարաթև խաչ,

3c. թագավորը գահին նստած / հավասարաթև խաչ,

4. թագավորը ձի հեծած / հավասարաթև խաչ,

արծաթապղինձ՝

5. թագավորի դիմահայաց կիսանդրին / կրկնաթև խաչ,

6. թագավորի դիմահայաց կիսանդրին / հավասարաթև խաչ,

պղինձ՝

7. թագավորի դիմահայաց գլուխը / կրկնաթև խաչ,

8. թագավորը ծալապատիկ նստած / հավասարաթև խաչ:

Առաջին չորսը (1-4) Հեթում Ա-ի թողարկումներն են: Այս առումով որևէ տարակարծություն չկա և չի կարող լինել, քանի որ կան անառարկելի փաստեր ու փաստարկներ դրանք այդ թագա-

վորին վերագրելու համար: Հաջորդ չորսը (5-8) ավանդաբար վերագրվում են Հեթում Բ-ին: ՀԵԹՈՒՄ անունը կրող արծաթե, արծաթապղնձե և պղնձե դրամների համալիր ուսումնասիրությունը, սակայն, ցույց է տալիս, որ դրանք բոլորն, իրականում, թողարկվել են Հեթում Ա-ի երկարատև գահակալման ընթացքում (1226-1268/9 թթ.), իսկ Հեթում Բ-ը (1289-1306 թթ., ընդհատումներով) չի թողարկել ոչ միայն արծաթե դրամներ, ինչուս բոլորը համակարծիք են, այլև, առհասարակ, դրամ չի թողարկել: Այս պնդումն ապացուցելի է, և դրան է նվիրված սույն հոդվածը:

Հայ-սելջուկյան երկլեզվյան արծաթե դրամները և կես դրամները (2a և 2b), որոնց մի կողմում հայոց թագավորի ձիավոր պատկերն է՝ շուրջը հայերեն գրությամբ, իսկ մյուս կողմում՝ երկու, երեք կամ չորս տողանոց արաբերեն գրություն, ոչ միայն վստահաբար վերագրվում են Հեթում Ա-ին, այլև տալիս են ստույգ թվագրման հնարավորություն: Դրանց մի մասի վրա ընթերցվում է Այա ալ-դին Կայ Քոբադ իբն Կայ Խոսրովի անունը, մյուսների վրա՝ Դիյաս ալ-դին Կայ Խոսրով իբն Կայ Քոբադի անունը: Երկուսն էլ Ռումի (Իկոնիայի)՝ միմյանց հաջորդած սուլթաններ են, որոնցից մեկը՝ Կայ Քոբադ Ա-ը, իշխել է 1219/20-1236 թթ., մյուսը՝ Կայ Խոսրով Բ-ը, 1236/37-1246 թթ.:

Հեթում Ա - Կայ Քոբադ Ա, 1226-1236 թթ.

Սելջուկյան սուլթանությունը Կայ Քոբադ Ա-ի օրոք հասել էր իր հզորության գագաթնակետին: 1225-26 թվականների ընթացքում, Կիլիկիայի արևմտյան և հյուսիս-արևելյան շրջանների ուղղությամբ կատարած համաժամանակյա արշավանքների միջոցով, սելջուկները ստիպեցին ներքաղաքական ճգնաժամի պատճառով անկայուն վիճակում գտնվող Հայոց թագավորությանը ընդունել Ռումի սուլթանության գերակայությունը¹: Սուլթանի արքունիքում ծառայած, պարսիկ ժամանակագիր Իբն Բիբին ասում է, որ սելջուկների հետ կնքված հաշտության պայմանագրի համաձայն, հայկական կողմը, այլ պարտավորություններից բացի, պետք է դրամ թողարկեր սուլթանի անունով²: Հե-

¹ Տեր-Պետրոսյան 2007, էջ 251, որում հղված են՝ Միխայել Ասորի, Ժամանակագրություն, 1870, էջ 525, 1871, էջ 518: Cahen, Pre-Ottoman Turkey, p. 124-125: Yildiz 2005, p. 94, 110, հղում է Ibn Bibi.

² Yildiz 2005, p. 110, հղում է Ibn Bīb *Al-avāmir al-'alā'īya fi'l-umūr al-'alā'īya*, fols 341.

թումի և Կայ Քոբաղի անուններով հասված արծաթե երկլեզու գրություններով դրամները պատմագրի այս հաղորդումը հաստատող փաստացի ապացույցն են: Դրանց թողարկումը կարող էր սկսվել ոչ ավելի վաղ քան 1226 թ.՝ Հեթումի թագավոր օձվելու տարուց, և ավարտվել ոչ ավելի ուշ քան 1236 թ., երբ Կայ Քոբաղին փոխարինեց նրա որդի Կայ Խոսրովը: Չ. Պտուկյանի կարծիքով, հայ-սելջուկյան հաշտության պայմանագիրը կնքվել է 1228 թ., հետևաբար երկլեզու դրամների թողարկումը սկսվել է այդ թվականից³:

Կ. Սիպիլեանն է առաջին անգամ նկատել ու ճիշտ դիտարկումներով հիմնավորել, որ Հեթում Ա-ի՝ առյուծագարդ գահին նստած թագավորի խոշոր (3a) և միջին չափի (3b) և ձի հեծած թագավորի (4) պատկերներով միջին չափի պղնձե դրամները սերտ նմանություններ ունեն Հեթում-Կայ Քոբաղ արծաթե դրամների հետ (2a)⁴: Հայ-սելջուկյան այդ արծաթների և վերոնշյալ պղնձե դրամների կոնտեքստում՝ թագավորի դիմահայաց գլխով և կրկնաթև խաչով պղնձե դրամների (7) պատկերային և գրությունների ձեռագրային առանձնահատկությունների համեմատական քննությունը ցույց է տալիս, որ Ճիշտ նույն հատկանիշները, որոնք մատնանշել էր Սիպիլեանը, բնորոշ են նաև վերջիններիս: Ստացվում է, որ պղնձե դրամների այդ խմբի վերագրումը Հեթում Բ-ին սխալմունք է, և որ այն նույնպես Հեթում Ա-ի թողարկումներից է: Դրամական գրությունների ձեռագրային նույնականությունն անհերքելիորեն վկայում է, որ արծաթե և պղնձե բոլոր այդ դրամների հեղինակը կամ նմուշօրինակի հեղինակը մեկ անձնավորություն է: Սիպիլեանի նշած տառաձևերի նույնական հատկանիշները հիշատակելով, կարող ենք նշել ուրիշները ևս՝ դրանցից մի քանիսը ցուցադրելով խոշորացված լուսանկարներով (**Նկ. 2**): Աչքի են ընկնում, հատկապես, Բ և Հ տառերը ու դրանց հարաբերակցությունը: Բ և Ի տառերը, շատ դեպքերում, սեպաձև են, թույլ արտահայտված միջին մասնիկով կամ առանց դրա: Ք տառի օղակաձև գլխիկը ձախ կողմում է, իսկ հորիզոնական գծիկը կայնում է Ի տառին այնպես, կարծես նրանք միաձուլված լինեն: Շատ նման են Ղ տառերը: Թ տառի գալարուն հատվածը, գերազանցապես, ներփակ է՝ չունի դեպի

³ Bedoukian 1979, p. 84 and 11: Ե. Ներսիսեանը դրանց թողարկման սկիզբ է համարում 1226 թ., Necessian 2000 (1983), 302.

⁴ Սիպիլեան 1892, 28-29:

դուրս եկող պոչիկ: Ա-ի ստորին մասնիկը շատ փոքր է՝ սրածայր կարճ գծիկի կամ գնդիկի տեսքով:

Այս արձանագրումը մեզ թույլ է տալիս վստահությամբ պնդել, որ ձեռագրային այդ ոճը չէր կարող բացարձակ նույնությամբ կրկնվել 60 և ավելի տարի անց և հենց Հեթում անունով մեկ այլ թագավորի դրամներում: Ուստի, թագավորի գլխի դիմահայաց պատկերով պղնձե դրամները (7), որոնք անժխտելիորեն կապվում են Հեթում-Կայ Քոբադ արծաթե դրամների և սրանց ձեռագրային ոճն ունեցող մյուս պղնձե դրամների հետ, պատկանում են Հեթում Ա թագավորին (**Նկ. 1**):

Հեթում Ա-Կայ Խոսրով Բ, 1236-1246 թթ.

Հայ-սելջուկյան երկլեզու դրամների թողարկումը շարունակվեց նաև Ռումի սուլթան Կայ Խոսրով Բ-ի օրոք (1236/7-1246 թթ.): Այս ընթացքում նույնպես թողարկվել են արծաթե դրամներ և կես դրամներ: Հեթում-Կայ Խոսրով դրամները հատկապես ուշագրավ են նրանով, որ կրում են թողարկման տարեթվեր, և նրանց վրա գրված է թողարկման վայրը՝ Սիս⁵: Այս սուլթանի անունով դրամներից վաղագույնը թվագրված է Հիջ. 635 թվականով (=1237/8 թ.), վերջինը՝ Հիջ. 644 թ. (=1246/7 թ.):⁶ Հեթում-Կայ Խոսրով արծաթներում հանդիպում ենք պատկերային և ձեռագրային երկու ոճի: Դրամների և կես դրամների մի փոքր խմբում շարունակում է պահպանվել Հեթում-Կայ Քոբադի անուններով երկլեզու դրամների փորագրչի ոճը: Դրանք Հիջ. 635 (=1237/8), 636 (=1238/9) և 639 (=1241/2) թթ. թողարկված դրամներ են (**Նկ. 3**): Ընդ որում, Հեթում-Կայ Խոսրովի անուններով Հիջ. 635 և 636 թթ. մեզ հայտնի օրինակները⁷ միայն այս փորագրչի ոճի են: Հեթում-Կայ Քոբադի փորագրիչը մասնակցել է նաև Հեթում-Կայ Խոսրովի կես դրամների պատրաստման գործին՝ հավանաբար նույն ժամանակահատվածում, այսինքն մինչև 1241/2 թվականը⁸:

⁵ Կես դրամների վրա թողարկման տարեթիվը չի նշվել, բայց Սիս քաղաքի անունը մեծ մասի վրա հիշատակված է, Necessian 2000 (1998), 319:

⁶ Necessian 2000 (1983), 289-302.

⁷ Necessian 2008, cat. 757-760՝ Հիջ. 635 թ., Necessian 2008, cat. 761-764 և ՀՊԹ 18392-186՝ Հիջ. 636 թ.:

⁸ Necessian 2000 (1998), Pl. 66.8-16.

Հիշ. 637 (=1239/40) թ. ի հայտ է գալիս մի ուրիշ փորագրիչ: Այս թվականի բոլոր հայտնի օրինակները նրա ձեռքով են արված: Նա, այսուհետ, դրամահատարանում դառնում է գլխավորը՝ իր ուրույն ու շատ գեղեցիկ ոճով: Հիշ. 639 (=1241/2) թվականից, նոր փորագրչի դրամները բացարձակ մեծամասնություն են կազմում, իսկ հաջորդ տարիներին՝ մինչև Հիշ. 644 (=1245/6) թ. թողարկված դրամները միայն վերջինիս ոճի են: Դեռևս Կ. Սիպիլեանն է նկատել Հեթում-Կայ Խոսրով դրամների այս ոճի սերտ կապը Հեթում Ա-ի՝ գահավորակի վրա նստած թագավորի պատկերով միջին չափի պղնձե դրամների հետ (3c)⁹: Արծաթե դրամների և պղնձե քարտեզների գրությունների նույնաբովանդակ հատվածների մեծացված լուսանկարներում պարզ երևում է նաև տառերի ձեռագրային նույնականությունը (**Նկ. 4**):

Այսպիսով, հայ-սելջուկյան արծաթե և գուտ հայկական պղնձե դրամներում հստակորեն տարբերակվում է երկու ոճ: Դրանցից մեկը բնորոշ է Հեթում-Կայ Քոբաղի դրամներին, մյուսը՝ Հեթում-Կայ Խոսրովի դրամներին, թեև առաջին ոճը տեսնում ենք նաև Հեթում-Կայ Խոսրովի դրամների վաղ թողարկումներում (**Նկ. 5**): Արծաթների հեծյալը, հորինվածքի տեսանկյունից, երկուսում էլ նույնն է: Թագավորը նստած է ձիու վրա՝ գոտկատեղից վեր դիմահայաց պատկերված, պատանու կամ երիտասարդի դիմագծերով, կրում է թագ, դեպի մարմինը ծալված ձախ ձեռքում ձիու սանձն է, դեպի մարմինը ծալված աջ ձեռքում՝ շուշանագլուխ մական: Ձին քայլող դիրքում է՝ առջևի ձախ ոտքը բարձրացրած: Կատարողական առումով, սակայն, կան տարբերություններ գրեթե բոլոր մանրամասներում, որոնց հանրագումարում գոյանում է այդ երկու ոճերի ինքնատիպությունը:

Երկու ոճերի միջև տարբերության ամենից աչքի ընկնող ցուցիչը, այնուամենայնիվ, տառաձևերն են, փորագրչի ձեռագիրը: Հեթում-Կայ Քոբաղի փորագրչի տառերը, իրենց մինիմալիստական պարզությամբ, ունեն յուրահատուկ գեղեցկություն, «հյութեղ» են ու համաչափ: Հեթում-Կայ Խոսրովի փորագրչի տառերն ունեն հմտորեն և նրբորեն արված գեղապանույն մշակում: Ուշագրավ է նաև այն, որ փորագրիչներից առաջինը ԹԱԳԱԻՈՐ բառում ՈՐ տառերը միշտ գրել է առանձին, իսկ երկրորդը՝ **Ռ** փակագրով: Փորագրիչ հասկացությունը, այս դեպքում, պետք է որոշ վերապահումով ընկալել, դրա տակ պատկե-

⁹ Սիպիլեան 1892, 28-29:

րացնելով ոչ թե մեկ մարդու, որը յուրաքանչյուր տվյալ ժամանակահատվածում միայնակ կատարել է դրամական կնիքների պատրաստման ողջ գործը, այլ մեկը, որը դրամների նմուշօրինակներ ստեղծողը և ոճ թելադրողն է եղել, իսկ կատարողներ, իրենից բացի, կարող էին լինել, և, ամենայն հավանականությամբ, եղել են ուրիշները ևս: Այսպիսի եզրահանգման գալիս ենք, երբ դրամական շարքերից յուրաքանչյուրի մանրակրկիտ, դասակարգված ուսումնասիրությամբ՝ պատկերային և ձեռագրային առանձին տարրերում նկատելի են դառնում գոյություն ունեցող մեծ և փոքր տարբերություններ, շեղումներ: Իհարկե, պետք է նկատի ունենալ նաև, որ դրանց մի մասը կարող է հանդիսանալ դրամաթողարկման ընթացքում զանազան հանգամանքների փոփոխության արգասիք:

Հեթում-Կայ Քոբաղ և Հեթում-Կայ Խոսրով արծաթե դրամների միջին կշռի մեջ տարբերություն չկա՝ 2.75 գ և 2.76 գ համապատասխանաբար: Դրամների չափը, սակայն, մի փոքր տարբերվում է՝ 22.8 մմ և 23.9 մմ համապատասխանաբար¹⁰: Այս չնչին թվացող տարբերության շնորհիվ Հեթում-Կայ Խոսրով դրամների ներքին շրջանակը 1-1.1 միլիմետր ավելի մեծ է: Սա, ամենայն հավանականությամբ, արվել է որպեսզի հնարավոր լինի դրամի դարձերեսի արաբերեն գրությանն ավելացնել թողարկման ժամանակի և տեղի մասին տեղեկությունը, որը տեղադրվեց դրամի եզրագծի երկայնքով: Այս հավելյալ տվյալները բացակայում էին Հեթում-Կայ Քոբաղ դրամների վրա: Այսպիսով, ավելի երկար ու լայն դարձավ նաև Հեթում-Կայ Խոսրով դրամների հայկական կողմի՝ գրության համար նախատեսված եզրային գոտին: Դրամի մակերեսի ընդարձակումը Հեթում-Կայ Խոսրով դրամների ձևավորումն իրականացնող վարպետն օգտագործեց հեծյալին, ինչպես նաև գրությունն ավելի խոշոր ներկայացնելու համար: Չբավարարվելով եղած մակերեսով, նա նույնիսկ թագավորի թագն ամբողջությամբ պատկերեց շրջանակից դուրս, իսկ գրության համար նախատեսված եզրագոտում, բացատներից

¹⁰ Կշռի և չափի միջինացված տվյալները ստացված են ՀՊԹ հավաքածուի դրամների հիման վրա՝ համապատասխանաբար՝ 13 և 15 դրամ: Վերը նշված բացարձակ թվերը պետք է ընդունել հարաբերական իմաստով, որովհետև հաշվարկում ավելի մեծ քանակի դրամների տվյալներ ընդգրկելու դեպքում հնարավոր է դրանք որոշ փոփոխության ենթարկվեն:

խուսափելու համար, Յ տառի միջին գծիկը երկարացրեց կրկնակի չափով:

Այս հատվածն ամփոփելով, կարող ենք փաստել, որ հայ-սելջուկյան թողարկումներին զուգահեռ հատվել են նաև միայն հայագիր պղնձե դրամներ Հեթում թագավորի անունով: Եվ դրանք ոչ միայն այն դրամներն են, որոնք նախորդ հետազոտողների կողմից հաստատապես վերագրվել են Հեթում Ա-ին, այսինքն՝ գահավորակին նստած թագավորի պատկերով՝ մեծ և միջին չափի, գահավորակին նստած թագավորի պատկերով՝ միջին չափի¹¹, և հեծյալ թագավորի պատկերով՝ միջին չափի պղինձները, այլև դիմերեսին թագավորի դիմահայաց գլխով, իսկ դարձերեսին կրկնաթև խաչով, համեմատաբար փոքր չափի պղնձե դրամները (7), որոնք սխալմամբ վերագրված են եղել Հեթում Բ-ին:

Հեթում Ա - Չաբել

Հեթում Ա-ի դրամաթողարկման ամենանշանակալի մասը կազմում են արծաթե դրամները, որոնց վրա, թագավորի հետ միասին, պատկերված է նաև նրա կինը՝ Լևոն Ա-ի օրինական գահաժառանգը՝ Չաբել թագուհին, որի անունը, սակայն, հիշատակված չէ գրության մեջ: Դրամներին զուգահեռ հատվել են նաև կես դրամանոցներ, որոնց թողարկման ծավալը համեմատաբար քիչ է եղել: Արծաթե այդ դրամների ու կես դրամների մի կողմում, դաշտի կենտրոնում, բարձր ձողի վրա ամրացված հավասարաթև խաչ է, որից ձախ կանգնած է թագուհին, աջ կողմում՝ թագավորը: Թագուհին մեկ ձեռքով, թագավորը՝ երկուսով, բռնել են խաչաձողը: Դրամի մյուս կողմում խաչակիր և թագակիր առյուծ է՝ երկու հիմնական պատկերագրական տարբերակներով ներկայացված. առյուծը կանգնած՝ թաթով ձողաբարձ խաչ բռնած, և առյուծը քայլող՝ մեջքից հառնող ձողաբարձ խաչով:

¹¹ Թագավորը նստած է գահավորակին, ոտքերը կախ, սակայն ծնկներն այնքան հեռու են միմյանցից՝ ուսերի լայնքից ավելի, որ, առաջին հայացքից, թվում է, թե նա ծալապատիկ է նստած: Ինչպես կտեսնենք ստորև, սա, կարծես, մի անցումային տիպ լինի դանգերի վրա պատկերված թագավորի նստելաձևի և նույն թագավորի քարտեզների ու թողարկումներում պատկերված՝ գահավորակի վրա կամ առանց գահավորակի, ծալապատիկ, արևելյան նստելաձևի միջև:

Տրամաբանությունն ակնարկում է, որ այդ դրամների թողարկումը պետք է սկսված լինի Հեթումի թագավոր օծվելուց հետո առաջին իսկ տարիներին: Բայց արդյո՞ք անվերապահորեն այդպես է: Մենք, դրամներից բացի, այլ աղբյուր չունենք այս հարցին պատասխան գտնելու համար: Հեթումն իր գահակալման առաջին 20 տարիների ընթացքում թողարկել է հայ-սելջուկյան արծաթե դրամներ և երեք տիպի պղնձե դրամներ. սա մենք արդեն վստահաբար գիտենք: Հեթում-Չաբել դրամները չունեն իրենց վրա նշված թողարկման տարեթվեր: Հետևաբար, դրանց թողարկման ժամանակագրությունը պարզելու համար պետք է օգտագործենք պատկերագրական, ոճական, ձեռագրային, չափագիտական տվյալների ուսումնասիրման հնարավորությունները և հավանական կապերն այլ թողարկումների հետ:

Դեռևս 1958 թ. հրատարակած մի հոդվածում, երկու գանձերի հետազոտությամբ, Չ. Պտուկյանը կարողացավ սահմանել Հեթում-Չաբել արծաթե դրամների հարաբերական հաջորդականությունը: Հիմնվելով թագավորի և թագուհու միջև տեղադրված խաչի պատկերային տարբերությունների վրա և կիրառելով կնիքների համեմատության մեթոդը, նա դրամները բաժանել էր յոթ՝ միմյանց հաջորդած խմբերի¹²: Ամփոփիչ եզրակացության մեջ հեղինակը գրում է, որ Հեթումի երկար գահակալության ընթացքում օգտագործվել են արծաթե դրամների պատկերային նմուշների յոթ խմբեր, որոնք հնարավոր է դասավորել ժամանակագրական կարգով¹³: Այս խոսքերը կարելի է հասկանալ այնպես, որ հեղինակը նկատի ունի նրա գահակալման բոլոր տարիները: Բայց մինչ այս եզրահանգումը, Պտուկյանն անում է մեկ ուշագրավ դիտարկում Հեթում-Չաբել դրամների մասին: Նշելով, որ հայ-սելջուկյան դրամների հայկական կողմի և Հեթումի դրամների ոճերի ու գրերի համեմատական ուսումնասիրությունները չեն օգնում դրամների ժամանակը որոշելու հարցում, նկատում է, այնուամենայնիվ, որ որոշակի նմանություն կա իր դասակարգմամբ I և II խմբերի դրամների և Հեթում-Կայ Խոսրով երկլեզու դրամների գրությունների ոճերի միջև, և շատ հավանական է, որ դրանք բոլորը պատկանում են նույն ժամա-

¹² Bedoukian 1981 (1958), 28-30; Bedoukian 1979, 83.

¹³ “In conclusion, during the long reign of Hetoum, seven groups of designs were used, and these can be arranged in a chronological order”, Bedoukian 1981 (1958), 30.

նակահատվածին¹⁴: Այո, Հեթում-Չաբեյ դրամների և կես դրամների մեջ կան բարձրարվեստ, խնամքով փորագրված կնիքներով հատված դրամների օրինակներ, որոնք ոճով շատ մոտ են Հեթում-Կայ Խոսրով դրամների ու կես դրամների, ինչպես նաև գահավորակի վրա նստած թագավորի պատկերով Հեթումի քարտեզների ոճին (**Նկ. 6**): Պատկերագրությամբ այս դրամները տարբեր են, և միայն մեկ-երկու տարբերում ունենք համեմատելու հնարավորություն, որոնցից առաջնայինը գրության ոճն է, տառաձևերը, որոնք չեն բացառում, որ սրանք կարող են նույն մարդու ձեռքով պատրաստված կնիքներ լինել, հետևաբար նույն կամ ժամանակով շատ մոտ թողարկումներ լինել:

Այս դրամներում որոշակի նմանություն կա նաև թագավորի թագի պատկերման մեջ: Թագավորի գլխի պատկերներում, սակայն, պետք է նկատել մի էական տարբերություն: Հեթում-Կայ Քոբադ և Հեթում-Կայ Խոսրով դրամների ու կես դրամների, ինչպես և ժամանակով դրանց համապատասխանող պղնձե բոլոր դրամների վրա թագավորը պատկերված է երիտասարդ դիմագծերով, անմորուք: Մինչդեռ Հեթում-Չաբեյի դրամների վրա թագավորը ներկայացված է որպես հասուն տղամարդ՝ քթի տակ և այտերի վրա զծիկներով պատկերված ոչ շատ երկար, բայց փարթամ բեղ-մորուքով (**Նկ. 7**):

Հեթումը Կիլիկիայում ամենաերկարատև գահակալած թագավորն է՝ 43/4 տարի: Հեթումի դրամական դիմապատկերներում արտացոլված տարիքային փոփոխությունները շատ կարևոր ցուցիչ են նրա դրամաթողարկման ժամանակագրությունը պարզելու առումով: 1226 թվականին նա տասնմեկամյա երեխա էր, երբ ամուսնացրին տասնչորսամյա Չաբեյի հետ: Այսինքն, Հեթում-Կայ Քոբադ և դրանց ժամանակակից պղնձե դրամների թողարկման տարիներին՝ 1226-1236 թթ., Հեթումը դեռևս իր մանկության և պատանեկության շրջանում էր, և հասկանալի է, թե ինչու դրամների վրա նրան պատկերել են այդ տարիքին բնորոշ արտաքին հատկանիշներով: Հեթում-Կայ Խոսրով և

¹⁴ “Comparative studies of the styling, inscriptions etc. of the Armenian side of these coins and the trams of Hetoum, did not prove helpful in ascribing definite dates to the trams. There is, however, some resemblance between the styling of the inscription on the coins in group I and II given below, and that of the bilingual coins Hetoum-Kaikhysraw (1237-1245), and it is very likely that they all belong to the same period.”, *ibid*, 28.

դրանց ժամանակակից պղնձե դրամների թողարկման ժամանակ՝ 1237-1246 թթ., նա արդեն երիտասարդական ժողովուն տարիքում էր: Այս փուլում երիտասարդ Հեթումը կարող էր ինչպես սափրված, այնպես էլ մորուքով լինել, բայց փաստն այն է, որ թագավորին շարունակել են պատկերել անմորուք: Հեթում-Կայ Խոսրով և Հեթում-Չաբել դրամներում թագավորի պատկերագրական այս տարբերությունները նկատի ունենալով, հազիվ թե դրանք թողարկված լինեն միևնույն ժամանակահատվածում: Առավել հավանական է, որ Հեթում-Չաբել շարքի թողարկումը սկսված լինի 1246 թվականից հետո՝ ամբողջովին նոր պատկերագրությամբ, թագուհու հետ միասին՝ թագավորին ներկայացնելով արդեն հասուն տարիքում, բեղ-մորուքով: Թագավորական պատկերի մեկնաբանման հետ կապված կան այլ խնդիրներ ևս, որոնց կանդրադառնանք քիչ ավելի ուշ:

Հաշվի առնելով Հեթում-Կայ Խոսրով ժամանակահատվածում թողարկված դրամների և Հեթում-Չաբել դրամների սկզբնական թողարկումների ոճական և ձեռագրային որոշակի ընդհանրությունները, կարող ենք եզրակացնել, որ վերջիններիս ձևավորման հեղինակը և փորագրիչը կարող է եղած լինել այն նույն վարպետը, որն աշխատել է Միսի դրամահատարանում, երբ թողարկվում էին Հեթում-Կայ Խոսրով դրամները: Հեթում-Չաբել դրամների այդ շատ մեծ շարքում՝ վերոնշյալ ոճով օրինակների քանակը համեմատաբար քիչ է, ուստի կարելի է ենթադրել, որ, կարճ ժամանակ անց, դրանք հեղինակած փորագրիչին փոխարինելու են եկել այլ փորագրիչներ:

Հեթում-Չաբել դրամների թողարկման ավարտը գծագրվում է շատ ավելի հստակ: Վերոհիշյալ հոդվածում Չ. Պտուկյանը խոսում է Հեթում-Չաբել դրամների՝ իր դասակարգմամբ VII խմբին պատկանող չորս դրամների մասին, որոնց վրա գրված է ԼԵԲՈՆ՝ ՀԵԹՈՒՄ-ի փոխարեն¹⁵: ՀՊԹ հավաքածուի մեջ կա երկու դրամ, որոնք հատված են դիմերեսի նույն և դարձերեսի երկու տարբեր կնիքներով՝ նույնատիպ պատկերագրության ու նույն ոճի, որոնցից մեկի վրա ընթերցվում է ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱԲՈՐ Հ, մյուսի վրա՝ ԼԵԲՈՆ ԹԱԳԱԲՈՐ Հ գրությունը (**Նկ. 8**):

Հեթում-Չաբել դրամների ողջ շարքում՝ սրանք աչքի են ընկնում գեղարվեստական և կատարողական ամենացածր որակով, որը Հեթումի գահակալման վերջին տարիներին պատերազմների

¹⁵ Bedoukian 1981 (1958), 29.

ու դրանց հետ կապված մեծ ծախսերի, մամուլքների իրագործած ավերածությունների, մոնղոլներին վճարվող հարկերի, տնտեսության անկման և երկրում տիրող ընդհանուր անբարենպաստ վիճակի արտացոլումն է դրամաթողարկման վրա:

1266 թ. Մառիի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Հեթումի որդի Լևոնը գերևարվեց մամուլքների կողմից: Հեթումը կարողացավ իր ժառանգորդին գերությունից ազատել 1268 թ. և, նրան հանձնելով գահը, հեռացավ վանք: Լևոնը հրաժարվեց թագադրվել հոր կենդանության օրոք: 1269-70 թվականներին գրված ձեռագրերի թվագրման բանաձևերում Հեթումը շարունակում է հիշատակվել *թագավոր*, իսկ Լևոնը՝ *պարոն* տիտղոսով¹⁶: Լևոնի թագադրությունը կատարվեց միայն հոր մահից շուրջ երեք ամիս անց՝ 1271 թ. հունվարի 6-ին: Չ. Պտուկյանը, Լևոնի անվամբ այս դրամների թողարկման հանգամանքների և ժամանակի վերաբերյալ արտահայտել է երկու տեսակետ. դրամները թողարկվել են 1270 թ., Լևոնի թագավոր օծվելու տարում (ըստ Պտուկյանի), կամ 1269 թ., երբ նա փոխարինեց հորը: Երկրորդ տարբերակը նա քիչ հավանական է համարել, քանի որ Լևոնը դեռևս օձյալ թագավոր չէր¹⁷: Ըստ իս, նույն դիմերեսի կնիքով, բայց և՛ ՀԵԹՈՒՄ, և՛ ԼԵՒՈՆ անուններով դարձերեսի տարբեր կնիքներով հատված դրամների զոյության փաստն ավելի հավանական է դարձնում այն, որ որպես թագավոր հիշատակվող Լևոնի անվամբ դրամները կարող էին թողարկված լինել մինչև նրա թագավոր օծվելը: Թեև Լևոնը օծված չէր, բայց դրամների վրա նրա հիշատակումը *թագավոր* տիտղոսով կարող է բացատրվել նրանով, որ հարիր չէր թագավորությունն օրինականորեն ու փաստացի կառավարողի անունը՝ թագավորական իշխանությունը խորհրդանշող դրամի վրա ներկայացնել այլ կերպ քան *թագավոր* տիտղոսով: Չաբել թագուհու անունը Հեթումի դրամների վրա երբեք չի գետեղվել, բայց թագավորի կողքին կանգնած նրա պատկերով դրամները շարունակել են թողարկվել 1252 թվականին թագուհու մահվանից հետո ևս: Այսինքն, տվյալ դեպքում

¹⁶ Տեր-Պետրոսյան 2007, 315-316:

¹⁷ Bedoukian 1981 (1958), 29: 1979 թ. լույս տեսած մենագրությունում երկրորդ տարբերակն այլևս չի հիշատակվում: Այստեղ ասվում է, որ Հեթումի անվան փոխարեն Լևոնի անունով դրամները հատվել են Հեթումի մահից քիչ անց՝ մինչև կնիքներ պատրաստողները կատեղծեին նոր դրամատիպեր նոր թագավորի՝ Լևոն Բ-ի համար, Bedoukian 1979, 84.

ունենք դրամ, որի վրա պատկերված թագուհին՝ թագավորության հիմնադրի միակ օրինական ժառանգը, արդեն վաղուց ի վեր կենդանի չէր: Մյուս դեպքում՝ դրամի վրա պատկերված թագավորը հրաժարվել էր գահից, ընդունել էր Մակար կրոնավորական անունն ու հեռացել իշխանությունից, իսկ պետության փաստացի ղեկավարը՝ հայոց գահի միակ օրինական ժառանգը, դեռևս պաշտոնապես թագադրված չէր: Լևոնի անունով այսպիսի դրամների գոյությունը վկայում է, որ, արտակարգ իրավիճակներում՝ պետական, ֆինանսական, տնտեսական և քարոզչական առաջնահերթություններից ելնելով, դրամաթողարկման «կանոնները» կարող էին որոշակիորեն շրջանցվել: Ստորև կտեսնենք, որ դրամաթողարկման մեջ սա Հեթումից Լևոնին սահուն անցման միակ օրինակը չէ:

Այժմ քննության առնենք Հեթում Բ-ին վերագրվող պղնձե դրամների մյուս տիպը (8): Այս դրամների դիմերեսին թագավորը պատկերված է ծալապատիկ նստած, աջ ձեռքում արքայական գավազան է, ձախում՝ խաչ, կա՛մ գունդ, կա՛մ ոչինչ չկա: Թագավորը ծալապատիկ նստած է ցածր գահավորակի վրա, շատ դեպքերում, սակայն, գահավորակը պատկերված չէ, և պարզ չէ, թե նա ինչի վրա է նստած (**Նկ. 9**): Դարձերեսի տիպը՝ երկու հիմնական տարբերակով ներկայացված, հավասարաթև խաչն է (crux pattée կամ crux potent), որը նաև արծաթապղինձների B սերիայի դարձերեսի տիպն է (տե՛ս ստորև): Այս պղինձները պատկերագրությամբ, ոճով, հատաձույլի անկանոն ու անփույթ կերտվածքով, լիովին տարբերվում են Հեթում-Կայ Ջոբադ (1226-1236 թթ.) և Հեթում-Կայ Խոսրով ժամանակահատվածներում (1237-1245/6 թթ.) թողարկված պղնձե դրամներից: Այդուհանդերձ, այս դրամները թողարկվել են ոչ թե Հեթում Բ-ի, այլ Հեթում Ա-ի օրոք:

2012 թ. Ժ. Քրիստիանեանը հրատարակեց մի հոդված, որում, այս տիպի մի քանի պղնձե դրամների վրա հանդիպող արաբատառ մակադրոշմների ուսումնասիրությամբ, փաստեց, որ դրանց վրա ընթերցվում են Ալ-Մուստասիմ խալիֆի (1242-58 թթ.) և Ռումի սուլթան Իզզ ալ-Դին Կայ Ջաուս Բ-ի (1245/6-61/2 թթ.) անունները: Դրանից հետևում է, որ այդ դրամները մակա-

դրոշմվել են 1245¹⁸-58 թվականների ընթացքում, այսինքն՝ դրանք չեն կարող Հեթում Բ-ի դրամները լինել¹⁹: Ուստի, որքան էլ դրանք նման չեն Հեթում Ա-ին անառարկելիորեն վերագրվող դրամներին՝ թողարկվել են հենց այդ թագավորի օրոք: Այս պղինձների վրա նա նստած է ծալապատիկ՝ գահավորակի վրա, որի երկու կողմից պատկերված գնդերը (ոտքերով կամ առանց), ըստ երևույթին, ակնարկում են առյուծներ՝ խիստ ոճավորված ձևով: Ոճը պարզունակ է, տառերը խոշոր են և ոչ այնքան նրբագեղ, բայց կնիքների փորագրությունը կատարված է վստահ ձեռքով: Մակադրոշմված լինելու փաստից բացի, շատ որոշակի կապեր կան պղինձ դրամների այս շարքի (8), Հեթում-Չաբել արծաթների (1) և Հեթում Բ-ին սխալմամբ վերագրված (ինչպես կտեսնենք ստորև) արծաթապղինձ դրամների (5, 6) միջև: Համեմատական վերլուծության ընթացքում, կրկնություններից խուսափելու համար, այդ երեքը կդիտարկենք միասին:

Նախ, սակայն, ներկայացնենք արծաթապղինձների երկու սերիաները, որոնք միմյանցից տարբերվում են, առաջին հերթին, դարձերեսի պատկերագրությամբ. մեկի վրա կրկնաթև խաչ է (5), մյուսի վրա՝ հավասարաթև խաչ (6): Դրանք, համապատասխանաբար, անվանենք A և B դասեր: Երկուսում էլ գրությունների բովանդակությունը նույնն է. դիմերեսին՝ ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱԲՈՐ, դարձերեսին՝ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: *Թագավոր* և *հայոց* բառերը, շատ դեպքերում, գրված են կրճատ կամ աղավաղված ձևերով: Bb սերիայում հանդիպում են նաև դրամներ, որոնց դարձերեսի գրությունը դիմերեսի գրության կրկնությունն է՝ ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱԲՈՐ, թագավոր բառն ամբողջական կամ կրճատ ձևով:

Գրության նույնական բովանդակությունից բացի, այս երկու դասերը միմյանց միավորում է նաև ձեռագրային նմանությունը: Դարձերեսին կրկնաթև խաչով և հավասարաթև խաչով թողարկումներում տառաձևերը, ընդհանուր առմամբ, նույն ոճի են, ինչը հատկապես լավ է երևում Ա, Ե, Թ, Հ, Յ, Ն տառերի գրելաձևերում: Արծաթապղինձ դրամների ճիշտ վերագրման հար-

¹⁸ Զանի որ Հեթում-Ապ Խոսրով վերջին թողարկումը թվագրված է 1246 թվականով, Necessian 2000 (1983) 299-301, ապա մակադրոշմների թվագրման ստորին սահման պետք է համարել այս թվականը:

¹⁹ Christianian 2012, 84.

ցում, ինչպես կտեսնենք ստորև, ձեռագրային բաղադրիչը խաղում է շատ կարևոր դեր:

A և B դասերի միջև պատկերագրական և ոճական որոշակի ընդհանրություններ կան նաև թագավորի կիսանդրի դիմապատկերներում: Տարիների ընթացքում, արծաթապղինձներում և սորակական հետընթաց է նկատվում, հատկապես դրանց թողարկման վերջին փուլում, որն ավելի ակնառու է թագավորի դիմապատկերներում: Գրություններում տառաձևերը ձևաբանական փոփոխություններ գրեթե չեն կրում, թերևս միայն՝ մի փոքր ավելի պարզունակ են դառնում:

A դաս (**Նկ. 10.1**) – Այս դրամների վրա թագն ունի հրստակ եռագագաթ տեսք, երկթեք է, պատկերված է համեմատաբար մանր կետերով, իսկ երեք գագաթները՝ խոշոր կետերով: Կախագարդերը նույնպես տրված են երկու կամ երեք գնդիկների տեսքով: Թագավորն ունի մորուք, որը ծածկում է այտերը, բայց չի իջնում ծնոտից ցած, քանի որ ամբողջովին երևում է պարանոցը: Վերջինս պատկերված է երկու կողմից ուղղաձիգ, հաստ, իսկ գգեստի վերին հատվածը՝ անկունաձև և/կամ կոր գծերով:

Դարձերեսին հավասարաթև խաչով արծաթապղինձե դրամները՝ B դաս, ոճա-պատկերագրական հատկանիշներից ելնելով, կարելի է բաժանել երեք խմբի: Առաջին (Ba) և երկրորդ (Bb) խմբերը, պատկերագրորեն և ոճով, իրար շատ մոտ են, իսկ երրորդը (Bc)՝ այս երկուսի աղավաղված վիճակն է:

Ba ենթադաս (**Նկ. 10.2**) – Ամբողջովին լավ պահպանված օրինակների բացակայությունը թույլ չի տալիս լիարժեք պատկերացում ունենալ թագավորի դեմքի պատկերային մանրամասների վերաբերյալ, բայց երևացող հատվածներից ստացած տպավորությունն այնպիսին է, որ թագավորը երիտասարդ է, գուցե անմորուք կամ շատ կարճ մորուքով: Գլխի երկու կողմում՝ երեքական գնդիկներից կազմված, մինչև կգակր հասնող ուղղաձիգ շարքեր են, գլխի գագաթին՝ յոթ գնդիկներից կազմված հորիզոնական կամ թեթևակի երկթեք շարք՝ մեջտեղի գնդիկը մյուսներից ավելի բարձր տեղադրված: Կարելի է ենթադրել, որ գլխի գագաթին պատկերվածը, որն իր ձևով հիշեցնում է պոմպոնով բերետ, թագն է, իսկ գլխի կողերից իջնում են թագի կախագարդերը: Կրծքավանդակի վերին մասը, ուսերի հետ միասին, պատկերված է կիսալուսնաձև, ուսերը՝ գնդաձև ելուստների տեսքով: Կրծքավանդակի վերնամասի այսպիսի պատկերումը բնորոշ է B

սերիայի բոլոր երեք խմբերին՝ կատարողական տարբերություններով:

Դրամների գեղարվեստական և կատարողական, ինչպես նաև թողարկման տեխնիկական որակը բավական լավն է:

Bb ենթադաս (Նկ. 10.3) – Այս խումբը նախորդից տարբերվում է հետևյալ հատկանիշներով. կետաշարով պատկերված թագի երկթեքությունն ավելի շեշտված է, ընդգծված են եռագագաթ թագի ոչ միայն կենտրոնական, այլև կողային երկու գագաթները: Ուղղաձիգ կետաշարերի ստորին մասում երկու արտաքին կողմերից ավելացված մեկական կետերը կասկած չեն թողնում, որ դրանք թագի կախազարդերն են: Թագի և կախազարդերի կողային գնդիկների առկայությունն է այն զլխավոր ցուցիչը, որով այս խումբն առանձնացրել ենք նախորդից:

Դրամների մի մասի վրա շարունակում ենք տեսնել երիտասարդ և անմորուք թագավորի պատկերագրական տիպը (**Նկ. 11**), թեև մեզ հայտնի օրինակների պահպանվածությունն այնպիսին է, որ բացի աչքերից, այլ մանրամասներ գրեթե չեն երևում, բացառությամբ մի դրամի (**Bb.16**): Երկար պարանոցով թագավորի այդ պատկերն ունի և՛ նախորդ, և՛ այս խմբի հատկանիշները, ու երևում է, որ նա կարճ մորուքով է: Որոշ դրամների վրա՝ նույն պատկերագրությամբ, բայց այլ ոճով կատարված, թագավորը փարթամ մորուքով է (**Bb. 9-10, 23, 33, 36**):

Bb ենթադասի դրամները՝ կնիքների փորագրման գեղարվեստական, կատարողական և դրամահատման որակի առումով, միմյանցից նկատելիորեն տարբերվում են: Դրամների թողարկման ծավալն, ըստ երևույթին, եղել է մեծ, թողարկումը տևել է երկար, որի իրագործմանը մասնակցել են վարպետությամբ ու ոճով իրարից տարբերվող դրամագործներ:

Bc ենթադաս (Նկ. 12) – Այս խմբի դրամներում թագավորի կրծքավանդակի վերին մասը նույնպես կիսալուսնաձև է, ուսերը՝ գնդաձև, խոշոր ելուստների տեսքով: Թագավորի դեմքը շրջանաձև է կամ թեթևակի ձվաձև, դիմագծերի մանրամասները գրեթե չեն նշմարվում: Գլուխը երեք կողմից շրջագծված է կետաշարով, որի վերին մասը կա՛մ երկթեք է (**Bc. 6**), կա՛մ կոր: Եթե ծանոթ չլինեինք նախորդ երկու խմբերում թագավորի դիմապատկերին, կարող էինք կարծել, որ կետաշարով պատկերվել են թագավորի մագերթ: Բայց, գագաթային հատվածում կետաշարի երկթեքությունը և կախազարդեր ակնարկող կետերը որոշ դրամ-

ների վրա (Bc. 1-2) կասկած չեն թողնում, որ սրանք նախորդ խմբերում մեր տեսած թագավորական պատկերների աղճատված տարբերակներն են:

Ա դասի արծաթապղինձները թագավորի պատկերագրական և ռճական առանձնահատկություններով շատ լավ աղերսվում են Հեթում-Չաբել արծաթե դրամների՝ հատկապես վաղ թողարկումների հետ²⁰: Ճիշտ նույն ռճով են արված թագավորի քիթն ու հոնքերը, այտերի վրա և քթի տակ՝ ուղղաձիգ կեռ մանրագծիկներով բեղն ու մորուքը, թագը և կախազարդերը (**Նկ. 13**):

Մյուս կողմից, Bc ենթադասի արծաթապղինձները թագավորի պատկերագրական և ռճական առանձնահատկություններով սերտորեն կապվում են Հեթում-Չաբել արծաթե դրամների երկար շարքի վերջին թողարկումների հետ (**Նկ. 14**):

Հեթումի Bc դասի արծաթապղինձները և սրանց չափազանց նման արծաթապղինձե դրամները, որոնք կրում են ԼԵԲՈՆ անունը, հորից որդուն դրամական տիպերի ժառանգական անցումը ցուցադրող ևս մի դրսևորում են (**Նկ. 15**):

Որքան ինձ հայտնի է, այս տիպի արծաթապղինձների վրա ԼԵԲՈՆ անունը դեռևս ոչ որ չի նկատել: Սրանք հիշատակվում են որպես Հեթում Բ-ի դրամներ:²¹ Գրության բովանդակությունը նույնն է, միայն փոխարինվել է թագավորի անունը՝ ԼԵԲՈՆ ԹԱԳԱԿԻՈՐ / ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅ[ՈՅ] (**Նկ. 16**): Հեթումի անունով Bc դասում և Լևոնի անունով այս դրամների վրա թագավորի պատկերը ճիշտ նույն ռճի է՝ փոքրիկ տարբերություններով: Թեև թագավորի դեմքի մանրամասնությունները պարզ չեն, բայց տպավորությունն այնպիսին է, որ և՛ մեկի, և՛ մյուսի դրամների վրա պատկերվածը երիտասարդ է և անմորուք: Ուշագրավ է նաև այն, որ Լևոնի անունով դրամների դարձերեսի հավասարաթև խաչն այլ կերպ է պատկերված՝ կենտրոնից դեպի դուրս աստիճանաբար լայնացող, կլորավուն ուրվագիծ ունեցող թևերով: Քանի որ այդ դրամները շատ նման են Հեթումի դրամներին և թագավորի անունը հաճախ դժվար ընթեռնելի է՝ հատաձուլի

²⁰ Հեթում-Չաբել արծաթե դրամների հարաբերական ժամանակագրությունը՝ թողարկումների հաջորդականությունը, որը վերականգնվել է կնիքների համեմատության միջոցով, մանրամասնորեն կներկայացվի Հեթում Ա-ի դրամաթողարկմանը նվիրված սիլոգե-հետազոտության մեջ:

²¹ Դրամների կատալոգում տե՛ս համապատասխան հղումները:

վրա մասամբ դրոշմված լինելու հետևանքով, խաչի նոր տիպի ընտրությունը կարող էր լինել Հեթումի և Լևոնի դրամները միմյանցից արագ տարբերակելու միջոց: Համենայն դեպս, Լևոնի անունով ներկայումս ինձ հայտնի հինգ օրինակների վրա խաչը միայն այդ տիպի է:

Հեթում Ա-ի դրամաթողարկման գեղարվեստական և կատարողական մակարդակի հետզհետե վատթարացման պատկերը, հատկապես վերջնափուլում, և երկրի ծանր իրավիճակի վերաբերյալ պատմական տեղեկությունները միմյանց փոխարացնում են: Լևոնի անունով Հեթում-Չաբել տիպի արծաթների և արծաթապղինձների համեմատաբար քիչ քանակը խոսում է այն մասին, որ սրանց թողարկումը մեծ չի եղել ու երկար չի տևել: 1266 թվականի մամլուքյան ավերիչ արշավանքի ժամանակ սուլթան Բայբարսի զորքերը կողոպտեցին Այաս, Ադանա, Տարսոն քաղաքները, հրի մատնեցին Սիս մայրաքաղաքը և տարան արքունական գանձարանը: Այս աղետի կործանարար ազդեցությունը շատ մեծ էր բոլոր առումներով, իսկ Հեթումի համար՝ նաև անձնական, քանի որ նրա երկու որդիներից մեկը՝ Թորոսը, զոհվել էր ռազմի դաշտում, իսկ գահաժառանգը՝ Լևոնը, գերի էր ընկել: Մեծ ջանքերի գործադրմամբ և Իլ-խան Աբաղայի միջնորդությամբ, Լևոնին հնարավոր եղավ ազատել մամլուքյան գերությունից 1268 թ.: Նույն թվականին Հեթումը հրաժարվեց գահից և, իշխանության դեկր հանձնելով որդուն, հեռացավ վանք: Հաջորդ տարի (1269 թ.) Լևոնը մեկնեց Աբաղա իլ-խանի մոտ և նրանից անձամբ ստացավ Հայոց գահը ստանձնելու իրավունքը²²: Լևոնը պաշտոնապես թագավոր օծվեց ավելի ուշ՝ հոր մահից հետո միայն: Թագադրման արարողությունը տեղի ունեցավ 1271 թ. հունվարի 6-ին Տարսոնի Սբ. Սոֆիա մայր տաճարում՝ մեծ հանդիսավորությամբ, բազմաթիվ օտարերկրյա հյուրերի ներկայությամբ:

Հեթում-Չաբել տիպի՝ ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱԲՈՐ գրությամբ արծաթե դրամների ու թողարկումները և, ոճով ու կատարմամբ դրանց շատ մոտ, Հեթումի ԵՑ դասի արծաթապղինձե դրամներն անտարակույս համաժամանակյա են և կարող են թվագրվել 1266-68 թվականներով: Սրանց անմիջապես հետևել են Հեթում-Չաբել տիպի, բայց ԼԵԻՈՆ ԹԱԳԱԲՈՐ գրությամբ արծաթե դրամները և Հեթումի ԵՑ տիպի արծաթապղինձերին ոճով ու

²² Տեր-Պետրոսյան 2007, 321-322:

կատարմամբ շատ մտա՝ ԼԵԻՈՆ ԹԱԳԱԼԻՈՐ գրությամբ արծաթապղինձները, որոնց թողարկման ամենահավանական ժամանակը 1268/9-70 թվականներն են:

Շարունակելով Հեթում-Չաբել դրամների հետ արծաթապղինձների առնչությունների թեման՝ դիտարկենք տառաձևերում առկա նույնական տարրերը և դրանց համակցությունները: Տառաձևերի քննարկման այս փուլում կրնդգրկենք նաև սխալմամբ Հեթում Բ-ին վերագրված՝ ծալապատիկ նստած թագավորի պատկերով պղնձե թողարկումները, քանի որ սրանցում առկա են Հեթում-Չաբել արծաթներին և Հեթումի արծաթապղինձներին շատ նման հատկանիշներ:

Հեթում բառի առաջին երեք տառերը՝ **ՀԵԹ**, հատկապես Հ-ն և Ե-ն, որոնց գրելաձևն ավելի բազմազան ու փոփոխական է, թողարկումների միջև կապերի և ժամանակագրական հաջորդականությունը բացահայտելուն օգնող շատ օգտակար ցուցիչներ են: Հեթում-Չաբել դրամների վաղ թողարկումների հետ արծաթապղինձների կապի մասին թագավորի դիմապատկերների նմանությունից ստացված տվյալներին ավելանում են տառաձևերից ստացված փաստարկները: Ավելին, տառաձևերի համեմատական վերլուծությունը թույլ է տալիս սրանց կողքին դնել նաև գահավորակին ծալապատիկ նստած թագավորի պատկերով, շուրջ 1246-1258 թթ. հատված, պղնձե դրամները (**Նկ. 17**): Հեթում-Չաբել դրամների, արծաթապղինձների A դասի և պղնձե այդ դրամների Ե տառն ունի տառակազմական դասական համաչափություններ՝ լավ արտահայտված ստորին կեռիկավոր մասնիկով: Հ-ն թեև դասական տեսք չունի, բայց կարող է ճանաչելի լինել նաև կոնտեքստից դուրս: Թ տառի գլխիկը նման է ներփակ պարույրի:

Հեթում-Չաբել արծաթե դրամների թողարկման միջին փուլի օրինակների վրա հանդիպում է «հովարաձև» գազաթով վերին մասնիկ ունեցող Հ տառ, որին հանդիպում ենք նաև արծաթապղինձների Ba սերիայում, ինչպես նաև ծալապատիկ նրստած թագավորի պատկերով պղնձե դրամների, հավանաբար դրանց թողարկման միջին փուլին վերաբերող, օրինակների վրա: Այս բոլորի գրություններում Ե տառն ունի արդեն շատ պարզեցված ձև, կարճիկ հորիզոնական մասնիկներով կամ, պարզապես, սեպաձև է՝ սրածայր միջին հորիզոնական մասնիկով (**Նկ. 18**):

Միջին փուլի այս նույն խմբերում, ինչպես նաև դրանց իսկ ավարտական փուլում, ավելի շատ են օրինակները, որոնցում Հ

տառը կազմված է երկու սեպածև մասնիկներից, որոնցից մեկի նեղացող ծայրն ուղղված է դեպի վար, մյուսինը՝ դեպի վեր, կատարողական չնչին տարբերություններով: Ե տառն ավելի հանախ հանդիպում է սեպածևին մոտ կամ սեպածև տեսքով. եթե վերին հորիզոնական մասնիկը կարճ գծիկի կամ գնդիկի տեսք ունի, ապա ստորին հորիզոնական մասնիկը գրեթե աննշան գծիկ է կամ կետ, կամ, պարզապես, բացակայում է (**Նկ. 19**):

Տառերի և դրանց համակցությունների այլ օրինակներ ևս՝ **ՄԹԱ, ԱԳԱ, ԱՅ**, վկայում են Հեթում-Չաբել արձաթե և արձաթապղնձե դրամների միջև կապի մասին (**Նկ. 19**):

Հեթում Ա – Լևոն Բ անցումային թողարկումներ կարելի է գտնել նաև պղնձե դրամներում: **Նկ. 20**-ում պատկերված դրամները, որոնցից մեկը կրում է Հեթումի, մյուսը՝ Լևոնի անունը, չնայած պատկերագրական որոշ տարբերություններին, միմյանց շատ մոտ են ոճով, կերտվածքով և գրության ձեռագրային հատկանիշներով: Հատկապես ուշագրավ է ԾԻՆԵԱԼ բառում ԾԻ տառերի ձևի և փոխդասավորության նույնականությունը: Քանի որ այսպիսի գրելաձևը հազվադեպ է հանդիպում կիլիկյան դրամներում, այն որոշակի ցուցիչ է և անտեսել չի կարելի:

Կա Հեթում-Չաբել արձաթե դրամների ուշ թողարկումների, Հեթումի անվամբ՝ ծալապատիկ նստած թագավորի պատկերով պղնձե դրամների և Հեթում-Չաբել տիպի, բայց ԼԵԻՈՆ ԹԱԳԱԲՈՐ գրությամբ արձաթե դրամների միջև կապի մի շատ համոզիչ ցուցիչ ևս: Այն դրսևորվում է Հեթում-Չաբել արձաթեների և Լևոնի արձաթեների դարձերեսի առյուծների գլուխները Հեթումի որոշ պղինձների՝ ծալապատիկ նստած թագավորի գլուխների հետ համեմատելիս (**Նկ. 21**): Հեթում և Լևոն անուններով դրամների ոճային առանձնահատկությունների ողջ կոնտեքստը այժի տակ առնելով, ակնհայտ է դառնում, որ վերոնշյալ բոլոր դեպքերում հեղինակը նույն փորագրիչն է: Նրա ոճը հստակորեն տարբերվում է մյուսներից, մասնավորապես՝ դեմքերի պատկերման ուրույն եղանակով²³: Քանի որ Հեթում-Չաբել տիպի՝ Հեթումի և Լևոնի արձաթեները, ինչպես նաև Հեթումի և Լևոնի արձա-

²³ Ծալապատիկ նստած թագավորի պատկերով Հեթումի դրամների սերիայում ոճական առանձնահատկությունների համեմատությունը թույլ է տալիս տարբերակել երեք ոճ և ենթադրել, որ, դրանց թողարկման մոտ քսան տարուց ավել տևած ժամանակահատվածում, դրամահատարանում աշխատել են երեք դրամահատ փորագրիչներ:

թապղինձներն ընդհանուր առմամբ կարող ենք թվագրել 1266-1270 թվականներով, ապա սրանց ոճով արված Հեթումի պղինձները նույնպես տեղավորվում են 1260-ական թվականների երկրորդ կեսի մեջ:

Հեթում և Լևոն անուններով դրամների ոճա-պատկերագրական համեմատական ուսումնասիրությունը պարտադրում է գտնել մի կարևոր փաստի բացատրությունը ևս: Հարցը քննելու համար ստիպված ենք վերադառնալ թագավորի դիմապատկերի վերաբերյալ վերևում ասվածին: Հեթում-Կայ Քոբաղ դրամների և դրանց հետ զուգահեռ թողարկված՝ գահին նստած թագավորի (3a, 3b), ձի հեծած թագավորի (4) և թագավորի դիմահայաց գլխի պատկերներով պղինձե դրամների (7) վրա թագավորն անմորուք է, երիտասարդ դիմագծերով: Հեթումն այդ ժամանակ 11-21 տարեկան էր (1226-1236 թթ.), և հասկանալի է, թե ինչու են նրան պատկերել այդ կերպ: Հեթում-Կայ Խոսրով դրամների և դրանց հետ զուգահեռ թողարկված՝ գահավորակի վրա նստած թագավորի (3c) պատկերով պղինձների վրա (1236-1245/6 թթ.) Հեթումը նույնպես անմորուք է և նույնպես երիտասարդ դիմագծերով: Նա այդ տարիներին 21-30/1 տարեկան էր:

Հեթում-Չաբել արծաթե բոլոր դրամների վրա (1), սակայն, Հեթումը պատկերված է ընդգծված բեղ-մորուքով, հասուն տղամարդու տեսքով: Հնարավոր է, որ 1226-1246 թթ. ընթացքում թողարկված դրամների վրա մի դեպքում թագավորը պատկերվել էրիտասարդ և անմորուք, իսկ մյուս դեպքում՝ հասուն տարիքում և մորուքով: Այս հակասությունը պատճառներից մեկն է, որն ստիպում է մեզ Հեթում-Չաբել արծաթե դրամների և կես դրամների թողարկման սկիզբ համարել ոչ թե 1226 թ. (կամ, թեկուզ, 1228 թ.), այլ ոչ շուտ քան 1246 թվականը: Այսինքն՝ դրամական պատկերագրության մեջ արմատական փոփոխություն՝ նոր շեշտադրմամբ, կատարվել է հայ-սելջուկյան դրամների թողարկման ավարտից հետո, երբ սկսվել է նոր փուլ՝ գուտ հայկական դրամների թողարկումով: Ըստ երևույթին, Հեթումի գահակալման լեգիտիմության հիմնավորման գործում, առնվազն արտաքին դրսևորման առումով, սկզբնական շրջանում ավելի առաջնահերթ է դիտվել ոչ այնքան նրա՝ թագավորության հիմնադրի միակ գահաժառանգ հանդիսացող դստեր ամուսին լինելը, որքան Ռումի սուլթանի կողմից Հեթումի իշխանության ճանաչումը, որի գինը վասալական կախվածության ընդունումն էր: Ռումի սուլթան Կայ Խոսրովի մահվանից հետո՝ ազատվելով սուլթանու-

թյան գերիշխանությունից, Հեթումի իշխանության լեգիտիմության խնդրում բարձրացավ և առաջին պլան մղվեց Չարեյի դերը: Սա է, կարծում եմ, պատճառը, որ 1246 թվականից սկիզբ առած նորաստեղծ դրամական սերիայի պատկերագրության մեջ հայտնվեց Չարեյ թագուհու կերպարը, իր ամուսնու՝ Հեթում թագավորի հետ միասին²⁴: Այդ պատկերատիպն անփոփոխ մնաց անգամ 1252 թվականին թագուհու մահվանից հետո²⁵:

1246 թ. Հեթումն արդեն երեսունմեկ տարեկան էր: Հասուն երիտասարդական տարիքում գտնվող թագավորին սկսեցին պատկերել բեղ-մորուքով թագուհու կողքին կանգնած: Նրան ճիշտ այդպես են պատկերել նաև կրկնաթև խաչով արծաթապղնձե դրամների վրա, որոնց թողարկումը, հավանաբար, սկսվել է Հեթում-Չարեյ արծաթե դրամների հետ զուգահեռ, այդ սերիայի սկզբնական շրջանում:

Մինչ այժմ թվարկված դեպքերում հավանական իրականության հետ հակասություններ տեսանելի չեն: Հարցեր առաջացնում է 1246 թ. հետո թողարկված դրամների մի մասի վրա թագավորի՝ մորուքով, իսկ մյուս մասի վրա՝ անմորուք պատկերների գոյության փաստը: Այն, որ Հեթումի անունով արծաթապղնձների թողարկման հարաբերական ժամանակագրությունը ճիշտ է, այսինքն՝ նախ թողարկվել են բեղմորուքով թագավորի պատկերով դրամները (A դաս), որոնց հաջորդաբար հետևել են

²⁴ Թագուհու պատկերի բացակայությունը 1226-1246 թթ. թողարկված հայ-սելջուկյան արծաթե դրամների վրա կարելի էր, գուցե, բացատրել կրոնական և սովորութային հանգամանքներով: Թագուհուն, սակայն, չեն պատկերել նաև այդ նույն ժամանակահատվածում թողարկված զուտ հայկական բնույթ ունեցող և ներքին շրջանառության համար նախատեսված պղնձե դրամների վրա:

²⁵ Լ. Տեր-Պետրոսյանը գրում է, որ Հեթումը «...երկրի կառավարման դեկն ստանձնել էր ոչ թե լիիրավ թագավորի, այլ թագակիր-գործակցի (prince consort) կարգավիճակով»: «Այն, որ Հեթումը եւ Չապելը երկիրը de jure կառավարել են զահակից-թագավորների հավասար իրավունքով, ապացուցվում է նախ եւ առաջ նրանց համատեղ հրապարակած հրովարտակաների առկայությամբ»: «...Կիլիկիո պատմության մեջ ոչ մի այլ թագուհի նման պատվի չի արժանացել, ինչն ընդգծում է Չապելի առանձնահատուկ իրավական կարգավիճակը», որը «հաստատվում է նաեւ «իրեղեն ապացույցներով», այն է՝ դրամագիտության տվյալներով»: Տեր-Պետրոսյան 2007, 268-269: Տե՛ս նաև Bedoukian 1979, 60, 82:

անմորութ թագավորի պատկերով դրամները (Ba, Bb²⁶, Bc), փորձեցի ապացուցել վերևում՝ բերելով մի շարք հիմնավորումներ: Այն, որ ծալապատիկ նստած անմորութ թագավորի պատկերով պղնձե դրամների (8) թողարկումը կարող է սկսված լինել 1246 թվականից ոչ ավելի շուտ, նույնպես անառարկելի է: Այսինքն, ստացվում է, որ Հեթում-Չաբել արծաթե դրամները, մի կողմից, իսկ դրանց հետ զուգահեռաբար թողարկված արծաթապղինձների մեծ մասը և վերոնշյալ պղնձե դրամները, մյուս կողմից, թագավորին ներկայացրել են տարբեր կերպ. առաջին դեպքում՝ մորուքով, մյուս դեպքերում, մեծ մասամբ, անմորութ: Ինչպե՞ս դա կարող է բացատրվել:

Այս խնդրի լուծման բանալին, կարծում եմ, տալիս է Հեթում-Չաբել դրամների դարձերեսի առյուծի պատկերագրությունը (**Նկ. 22**): Որքան էլ որ պարզունակ է Հեթում-Չաբել դրամների ոճը, այնուամենայնիվ, առնվազն վաղ փուլի դրամներում, թագուհու դիմագծերն արտահայտում են կանացիություն, թագավորինը՝ առնականություն, որը շեշտվում է նաև բեղ-մորուքի առկայությամբ: Առյուծը, որը մարդկային դիմագծերով է և կրում է նույնպիսի թագ, ինչպիսին նույն դրամի դիմերեսին պատկերված թագավորը, բայց, ի տարբերություն թագավորի, նա բեղ-մորուք չունի, և, կրկնեմ, որքան էլ որ պարզունակ է ոճը, փորագրիչը ցանկացել և կարողացել է պատկերել երիտասարդ, անգամ «մանկա-պատանեկան» դիմագծեր ունեցող առյուծ, ավելի ճիշտ կլինի ասել՝ կոբյուն (**Նկ. 23**): Ինչո՞ւ: Ի՞նչ կամ ո՞ւմ է խորհրդանշում առյուծը:

Կամ. արծաթապղնձե դրամները, մի դեպքում, թողարկվել են մորուքավոր թագավորի (A դաս), մյուս դեպքում՝ անմորութ երիտասարդի պատկերով (Ba և Bb-ի մեծ մասը), որոնք ավելի ուշ են թողարկվել, քան մորուքավոր թագավորի պատկերովները: Կրկին հարց է ծագում. ինչո՞ւ պետք է մորուքավոր թագավորի պատկերով արծաթապղինձները նախորդեին անմորութ թագավորի պատկերով արծաթապղինձներին:

Կամ. Հեթում-Չաբել արծաթե դրամների հետ զուգահեռաբար թողարկված պղինձների վրա՝ ծալապատիկ նստած թագավորն անմորութ է: Ինչո՞ւ. եթե սա Հեթումն է, ապա այդ նույն ժա-

²⁶ Այս ենթադասում հանդիպում են դրամներ, որոնց վրա թագավորը պատկերված է կարճ մորուքով:

մանակի արժաթների վրա, թագուհու հետ կանգնած, նա մորուքով է:

Չաբելին Կոստանդին պայրը հարկադրաբար էր ամուսնացրել իր որդու հետո, նախապես սպանել տալով նրա առաջին ամուսնուն՝ Փիլիպ Անտիոքացուն: Ամուսնու սպանությունից հետո Չաբելը փախավ և ապաստանեց Հիվանդախնամ ասպետների մոտ Սելևկիա քաղաքում: Ի վերջո, Կոստանդինին հաջողվեց իրագործել Լևոնի դստերն իր Հեթում որդու հետ ամուսնացնելու ծրագիրը: Չաբելը չէր կարողանում հաշտվել սիրեցյալ ամուսնու սպանության և տասնմեկամյա երեխայի հետ իրեն բռնի ամուսնացնելու փաստի հետ: 1230 թ. նա կրկին ըմբոստացավ, իր մոր աջակցությամբ, և փախավ Սելևկիա: Կոստանդինին այս անգամ ևս հաջողվեց ինչ որ կերպ լուծել հարցը և թագուհուն հետ վերադարձնել: Այդուհանդերձ, Չաբելը, Հեթումի կինը դառնալուց հետո, տասը տարի շարունակ հրաժարվել է կատարել իր ամուսնական պարտականությունները: Նրանց առաջնեկը՝ Լևոնը, ծնվեց 1236 թ. և, ըստ ընդունված կարգի, հենց նա պետք է ժառանգեր Հայոց թագավորության գահը²⁷: 1246 թ., երբ սկիզբ դրվեց նոր պատկերազրությանը դրամական սերիաներին, գահաժառանգն արդեն տասը տարեկան էր: Գուցե շատ համարձակ կարող է թվալ այս ենթադրությունը, բայց այն հնչեցնելու հիմքեր տեսնում եմ.

ա. Չաբելի, Հեթումի և կորյունի պատկերներով արձայթե դրամները դիտողին ներկայացնում են «ընտանեկան դիմանկար», որում խաչակիր կորյունը մարմնավորում է գահաժառանգ Լևոնին,

բ. արձայթապղինձների B սերիայի անմորուք, շատ հազվադեպ՝ կարճ մորուքով, երիտասարդը նույնպես թագաժառանգ Լևոնն է,

գ. պղնձե դրամների վրա ծալապատիկ նստած անմորուք, երիտասարդ անձնավորությունը կրկին թագաժառանգ Լևոնն է:

Այո, նրա անունը չի նշվել դրամների վրա, ինչպես և չի նշվել թագուհու անունը, բայց ժամանակակիցները գիտակցում էին պատկերների խորհրդանշական բնույթը: Հեթում թագավորի անունով, բայց գահաժառանգ Լևոնի խորհրդանշական (խաչակիր կորյուն) և ռեալիստական (ծալապատիկ նստած երիտասարդ) պատկերներով դրամները թողարկվել են Հեթումի գահակալման

²⁷ Տեր-Պետրոսյան 2007, 255-257:

ողջ երկրորդ կեսի ընթացքում: Գահաժառանգի ծնունդն, ըստ երևույթին, շրջադարձային դրական նշանակություն է ունեցել ինչպես թագավորական գույգի կյանքում, այնպես էլ երկրի ներսում Հեթումի թագավորական իշխանության լեգիտիմության ամրապնդման առումով: Լևոնի անունը, ի լրումն նրա պատկերների, հայտնվեց դրամների վրա միայն այն ժամանակ, երբ Հեթումը հրաժարվեց գահից, այն փոխանցեց իր միակ ողջ մնացած որդուն և հեռացավ վանք՝ ընդունելով Մակար անունը: Ի դեպ, անվանափոխման հանգամանքը նույնպես էական է դրամների վրայից Հեթում անունը հեռացնելու հարցում: Հոր կենդանության օրոք, վերոհիշյալ երեք խումբ դրամների վրա (արծաթե, արծաթապղնձե և պղնձե) Հեթումի անունը փոխարինվեց Լևոնի անունով առանց որևէ էական փոփոխություն կատարելու պատկերագրության մեջ:

Լևոն Բ թագավորի նոր պատկերագրությամբ և նոր ոճի դրամները, որոնց մենք այստեղ չենք անդրադառնում, ի հայտ եկան 1271 թ. հունվարին նրա թագադրությունից հետո միայն:

Եվ այսպես, ամփոփելով մեր քննության արդյունքները, արձանագրենք, որ Հեթում անվան հիշատակությամբ արծաթե, արծաթապղնձե և պղնձե բոլոր դրամները թողարկվել են միմիայն Հեթում Ա-ի օրոք՝ 1226-1268/9 թվականների ընթացքում: Հեթում Բ-ը դրամներ չի թողարկել: Թագավորի դիմահայաց կիսանդրիով և կրկնաթև խաչով (5), թագավորի դիմահայաց կիսանդրիով և հավասարաթև խաչով (6) արծաթապղնձները, թագավորի դիմահայաց գլխով և կրկնաթև խաչով (7), ծալապատիկ նստած թագաժառանգով և հավասարաթև խաչով (8) պղնձները նրան վերագրվել են սխալմամբ: Հեթում Բ-ի կողմից դրամ չթողարկելու պատճառը բացատրելի է. նա միակն էր կյիվկյան թագավորների ողջ շարքում, որն ինքնակամ հրաժարվել էր թագադրվելուց, ինչի մասին հստակ հիշատակություններ կան հայկական և օտար աղբյուրներում²⁸: Նա մանկուց հետաքրքրված է եղել հոգևոր կրթությամբ ու «...փափագմամբ եւ ըղձաւետ տենչանօք խոկայր միշտ գտանել զերկնաւորն թագաւորութիւն»²⁹: Հոր՝ Լևոն Բ-ի, մահից հետո, 1289 թ., Հեթումը գահը ժառանգել էր իր կամքից անկախ, և միայն այն պատճառով, որ նա էր օրինական ժառանգորդը: 18 տարի տևած ընդհատումներով գահակալման ընթացքում, նա բազմիցս փորձել է ազատվել երկիրը կառավարելու՝

²⁸ Տեր-Պետրոսյան 2007, 338-339:

²⁹ Մաթևոսյան 1984, 788-789:

իրեն բաժին հասած ակամա պարտականությունից: 1293 թ. նա առաջին անգամ հրաժարվեց գահից հոգուտ իր եղբայր Թորոսի և դարձավ Ֆրանցիսկյան վանական, ընդունելով Հովհաննես անունը: Թագ կրելուց հրաժարվելը և կրոնավորական անուն ընդունելը փաստեր են, որոնց միջոցով կարելի է հասկանալ Հեթում Բ-ի կողմից դրամ չթողարկելու պատճառը:

Հեթում Ա-ի և Լևոն Բ-ի արծաթապղնձե դրամների կատալոգ Հեթում Ա

Կատալոգում ընդգրկվել են Հեթում Ա-ի 7 դրամներ ՀՊԹ հավաքածոյից, 31 դրամներ Nercessian 2006-ից և 64 դրամներ համացանցից: Կատալոգում ներկայացված Լևոն Բ-ի 5 դրամներից մեկը Nercessian 2006-ից է, մեկ դրամ Ժ. Քրիստեանյանի հավաքածուից և 3 դրամ համացանցից: Հեթում Ա-ի դրամները խմբավորված են ըստ դասերի՝ A, Ba, Bb, Bc: Կատարվել է կնիքների համեմատություն: Կնիքների անհատականացման համար ստեղծվել են կողեր, որոնց համար կիրառվել են գրությունները: Դիմերեսի և դարձերեսի յուրաքանչյուր կնիքի կողը բաղկացած է դասի նշումից, ամբողջական գրությունից և տվյալ կնիքին տրված համարից: Նույն կնիքով հատված դրամների կողերը գրված են թավատառերով:

A դաս

A.1. 0.43 գ

Gerhard Hirsch Nachfolger, Auction 308, Lot 3228, 13.02.2015.

Obv. +ՀԵԹՈՒԲՄ ԹԱԳԱԲՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

A. **HET'OWM T'AGAWOR 1 / A. AMENAYN HAYO 1**

Դարձերեսի նույն կնիքը՝ № 7-8.

A.2. 0.58 գ, 15 մմ, 6 ժ:

Classical Numismatic Group, Inc., Electronic Auction 212, Lot 475, 17.06.2009.

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

A. **HET'OWM T'AGAWOR 1 / A. AMENAYN HAYO 2**

A.3. 0.62 գ, 16 մմ, 6 ժ:

Classical Numismatic Group, Inc., Mail Bid Sale 81, Lot 1256,
20.05.2009.

Obv. +ՀԵԹՈՒԲՄ ԹԱԳԱԲՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

A. **HET'OWM T'AGAWOR 2** / A. AMENAYN HAYO 3

A.4. 0.44 գ, 16 մմ:

Numismatik Naumann, Auction 86, Lot 790, 02.02.2020.

A. **HET'OWM T'AGAWOR 2** / A. AMENAYN HAYO 3

A.5. 0.56 գ, 17 մմ:

Savoca Numismatik, 23rd Blue Auction, Lot 1917, 24.08.2019.

Obv. +ՀԵԹՈՒԲՄ ԹԱԳԱԲՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

A. **HET'OWM T'AGAWOR 3** / A. AMENAYN HAYOC' 1

Դարձերեսի նույն կնիքը՝ № 16.

A.6. 0.55 գ, 16 մմ:

Nercessian 2006, No.43b.

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

A. **HET'OWM T'AGAWOR 3** / A. AMENAYN HAYOC' 2

A.7. 0.59 գ

Stack's, The Golden Horn Collection, Lot 3481, 12.01.2009.

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

A. **HET'OWM T'AGAWOR 3** / A. AMENAYN HAYO 1

Դարձերեսի նույն կնիքը՝ № 1.

A.8. 0.55 գ, 16 մմ:

Jean Elsen & ses Fils S.A., Auction 121, Lot 754, 14.06.2014.

A. **HET'OWM T'AGAWOR 3** / A. AMENAYN HAYO 1

A.9. 0.51 գ, 15 մմ, 7 ժ:

Roma Numismatics Limited, E-Sale 29, Lot 710, 27.08.2016.

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

A. **HET'OWM T'AGAWOR 3** / A. AMENAYN HAYO 4

A.10. 0.51 q

Jean Elsen & ses Fils S.A., Auction 126, Lot 546, 12.09.2015.

Obv. +ՀԵԹՈՒԲ ՌԱԳԱԲՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

A. HET'OWM T'AGAWOR 4 / A. AMENAYN HAYOC' 4

A.11. 0.54 q, 17 մմ:

Savoca Numismatik, 90th Blue Auction, Lot 1936, 28.11.2020.

A. HET'OWM T'AGAWOR 4 / A. AMENAYN HAYOC' 4

A.12. 0.45 q

Nercessian 2006, No.43c.

Obv. +ՀԵԹՈՒԲ ՌԱԳԱԲՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

A. HET'OWM T'AGAWOR 5 / A. AMENAYN HAYOC' 5

A.13. 0.39 q

Jean Elsen & ses Fils S.A., Auction 117, Lot 729, 15.06.2013.

Obv. +ՀԵԹՈՒԲ ՌԱԳԱԲՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅ

A. HET'OWM T'AGAWO 5 / A. AMENAYN HAY 1

A.14. 0.56 q, 15 մմ:

Savoca Numismatik, 31st Blue Auction, Lot 1631, 25.04.2020.

A. HET'OWM T'AGAWO 5 / A. AMENAYN HAY 1

A.15. 0.57 q

https://www.vcoins.com/en/stores/aegean_numismatics

A. HET'OWM T'AGAWO 5 / A. AMENAYN HAY 1

A.16. 0.65 q, 16 մմ:

http://www.ancientarmeniancoins.com/images/cilician_coins/hetoum/hetoum-II-denier-CA2037

Obv. +ՀԵԹՈՒԲ ՌԱԳԱԲՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

A. HET'OWM T'AGAWR 1 / A. AMENAYN HAYOC' 1

Դարձերեսի նույն կնիքը՝ № 5.

A.17. 0.87 գ

<https://www.zeno.ru/showphoto.php?photo=166023>

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

A. HET'OWM T'AGAWR 1 / A. AMENAYN HAYOC' 3

A.18. 0.66 գ

Stack's Bowers Galleries, November 2012 Baltimore Auction, Lot 10010, 15.11.2012.

Obv. +ՀԵԹՈՒԲ ԹԱԳԱԲ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅ

A. HET'OWM T'AGAW 1 / A. AMENAYN HAY 2

A.19. 0.54 գ, 16,1 մմ, 3 ժ.

HMA 17941-60. Պտուկյան, նվեր, 1965.

Obv. +ՀԵԹՈՒԲ ԹԱԳԱԲ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱ

A. HET'OWM T'AGA 1 / A. AMENAYN HA 1

Բ դաս

Ba ենթադաս

Ba.1. 0.65 գ

Nercessian 2006, No.01.

Obv. +ՀԵԹՈՒԲ ԹԱԳԱԲՈՐ Հ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ba. HET'OWM T'AGAWOR H 1 / Ba. AMENAYN HAYOC' 1

Ba.2. 0.68 գ, 16 մմ:

Nercessian 2006, No.10d.

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Ba. HET'OWM T'AGAWOR H 1 / Ba. AMENAYN HAYO 5

Դարձերեսի նույն կնիքը՝ № 7, 12, 20.

Ba.3. 0.65 գ, 15 մմ:

Numismatik Naumann, Auction 58, Lot 689, 01.10.2017.

Obv. +ՀԵԹՈՒԲ ԹԱԳԱԲՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ba. HET'OWM T'AGAWOR 1 / Ba. AMENAYN HAYOC' 2

Ba.4. 0.47 գ, 16.1 մմ, 6 ժ:

HMA 17549-11. Ճևահիլրճյան, նվեր, 1959.

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Ba. **HET'OWM T'AGAWOR 1** / Ba. **AMENAYN HAYO 1**

Դարձերեպի նույն կնիքը՝ № 13, 22, 23.

Ba.5. 0.58 գ, 15 մմ:

Leu Numismatik, Web Auction 7, Lot 1722, 23.02.2019.

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Ba. **HET'OWM T'AGAWOR 1** / Ba. **AMENAYN HAYO 2**

Դարձերեպի նույն կնիքը՝ № 10, 16.

Ba.6. 0.57 գ, 15 մմ:

Savoca Numismatik, 31st Blue Auction, Lot 1630, 25.04.2020.

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Ba. **HET'OWM T'AGAWOR 1** / Ba. **AMENAYN HAYO 3**

Դարձերեպի նույն կնիքը՝ № 14, 15, 17.

Ba.7. 0.50 գ, 15 մմ:

https://www.vcoins.com/en/stores/dmitry_markov/96/

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Ba. **HET'OWM T'AGAWOR 1** / Ba. **AMENAYN HAYO 5**

Դարձերեպի նույն կնիքը՝ № 2, 12, 20.

Ba.8. 0.53 գ, 14 մմ, 6 ժ:

Classical Numismatic Group, Inc., Auction 85, Lot 115, 15.09.2010 =

Nercessian 2006, No.10a.

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Ba. **HET'OWM T'AGAWOR 1** / Ba. **AMENAYN HAYO 6**

Ba.9. 0.51 գ, 16 մմ:

Nercessian 2006, No.10f.

Ba. **HET'OWM T'AGAWOR 1** / Ba. **AMENAYN HAYO 6**

Ba.10. 0.49 գ, 15 մմ, 7 ժ:

Nercessian 2006, No.10e.

Obv. +ՀԵԹՈՒԲ ԹԱԳԱԻՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Ba. **HET'OWM T'AGAWOR 2** / Ba. **AMENAYN HAYO 2**
Դարձերեսի նույն կնիքը՝ № 5, 16.

Ba.11. 0.55 գ

Münz Zentrum Rheinland, Auction 167, Lot 744, 04.09.2013.

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Ba. **HET'OWM T'AGAWOR 2** / Ba. **AMENAYN HAYO 4**
Դարձերեսի նույն կնիքը՝ № 24.

Ba.12. 0.66 գ

Jean Elsen & ses Fils S.A., Auction 133, Lot 725, 10.06.2017.

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Ba. **HET'OWM T'AGAWOR 2** / Ba. **AMENAYN HAYO 5**
Դարձերեսի նույն կնիքը՝ № 2, 7, 20.

Ba.13. 0.59 գ

Jean Elsen & ses Fils S.A., Auction 126, Lot 545, 12.09.2015.

Obv. +ՀԵԹՈՒԲ ՌԱԳԱԲՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Ba. **HET'OWM T'AGAWOR 3** / Ba. **AMENAYN HAYO 1**
Դարձերեսի նույն կնիքը՝ № 4, 22, 23.

Ba.14. 0.59 գ, 15 մմ, 4 ժ:

Classical Numismatic Group, Inc., Electronic Auction 312, Lot 286,
09.10.2013.

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Ba. **HET'OWM T'AGAWOR 3** / Ba. **AMENAYN HAYO 3**
Դարձերեսի նույն կնիքը՝ № 6, 15, 17.

Ba.15. 0.46 գ, 14.7 մմ, 2 ժ:

HMA 17939-185. Պսոուկյան, նվեր, 1965.

Obv. +ՀԵԹՈՒԲ ՌԱԳԱԲՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Ba. **HET'OWM T'AGAWOR 4** / Ba. **AMENAYN HAYO 3**
Դարձերեսի նույն կնիքը՝ № 6, 14, 17.

Ba.16. 0.60 գ, 15 մմ, 6 ժ:

Nercessian 2006, No.10b.

Obv. +ՀԵԹՈՒԲ ՌԱԳԱԲՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Ba. **HET'OWM T'AGAWOR 5** / Ba. **AMENAYN HAYO 2**

Դարձերեսի նույն կնիքը՝ № 5, 10.

Ba.17. 0.76 գ, 15 մմ:

Numismatik Naumann, Auction 58, Lot 690, 01.10.2017.

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Ba. **HET'OWM T'AGAWOR 5** / Ba. **AMENAYN HAYO 3**

Դարձերեսի նույն կնիքը՝ № 6, 14, 15.

Ba.18. 0.53 գ, 15 մմ, 10 ժ:

Classical Numismatic Group, Inc., Electronic Auction 161, Lot 322, 28.03.2007.

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Ba. **HET'OWM T'AGAWOR 5** / Ba. **AMENAYN HAYO 7**

Դարձերեսի նույն կնիքը՝ № 29.

Ba.19. –.

Nercessian 2006, No.8.

Obv. +ՀԵԹՈՒԲ ՌԱԳԱԲՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Ba. **HET'OWM T'AGAWOR 6** / Ba. **AMENAYN HAYO 10**

Ba.20. 0.52 գ

Nercessian 2006, No.25.

Obv. +ՀԵԹՈՒԲ ՌԱԳԱԲՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Ba. **HET'OWM T'AGAWOR 7** / Ba. **AMENAYN HAYO 5**

Դարձերեսի նույն կնիքը՝ № 2, 7, 12.

Ba.21. 0.56 գ

Nercessian 2006, No.3a.

Obv. +ՀԵԹՈՒԲ ՌԱԳԱԲ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Ba. **HET'OWM T'AGAW 1** / Ba. **AMENAYN HAYOC' 3**

Ba.22. 0.52 գ

Savoca Numismatik, 30th Blue Auction, Lot 2274, 21.03.2020.

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Ba. **HET'OWM T'AGAW 1** / Ba. **AMENAYN HAYO 1**

Դարձերեսի նույն կնիքը՝ № 4, 13, 23.

Ba.23. 0.50 գ, 15.8 մմ, 1 Ժ:

https://www.vcoins.com/en/stores/pavlos_s_pavlou_numismatist/131/

Ba. **HET'OWM T'AGAW 1** / Ba. **AMENAYN HAYO 1**

Դարձերեսի նույն կնիքը՝ № 4, 14.

Ba.24. 0.60 գ

Nercessian 2006, No.27.

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Ba. **HET'OWM T'AGAW 1** / Ba. **AMENAYN HAYO 4**

Դարձերեսի նույն կնիքը՝ № 11

Ba.25. 0.69 գ

Jean Elsen & ses Fils S.A., Auction 111, Lot 737, 10.12.2011.

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Ba. **HET'OWM T'AGAW 1** / Ba-b. **AMENAYN HAYO 8**

Դարձերեսի նույն կնիքը՝ Bb ենթադաս, № 8-10.

Ba.26. –

Nercessian 2006, No.30a.

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՑ

Ba. **HET'OWM T'AGAW 1** / Ba. **AMENAYN HAYC' 1**

Ba.27. 0.45 գ

Stack's Bowers Galleries, November 2012 Baltimore Auction, Lot 22065, 15.11.2012

Obv. +ՀԵԹՈՒԲՄ ԹԱԳԱԻ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Ba. **HET'OWM T'AGAW 2** / Ba. **AMENAYN HAYO 9**

Ba.28. 0.55 գ, 16 մմ:

Nercessian 2006, No.2.

Obv. +ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Ba. **HET'OWM T'AGAOR 1** / Ba. AMENAYN HAYOC' 4

Ba.29. 0.58 գ, 15 մմ:

Solidus Numismatik, Auction 21, Lot 785, 04.11.2017.

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Ba. **HET'OWM T'AGAOR 1** / Ba. AMENAYN HAYO 7

Դարձերեսի նույն կնիքը՝ № 18

Bb ենթադաս

Bb.1. 0.62 գ:

Gorny & Mosch Giessener Münzhandlung, Auction 182, Lot 5719, 14.10.2009.

Obv. +ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱԻՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Bb. **HET'OWM T'AGAWOR 1** / Bb. AMENAYN HAYOC' 1

Bb.2. 0.69 գ, 15 մմ:

Savoca Numismatik, 32nd Blue Auction, Lot 1968, 23.05.2020.

Bb. **HET'OWM T'AGAWOR 1** / Bb. AMENAYN HAYOC' 1

Bb.3. 0.52 գ, 16 մմ:

Nercessian 2006, No.5.

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Bb. **HET'OWM T'AGAWOR 1** / Bb. AMENAYN HAYOC' 2

Bb.4. 0.62 գ, 15 մմ:

Solidus Numismatik, Auction 19, Lot 917, 23.09.2017.

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Bb. **HET'OWM T'AGAWOR 1** / Bb. AMENAYN HAYO 1

Bb.5. 0.54 գ:

Solidus Numismatik, Auction 27, Lot 1237, 19.01.2017.

Bb. **HET'OWM T'AGAWOR 1** / Bb. AMENAYN HAYO 1

Bb.6. –.

Münzen & Medaillen GmbH (DE), Auction 47, Lot 649, 23.05.2019.

Bb. HET'OWM T'AGAWOR 1 / Bb. AMENAYN HAYO 1

Bb.7. 0.65 գ:

Nercessian 2006, No. 7:

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ՛

Bb. HET'OWM T'AGAWOR 1 / Bb. AMENAYN HAYO՝ 1

Bb.8. 0.45 գ, 14.6 մմ, 6 ժ:

HMA 19032-149. Մազրույթյան, նվեր, 1980:

Obv. +ՀԵԹՈՒԲՄ ԹԱԳԱԻՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ՛

Bb. HET'OWM T'AGAWOR 2 / Ba-b. AMENAYN HAYO 8

Դարձերեսի նույն կնիքը՝ Ba ենթադաս, № 26.

Bb.9. 0.66 գ, 16 մմ, 10 ժ:

Roma Numismatics Limited, E-Sale 77, Lot 1574, 26.11.2020.

Bb. HET'OWM T'AGAWOR 2 / Ba-b. AMENAYN HAYO 8

Bb.10. 0.60 գ:

Münzen & Medaillen GmbH (DE), Auction 47, Lot 650, 23.05.2019.

Bb. HET'OWM T'AGAWOR 2 / Ba-b. AMENAYN HAYO 8

Bb.11. 0.37 գ, 14 մմ, 3 ժ:

Leu Numismatik, Web Auction 2, Lot 965, 03.12.2017.

Obv. +ՀԵԹՈՒԲՄ ԹԱԳԱԻՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ՛

Bb. HET'OWM T'AGAWOR 3 / Bb. AMENAYN HAYO 2

Bb.12. 0.55 գ, 15 մմ, 1 ժ:

Classical Numismatic Group, Inc., Electronic Auction 161, Lot 323, 28.03.2007.

Bb. HET'OWM T'AGAWOR 3 / Bb. AMENAYN HAYO 2

Bb.13. 0.55 գ, 15 մմ, 1 ժ:

Savoca Numismatik, 90th Blue Auction, Lot 1936, 28.11.2020.

Bb. HET

'OWM T'AGAWOR 3 / Bb. AMENAYN HAYO 2

Bb.14. 0.76 q, 17 մմ:

<https://www.zeno.ru/showphoto.php?photo=166060>.

Bb. **HET'OWM T'AGAWOR 3** / Bb. **AMENAYN HAYO 2**

Bb.15. 0.62 q:

Nercessian 2006, No.9.

Bb. **HET'OWM T'AGAWOR 3** / Bb. **AMENAYN HAYO 2**

Bb.16. - q, 16 մմ:

<https://www.zeno.ru/showphoto.php?photo=133429>.

Obv. +ՀԵԹՈՒԲՄ ԹԱԳԱԲՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Bb. **HET'OWM T'AGAWOR 4** / Bb. **AMENAYN HAYOC' 2**

Bb.17. 0.52 q:

Nercessian 2006, No.23b.

Obv. +ՀԵԹՈՒԲՄ ԹԱԳԱԲՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅ

Bb. **HET'OWM T'AGAWOR 5** / Bb. **AMENAYN HAY 1**

Bb.18. 0.58 q

Stephen Album Rare Coins, Auction 23, Lot 2053, 10.09.2015.

Bb. **HET'OWM T'AGAWOR 5** / Bb. **AMENAYN HAY 1**

Bb.19. 0.64 q, 15 մմ, 11 ժ:

Classical Numismatic Group, Inc., Electronic Auction 294, Lot 220, 16.01.2013.

Obv. +ՀԵԹՈՒԲՄ ԹԱԳԱԲՈՐ

Rev. + ՀԵԹՈՒԲՄ ԹԱԳԱԲ

Bb. **HET'OWM T'AGAWOR 6** / Bb. **HET'OWM T'AGAW 1**

Bb.20. 0.53 q:

Jean Elsen & ses Fils S.A., Auction 107, Lot 743, 11.12.2010.

Obv. +ՀԵԹՈՒԲՄ ԹԱԳԱԲՈՐ

Rev. + ՀԵԹՈՒԲՄ ԹԱԳԱԲՈՐ

Bb. **HET'OWM T'AGAWOR 7** / Bb. **HET'OWM T'AGAWOR 1**

Bb.21. 0.57 գ:

Nercessian 2006, No.16a.

Obv. +ՀԵԹՈՒԲՄ ԹԱԳԱԲՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Bb. **HET'OWM T'AGAWOR 8** / Bb. **AMENAYN HAYO 3**

Bb.22. 0.62 գ, 15 մմ, 10 ժ:

Nercessian 2006, No.16b.

Bb. **HET'OWM T'AGAWOR 8** / Bb. **AMENAYN HAYO 3**

Bb.23. 0.64 գ, 2 ժ:

Classical Numismatic Group, Inc., Mail Bid Sale 79, Lot 1359,
17.09.2008.

Obv. +ՀԵԹՈՒԲՄ ԹԱԳԱԲՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Bb. **HET'OWM T'AGAWOR 9** / Bb. **AMENAYN HAYO 4**

Bb.24. 0.52 գ, 15 մմ:

Numismatik Naumann, Auction 57, Lot 851, 03.09.2017.

Obv. +ՀԵԹՈՒԲՄ ԹԱԳԱԲՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Bb. **HET'OWM T'AGAWOR 10** / Bb. **AMENAYN HAYO 5**

Bb.25. 0.52 գ, 15 մմ, 6 ժ:

Classical Numismatic Group, Inc., Electronic Auction 343, Lot 685,
28.01.2015.

Obv. +ՀԵԹՈՒԲՄ ԹԱԳԱԲՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱ

Bb. **HET'OWM T'AGAWOR 11** / Bb. **AMENAYN HA 1**

Bb.26. 0.63 գ:

Nercessian 2006, No.24.

Bb. **HET'OWM T'AGAWOR 11** / Bb. **AMENAYN HA 1**

Bb.27. 0.55 գ, 15 մմ:

[https://www.zeno.ru/showphoto.php?photo=140115.](https://www.zeno.ru/showphoto.php?photo=140115)

Obv. +ՀԵԹՈՒԲՄ ԹԱԳԱԲ

Rev. + ՀԵԹՈՒԲՄ ԹԱԳԱԲՈՐ

Bb. HET'OWM T'AGAW 1 / Bb. HET'OWM T'AGAWOR 2

Bb.28. 0.69 q, 15 ሷፊ:

Nercessian 2006, No.42.

Obv. + <ፎጦብፍህ ጦሀዓሀፑ

Rev. + <ፎጦብፍህ ጦሀዓሀፑቢር

Bb. HET'OWM T'AGAW 2 / Bb. HET'OWM T'AGAWOR 3

Bb.29. 0.56 q, 13 ሷፊ:

Savoca Numismatik, 1st Blue Auction, Lot 1427, 23.09.2017.

Obv. + <ፎጦብፍህ ጦሀዓሀፑ

Rev. + <ፎጦብፍህ ጦሀዓሀፑቢር

Bb. **HET'OWM T'AGAW 3** / Bb. AMENAYN HA 2

Bb.30. –:

Münzen & Medaillen GmbH (DE), Auction 47, Lot 648, 23.05.2019.

Rev. + <ፎጦብፍህ ጦሀዓሀፑ

Bb. **HET'OWM T'AGAW 3** / Bb. HET'OWM T'AGAW 2

Bb.31. 0.59 q, 15 ሷፊ, 4 ቶ:

Classical Numismatic Group, Inc., Electronic Auction 312, Lot 286, 09.10.2013.

Rev. + <ፎጦብፍህ ጦሀዓሀፑ

Bb. **HET'OWM T'AGAW 3** / Bb. **HET'OWM T'AGAW 3**

Bb.32. 0.57 q, 14 ሷፊ, 3 ቶ:

Classical Numismatic Group, Inc., Electronic Auction 294, Lot 218, 16.01.2013.

Bb. **HET'OWM T'AGAW 3** / Bb. **HET'OWM T'AGAW 3**

Bb.33. 0.63 q, 16 ሷፊ:

Savoca Numismatik, 90th Blue Auction, Lot 1933, 28.11.2020.

Rev. + <ፎጦብፍህ ጦሀዓሀፑ

Bb. **HET'OWM T'AGAW 3** / Bb. HET'OWM T'AGA 1

Bb.34. 0.69 q, 15 ሷፊ:

Fritz Rudolf Künker GmbH & Co. KG, eLive Auction 31, Lot 390, 29.10.2014.

Obv. +ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱԲ

Rev. + ՀԵԹՈՒՄ ՀԱՅՈ

Bb. **HET'OWM T'AGAW 4** / Bb. AMENAYN HAYO 7

Bb.35. 0.57 գ, 15 մմ:

Nercessian 2006, No.35.

Obv. +ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Bb. **HET'OWM T'AGAOR 1** / Bb. AMENAYN HAYO 9

Bb.36. –:

[https://www.zeno.ru/showphoto.php?photo=127048.](https://www.zeno.ru/showphoto.php?photo=127048)

Obv. +ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՈՐ ՀԱ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Bb. **HET'OWM T'AGOR HA 1** / Bb. AMENAYN HAY 8

Bb.37. 0.62 գ, 15 մմ, 8 ժ:

Roma Numismatics Limited, E-Sale 18, Lot 1254, 27.06.2015.

Obv. +ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Bb. **HET'OWM T'AGOR 1** / Bb. AMENAYN HAY 2

Bb.38. 0.53 գ:

Stephen Album Rare Coins, Auction 33, Lot 1899, 17.01.2019.

Bb. **HET'OWM T'AGOR 1** / Bb. AMENAYN HAY 2

Bb.39. 0.50 գ:

Nercessian 2006, No.12.

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Bb. **HET'OWM T'AGOR 1** / Bb. AMENAYN HAYO 4

Bb.40. 0.46 գ, 13.9 մմ, 5 ժ:

https://www.vcoins.com/en/stores/pavlos_s_pavlou_numismatist/

Obv. +ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Bb. **HET'OWM T'AGOR 2** / Bb. AMENAYN HAY 6

Bb.41. 0.56 գ, 15 մմ:

Nercessian 2006, No.40a.

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅ

Bb. HET'OWM T'AGOR 2 / Bb. AMENAYN HAY 7

Bb.42. 0.60 գ:

Jean Elsen & ses Fils S.A., Auction 123, Lot 508, 06.12.2014.

Obv. +ՀԵԹՈՒԲ ԹԱԳՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Bb. HET'OWM T'AGOR 3 / Bb. AMENAYN HAYO 10

Bb.43. 0.55 գ, 15.7 մմ, 9 ժ:

https://www.vcoins.com/en/stores/pavlos_s_pavlou_numismatist

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

Bb. HET'OWM T'AGOR 3 / Bb. AMENAYN HAYO 11

Bb.44. 0.44 գ, 14.7 մմ, 12 ժ:

https://www.vcoins.com/en/stores/pavlos_s_pavlou_numismatist

Obv. +ՀԵԹՈՒԲ ԹԱԳՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅ

Bb. HET'OWM T'AGOR 4 / Bb. AMENAYN HAY 3

Bb.45. 0.48 գ, 16 մմ:

Nercessian 2006, No.23a.

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅ

Bb. HET'OWM T'AGOR 4 / Bb. AMENAYN HAY 5

Bb.46. 0.62 գ, 15 մմ, 10 ժ:

Nercessian 2006, No.39a.

Obv. +ՀԵԹՈՒԲ ԹԱԳՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅ

Bb. HET'OWM T'AGOR 5 / Bb. AMENAYN HAY 4

Bb.47. 0.50 գ, 15 մմ, 10 ժ:

Nercessian 2006, No.39b.

Bb. HET'OWM T'AGOR 5 / Bb. AMENAYN HAY 4

Եւ ենթադաս

Bc.1. 0.58 Գ, 15 մմ:

Nercessian 2006, No.4a.

Obv. +ՀԵԹՈՒԲՄ ԹԱԳԱԲ

Rev. +[ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ?]

Bc. **HET'OWM T'AGAW 1** / Bc. [AMENAYN HAYOC' ?]

Bc.2. 0.54 Գ:

Jean Elsen & ses Fils S.A., Auction 136, Lot 466, 24.03.2018.

Rev. + ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅ

Bc. **HET'OWM T'AGAW 1** / Bc. AMENAYN HAY 2

Bc.3. 0.48 Գ, 15.2 մմ, 7 Ժ:

HMA 18391-1. Փոլադյան, նվեր, 1971.

Rev. + ԱՄԵՆԱՅՆ [..]

Bc. **HET'OWM T'AGAW 1** / Bc. AMENAYN [..]

Bc.4. 0.58 Գ, 15.4 մմ, 7 Ժ:

HMA 17939-186. Պտուկյան, նվեր, 1965.

Obv. +ՀԵԹՈՒԲՄ ԹԱԳԱՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱ

Bc. **HET'OWM T'AGAOR 1** / Bc. AMENAYN HA 1

Bc.5. 0.63 Գ, 15 մմ:

Nercessian 2006, No. 34b.

Obv. +ՀԵԹՈՒԲՄ ԹԱԳԱՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱ

Bc. **HET'OWM T'AGAOR 2** / Bc. AMENAYN HA 1

Bc.6. 0.63 Գ, 15.0 մմ, 4 Ժ:

HMA 18391-2. Փոլադյան, նվեր, 1971.

Obv. +ՀԵԹՈՒԲՄ ԹԱԳԱՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱ

Bc. **HET'OWM T'AGAOR 3** / Bc. AMENAYN HA 2

Bc.7. 0.69 Գ, 15 մմ:

Nercessian 2006, No.41.

Obv. +ՀԵԹՈՒԲՄ ԹԱԳԲ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ Հ

Bc. HET'OWM T'AGW 1 / Bc. AMENAYN H 1

Լևոն Բ

1. 0.50 գ, 15 մմ:

Savoca Numismatik, 33rd Silver Auction, Lot 385, 12.05.2019.

Obv. +ԼԵԻՈՆ ԹԱԳԱԲՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅ

LEWON T'AGWOR 1 / AMENAYN HAY 1

2. 0.63 գ, 17 մմ, 9 Ժ:

Classical Numismatic Group, Inc., Electronic Auction 212, Lot 474,
17.06.2009.

LEWON T'AGWOR 1 / AMENAYN HAY 1

3. 0.66 գ, 15 մմ:

Savoca Numismatik, 90th Blue Auction, Lot 1934, 28.11.2020.

Obv. +ԼԵԻՈՆ ԹԱԳԱԲՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅ

LEWON T'AGWOR 2 / AMENAYN HAY 2

4. 0.54 գ, 15 մմ:

Nercessian 2006, No.21.

Obv. +ԼԵԻՈՆ ԹԱԳԱԲՈՐ (?)

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅ

LEWON T'AGWOR 3 / AMENAYN HAY 2

5. 0.4 գ, 14 մմ:

J. Christianian coll.

Obv. +ԼԵԻՈՆ ԹԱ[Գ]ԱԲՈՐ

Rev. +ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅ

LEWON T'AGWOR 4 / AMENAYN HAY 3

HETHOUM II OR HETHOUM I ?

Ruben Vardanyan

SUMMARY

This paper presents a comprehensive study of silver, billon and copper coins bearing the name Hethoum, which leads to the following conclusions:

a. Hetum II did not issue any coins. The following types were mistakenly attributed to him: billons with the facing bust of the king and a two-barred cross; billons with a facing bust of the king and a cross with equal bars; coppers with a facing head of the king and a two-barred cross; coppers with a seated figure and a cross with equal bars.

b. All coins with the name Hethoum were issued only under the reign of Hethoum I, during the years 1226-1268/9.

Hethoum II was the only one in the whole series of Kilikian kings who refused to be crowned, which is mentioned in Armenian and foreign sources, and in 1293 had become a Franciscan monk, taking the name Hovhannes. Refusing to wear a crown and adopting a religious name explain the reason why Hethoum II did not issue coins.

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մաթևոսյան 1984 – Մաթևոսյան, Ա. Ս., *Հայերեն անապրերի հիշատակարաններ (ԺԳ դար)*, Երևան:

Սիպիլեան 1892 – Սիպիլեան, հ. Կ., *Դասատրոթիւն Ռուբենեան դրամոց*, Վիեննա:

Տեր-Պետրոսյան 2007 – Տեր-Պետրոսյան Լ., *Խաչակիրների և հայերի*, հուն. Բ, Երևան:

Bedoukian 1957 – Bedoukian P. Z., The Biligual Coins of Hetoum I (1226-1270), King of Cilician Armenia, *Museum Notes*, Vol. VII, pp. 219-230.

Bedoukian 1981 (1958) – Bedoukian P. Z., Two Hoards of Hetoum Zabel Trams, *Selected Numismatic Studies by Paul Z. Bedoukian*, pp. 26-62 (Reprinted from *Museum Notes VIII, The American Numismatic Society*, 1958, pp. 145-180).

Bedoukian 1979 – Bedoukian, P. Z., *Coinage of Cilician Armenia*, Connecticut.

- Cahen 1968**– Cahen C., *Pre-Ottoman Turkey: A general survey of the material and spiritual culture and history c. 1071-1330*, London, 1968.
- Christianian 2012** – Christianian, J. A., Seljuk Overstrike of Kaika'us II and a New Kardez Type for Hetoum I of Cilician Armenia, *Armenian Numismatic Journal*, Vol. 8, pp. 81-87.
- Nercessian 2000 (1983)** – Nercessian, Y. T., Attribution and Dating of Armenian Bilingual Trams, *Armenian Numismatic Studies I*, pp. 279-311 (Originally published in *Armenian Numismatic Society, Special Publication*, No. 2, 1983, Los Angeles).
- Nercessian 2000 (1998)** – Nercessian, Y. T., Armenian Bilingual Half Trams, *Armenian Numismatic Studies I*, pp. 312-321 (Originally published in *Armenian Numismatic Journal*, Vol. XXIV, 1998, No. 3, pp. 17-23).
- Nercessian 2009 (2006)** – Nercessian T., Billons of king Hetum II, *Armenian Numismatic Studies II*, pp. 271-282 (Original version published in *Armenian Numismatic Journal*, Vol. 2, No. 2, 2006, pp. 23-30).
- Nercessian 2008** – Nercessian, Y. T., *Catalogue of Armenian Coins*, Los Angeles, 2008.
- Yildiz 2005** – Yildiz S. N., Reconceptualizing the Seljuk-Cilician Frontier: Armenians, Latins, and Turks in Conflict and Alliance during the Early Thirteenth Century, in: *Borders, Barriers, and Ethnogenesis: Frontiers in Late Antiquity and the Middle Ages*, Turnhout.

Ռ. Վարդանյան
Հեթում II, թե՛ Հեթում I

Նկ. 1.

Հեթում I-Կայ Քոբաղ I



ՀՊԹ 16398, դրամ¹

ՀՊԹ 17939-65, դրամ

կես դրամ²

Հեթում I



ՀՊԹ 15532-28

ՀՊԹ 18390-62

ՀՊԹ 18390-93

¹ Այստեղ և հաջորդիվ՝ Հայաստանի պատմության թանգարան (ՀՊԹ) և դրամագիտության բաժնի գույքային համարը:

² Nomos, Auction 18, lot 390, 05.05.2019, silver 18.5 mm, 1.37 g, 1h.

Նկ. 2.

Հեթում I-Կայ Քոբաղ I-ի շրջանի երեք տարբեր թողարկումներում ձեռագրի նույնականությունը հավաստող օրինակներ:

(ՀԵԹՈՒՄԹԱԳԱԻՈ)ՐՀԱ(ՑՈՑ)



ՀՊԹ 16389

ՀՊԹ 5357

ՀՊԹ 18393-362

(ՀԵԹՈՒՄԹԱԳ)ԱԻՈ(ՐՀԱՑՈՑ)



ՀՊԹ 17939-65

ՀՊԹ 15532-28

ՀՊԹ 17939-65

ՀՊԹ 15532-28

(ՇԻՆԵԱԼ)ԻՔԱ(ՂԱՔՆԻՍԻՍ)



ՀՊԹ 15532-28

ՀՊԹ 18096-17

ՀՊԹ 18390-93

Նկ. 3.

Հեթում I-Կայ Խոսրով II («Հեթում-Կայ Քորադի» ոճ)



Հիջ. 635=1236/7 թ.³

Հիջ. 639=1240/1 թ.,
ՀՊԹ 17939-63

Հիջ. 639=1240/1 թ.,
CAC 780

Կես դրամ⁴

Նկ. 4.

Հեթում I-Կայ Խոսրով II («Հեթում-Կայ Խոսրովի» ոճ)



ՀՊԹ 15521-17

ՀՊԹ 12204

ՀՊԹ 18798-18,
կես դրամ

³ Spink, Auction 14038, lot 326, 02.12.2014, 2.76 g.

⁴ Classical Numismatic Group, Inc., Electronic Auction 165, lot 296, 30.05.2007, 1.24 g, 19 mm, 4 h.

Հեթում I



ՀՊԹ 17620-37



ՀՊԹ 19373-3



Հեթում I-Գայ-Խոսրով I-ի շրջանի արծաթե և պղնձե թողարկումներում ձեռագրի նույնականությունը հավաստող օրինակներ:

ՀԵԹ(ՈՒՄԹԱԳԱԻՈՐՀԱՅՈՑ)



ՀՊԹ 17939-64



ՀՊԹ 19373-3



ՀՊԹ 17939-64



ՀՊԹ 19373-3

(ՀԵԹՈՒՄԹԱԳԱԻ)ՈՐՀԱՅ(ՈՑ)



ՀՊԹ 18798-10



ՀՊԹ 19041-2



ՀՊԹ 18798-10



ՀՊԹ 19041-2

Նկ. 5.

«Հեթում-Կայ Քորադ»-ի ոճ



Հեթում I-Կայ Քորադ I
Acs 7



Հեթում I-Կայ Քորադ I
ՀՊԹ 18981-17



Հեթում I-Կայ Քորադ I
ՀՊԹ 17939-65



Հեթում I
ՀՊԹ 18075-4



Հեթում I
ՀՊԹ 19181-4



Հեթում I
ՀՊԹ 18393-152



Հեթում I
ՀՊԹ 18393-227



Հեթում I
ՀՊԹ 18393-229



Հեթում I
ՀՊԹ 17550-111



Հեթում I
ՀՊԹ 18393-378



Հեթում I-Կայ Խոսրով II («Հեթում-Կայ Քորադի» ոճ), ՀՊԹ 17939-63

«Հեթում-Կայ Խոսրով»-ի ոճ



Հեթում I-Կայ Խոսրով II
ՀՊԹ 18798-14



Հեթում I
ՀՊԹ 19373-3



Հեթում I
ՀՊԹ 18523-2

Նկ. 6.



Հեթում I-Կայ Խոսրով II
ՀՊԹ 18798-10



Հեթում I
ՀՊԹ 18390-46



Հեթում I-Զարեկ
ՀՊԹ 17931-3

Նկ. 7.

Հեթում I-Զարեկ, Արծաթ. Դրամ



ՀՊԹ 18392-203



ՀՊԹ 17619-58



ՀՊԹ 18392-251

Նկ. 8.

Հեթում I, Արծաթ. Դրամ



ՀՊԹ 18392-416

Լևոն II, Արծաթ. Դրամ



ՀՊԹ 17619-32

Նկ. 9.

Հեթում I, Պղինձ



ՀՊԹ 17550-86



ՀՊԹ 18390-98



JC 1256⁵



acsearch 17.01.2019⁶

Նկ. 10.



10.1 Կատ. A.4⁷



10.2 Կատ. Ba.6



10.3 Կատ. Bb.11

Նկ. 11.



Կատ. Bb.16



Կատ. Bb.9



Կատ. Bb.33



Կատ. Bb.36



Նկ. 12.



Կատ. Bc.4



Կատ. Bc.6



Կատ. Bc.2



⁵ Christianian 2012.

⁶ Stephen Album Rare Coins, Auction 33, lot 1901, 17.01.2019.

⁷ Արծաթապղինձների համարակարմը տրված է ըստ հողվածի վերջում գետեղված կատալոգի:

Նկ. 13.

Հեթում I-Չաբել. Արծաթ. Դրամ



ՀՊԹ 17619-58



ՀՊԹ 18392-367



ՀՊԹ 18392-303

Հեթում I. Արծաթապղինձ



Կատ. A. 15



Կատ. A. 19

Նկ. 14.

Հեթում I-Չաբել. Արծաթ. Դրամ



ՀՊԹ 18392-251



ՀՊԹ 18392-327



ՀՊԹ 18389-115



ՀՊԹ 17619-32

Լևոն II. Արծաթ.
Դրամ

Հեթում I. Արծաթապղինձ




Կատ. Bc. 6



Կատ. Bc. 2



Կատ. Bc. 4



Կատ. 1

Լևոն II.
Արծաթապղինձ

Նկ. 15.

Լևոն II. Արծաթապղինձ



Կատ. 1



Կատ. 2



Կատ. 5

Նկ. 16.

Հեթում I-Չաբել, Արծաթ. Դրամ



ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱԻՈՐ Հ
ՀՊԹ 18392-416

Հեթում I-Չաբել, Արծաթապղինձ



ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՈՐ / ԱՄԵՆԱՅՆ ՀԱ
Կառ. Bc.4

Լևոն II, Արծաթ. Դրամ



ԼԵՒՈՆ ԹԱԳԱԻՈՐ Հ
ՀՊԹ 17619-32

Լևոն II, Արծաթապղինձ



ԼԵՒՈՆ ԹԱԳԱԻՈՐ / ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅ
Կառ. I

Նկ. 17.

Հեթում I-Չաբել,
Արծաթ. Դրամ



ՀՊԹ 18392-354

Հեթում I
Արծաթապղինձ



Կառ. A.11

Հեթում I
Պղինձ



ՀՊԹ 17550-86

Նկ. 18.

Հեթում-Ջաբել I
Արծաթ. Դրամ



Հեթում I
Արծաթապղինձ



Հեթում I
Պղինձ



ՀՊԹ 17382-5

ՀՊԹ 18392-230

Կատ. Ba.12

ՀՊԹ 17620-49

Նկ. 19.

Հեթում I-Ջաբել. Արծաթ. Դրամ



ՀՊԹ18602-37



ՀՊԹ17619-66



ՀՊԹ18392-216



ՀՊԹ18392-448



ՀՊԹ18392-251



ՀՊԹ17939-78

Հեթում I. Արծաթապղինձ



Կատ. Ba. 30



Կատ. Bb. 37



Կատ. Bc. 4

Հեթում I. Պղինձ



ՀՊԹ 19181-5



ՀՊԹ 18393-409



ՀՊԹ 18393-398



(ՀԵԹՈՒՄ I-ԳԱԻՈՐՀԱՅՈՑ)
Հեթում I-Զաբել. Արծաթ. Դրամ



ՀՊԹ 18389-116



Կատ. A.2



Կատ. Bb.4

Հեթում I. Արծաթապղինձ

Հեթում I. Պղինձ



ՀՊԹ 18393-420



ՀՊԹ 19041-4



ՀՊԹ 18390-98



(ՀԵԹՈՒՄԹ)ԱԳԱ(ԻՈՐՀԱՅՈՑ)

Հեթում I-Զարեկ Արծաթ. Դրամ



ՀՊԹ 18981-253



ՀՊԹ 18392-253



ՀՊԹ 20007-2



ՀՊԹ 17382-5

Հեթում I. Արծաթապղինձ



Կատ. A.7



Կատ. Ba.12

(ՀԵԹՈՒՄԹԱԳԱԻՈՐՀ)ԱՅ(ՈՑ)

Հեթում I-Զարեկ Արծաթ. Դրամ



ՀՊԹ 18389-109



ՀՊԹ 18392-229

Հեթում I. Արծաթապղինձ



Կատ. Ba. 22



Կատ. Bb. 43

Լևոն II.
Արծաթապղինձ



Levon. Կատ. 3

Նկ. 20.



Հեթում I



Լևոն II

Նկ. 21.

Հեթում I-Զարեկ
Արծաթ. Դրամ



ՀՊԹ 18981-183

Հեթում I
Պղինձ



ՀՊԹ 18728-53

Լևոն II
Արծաթ. Դրամ



ԵՄ 698



Նկ. 22.



ՀՊԹ 18392-267



ՀՊԹ 18981-259

Նկ. 23.

Հեթում I-Զաբել. Արծաթ. Դրամ



ՀՊԹ 18392-340



ՀՊԹ 17939-94



ՀՊԹ 18392-386



ՀՊԹ 18981-230

Հեթում I. Արծաթապղինձ



Կատ. Ba.6



Կատ. Bb.14



Կատ. Bb.9



Կատ. Bb.24

Հեթում I. Պղինձ



ՀՊԹ 18390-99



Հեթում I-ի և Լևոն II-ի արծաթապղնձե դրամների կատալոգ

Հեթում I

A դաս



A.1



A.2



A.3



A.4



A.5



A.6



A.7



A.8



A.9



A.10



A.11



A.12



A.13



A.14



A.15



A.16



A.17



A.18



A.19

В դաս
Յա էնթադաս



Ba.1



Ba.2



Ba.3



Ba.4



Ba.5



Ba.6



Ba.7



Ba.8



Ba.9



Ba.10



Ba.11



Ba.12



Ba.13



Ba.14



Ba.15



Ba.16



Ba.17



Ba.18



Ba.19



Ba.20



Ba.21



Ba.22



Ba.23



Ba.24





Ba.25



Ba.26



Ba.27



Ba.28



Ba.29



Бб ենթադաս



Bb.1



Bb.2



Bb.3



Bb.4



Bb.5



Bb.6



Bb.7



Bb.8



Bb.9



Bb.10



Bb.11



Bb.12



Bb.13



Bb.14



Bb.15



Bb.16



Bb.17



Bb.18





Bb.18



Bb.19



Bb.21



Bb.22



Bb.22



Bb.23



Bb.25



Bb.26



Bb.27



Bb.27



Bb.29



Bb.30



Bb.31



Bb.32



Bb.33



Bb.34



Bb.35



Bb.36



Bb.37



Bb.38



Bb.39



Bb.40



Bb.41



Bb.42





Bb.43



Bb.44



Bb.45



Bb.46



Bb.47



Եւ կնթարդսս



Bc.1



Bc.2



Bc.3



Bc.4



Bc.5



Bc.6



Bc.7

Լևոն II



1



2



3



4



5



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կլոդ-Արմեն Մուրաֆյանի հիմնական հրատարակումները
հայագիտության բնագավառում (կազմող՝ **Ա. Բոզոյան**)5 - 14

**J. Dédéyan, A. Ouzounian, Claude Mutafian, Une passion de
L'Arménie l'œuvre** 15 - 31

Ա. Յակոբեան, Մեծ Հայքի Գուգարք նահանգն ըստ Է Դարի
«Աշխարհացոյց»-ի..... 32 - 51

А. Шагинян, Нарушали ли арабы мирный договор,
заключенный в 652 году с первенствующим князем Армении
Тэодоросом Рштуни (640–Ок. 659) ?52 - 74

Ա. Թամրազյան, Մութագիլիզմի կրոնափիլիսոփայական
դրոյթների արտացոլումը Աբու Ֆաթի ալ-Շահրաստանիի
«կրոնների և աղանդների մասին» (كتاب الملل والنحل)
աշխատության մեջ75 - 87

I. Augé, Epistolary exchanges, Treatises and Opuscles: Armenian
Sources on Religious Polemics between the Armenians and the
Greeks in the 12th century..... 88 – 109

Ն. Դարիբյան, Հայ տոհմաձին տիկնանց իշխանական
դիրքը եւ հավակնություններն ըստ միջնադարյան
հիշատակագրերի..... 110- 134

A. Schmidt & A. Bozoyan, Kolophone armenischer übersetzer
syrischer Literatur (12.-13. Jahrhundert)..... 135 - 171

Գ. Դանիելյան, Հայագգի «հրեշավոր երկվորյակները»
Մոսուլում. արաբական աղբյուրների վկայությունները ... 172 - 188

G. Margaryan, On some peculiarities of serfdom in Georgia
(from the middle ages to the early modern period) 189 - 197

P. Košťálová, Lieux de mémoire et les lieux de rencontre:
soub Karapet dans le témoignage d'un voyageur arménien
de la Pologne du XVII^{ème} siècle..... 198 - 225

Ք. Կոստիկյան, Պարսկական վավերագիտությունը
Հայաստանում և զարգացման հեռանկարները..... 226 - 242

Գ. Մխիթարյան, Վրաստանի քաղաքական իրավիճակի
նկարագրությունը Ստ. Բուռնաշեւի պատմագիտական
երկում 243- 263

Ռ. Վարդանյան, Հերթում Բ, թե՞ Հերթում Ա..... 264 - 306